


ԱՂՕԹՔԱԳԻՐՔ

Որ


ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՅՆ. ՊՈՒԿԱՅ ԽՆԱՒԱՒ

Ա/
Յ42



ՎԵՆԵՏԻԿ
1849



ԲԱՆ ԱՒ ՎԵՐԱՆՈՂՍ

Արժին ցաւագնեալ հոգին վըշ-
տայեալ ոչ գտանէ յայսմ աշխարհի
մխիթարութիւն, դառնայ յԱստուած
գտանել զնա մխիթարութիւն. և զի
աղօթքն ի՛ որ յայսմ աշխարհի կե-
նակցել տայ մարդոյ ընդ Աստուծոյ,
փափագելով դիմել յաղօթեան ապա-
վինի գտանել զնա մխիթարութիւն:

Այսպէս ահա դէպ եղև և այնմ
բարեյիշատակ անձին, որոյ հարեալ
ի ժանտախտէ և զերծեալ, բայց ի
վարատելն ժանտախտին՝ եթող ի
մարմնի նորա այլ խօթութիւն անբու-
ժելի. ուստի բազում դեղորիւք և
բժշկաց սատարութեամբ ոչ կարա-
յեալ զերծանել մինչև ցմահ իւր. վա-
րեր հանապազօր կեանս վչտագին,

և ոչ կարէր գտանել ուստեք մխիթա-
րութիւն, բայց եթէ քաղցրանալով
յաղօթս մշտամուռնչէս: Ցետ զամն
քան այսպէս տառապելոյ ի հիւան-
դութեան իւրում, այն ինչ մերձենայր
օրհաս մահուն իւրոյ, կտակաւ պա-
տուիրէր ձեռնտու լինել ի ծախս
տպագրութեան այսր մատենի աղո-
թագրոց, առ ի նոյն փութացուցա-
նել յաղօթասիրութիւն և զայլս:

Արդ՝ ոչ կամեցեալ ի թագաւորեան
յանծանօթս ինձ՝ թողուլ զխիշատակ
գեղեցիկ երախտեաց, աղերս ար-
կեալ աղաչեմք զընթերցողսդ, ի
քաղցրանալն եռանդեամբք թևակո-
խելով ի մաղթանս աղօթիցայսր փոք-
րիկ մատենիս, յիշել և զհանգուցեալ
հոգի սորա, ընդ նմին և զաշխատա-
սիրօղ աղօթիցս:

ՀԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԱՂՕԹԻՑ

Աղօթք ընելու շատ սէր պէտք է որ ունենանք, մանաւանդ առ իրեք պատճառի համար։ Առաջին որ՝ ինչ որ պէտք է մեզի թէ հոգևոր և թէ մարմնաւոր, աղօթքով միայն կրնանք առնել Աստուծմէ, ինչպէս կրկրսատ սուրբ գիրքը. Խնդրեցէք և առնուցուք։ Ուստի աղօթք ընելը՝ է մեր շահիլը և մեր վաստակիլը։

Երկրորդ՝ աղօթք ընելով կը գովենք կըփառաբանենք զԱստուած առ աշխարհիս մէջ, որով Աստուածալ իբր թէ պարտական կըլլայ մեզի անդին աշխարհը վարձք հատուցանել իր արքայութիւնը։ Ինչպէս որ մեկ մնած իշ-

խանի մը դովասանք զուրցելու ըլլանք, ան իշխաննալ հարկաւո՛ րապէս մեկ վարձք մը կուտայ. և՛ առաւել Աստուած որ մեզ ասոր համար ստեղծեր է՝ որ զինքը սիրենք, զինքը պաշտենք, որ ինքնալ մեր մեռնելէն ետև մեզի վարձք տայ իր արքայութիւնը, ինչպէս պղտիկուց կըսորվեցընէ ամէն նուն սուրբ եկեղեցին քրիստոնէական խրատովը: Արդ՝ զԱստուած պաշտել կըլլայ, մէյմը իրեն համար խաչ ու նեղութիւն քաշելով, մէյմեալ աղօթքով փառաբանելով: Աստանկ ահա Քրիստոս տէրն մեր դիշերնիկը ինչուան լոյս միշտ աղօթքի հետ կըլլար, միայն զԱստուած փառաբանելով. անով զինքը օրինակ տալով մեզի սորվեցընել ուզեց. ասկէց ի զատ շատ հեղ պատուէրքալ ղրաւ որ աղօթքի հետ ըլլանք:

Երբորդ՝ թէև մեկ շահ մը չունենայինք աղօթքին, ան առնուալ պէտք էր որ սիրով աղօթքի վազէինք. վասն զի աղօթք ընել

ըսելը՝ Աստուծոյ առջեւն ելլել, Աստուծոյ հետ խօսակցիլ ըսել է. արդ՝ ասիկա միայն հերիք փառք պարծանք է մարդուս. ինչպէս կըսէ Խոսրով վարդապետը։

Ա՛ս ահա որ սատանան մեր մէկ բանին անանկ չխնամեցնիր ինչպէս աղօթքին. ուրիշ ինչ աղէկ գործք ընենք, մենք մեզի ենք, ու իբր թէ Աստուծմէ հեռու. բայց աղօթք ընելու ատենը մարդս շատակ Աստուծոյ առջեւն կըկենայ, իրեն հետը կըխօսակցի կըխօսի։ Սատանան կըտեսնայ զինքը՝ որ թէ պէտ մենք շատ դեռ բազանց ստեղծուած մրնէ, բայց չկրնար Աստուծոյ առջեւն հանդարտակ ելլալ, չկրնար բարեկամի կամ զաւկի մը պէս Աստուծոյ հետ ընտանեբար խօսակցիլ. ասոր դէմ մեզ կըտեսնայ խեղճ հողեղէն ստեղծուած մը, բայց սրտէնիս համարձակ կըբանանք Աստուծոյ դէմ՝ ինչպէս մէկ զաւակ մը իր հօրը կըբանայ. թէ որ մեղքի մէջ ենք՝ զղջումով աղօթք

ընելով թողութիւն կառնենք մեղքերուս. թէ որ արդար ենք՝ աւելի շնորհք կառնենք յԱստուծոյ։

Ա՛ս բանիս վկայութիւնով դիմանալ սատանան, կերպ կերպ հնարքներ կրնարուի արդելը դնելու. երբեմն մէկ չուզելութիւն մը կըբերէ սրտին մէջը, մարդուս ծանր բան մը կերևցընէ աղօթքը. երբեմն իրաւցընէ սիրտը բռնել կուտայ կըդոցվի, շունչ չի կրնար առնել. շատ հեղ մարդս աղօթքի նստելու ըլլայ, ան ատենը քունն մը կըբերէ սատանան որ առաջ չունէր։ Եւ թէ որ մէկ քրիստոնէ մը աս բանէրուս մտիկ չնդնելով աղօթքին նստի, ան ատենը շատ հեղ մէկ ձանձրութիւն մը՝ մէկ անհանգստութիւն մը կըբերէ որ՝ մարդս կըջանայ աղօթքը շուտ լմնցընել՝ ան նեղութենէն խալսելու։ Երբեմնալ մարդուս բնելու բանէրը դործքերը աղօթքի ատեն պայծառ իմաստ միտքը բերել կուտայ. ոմանց այնչափ

սաստիկ կըլլայ աս փորձու-
թիւնս որ իրենց աղօթք ընելու
առնէն՝ կըլլայ աղէկ առէն իրենց
դրսի ընելու բանէրը մտածել:
Շատ մարդուս միտքը կըտար-
ծրղնէ կըցնդի, անանկ որ՝ ինքն-
ալ չգիտէ որ աղօթքի առէն ու-
ր կըքալէ իր միտքը:

Ասանկով շատ պատերազմ
կըքաշէին սուրբերը աղօթքի ա-
առէն, բայց իրենք Քրիստոսի օ-
րինակին հետևելով անդադար
աղօթքի հետ կըլլային, Աստուծ-
մէ օգնութիւն կըխընդրէին. ա-
նանկ որ՝ ոմանք բոլորովին խալը-
սեցանան փորձութիւններէ. ա-
ղօթքի առէն պայծառ իտակ աս-
տուածային բանէրը մտածելով
կըզմայլէին կըվերանայինն: Ոմանք
միշտ չանալով պատերազմելով
մտըքնին ժողվելու համար՝ մեծ
վարձք առին Աստուծմէ:

Ասոնց, և մանաւանդ Քրիս-
տոսի օրինակին դուռնալ հետևե-
լով՝ նայէ որ աղօթքի փոյթ ու-
նենաս. որչափ որ միտքդ ցնդի

ելիժուլնաս. միտքդ վերայ ժողվես,
Աստուծոյ տանիս, ջերմեռանդութեամբ ընես աս գրքիս մէջի գրած աղօթքնէրը, որ աշխարհաբառ ըլլալով քեզի հեշտ է հասկընալը: Երբոր աստանկ ջերմեռանդութեամբ աղօթքի հետ ըլլաս, յիշէ՛ ան առենը ան հոգինալ որ պատճառ եղաւ աս աղօթքնէրս տպել տալու, և ան հոգինալ որ աշխատեցաւ շինելու:



W.H. Bonhuijs. te Vaalse

NATIVITÉ

DE GEBOORTE VAN CHRISTUS

ԱՒԱՒՕՏԵԱՆ

ԱՂՕԹՔ

Ի յառնելն յանկողնոյ.

ՄԵՆԱՍՈՒՐԲ Երրորդութիւն և մի Աստուածութիւն, անբաւ գո-
հութիւն ու շնորհակալութիւն մա-
տուցանեմ, որ իս անարժանս՝ ողջ
առողջ հասուցիր ինձեան աս առտու,
ու նորէն կեանք տուիր: Այսօրալ պա-
հէ իս ամէն փորձանքներէ, երևելի
ու աներևոյթ թշնամիներէ : Շնորհէ՛
որ՝ այսօր առանց մեղայ քու ծառայ-
ութեանդ մէջը անցընեմ, քեզ փա-
ռաւորեմ, իմ ամէն խօսքս և գործքս
մարմնաւոր ու հոգևոր՝ ի փառս քո
ընեմ:

Աղօթք առաւօտեան.

Տէր եթէ պէտութիւն իմ բանաս, լե-
ցան իմ երգեսցէ զարդարութիւնս քո:
Դու տէր իմ, թէ որ իմ շնորհս բա-
նաս, ան առիթը իմ բերանսալ կըբաց-
ւի, քու օրհնութիւնդ կըկարդայ: Դու
տէր իմ, բերանս բաց, լեզուս շարժէ,
սիրտս փոխկերպէ, որ քու առջեդ ա-
ղօթք ընեմ: Ճշմարիտ լոյսդ Քրիստոս,
առաւելան լուսոյն հետ լուսաւորէ իս,
որ միտքս բացվի, սիրտս շարժի քեզ
օրհնել, քեզ փառաւորելու հետ ըլ-
լալ, որ եսալ սաղմոսերգուին հետ
կարենամ զուրցելը Պատրաստ է սիրտ
իմ Աստուած, պատրաստ է սիրտ իմ,
օրհնել և սաղմոս ասել քեզ փառաք
իմովք: Վասն զի քեզ օրհնել՝ մարդուս
փառք է, քեզի աղօթք ընել՝ մարդուս
շահն է: Լուսաւորէ իս տէր իմ, մեղ-
քին գէշութիւնը ճանչնալ, մեղքէն
հետ կենալ, առաքինութիւնով բարե-
պարծութիւնով զարդարվիլ, աղօթք
ընելու աղէկութիւնը ճանչնալ:

Աղօթք ընդհանուր ամենայն.

Գոհութիւն և փառաբանութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, որ անբաւ բարերարութեամբ իս լցուց: Ես ոչինչ էի, դու ամենասուրբ Երրորդութիւն և մի Աստուածութիւն՝ իս մարդ ստեղծեցիր, աս աշխարհս ամէն բարեաք զարդարեցիր, երկինքը աստղերով, գետինը գունդզգուն ծաղիկներով, օդը զանազան թռչուններով, ջուրը ձկներով: Ա՛ս ամէն բանը ըրիր, ինծի՛ւ հինգ զգայարանք տուիր որ վայելեմ. աչքըս կը վայելէ զանազան տեսակ գունդերով ծաղկունքը, անկաճն կըլսէ թռչունները անուշ ձայները, բերանս կառնէ անուշ պտուղներուն համերը: Ա՛մէնք ինծի համար ստեղծեցիր, իսկ ամէն արարածոց վրայ թագաւոր դրիր: Ա՛ինք մը տուիր որ քանի նայիմ քու ստեղծուածներուդ վրայ, կիմանամ զարարածոց գեղեցկիկ համեմատութիւնը, ու կըզմայլիմ գերազանցութիւնը, որ անասուններուն չեն կրնար իմանալ.

անկէց կիմանամ քու աղէկութիւնդ, խնամատարութիւնդ, ու ամենակարողու-թիւնդ։

Հիմա աս ամէն բարիքներուդ վրայ չկրնալովուզածիս պէս գոհութիւն մատուցանել քեզի տէր իմ, ան ամ-ման արարածներդը մէկիկ մէկիկ կրկան-չեմ սաղմոսերգուին հետ, որ քեզ գոհանան, քեզ օրհնեն։ Օրհնեցէք զԱստուած արեգակն և լուսին, օրհ-նեցէք զնա ամենայն աստեղք և լոյս։ Օրհնեցէք զԱստուած երկինք երկ-նից, և ջուրք։ Օրհնեցէք զԱստուած լերինք, ծառք պտղաբերք, աղբիւրք, ծովք և գետք։ Օրհնեցէք զԱստուած գազանք, և ամենայն անասունք, սո-ղունք, և ամենայն թռչունք։ Օրհնե-ցեն զնա երկինք և երկիր, ծով, և ա-մենայն որ զերայ ի նոսա։ Օրհնեսցի և փառաւորեսցի ամենասուրբ Երրոր-դութիւնն այժմ և միշտ, և յաւի-տեանս յաւիտենից • Ամէն։

Սաղմոս թ. Լ Ը.

Գոհացայց զքէն տէր բոլորով սրտիս խոովպատմեցից զամենայն սքանչելիս քո:

Ուրախ եղէց և ցնծացայց ՚ի քեզ. սաղմոս ասացից անուան քումմ բարձրեալ:

Ո՞վ է մարդ, զի յիշես դու զնա. կամ որդի մարդոյ, թէ այց ինչ արասցես դու նմա:

Փոքր ինչ խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս քո, փառաք և պատուով պսակեցեր զնա, և կացուցեր զնա ՚ի վերայ ամենայն ձեռակերտաց քոց:

Զամենայն ինչ հնազանդ արարեր ՚ի ներքոյ ոտից նորա, զխաշն և զարջառ և զամենայն ինչ:

Տէր տէր մեր, զի սքանչելի է անուն քո յամենայն երկրի:

Այլ սաղմոս.

Ամենք ամենեքին մարմնաւոր բարիքներն են՝ որ ինձ տրվիր, որպէս զի վայելելով քեզ սիրեմ, քեզ օրհնեմ, փա-

ուսուրեմ, ու քու պատուիրանքներդ պահեմ։ Հապա հոգևոր բարիքներուդ որ մեկը համրեմ, որ մեկը յիշեմ, որ ամենևին աւելի ինծի պարգևեցիր։ Ես չունեի լոյս հաւատոյ, դու տէր՝ իմ սուրբ ուղղափառ հաւատքիդ մէջ տեղ ծեցիր, բարի ծնողաց մէջ անուցիր, պահպանեցիր, սուրբ աւազանին մկրտութեան հասուցիր, հոգւոյն սրբոյ շնորհացը արժանացուցիր։ Եաթը ես ապերախտս՝ երբոր կորսընցուցի մեղքով իմ անմեղութեան շնորհքս, դու Բանդ Աստուած մարմնացար, մարդ եղար, իմ քաշելու տանջանքներս դուն քաշեցիր, անդին արիւնդ խաչին վրայ թափեցուվ ինծի համար մեռար որ ես չմեռնիմ յիւտաւսպարտ սրվիմ յաւիտենական տանջանքէ։ Իմ մեղաւոր բնութիւնս դիտնալով խորհուրդ խոստովանութեան ու ապաշխարութեան դրիր, որ թէ որ մեղանչեմ, նորէն ապաշխարելով քիչ մը աշխատելով խոստովանելով մեղացս թողութիւն ու արձակում գտնամ։ Ա՛ս հերիք չեղաւ, գիտեիր որ՝ հոգիս

ակար է, կերակուր կուզէ, քու սուրբ մարմինդ ու արիւնդ, զքեզ ինքդ կե-
րակուր կենդանարար տալիր ինձ ի. ա-
նով հոգիս կըզօրանայ, երկրաւոր բա-
նէրը ոչնչէ կերևնայ, երկնայիններէրը
անուշ կուգայ :

Ա՛ս ամէն ըրած բարիքներուդ ինչ
շնորհակալութիւն մատուցանեմ քեզ
աէր իմ, կամ ինչ խօսքերով գոհանամ.
միայն սուրբ հրեշտակաց բերանը քեզ
կրնայ օրհնել. ան երկնային զօրու-
թեանց օրհնեհնքը գովասանքը քեզ մա-
տուցանեմ. անով քեզ մեծացուցա-
նեմ, բաբխով. Օրհնեցէք զնա ամենայն
հրեշտակք նորա, օրհնեցէք զնա ամե-
նայն զօրութիւնք նորա :

Ա՛յլ աղօթք.

Թագաւոր թագաւորաց, տէր և տ-
բարիչ ամենայնի, առտուան ժամուս
նոր կեանք կուտաս, նոր օր. ես որչափ
անարժան եմ, դուն անչափ բարերա-
րութիւնդ վրաս կըշատցնես. որմէկին
շնորհակալ ըլլամ տէր իմ: Երես հողը
դնեմ ու ինչ որ ընելով անանկ կաղա-

ես մոտ տեր իմ և Թագաւոր. ապրան
քրած բարեբարուԹիւնդ յիշելով մի
յիշեր իմ ապերախտուԹիւնս, որ ը-
րերեմ քեզ դէմ մեղանչելով. մի յի-
շեր իմ ծուլուԹիւնս, իմ զանցառու-
Թիւնս, որ ինձի ըրած աղէկուԹիւնդ
չեմ յիշած, չեմ ընդհակառակ եղած,
այլ ինձի պէս մեղաւորիս՝ ըզը ԹԷբա-
նի տեղաչեմ սեպած: Կաղաչեմ ոմ-
տեր իմ, իս երեսդ չնձգես, այլ ընդու-
ընդհէք տաս, որ քեզ աղէկ ճանչնամ,
քեզ սիրեն բանէն վեր սիրեմ. հա-
ւատքս լուսաւոր ըլլայ մտքիս մէջը,
քու բարեբարուԹիւնդ աղէկ ու պայ-
ծառ ճանչնամ, և այսօր սիրեն մեղքէ
հեռընալով հաւատքիս կէօրէ գործք-
ալ ունենամ, քու պատուիրանքներդ
պահեմ, ու ինչ որ քեզի հաճոյ է՝ մի-
այն ան ընեմ: Ա՛յսօր տէր իմ, ինչ մեղ-
քի առիԹ գայ, դուն պահէ որ չըլնիմ,
ինչ մարմնաւոր փորձանք գայ՝ դուն
պահէ որ խաղըսիմ: Ա՛ջքս պահէս
սիրեն չար նայվածքէն, անկամաձ մեղք
լսելէն, բերանս մեղք գուրցելէն, սիր-
տըս միտքս մեղք մտածելէն: Ա՛յսպէս

աղմուս ասացից քեզ յաւիտեանս յա-
ւիտենից , և տայ քեզ զաղօթս իմ օր-
ըստօրէ ։

Ակնէ եւթը առաջադրէ ան մեզքէն
ըզգուշանալ՝ որուն մէջը որ շատ հեղ
կ'ինայս ։ Առաջադրէ որ այսօր մէկ յա-
տուկ բարեգործութիւն մը ընես ։ Ա-
ռաջադրէ նաև ասօրս մէկ բանի մը մէջ
քու կամքդ կտրես , ու քու աչքդ և
լեզուդ զսպես , զնկերդ քեզ նման ան-
մեղ բանեբէ ապաշնարհքի համար ։

ԵՐԵԿՈՅԵԱՆ

ԱՂՕԹՔ

ՏԻՐՈՋ ԱՄԵՆԱԿԱԼ, որ այսօր քումկին գթութեամբդ ողջ առողջ պահեցիր, հոգւոյ և մարմնաւոր վտանգներէ խալացուցիր, քումկին բարերարութեամբդ ամէն բարիքդ պարգեւեցիր: Ես որ մեղաւոր եմ, անարժան եմ քումկին բարերարութիւնդ վայելելու, քումկին ծառանէրդ պէս վայելցուցիր, հոգւոյդ մարմնաւոր ու հոգևոր բարեաց: Ես ուրիշ բան չունիմ առ քեզի փոխարէն հատուցանել, բայց եթէ գեհենը քնելով երկրպագութիւն տալով անանկ շնորհակալ կըլլամ քու առատ ողորմութեանդ տէր իմ: և որչափ քումկին ծառանէրդ՝

սուրբերդ՝ գոհութիւն կուտան, ա-
նոնքալ իմ գոհութեանս հետ մեկ-
տեղ խառնելով կըմատուցանեմ ամե-
նասուրբ Երրորդութեանդ։

Կըցաւիմ կըզղջամ՝ի բոլոր սրտէս՝
որ այսօր փոխանակ քեզի ծառայու-
թիւն ընելու, կամքդ կատարելու, մե-
ղանչեցի, քու կամացդ դէմ գործեցի,
պատուիրանքներդ կոտրեցի, քանի
բարի գործքեր կրնայի ընել զանց ըրի՝
ջըրի։ Դուռ տէր իմ, լուսաւորէ միտքս
աս գիշերուան խաւարին մէջ, որ այս
օրուան ըրած մեղքերս միտքս բերեմ,
զղջամ, և հաստատուն սրտով առա-
ջադրեմ վաղը չմեղանչելու։ Կաղա-
չեմ որ՝ պահես իս յանկարծական մա-
հուանէ, պահես իս գիշերային դիւա-
կան փորձութենէ, սատանայական ըղ-
նդոքներէ։ Ո՛վ պահապան հրեշտակ,
հեռըցո՛ւ ինձմէ սատանայական խա-
բէութիւնը ու բռնութիւնը. սատա-
նաներուն տեղը՝ ձեր սուրբ հրեշտակ-
ներուդ ընկերութիւնը ընակի սա տե-
ղըս, որ խաղաղութեամբ մեզ պահէ
այսօր գիշերի և յամենայն ժամանակ։

կի: Ո՛վ պաշտպան սուրբեր, պահեցէք զանազան փորձանքներէ, կրակէ, ժանտախտէ, թշնամիներէ, հոգւոյ և մարմնոյ չար պատահմունքներէ, որ կը նայ աս գիշերս պատահիլ: Ցե՛ր ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ: Ինչպէս որ Որդին միածին խաչին վրայ զուրցեց, անոր խօսքին հետ իմ խօսքսալ ընդունելովս հոգիս թէ որ կեանքը ընծայուս ըլլայ աս գիշեր. վասն զի ես որ հիմա մահ ձիտմէ իջը թէ գերեզմանի մը մէջ կիջնամ, կրնայ ըլլալ որ կեանքսալ ընծայ, մեռնիլ հասնի: Բարեխօսութեամբ պահապան հրեշտակիս և պաշտպան սուրբերուս պահես տէր իմ հոգիս յաւիտենական կորստենէ:

Հայր երկնաւոր խնայեա՛ յիս. բարի Յիսուս ողորմեա՛ ինձ. Հոգի՛ սուրբ Աստուած զօրացո՛ զիս: Օրհնութիւն հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ երկնից ի վերայ իմ յայսմ գիշերի և յամենայն ժամանակի: Ընկալեսջ զինդրուածս իմ որպէս զխունկ առաջի քո, պատա-

բազ երեկոյիս: Խաղաղութեամբ յայսմ աւուր ի սոյն ննջեցուք և զարթիցուք, զի դուք առ միայն առաքեալն Յիսուս քով բնակեցուցեր զմեզ: Ամենօրհնեալ կոյս Մարիամ, որ յոյսդ եմ մեղաւորաց, բժիշկ հիւանդաց, սփոփիչ կարօտեալոց, նաւահանգիստ ալեկոծելոց, բժշկեա, սփոփեա, պահեա, պահպանեա զիս յայսմ գիշերի և յամենայն ժամանակի. Ամէն:

Աղօթք ղեկման եպիսկոպոսեան ծառոյ.

Երբոր կզննեմ առ իմ՝ պղտիկութեամբ բրած իմ մեղքերս, ու զանցառութիւն նեբա, վնասաղեկութիւններկընայելնեբ իմ կեանքիս մէջը, և սակայն յոյս: Երբոր կզննեմ իմ սաբեբախտութիւններս՝ որ քուկինդրած ողկոյթիւններդ չեն չէ, բանի մը տեղ չիդրի, չնորհակալութիւն չըրի: Երբոր կը յիշեմ մինակ քու առջի սուրբ պատարագիդ, որ քեզ պէտք էր սիրէ ամէն սըրտով ու մտքով, ամէն ուժովս, ես քեզ չէ թէ միայն չիսիրեցի, հապա անոր դէմ քեզի թշնամութիւն ըրի. մանաւանդ

Թէ քու Թշնամիդ հետ մէկ եղայ, ա-
նոր հետ մէկտեղ քեզ անարգեցի։
Առնքեւասոր նման ուրիշ մեղքերսեր-
բոր կզրկեմ տէր իմ, ամէնէն գիտցէն
յուսահատութեան ծովի մէջ կիյնամ։
Հիմնալ ասչափ տարուան եմ եղեր,
տարիներս՝ օրերս՝ կանցընեմ, կուզեմ
զղջում ընել, ապրելքի ապաշխարու-
թեան հետ ըլլալ, չեմ կրնար ընել,
կրծուտանամ, վազվան կրձգեմ. Ես
որ չիյտեմ, ինչվան վազը կրնամ ողջ
մնալ. Ես որ սորված պիտոր ըլլայի,
վասրվածի պէս կրշփոթիմ, ինչ ընելս
չիյտեմ։ Բայց հիմա արթընալով իմ
Թմրութենէս, վախնալով իմ կեանքէս,
չըլլայ Թէ մահը գայ՝ յանկարծակի իս
քունիս մէջը գտնայ, ինչպէս որ գուն
զգուշացուցիր տէր իմ, կրզղջամ, կը-
ցաւիմ իմ ամէնէն ըրած մեղքերուս վրայ
որ պզտիկուց ինչվան հիմա գործեցի։
Նաև անոնց վրայ որ այսօր գործեցի
կամայ և ակամայ, գիտութեամբ և ան-
գիտութեամբ, չիտակ քեզի դէմ, հինդ
զգայարանքովս, սրտովս, ու մտքովս։

Ա մեղքերուս Թողութիւն առնե-

լու Համար ուրիշ Ճար չունիմ որ՝ մի-
նակ քու մարդասիրութիւնդ ոսքիդ
բունելով կաղալաղիմ. Տէր մի մոռա-
նար ի դատաստան ընդ ծառայի քում,
զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն
կենդանի. ինչպէս որ քուկին սիրելի
Ծառան Դաւիթ կաղալակէր: Տէր,
քուկին լսաելդ ուածդ եմ, քու ձե-
ռագործդ եմ, իմ գէշութեանս հա-
մար քուկին սատկածդ մի կորսնց-
ցըներ: Քու արարչական սէրդ յիշէ որ՝
ես յաւիտենից գիտէիր, ու սատկեցիր:
Քու փրկչական սէրդ յիշէ որ՝ իմ սի-
րոյս Համար ասչափ չարչարանք քաշե-
ցիր, ու ըրբ արիւնդ թափեցիր: Որչափ որ
իմ ամէն օրուան դործքերս ես կըզուա-
Հատցընեմ, այնչափ էս միտս խօսքս
պիտոր ըսեմ ինչպէս եաքի չունէս: Տէր,
մեծ են, ծանր են իմ մեղքերս, բայց
աւելի մեծ են քուկին ըրած շնորհք-
նէրդ, անոնք պարապ չերթան: Թէ
որ աս աշխարհս Թագաւոր մը՝ իշխան
մը՝ երբոր կուզէ՝ կընէրէ, քանի՞ աւե-
լի դու Թագաւոր Թագաւորաց, որ
ամէն ես բացարձակ, երբոր կուզես՝

կըներ ես, մեկը քու կամքիդ դեմ ի-
կըրնար դնել: Աշխարհին մեկ խօսքով
հնարկեր. Ջաքէոսը մեկ նայելով վըր-
կեցեր ես անոնցմէ առէլի վայելչը եմ
քու շնորհքիդ. այսօրալ ինծի լսե-
ցո՛ւ ան ձայնը՝ լսելով Աստուծոյ եղիր վըր-
կութիւն տանս այսմիկ: Ցուր ինծի աս
խրկվան առէնս մեկ շնորհք մը զըղջ-
ման, որ իմ մեղքերս լամ. առաւ մեկ
շնորհքընալ յարատեւութեան, որ ալ
չմեղանչեմ. բարեգործութեան հետ
ըլլամ. անանկով մեռնելուս առէնը
արդար գանըվելուն քու առաջդ ար-
ժանի ըլլամ: Յօղեա յիս մշակաւ և
առաքը եղէց, լուսաւ և քան զձիւն սպի-
տակ եղէց: Լսէ՛ս առաւ տեր աչաց իմոց,
զի մի երբեք ննջեցից ի մահ: Դուռ ես
պաշտպան իմ տեր, և ի՛նձ ուսքո յանձն
առնեմ զհոգի իմ:

ՂԱԶԱԹՒ

ՎԱՍԱՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՒՈՒՐ

ԵՕԹՆԵԿԻ

Ի ԿԻՒՐԱԿԷ Ի

Ի ընծայաբերութիւն առհասարակ արար-
չագործութեան, և յարութեան Քրիս-
ւոյ Տեառն Յիսուսի Քրիստոսի, և Եր-
կրպագութեան:

Հայր մեր, որ յերկինս ես.

Որչափ ես Աստուած, Հայր
սիրառատ մերոյ Յիսուսի Քրիստոսի, Հայր
դթութեան և Աստուած ամենայն մխի-
թարութեան: Անբաւ են քո բարե-
բարութիւնքդ՝ որ ըրեր ես ինձի սէր
իմ. չըմրնար մէկիկ մէկիկ յիշել ըս-
այնչափ անհամար արարածներ առեղ-
ծեցիր, բայց այնչափ առեղծուածոց
մէջ ես ընտրեցիր յատուկ բանական

մարդ առնչելիք, քու պատկերիդ նը-
ման : Զևոք տալիր որով կրբանիմ կը-
գործեմ. ոտք տալիր որով ժուռ կու-
գամ. աչք՝ նայելու, անկաճ՝ լսելու,
հոտառութիւն՝ անուշ ծաղկունքերուն
հոտերը առնելու, բերան՝ համ առնե-
լու : Կերսին կարողութիւնները տալիր,
երևակայութիւն՝ պատկերացնելու,
յիշողութիւն՝ միտք առնելու, բան ի
մտայական՝ դատաստան կարգելու, բա-
րին չարէն զատելու, աղէկը գէշէն ըն-
տրելու : Ա մեծ աշխարհքս ալ ինձի
բնակարան տալիր վայելելու, վրան վեց
օր աշխատեցար գեղեցիկ զարդարե-
լով. ամէն կենդանիները ինձի համար
բրիր, զանազան կանանչները, պըտուղ-
ներ, գետնէ ելած անբաս բարիքները
ինձի կերակուր պատրաստեցիր: Արե-
ւուն լուսը ինձի կենդանութիւն տը-
ալիր, օգը շունչ առնելու, զանազան
տեղեր, տալիր լեռներ, դաշտեր, քա-
լելու համար տալիր: Աչքովս զուարճ
ձալի բաներ առնչելով ինձի ալ քու
խօսքովդ հասկըցուցիր որ՝ աս տեղս
իմ պանդխտութեան տեղս է, ժամա-

նակվան տունս է. Թէ որ քու պատուի-
րանքներդ պահեմ, քիչ մը առեղնէն
ինծի յատուկ տուն մը պիտոր տաս,
քու սուրբ պըքայուԹիւնդ պիտոր
տանիս, որ յաւիտեան հոն նստիմ, կա-
տարեալ երանուԹիւնը վայելեմ:

Ո՛ր մէկ բանէն չնորհակալ ըլլամ
Հայր նախախնամող. Թէ որ գետինը
կոխեմ, դուն ես սահղծեր. Թէ որ
երկինքը նայիմ արևը տեսնելու, դուն
տըվեր ես ըղձալի՝ որով կըտեսնամ.
Թէ որ ոտքս քալելու կառնեմ, դուն
ես կըշարժես. Թէ որ չունչս կառնեմ,
դուն ես որ առիր օր ինծի չունչ կու-
տաս: Ո՛ր բանի փակչիմ, առիներդ քու
կինդ են, քէնէ եմ առեր. ես մէկ բան
մըննալ չունիմ. ան կենդանիներդը որ
դուրս կածեմ, քուկինդ են. ան պտուղ
ները որ կուտեմ՝ քուկինդ են, եսալ
քուկինդ եմ. մէկ հայր մը չեմ ճանչ-
նար քեզի նման: Բայց իմ չարուԹիւնս
է որ՝ անանկ կապրիմ, որպէս Թէ իմն
են, որպէս Թէ դուն չես տըված. ա-
նանկ կեցեր եմ, իբր Թէ ես իմն եմ.
վասն զի ես իս քեզի չեմ տըված, մէկ

երախտագիտութիւն մը չնորհակալութիւն մը չեմ ըրած, չեմ պաշտած, չեմ ծառայած: Ես ինձի տէր եմ դրէը սրտես մէջը, չեմ մոռածէը որ՝ այսօր ձեռքդ ինծմէն քաշես, կընիմ կըմեռնիմ:

Բայց դու Հայը յաւիտենական բարեգութ, աս իմ ապերախտութիւնս ողջոյնի սեպելով, մի բարկանար. Հապա խղճա, ողորմէ, ներէ, չնորհք ուր, որ ասկէց ետքը աղէկ ճանչնալով քու սէրութիւնդ իմ վրայ, և քու բարերարութիւնդ, քեզ պաշտեմ, քեզ սիրեմ, քեզ ծառայեմ ամէն օր, մանաւանդ աս սուրբ կիրակի օրս՝ ինչ որ պարտիկան եմ ընելու, աղօթքով և չնորհակալ ըլլալով պարտաւորութիւնս լինցընեմ, որ Յիսուսին հետ յարութիւն առնելու արժանի ըլլամ: Ան եղաւ այսօր մեղ առաջին պատուղ, և յոյս յարութեան, որ մեռելներուն մէջէն նոր ծաղիկ մը կենդանութեան բուսաւ, և կենդանութեան յոյս բուրեց բոլոր աշխարհին: Չնոր կենդանութիւնը՝ սուրբ արեան զօրութիւնը՝

իս մեռելնեկրուն մէջէն հանէ, որ քայուելեան փառաց արժանի ընէ. Ամէն:

Այլ աղօթք.

Ամենակալ արարիչ նախահինամօղ ամենայնի Հայր սուրբ, որ չէ թէ մինակ յոչընչէ կրաստեղծես, հապա կը պահես, կրհոգաս, կրնախախնամես. ոչչափ փորձանքներէ իս պահերես պղտիկուց ինչվան այսօր, քանի հիւանդութենէ, քանի մահուան փորձանքներէ իս խալըսերես պահապան հրեշտակին ձեռքովը: Եւ որ իմ մեղքերովս քեզի դէմ թշնամի եմ եղեր, դուն երբ չխոհանելով արժանաւոր ծառայներուդ պէս հոգացերես, կերակրերես, հօր պէս իս նայերես, ու ինչվան աս օրս հասուցերես: Պատուիրանք դրեր ես որ՝ կիրակի օրը սուրբ բռնեմ, բանս գործքս ձգեմ, մինակ քու ստեղծագործութենդ յիշելով հոգիս ըլլամ, բարիք ընեմ: Ուրանց քու պատուիրանքդ լսելու՝ ես ինծմէն պէտք էր որ յիշէի քու ըրածներդ, ու հնոր

հակալ ըլլայի. բայց անչափ է եղեր իմ գէշութիւնս որ՝ պատուէրդդալ չեմ բռնած, կիրակի օրերս պարապ անցուցեր եմ, ականջ քիչ մը ազօթք եմ ըրեր. ամենևին չեմ յիշած քու ըրած աղէկութիւնդդ, որ անչափ յօժարութենով ինծի համար աս աշխարհս ստեղծեցիր, որ իբրև թէ քու աշխատիլդ ինծի ցրցընելու համար, կամ մաց կամաց վեց օրուան մէջ ստեղծեցիր: Ինչ ըսեմ հապա՝ որ չնորհակալութեան տեղը՝ կիրակի օրերը մեղանչեր եմ, քու պատուիրանքներդ ոտքի տակ առեր եմ, քեզ բարկացուցեր եմ:

Երբոր քու ասչափ ըրած բարերարութիւններդ մէկ դիացէն կընչեմ տէր իմ, խիստ կամչնամ. մէկալ դիացեն՝ երբոր իմ ապերախտութիւնս կընչեմ, խիստ կըդողամ կըսարսափիմ. ինչ պատասխան պիտոր տամ դատաստանին օրը, երբոր ասչափ ըրած աղէկութիւնդդ ու իմ ըրած ապերախտութիւնս առջև դնես: Հիմա լալով կաղաչեմ Հայր բարեդութ, աս

օրվան սուրբ կիրակի օրս գնաստու-
Թեան շնորհք տաս, որ ասկէց ետքը
ես իս չտկեմ, երախտագէտ ըլլամ.
կիրակի օրերը չխաբանչեմ, սուրբ պա-
հեմ, մանաւանդ բարեգործութիւն
ընելու հետ ըլլամ:

ՅԵՐԿՈՒՀԱՒԱԹԻ

Յիշատակ արարչագործութեան և
Բարեխօսութեան հրեշտակաց:
Վասն Աղօթասիրութեան:

Սուրբ եղիցի անուն քո.

Ա՛ՄԵՆԱԿԱՐՕՂ Հայր բարեգութ,
սուրբ ես, և սուրբ է անուն քո. և միշտ
փափագիմ որ սուրբ և փառաւորեալ
ըլլայ անուն քո: Որ այսօր արարչա-
գործութեամբ ամ աշխարհիս ջուրերը
բաժնելով կարգաւորեցիր. երկինքը
դաս դաս հրեշտակաց ստեղծեցիր.
մարդս որ աշխարքիս վրայ դրիր, որով
հետև կերպ կերպ մեղքերու մէջ կ'նե-
լով հոգևոր հիւանդութեամբ, կուրու-

թեամբ, կաղալով, գօսանալով հի-
ւընացաւ, գթալով մարդուս վրայ՝ մեկ
խնամալի աւազան մը դրին Պրոբա-
տիկէ աւազանին նմանութեամբ, քու-
հրեշտակներուդ յանձնելիքը, որպէս
զի անոնց գալովը օգնելովը՝ ան հի-
ւանդութիւնեն խալըսի։ Եւթը քու-
կին միածին Որդիդ աշխարհ իջնելիքը,
որ ան իմ հինցած շատ տարիան հիւան-
դութիւնս՝ որ հրեշտակները չկրը-
ցան ըժշկացնել, նոր աւազան մը
տութեան սահմանելով, մեկ խօսքով
ըժշկացուց միածին Որդին, ոտք հա-
նեց երկրաւոր, պատուիրելով ինծի, Ա-
հաւադիկ ողջացար, մի ևս մեղանչեր,
զի մի չար ևս ինչ լինիցի քեզ։ (Յհ.
Ե։) Խակ ես իր խօսքին մեկ չդնե-
լով, նորէն հիւանդութեանց մէջ ձգե-
ցի իս. նորէն կարօտ եղայ խորհրդոյ
ապաշխարութեան, կարօտ եղայ բա-
րեխօսութեան և օգնութեան սրբոց
հրեշտակաց։

Հինն Յունդնեմասն Հայրապետան
մերոյ Յիսուսի Քրիստոսի. ուսոմ ա-
ռենայն նահապետութիւն յերկինս և

յերկրի, Ամոռք, Տէրութիւնք, Պատուհասք, Իշխանութիւնք, Սերովբէք, և Քերովբէք. ազաչելով որ անոնց բարեխօսութիւնը ինծի համար ընդունելի, որ բաւական եմ ապրիլ մարդկան, միջնորդ մահու և յարութեան. մանաւանդ սրբոյն Միքայէլի հրեշտակապետի, և Գաբրիէլի, և Ռափայէլի բարեխօսութիւնը քեզ մատուցանելով կազմեմ շնորհք տաս որ՝ ինչպէս հրեշտակները երկինքը քուկին անունդ կը փառաւորեն միշտ երգելով Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեց, և որչափ երգելով փառաբանեն, այնչափ աւելի կրզմայլին, եսալ երկրիս վրայ սուրբ պահեմ քուկին անունդ՝ փառաբանունդ երգելով և աղօթելով: Սուրբ պահեմ քուկին անունդ նաև բարի գործելով. որպէս զի իմ բարի գործքերս տեսնալով՝ ուրիշներնալ փառաւորեն զքեզ Հայր մեր՝ որ յերկինս ես. որպէս զի օր մինալ արժանի ըլլամ հրեշտակաց հետ մէկտեղ երկինքը զքեզ փառաւորելու յաւիտեան. Ամէն:

ՅԵՐԵՔՀԱՒԱԹԻ

Ձէլաթեան արբլագործութեան, և
Բարեխօսութեան Յովհաննու Դրպէի։
Վան Ապահարութեան։

Եկեսցէ արքայութիւն քո.

ՅԱՑՐ երկնաւոր յաւիտենական, որ այսօր բանիւդ այնչափ ծառեր, ծաղիկներ, կանանչներ առեղծեցեր, և զանազան գեղեցկութեամբ զարդարեցեր աս աշխարհս. խաղդրեր աշխըրհիս մէջ վայելելու, և քեզ փառաւորելու։ Խակ ես նմանեցայ մէկ ճամփորդի մը՝ որ աւազակներու հանդիպելով, ինչ որ ունէր առին թալանեցին, և զինքնալ վիրաւորելով կիսամեռ թողուցին ճամփու մէջ։ Աստուածնայեցաւ նաև նմանները լինծմէն անմեղութեան չնորհքը առին կողոպտեցին. իմ հոգիսալ զանազան մեղքերով խոցոտվմահուան դուռը հասուցին իմ կենացս ճամփուն մէջ։ Կաղաղակեր իմ հոգիս մէկին մը կալին՝ մարգարէներուն, վկասցինէ

բան, մէկ փրկիչ մը կրնանաւէր, մէկը
չիկար որ՝ ինձի օգնէր: Իսկ դու Հայր
բարեգութ, գթալով իմ վրայ, հաձե-
ցար խրկել քոյ միածին Որդիդ Բանն
Աստուած փրկիչ և բժիշկ ինձի. որ երկ-
նային թագաւորական աթոռէն աշ-
խարհ եկաւ, Դաւթի աթոռը նստաւ
Հնամարիա թագաւորն Հրեից և մեզ հա-
ւատացելոց. ոչ ոք ինչ փրկելով բժշկե-
լով երկնային արքայութ Հօրդ հաս-
ցընէ: Բայց աշխարհ անիկայ չձանչ-
ցաւ, սատարացիի տեղ դրաւ. և որպէս
ոչ ձանչնայ աշխարհ՝ առաջ կարա-
պետ և աւետաւոր արքայութեան և
գալստեան Յիսուսի խրկեցիր զսուրբն
Յովհաննէս Մկրտիչ, որ եկաւ Ճանչիայ
պատրաստեցան փրկչին, որ Թագաւո-
րութիւն սատանայի հալածելով,
արքայութիւնն Աստուծոյ պիտոր քե-
րեր. ըզցոյց Յիսուսին գալստոյ, խիստ
վարուք և ճգնութեամբ ապաշխարու-
թիւն և խոստովանութիւն մեզայ քա-
րոզեց. օրինակ տվաւ որ՝ մարդիկ
պատրաստ ըլլան արքայութիւնն Ա-
ստուծոյ ընդունելու, մեր ապրինալ

Եղաւ յատուկ բարեխօս և պաշտպան։

Հիմա սրբոյն Յովհաննու մկրտչի բարեխօսութեամբը կաղաչեմ Հայր երկնաւոր, որ իմ մեղքերուս խոցերը բժշկեմ, իրեն Հգնութեան և ապաշխարութեան օրինակը սրտիս մէջը տպաւորեմ, որ ապաշխարելով Թողութիւն գտնամ իմ մեղքերուս, առջի կորսընցուցած շնորհքներդ նորէն վաստկիմ. բժշկվի իմ կիսամեռ հոգիս՝ որ չարաչար վիրաւորեցաւ աս աշխարհիս Համբոյն մէջ։ Ես որ դուրս ընկած եմ արքայութենէն Աստուծոյ, և հիմա ցիս տանին շնորհաց արքայութեան մէջ մտայ, որ վեզ ժառանգակից ըրաւ արքայութեան քոց վաստաց, ասկէց ետքը Յիսուս Թագաւորէ իմ սրտիս մէջ, որուն Թագաւորութեան վախճան պիտոր չըլլայ։ Ըըլլայ որ՝ Հրեից պէս չՀանչնամ զԹագաւորն Քրիստոս, այլ անվեղ մանկանց պէս ովանն նա երթեւեմ ընդունիմ զարքային խաղաղարար զՔրիստոս։ Տէր մեր արքայ՝ Թագաւորէ իմ վրայ, որպէս զի եսալ

թագաւորեմ ընդ քեզ յերկինս: Այլ բարեգուէթ, ասէից եաքը չի թագաւորէն իմ մարմնոյս վրայ մեղքերը, այլ միայն աղքայութիւն քո Որդւոյդ սիրելւոյ. վասն զի ես տառապեալս և վիրաւորեալս աս երկան Ճամփորդութեան և պանդխտութեան մէջ ի՞նչ բանի կրնամ ցանկալ, բայց եթէ աղքայութեան քոց փառաց: Երանի՛ թէ՝ օր մը առաջ գայ հանգի աղքայութիւն քո աղքայութիւն յաւիտենից՝ որ է տուն երկնաւոր Հօրդ՝ ուր օթևանք բազուկք. ուր լաւ է նստիլ մէկ օր, քան հազար օր աշխարհիս թագաւորութեանը մէջ:

Ի ՁՈՐԵՒՔՀԱՒԱՏԻ

Յիշատակաւ արտաքոյ ծնունդեան և մահուդեղութեան Քանին ի սբ. Խաչին։ Վասն հնազանդութեան և խոնարհութեան։

Եղիցին կամք ոք որպէս յերկինս և յերկրի.

Ոչ ես ամենակարող ամենաբարի Հայր բարեգութ, որ միշտ իմ աղէկութեանս համար աշխատելով, առաջ աշխարհիս ըստեղծման առեր՝ այսօր ամենեքուսոցմէջ սերմանեքսեր մանեցիր, որ միշտ պտղաբեր ըլլան, ինծի համար պտուղ տան։ Երբը քու միածին Որդիդ աշխարհ խրկեցիր, որ եկաւ մարդկային կերպարանքով մէկ երկնային սերմանացան մը եղաւ. իր բեն խօսքերը եղան մէյմէկ հնորհաց սերմունք, որպէս զի իմ հոգիս ընդունելով ան սերմունքը, քեզի պտուղ տայ բարեգործութեամբ, երկնաւոր Հօրդ կամքը կատարելով։ Բայց ան

սերմը՝ որ Ճամփու վրայ ընկաւ, կոխ-
վեցաւ, Թռչուններուն կերակուր ե-
ղաւ. ան որ ապառաժ քարի վրայ ըն-
կաւ, առջի բերանը կանանչցաւ, եղբը
չորցաւ. ան որ փուշերուն մէջ ընկաւ,
փուշերէն խղդըվեցաւ. սաանկով ամ-
մէնեան անպտուղ եղան. միայն ան որ-
վաւ պտուղ, որ աղէկ կակուղ գետնի
վրայ ընկաւ:

Սաանկ իմ սրտիս մէջնալ շատ հո-
գևոր սերմունք սերմանեց Որդին միա-
ծին աւետարանին խօսքերով, նէրսէն
միտքս արթնցնելով, և քարոզչաց խօս-
քեր լսեցընելով: Բայց իմ սիրտս եր-
բեմն Ճամփու վրայ ընկածին նմանե-
ցաւ, որ սատանան փրցուց, անպտուղ
եղաւ. երբեմն ապառաժ քարի նը-
մանեցաւ, որ առջի բերանը իր խօսքին
մտիկ դրաւ, եղբը ձգեց Թողաւ. եր-
բեմն փուշերու մէջ ընկածին նմանե-
ցաւ, որ աշխարհիս ըղձանքի մէջ ընե-
լով պտուղ չհրաւ. սաանկով բոլոր
իմ կեանքս անպտուղ անցաւ գնաց:

Հիմա կաղաչեմ Հայր երկնաւոր,
կակըղցուր իմ սրտիս կարծրութիւնը,

որ ասկէց էտքը ազէկ կակուղ գետնի նման ըլլալով, հարիւրապատիկ բարի պտուղ բերեմ առաքինութիւնովս քովիդին կամքդ կատարելով, ինչպէս որ երկինքը հրեշտակները կըկատարեն: Դու ես այն մարդասէր Հայր երկնաւոր՝ որ աշխարհիս ստեղծման առեները առաջ լոյս ստեղծեցիր, արեգակն ու լուսին հաստատեցիր, անով իմ խաւարած աչքս կըտեսնայ կըվայելէ ամէնէն բան. էտքը Բանն Աստուած աշխարհ խրկեցիր, որ մարմնանալով ի սրբոյ կուսէն Մարիամայ, եղաւ իմ հոգւոյս լման արեգակն արդարութեան՝ լուսաւորելով իմ հոգիս. իսկ ամէնօրհնեալ խաչը կոյսն լման լուսին միսիթարութեան գիշերվան մէջ, որ մեզքերով խաւարած հոգիս կըլուսաւորէ:

Օրհնեալ ըլլայ կամք երկնաւոր Հօրդ՝ որ ասանկ բարի կամեցար մեզի. օրհնեալ ըլլայ և քովիդին կամքդ ալ Բանդ Աստուած՝ Յիս Քրիստոս, միածնին Որդի Աստուծոյ, որ կամեցար երկինքը թողուլ երկիրս իջնալ Աստուած

ըլլալով՝ հողէղէն ըլլալ, մարմնանալ
ի սրբոյ կուսէն Մարիամայ, երկնա-
ւոր Հօրդ կամքը կատարելու համար:
Ա՛ ինչ սէր է սէր իմ, ինչ սէր է որ
կըցցընես իմ վրայ. իս սիրեցուդ հա-
մար մուցար քու վաւքդ, քու Ա-
ստուածութիւնդ: Ձիչէ սէր իմ աս
քու անճառելի խոնարհութիւնդ. ա-
ւաչնորդէ ինծի քու հնազանդութիւդ
Ճանիան հետևիլ, ու խոնարհութիւն
ունենալ, որ քու ձայնդ լսելով երկ-
նաւոր Հօրդ կամքը եսալ կատարեմ,
և քու փոխանորդներուդ կամքը՝ որ
դրեր ես աշխարհիս վրայ: Վ անդի դուն
եղար մեզի առաջին ծնօղ, իսկապէս
նախահայր Ադամ, ոչ անհնազանդ որ-
պէս առաջին Ադամ, այլ հնազանդե-
լով կամաց Հօրն երկնաւորի ծնար զմեզ
յարչարանաց արեամբ խաչի: Եւ քու-
կէն ծնօղդ ալ ամենասրբուհի կոյսն Մա-
րիամ եղաւ իսկապէս նոր Եւա, քնա-
կարան ամենամաքուր Բանիդ Աստու-
ծոյ, ծնօղ Որդւոյդ միածնի, և մայր
կենդանութեան. յորոյ մաքուր ար-
դանդի փրկութիւն աշխարհի սկզբը-

նաւորեցաւ , գործ նախասահմանու-
թեան մերոյ անօրինեցաւ , իբրեն յանձ-
նելով զմեզ մահուանդ առեղծ մաս-
նաւոր յանձնարարութեամբ :

Առ ի մեր նախամայրն Եւա մեղ
անէծք բերաւ , հիմն մեզ նորն Եւա
կեանք վերկութեան բերաւ , տալով
զքեզ միածին Որդիդ՝ պատուական, պա-
տուական անմահական , որով վերցուե-
ցան հին անէծքը , ուրախացան ամէն
մեղաւորք : Դու նորդ Ադամ՝ , Բանդ
Աստուած մարմնացեալ՝ ելար ի նորդ
՝ի մէջ Հօր Աստուծոյ և մարդոյ , իսկ
նորն Եւա ելաւ ի նորդ և բարեխօս
՝ի մէջ մեր և Հօր , և Հարսն Հոգւոյն սըր-
բոյ ընծայեալ յերկրէ յերկինս : Երբոր
արդար դատաւորդ նոտիս արդարու-
թեան դատաստանը , այս Հզօր բարե-
խօսն է մեր յոյսը , որ քուկին արդար
բարկութիւնդ անցընէ , և ողորմու-
թիւնդ չարժէ մեր վրայ գթալ և նեբել :

Ի ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ցիլափախա արաբագործութեան, և
հաղորդութեան առաբ Խորհրդոյ, և
Բարեխօսութեան առաքելոց:
Վասն Ապաշխութեան յԱփոստաց:

Ո՛հաց մեր հանապազորդ տուր մեզ
այսօր:

ԱՂԻ ամենեցուն ի քեզ յուսան
Հայր ամենառատ, որ տաս կերակուր
նոցա ի ժամու. բանաս զձեռն քո,
և լցուցանես զամենեսեան քաղցրու-
թեամբ կամաք քո: Ցուվին առատա-
սրտութեամբդ հերիք չիսեպեցիր աշ-
խարհիս ստեղծման առեներ այնչափ
պտուղներըդ մարդու համար կերա-
կուր ըստեղծել այլ նաև ձկներ, կեն-
դանիներ, թռչուններ ստեղծեցիր,
մարդուս կերակուր տալիր՝ որ ուզա-
ծին պէս վայելէ: Եւքնալ երբոր մար-
դըս անապատիմէջ կարօտեղաւ կերա-
կուրի, դու երկինքէն մանանայ ինջե-
ցընեցուլ կերակրեցիր այնչափ առեն,

բայց մարդս անոնք ի փառս քո չվայելէց, այլ որկրամոլութեամբ, շուայտութեամբ շատ անգամ մեղանչէց: Եթէ աս բանիս դէմ՝ քուկին միածին Որդիդ աշխարհ իրկեցիր. ան սորվեցուց իրեն սլաքովը՝ օրինակովը՝ և քարոզութեամբը՝ որկրամոլութիւնը զըսպել, և կերակուրը միայն պիտանաւորութեան համար ի փառս Աստուծոյ վայելել: Երբոր հինգ հազար մարդ անապատի մէջ կարօտ եղան հացի, առաքեալները բաւեիսօս եղան իրեն աղաչեցին. ինքը սորվեցուց հացը օրհնել և հինգ հացը օրհնելով հինգ հազար մարդ կերակրել. սորվեցուց հոգ չեքաշել մարմնաւոր հացի համար. վասն զի Աստուած է՝ որ մարդուս մարմնոյն համար հաց կըպատրաստէ, քիչովը շատ մարդ կըկերակրէ, և մարդուս հոգւոյն համար հաց հոգևոր բանին Աստուծոյ կըպատրաստէ:

Մարգարէները՝ առաքեալները՝ և ամեն մարմնաւոր հովիւ և ձիւնորս ան մարմնաւոր ոչխարներուն ու ձիւներուն որ դուն տեղ ձեցիր այսօր. իսկ Որդին

միածին խըրկեցիր հովիւ՝ որ ան մար-
ձնաւոր հովիւներըդ և ձկնորսներըդ ըրաւ
հովիւ հոգւոր, և ձկնորս հոգւոր, որ
ձկներուն տեղը մարդիկ որսացին հո-
գւոր կերակրով քարոզութիւնէ բանիւն
Աստուծոյ: Անոնքալ սորվեցուցին որ՝
մարգս մարմնաւոր հացի համար չաս
չհոգայ. երբոր աղօթիւք Աստուծոյ
դիմէ՝ կըգտնայ, թէև անապատի պէս
տեղ մնալով բոլորովին կարօտ ըլլայ
հացի. վասն զի լուսնիւն հացի և
պինդ գուկին ձեռքդ է տէր իմ, զաշ-
խարհ լըիս իւրով դու հաստատեցեր:

Բայց փառք մարգասիրութեանդ
սէվ հովիւ երկնային Յիսուս միածին,
որ փոխանակ ոչխարներուն կաթն ու
միսը ձաշակելու տեղը՝ դուն կուտաս
անոնց թէ մարմնաւոր կերակուր՝ և
թէ հոգւոր կերակուր՝ քու անապա-
կան մարմինդ և արիւնդ: Առաքեալնէ-
րուդ կուտաս զօրութիւն, որ մեկ
երկնային հացով հազարաւոր մարդիկ
հոգւորապէս կըկերակրեն ինչպէս աշ-
խըրհս եաքը. սանկով ինչպէս որ
մարմինը հանապազորդեան կերակրոյ

կարօտ ըլլալով, կրգտնայ ամէն տեղ, ասանկալ հոգին ամէն օր իր կերակրոյն կարօտ ըլլալով ամէն տեղ կրգտնայ ան հոյն կենդանի, ան հոյն հրեշտակայ, որ Թէպէտ բեթղեհէմ ասա անբանից մսրուն մէջ, բայց աշխարհ ամէն կրվայելէ աս սրբազան ածիւ կերակուրը, որ մինք չենք սերմաներ, չենք ժողվեր. այլ դու տեր չարչարանքով սերմանեցիր, և քու մահուանդ մանգալովը հնձեցիր, և կեղեցնայ շուրմարանին մէջ ժողվեցիր, որով աշխարհ ամէն կրկերակրըվի առաքեալներուն ձեռքովը:

Ազաչեմ տէր իմ բարեխօսութեամբ նոյն սուրբ առաքելոց, չփակսի իմ մարմնաւոր հացս՝ որուն իմ կենացս ճամբուն մէջ կարօտ եմ: Չիպակսի նաև հոգևոր հացն երկնայինն, որուն աս պանդխտութեան ճամբուն մէջ կարօտ եմ. վասն զի հանապազօր կըմեղանչեմ, հանապազօր ալ կարօտ կըլլամ երկնայինհոյնին բժշկութեան: Տուր նաև ընորհք որ՝ մարմնաւոր կերակուրի և ապրուստի համար շատ

չի հոգամ, և չափաւորապէս վայելեմ։
չըլլայ որ մարմինս ծանրընալով վար
քաշէ իմ հոգիս շուայտութեամբ և
արբեցութեամբ. և որչափ որ ինչվան
հիմա անկարգաբար վայելերեմ՝ նե-
րուին տաս ։ Իմ ըրած անկարգու-
թեանցս քաւութիւն գտնալու հա-
մար քեզ կընդուիրեմ Յիսուսին պաքը,
ծարաւը, ժուժկալութիւնը, որ գո-
հանալով քեզ Հօր երկնաւորի կըն-
ծայեր. անունը ընդունելով քաւեսիմ
որկրամոլութիւնս կամ աւելորդ հոգս
որ իմ կեանքիս մէջ ըրերեմ ապրուստի
ու կերակրոյ համար։ Ընորհք ապաւի-
նութեան տաս ի քեզ յԱստուած,
որ նաև ձագերուն՝ ձնձղուկներուն՝
կերակուր կուտաս ամէն օր ։

Յիշափախա- ապարլափերթուԼեան , և պահոց , և Լարլարանաց Վերխոպոսի : Վան ժուժկալուԼեան, և ճգնուԼեան:

Եւ Թո՛ղ մեզ զպարտիս մեր որպէս և մեք Թողումք մերոց պարտապանաց:

Ա ՐԿԻՐՊ ԱԳԱՆԵՄ՝ քեզ Հայր երկայ- նամիտ, որուն յատուկ է ՀայրուԹեան անունը, յատուկ է նեղել և Թողուլ մեր պարտքը , և պատժելոյ տեղ միշտ բարեբարուԹիւն ընել: Որ աշխարհիս սկզբնաւորուՀ- ատեղը այսօր նախա- ատեղծ մարդն Ադամ ստեղծեցիր նման քու պատկերիդ, դրախտին մէջը դրիր վայելել ամէն բարիք . մարդս ապե- րախտ գանցնելով քեզի դէմ ելաւ . սատանայի խօսքին մոխիկ դնելով որկ- րամոլուԹեան մեղքով մեզանչեց քե- զի Թշնամի դարձաւ : Ընկեց եաքը իր կեանքը դարձաւ եղաւ նման խուզ ու համր գիւահարի , որ ուր որ կերԹար՝ հանգըստուԹիւն չէր ունենար , մեկ

մեղքէ մէկալ մեղքը կ'ելնայ. երբեմն
ցանկութեան կրակին մէջ, երբեմն
դալջութեան ջուրին մէջ կը ձգէր սա-
տանան որ կորնչցնէ: Մարդը կը-
վերփրար, ակռանէրը կրկրճըտար, Հայ
մը չէր դառնար խալըսելու. մարդարէք
կաղաղակէին, դէպ ի երկին կրնար դըր-
նալ, առաքեալները կրջանայէին՝ չէին
կրնար խալըցընել:

Իսկ դու Յիսուս միածին, երկնաւոր
Հօրդ հրամանովը իջար բարձր լեռ-
նէն երկնքէն՝ բժշկել աս անբժշկելի
ցաւը մարդուս. ազքայութենէդ հե-
ռացար, աշխարհ եկար. սատանանէ-
րը հալածեցիր, մարդը ողջընցուցիր, և
սորվեցուցիր որ սատանայ սատանան՝ որ
չսատնցվնէ պզտիկուց սիրելէ հո-
գիին վրայ, իրեն ուշադութիւն դար-
ձուցեր մեղքը, սատանան միայն պաքով
և աղօթքով կրնայ ելլալ: Ասոնք քու-
կին կեանքըդ օրինակ տալիր, որ մենք
ալ անանկ ընելով փրկութիւն գըտ-
նանք: Սատանան նախանձելով քու
երկնային վարքիդ, ու չնճանչնալով
Աստուած ըլլալդ, Ադամայ պէս քու-

կին քովդալ եկաւ փորձելու, մեղքի մէջ խօթելու. դուն որ անկարօտ էիր օգնութիւն դանալու, իբր կարօտ անոր ձեռքէն խալըսելու համար՝ երկու բան ըրիր օրինակ տալու համար մարդուս. մէյմը պաք պահել, մէյմեալ անդադար աղօթք ընել. քառասուն օր սատանան չհեռըցաւ՝ քեզ փորձելուզեց, քառասուն օրալ դուն պահեցիր ու աղօթքի հետ եղար մեզի սորվեցընելու համար: Ա՛ս հերիք չեղաւ, հոգը դու քովինն կեանքդ մարդուս համար տրվիր. աս ուրբաթվան օրը՝ երբոր մարդս սաեղ ծեցաւ, աս օրս դուն ալ զանազան չարչարանքներով խաչին վրայ գամ վելով՝ քեզ պատարագ մատուցիր: Հօրն երկնաւորի, որ մարդուս մեղքերուն թողութիւն քաւութիւն ըլլայ, և Հայր Աստուած հաշտվի մարդուս հետ, անոր հաշտվելովը՝ մարդուս անբժշկելի ցաւը բժշկութիւն գտնայ:

Հիմա Հայր բարեգութ, երես անկեալ կրնաստավանինք որ՝ անհամար բիւր մեղքերու պատրհանութիւն ունինք, բայց մեզի բարեխօս ահա քու

միածին Որդիդ է, որ այսօր խաչին վը-
րայ կախված ըլլալով իր Հշնամինե-
րուն և խաչ հանօղներուն համար Թո-
ղութիւն կը խնդրէ. Հայր, Թող դոցա,
զի ոչ գիտեն զինչ գործեն. (Ղ-ւկ. իգ.
54:) Վայ ինձի, ես անոնցմէ մեկն եմ՝
որ Յիսուս միածինը խաչ հանեցի:
Վայ ինձի, քանի քանի ծանր մեղքեր
ունիմ, անոնց պարտքին տակը ընկած
եմ. բայց ահա ահէր, քու ողորմու-
թիւնդ քու կին առջիդ է. մեզի փրր-
կութիւն քու միածինդ է, որ մեր վրայ
գրթալով մեզի տվիր: Քու Որդիդ
միածինն է՝ որ անմեղ անարատ այսօր
խաչին վրայ խոցվելով՝ մեր պարտքերը
կատարեալ վճարեց. ոչ ապականա-
ցու արծըթով, այլ իրեն պատուական
արիւնովը. և ինչ Հշնամութիւն որ
նախասահմանեցիր Ադամ ըրերէր գիտու-
թեան ծառին տակը, այսօր միածինն
Յիսուս ան սուրբ ծառին խաչափայ-
տին վրայ կախվելով վերցուց, և զմեզ
երկնաւոր Հօրդ հետ հաշտեցուց, ի-
րեն սուրբ արիւնը մեզի գանձ թողու-
թեան աւանդեց:

. Հիմա սա գանձը ահա քեզի կըմա-
տուցանենք Հայր սուրբ , որչափ որ
պարտք ունինք՝ սա անհուն գանձէն
առնելով մեր պարտքը ջնջես : Թող
մեզ զպարտիս մեր՝ որոնց համար այս-
չափ բարեբարութիւն ըրիր , այսչափ
հոգ տարիր : Թող մեզ զպարտիս մեր .
զի Թէ դու զանօրէնութիւնս մեր քըն-
նես , ո՛վ կրնայ քու առջիդ երևնալ,
ո՛վ կրնայ Թողուլ մեր մեղքը . ոչ եղ-
բայր , և ոչ Հայր . չկայ մէյմը որ փրկէ
ու ապրեցընէ , միայն քենէ է ո՛վ Հայր
լուսոյ՝ ողորմութիւն և առատ առա-
ջի քո փրկութիւն : Կըտեսնաս գիտես
որ մեր միաքը՝ կամքը՝ պզտիկուց չա-
րիք ընելու կըվազէ , պզտիկուց մեղքը
ունակութիւն ըրեր է, դու որպէս Հայր
մի բարկանար , այլ Ներէ , անտես ըրէ :

Ընդհակ առ՛ւր, այսօրուան պաքը որ
սուրբը եկեղեցին դրեր է , եսալ ապաշ-
խարութեամբ պահեմ , չէթէ մինակ
բերանս , հապա ամէն զգայարանք-
ներս , ամէն մեղքերէ սուրբ պահեմ
հոգիսալ մարմինսալ : Եւ ինչպէս որ
սուրբերը իրենց թշնամիներուն՝ հա-

լածիչներուն կըներէին, բարիք կը-
նէին, եսալ իմ մօտիկներուս՝ իմ Թըշ-
նամիներուս՝ ինծի չարաարմներուն՝
լեզուագարնէրուն՝ բամբասողներուն՝
ամէնուն՝ Թողում իրենց պարտքերը
նէն, որ դուն՝ իմ մեղաց պարտքերը
Թողուս. ինչպէս որ սորվեցուց մեզի
Յիսուս քու միածին Որդիդ։ Թող
ուր կալաչեմ Հայր սուրբ՝ Յիսուսի
արդեանցը համար՝ իմ ամէն կերպ
մեղքերուս, Թէ որ իմ Թշնամիներուս
չնեղեցի, ինծի դէմ եղողները չ-
սիրեցի, և ուրիշ ինչ մեղք որ գործե-
ցի ՚ի մանկութենէ ինչպան հիմա։

Ի ՀԱՒԱՏՈՒ

Յիշատակ արարչագործութեան, և
Բարեխօսութեան ամենայն սրբոց:
Վասն Աբիւթեան:

Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն,
այլ փրկեա՛ ի չարէ:

ՅԵՐԵՍՍ անկեալ աղաղակեմք առ քեզ ով Հայր մեր, ով գթասուր մեր, ով փրկիչ մեր, փրկէ զմեզ ամենեն փորձութենէ. մի թողուր որ չարիք մեր վասյ իշխեն: Դու որ վեց օրուան ամենն արարչագործութիւնը լմնցուցեր էիր եւ՝ եօթներորդ օրը հանգիստ առիր. և պատուիրեր որ՝ մարդնալ ան օրը հանգչի իր ամենն գործքերեն, հանգչեցուր մեզ աւերչի սատանայական փորձութենէ, և աշխարհիս փորձանքներէ, որ աչեկոծութեան պէս վար նիս կրժողովին: Դու Հայր ողորմութեան, որ տեսնալով մարդկային աչեկոծեալ կեանքը աս աշխարհիս մէջ, խղճալով խրկեցեր երկինքեն Որդիդ

միածնին, որ եկաւ մեզ վարձեաւ նա-
ւասփեան մը պէս մեռաւ եկեղեցւոյ
նաւուն մէջ, անպղծելով մեզ սա աշ-
խըրհիս սարսափելի փորձանքներով
ալեկոծեալ ծովուն մէջէն. ուսկից
չկրցան մեզ փրկել ոչ մարգարէք, ոչ
առաքեալք, այլ աղաղակեցին սա երկ-
նային նաւապետին ու փրկչին, ՏԷր
փրկեա՛ զմեզ, զի կորնչիմք աւասիկ:

Իսկ դու Յիսուս միածին, եւսր ար-
ենցար անոնց աղաղակելովը, անոնց
բարեխօսութեամբը, մեզ սատեղով
մը խաղաղացուցիր աշխըրհիս ալեկո-
ծութիւնը. սորվեցուցիր ինչպէսք է
ընել որ՝ մեղաց ալեկոծութիւնը դադ-
րի. ցրցուցիր որ մեզ հասիկ Ճար՝ հա-
ւատաքով դիմելն է Աստուծոյ՝ որ ամէն
մեկ քրիստոնէին և եկեղեցւոյ նաւը սա
տանայի որոգայթէն և մեղքի մէջ ըն-
կղմելէն կրնաղատցընէ: Քովին վարդ-
ալ օրինակ տուիր, ցրցուցիր ինչպէս
պէսք է հաւատքով, յուսով, պաքով,
աղօթքով, փորձութենէ խալսիլ. ա-
ռաջ նեղութիւն քաշել, ետքը հանգ-
չիլ:

Հիմա եսալ աս աշխարհիս ծովուն մէջ ընկեր կերթամ, կը վախնամ որ՝ ինչպէս օձը խաբեց նախաստեղծ մարդը փորձութեամբ, սատանայ իրեն խորամանկութեամբը կա խաբէ՝ Աստուծմէ հեռացընէ. վասն զի ամէն փորձութեան տակը ընկած է մարդուս կեանքը. մանաւանդ թէ ինքը ինքիրեն փորձութիւն է: Բայց դուն գիտես որ ինչ է իմ զօրութիւնս. թէ որ կուզես որ փորձութիւն ու նեղութիւն վրայ գայ վրաս, եղկելին կամք քո օրհնեալ. որովհետև ոչ դուն ցիս սուս, և ոչ մայր քո սիրելի, ազատ գտաս դառնակսկիծ չարչարանքներէ և նեղութիւններէ. այլ հաւատարիմ ես Աստուած, որ զմեզ փորձութենէ մէջ չես ձգեր մեր կարողութենէն աւելի:

Կրնդրեմ որ փորձութեան հետ մէկ ճանիկայ մընալ ցրցընես որ համբերեմ. տաս շնորհք արիութեան որ յաղթեմ ամէն փորձութեան. եւ ինծի չսպասելնիմ, այլ՝ քեզ տէր ցիս սուս մարդասէր, որուն Հայր Աստուած ամէն գտաստան տվաւ, չէ թէ

աշխարհ դատելու, այլ աշխարհ փըր-
կելու համար. պայծառ հաւատովք
քեզ ապաւինիմ, յուսով և սիրով
քեզ դիմեմ: Ո՛վ ան զի ո՛վ մեզ խալըս-
ցընէ հոգւոյ և մարմնաւոր վտանգք-
նէրէն՝ որ ամէն օր ծովու մը պէս վը-
րանիս կըթափին. ո՛վ մեզ փրկէ սատա-
նայէն ալէկոծութենէն, որ ամէն
օր մեզ կորսընել կուզէ, եթէ ոչ դու
Յիսուս, զոր Հայր Աստուած ասոր
համար խրկեց աշխարհ: Դու միջնորդ
և բարեխօս, և փրկութիւն մեր, որ
մեղքերէ և մահուանէ քուկին արիւնդ
թափելով փրկեցիր, և այսօր թաղվելով
և յարութիւն առնելով մեզ ալ յոյս
յարութեան պարգևեցիր, և հանգիստ
յաւիտենական երանութեան: Տէր
փրկեա զմեզ, զի կորնչիմք աւասիկ:
Տէր, արժանի ըրէ որ ինչպէս ամէն
սուրբք քուկինօգնութիւնդ գտնալով
ամէն աշխըրհիս փոթռութենէն խալը-
սեցան, արքայութեան փառաց ար-
ժանի եղան, և հիմա կըհանգչին հան-
դիստ յաւիտենական, ասանկալ ան
արքոց բարեխօսութեամբը՝ հասուկ-

տաց , մարգարէից , առաքելոց , մարտիրոսաց , Ճգնաւորաց , և կուսանաց, միանգամ անուամբ՝ և մանաւանդ քովիդն օրինակիդ հետևելով, ամենին փորձութեան վրայ ելլալով, վայելենք այն երանութիւնը , որ դուն մեզի համար վաստակեցար ու պատրաստեցիր : Զի քո է զօրութիւն , և զօրութիւն , և փառք յաւիտեանս . Ամէն :

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ

Խոստովանութիւնէ առաջ չորս բան պէտք է. մէյմը՝ գանիլ մեղքէ. երկրորդ՝ միտքը բերել իր մեղքերը. երրորդ՝ զղջալ ցաւիլը ըրած մեղքերուն վրայ. չորրորդ՝ հաստատ առաջադրութիւն դնել մէյմընալ չընելու։ Հոսկալ առ կարգով կըգտնաս ամէն մէկին համար յատուկ աղօթք։

Աղօթ. վասն գթութեան ի Մեղաց։

Ա՜հ ինծի տէր իմ որ անչափ բարիդ անարգեցի, անհուն սիրելիդ չսիրեցի, այլ մանաւանդ մեղքով վշտացուցի, պատուիրանքներդ կոտրեցի, քուկին սուրբ կամքդ չկատարեցի, աշխարհիս ու իմ կամքս աւելի մեծ սեպեցի, աստուածային քու խօսքերդ բանի տեղ չդրի, մարմնոյս հետևեցայ։ Վա՜յ ինծի պէս կոյր մեղաւորի.

անչափ կուրցայ որ՝ աղեկը գէշն տեղ
առի, գէշը՝ աղեկի տեղ. պզտիկը՝
մեծ բռնեցի, մեծը՝ պզտիկ. աւետա-
րանին սուրբ պատուիրանքները թո-
ղուցի՝ որ ինձի ալքայուԹիւն կուտան.
աշխարհս՝ մարմինս՝ ինչ որ ինձի զուր-
ցնեցին, անոնցմով աղեկի տեղ բռնեցի,
որ ինձի տանջանք ու դժոխք կուտան.
աշխըրհիս բարիքները վաստկելու ե-
ւեւէ ընկայ, որ մեկ երազի մը պէս
կանցնին. սուրբ աւետարանին զուր-
ցածներս ինձ չուզեցի վաստկելու՝
որ ինձի անանց յաւիտենական կեանք
կուտան:

Հիմա օրէրս պարապ անցուցած,
մեղքերով բեռնաւորված, ան մեղքե-
րէն ուրիշ օգուտ մը չունայց որ ողբ ու
լաց: Կրնիմ ողորմուԹեան Հօրդ առ-
ջեւն կուգամ, Թող ինձի այսօր անոնց
մեղքերս, որոնցմէ եսալ գանկեր-
եմ. ես ինծմէ կրնամ ներել, զորս ե-
ղով անոնցմէ այսօր կուզեմ խոնար-
հուԹեամբ խնդրել զԹողուԹիւն:
Դու ես Յիսուս քաւիչ քահանայա-
պետ, քու փոխանորդիդ քահանային

առջին չաքեւլով, եբը քու ոտքիդ պըլ-
լվելով կաղաղակեմ. Հայր, մեղայ
յերկինս և առաջի քո. իմ խոստո-
վանութիւնս, իմ զղջումս մի արհա-
մարհեր այսօր։

Աղօթ վառն յիշելոյ զնեղս, և խոսփո-
նելոյ։

Դու տէր, սրտագէտ ամենայնի, որ
նեբսի դիս ամէն խորհուռդը գիտես
կրտեանաս. քեռնէ ծածուկ բան մը չըլ-
լար. բայց իմ նեբսի դիս զղջմամբ, պատ-
ուէ իմ քարացեալ սիրտս արցունքով,
շարժէ իմ լեզուս ի խոստովանու-
թիւն։ Դու տէր զանազան հիւանդ-
ներ զանազան հարցմունքով առջիդ
կանչեցիր, առաջ իրենց ցաւը զուրցը-
նել տըվիր, եսքը Հարտաբ բժշկի պէս
իրենց ցաւը ըռընացուցիր. կոյր եղո-
ղին գթալով հարցուցիր, ինչ կուզես
որ քեզի ընեմ. երբոր անիկայ ըսաւ,
Տէր, զի բացցին աչք իմ և տեսից,
դուն շուտ մը հրամեցիր, աչքը բաց-
վեցաւ, քու հետիդ եկաւ։

Հիմա ես շատոնցմէնէ կուբացեբեմ։

մեղքերուս խաւարը աչքս գոցերէ, չեմ տեսնար, չեմ ճանչնար ոչ մեղքը ըրա, և ոչ մեղքերուս հասրանքը. դու գթալով իմ վրայ՝ բաց աղաչեմ մտքիս աչքը, լուսաւորէ որ տեսնամ, ճանչնամ, հասրանքները միտքս բերեմ: Բայց բերանսալ խոստովանելու քահանայ՝ լեն, զուրցելու իմ հոգւոյս ցաւը, իմ պակասութիւնները, որ մեղայ խաւարը փարատի, քեզ լոյսդ Քրիստոս տես՝ նամ, առջի ճամփաս ձգելով՝ քեզի հետևիմ ան լուսաւորեալ կուրին նման: Ջանցուածս իւր ովկարէ առ՝ նուլ՝ի միտ.՝ի գաղանեաց իմոց զուրբ արա զիս տէր, և յոտարէն պահեա զծառայս քո: (Սաղմ. ՃԸ:)

Այլ աղօթք առ նոյն:

Երբոր մեղքերուս ծանրութիւնը և շատութիւնը կզգիշեմ ՅԷր իմ, կլսու՝ սահատիմ. որ մէկը զուրցեմ, միտքս ալ կըշփոթի, ամէն մէկ մեղքերս չեմ կրնար միտքս բերել, կըտարակու՝ սիմ ալ ինչպէս զուրցեմ. անկէց ինծի ծանրութիւն ու ձանձրութիւն կու՝

գայ խոստովանելու. աս տարակու-
սանքները իս կրնամ ցրնեն, բերանս
կրկապեն: Գիտեմ ես իմ, որ սատկ
ամենը սատանայի փորձութիւններ
են, որ իս հեռացընեմ սուրբ խորհուր-
դեն, ուշացընել իմ բժշկութիւնս. յա-
կայն դու բժիշկ հոգւոց և մարմնոց ես
իմ Յիսուս, քանի որ իմ ծուլութիւնս
բռնեմ կապե, դու տեսնելով աս իմ հի-
ւանդութիւնս՝ փարատե. և քանի որ
սատանան ուշացընել ուզէ՝ զանազան
կերպ առիթներ բերելով, դու սա-
տանային կապանքը քակե:

Աստիճ երբեմն սատանան չէր ուզեր
հիւանդներուն բժշկըվելը. դու ձեռ-
քովդ ուշացընել կուզէր՝ ըսելով Հրէ-
սներուն բերնովը. շաբաթվան մէջ
վեց օր կայ. ուրիշ օր եկէք Յիսուսին
քով բժշկըվելու, այսօր մի գայք կը-
սեր: Բայց դու ես սատանան ամեն
ըրիր ըսելով, ասիկայ դուստր Աբրա-
համու է, հիմա սատանան կապեր է,
պէտք է որ՝ չուտով այսօր ես բժշկեմ.
աս ըսելով բժշկեցիր:

Հիմա ալ ասոր նման ըսէ իմ հոգիիս

համար, աս հոգին իմ եկեղեցւոյ որ-
դին է, սատանան կապերէ մեղքերով
չուզեր խալըացընել. այսօր պէտք է որ
ես քեզ բժըշկեմ, միտքդ լուսաւորեմ՝
որ մեղքերդ յիշես խմանաս. սիրտդ
շարժեմ զղջալու, մեղայ ըսելու. բե-
րանդ բանամ, լեզուդ շարժեմ որ հա-
մարձակ խոստովանիս քահանային: Եր-
բոր աս ձայնը երկնային բժշկիդ կառնէ
իմ անդամալուծ կապված հոգիս, չուս-
մը կապանքներէն կարձրկվի, սատա-
նան կրհեռըննայ. և ես բժշկրված ըլ-
լալով նորէն ընորհաց մէջ կըգանը-
վիմ, եկեղեցւոյ հարազատ որդի կըլ-
լամ: Երանի, ուր Թողութիւն եղև
մեղաց, և ծածկեցան ամենայն յան-
ցանք նորա: Երանի առն՝ որում ոչ
համարի տէր զմեղս նորա: (Սաղմ. լբ:)

Այլ աղօթք առ նոյն:

Խնդրեմ տէր իմ Յիսուս, որ մեղ-
քերս միտք առնելէն ետև, բանաս
իմ բերանս որ քահանային համարձա-
կիմ խոստովանելու. վասն զի թէ-
պէտ ես զղուած եմ մեղքերէս, ներ-

սի դիս ցաւի մէջ է իմ ըրածներուս վրայ, բայց սատանան չի թողուր որ հա- մարձակութեամբ մեղքերս խոստո- վանիմ քահանային, մանաւանդ թէ քեզ Քրիստոսի տեառնդ խնդ, որ հոն նստած ես քահանային միջնորդու- թեամբը: Հիմա բաց բերանս ապաչեմ խոստովանելու քահանային՝ որ քու փոխանորդդ է, մէկիկ մէկիկ զուրցել իմ ցաւս, իմ հոգւոյս պակասութիւննե- րը ինչպէս որ պէտք է՝ որպէս զի բժշկութիւն գտնամ: Ինչպէս որ ան հի- անդն որ կուզէր իր բժշկութիւնը ծա- ծուկ պահել դուն հարցնելով վերջ- ապէս բերանը բացիր, զուրցնելով- վեր, անանկ նայէ իմ վրաս ընորհքով կանչէ իս առջիդ քաջալերելով: Տուր ինծի զօրութիւն, որ ամեն փարասի- ուր որ պէտք չէ ամչնալ. ահիւ և դո- ղութեամբ համարձակ բերանով խոս- տովանիմ իմ ըրածներս, որով յայտնի բժշկութիւն գտնալով փառաւորվի քու սուրբ անունդ: Ջ մեղս իմ յուշիկ քեզ և զանօրէնութիւնս իմ ոչ ծածկեցիր՝ ի քէն: Ասացի թէ պատմեցից ինձէն

զմեղս իմ, և դու Թողցես զամենայն մեղ
բարշտութիւնս մեղացս իմոց: (Սաղմ.ճ:)

Աղօթք ղեղման և ողորմածութեան:

Մեղայ քեզ տէր, մեղայ քեզ տէր, մեղայ անհամար մեղքերովս. որ մեկը զուրցեմ, որ մեկը խոստովանիմ. աչք խարհս իս խաբեց, մարմինս՝ իմ միաքս իրեն քաշեց. սատանան իս մոլորցուց՝ իս վերաւորեց. աս իրեք թշնամին իս աս խեղճութեան մէջ ձգեցին, իս զրկեցին քու տրված շնորհքներդ, թշնամի ըրին քեզի: Բայց հիմա նորէն քեզի կուգամ Հայր սուրբ, դու որպէս հայր անօխակալ և անյիշաչար՝ մի յիշեր իմ ըրածներս, յիշէ քու ըրած բարեբարութիւնդ: Դարձի գերեսս քո՛ի մեղաց իմոց, և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա յինէն: Քու ըրած շնորհքներդ պարապ չհանելու համար՝ Թող ինձ այսօր իմ անօրէնութիւնս Թիւնս. ներէ, հաշտվէ, նոր շնորհք ղղջման տուր, որ ձգմարիտ սրտիւ ղղջալով մեղքերս տրբըվիմ, նորէն արքայութեան որդի ըլլամ: Ես ասացի

'ի զարմանալ խնամ՝ թէ ընկերայ ու-
բեմն յերեսաց աչացդոց։ Քաջալերե-
ցարուք, և զօրասցին սիրտք ձեր, ա-
մենեքեան ոյք յուսացեալ էք 'ի տէր։
Բազում տանջանք են մեղաւորաց,
բայց ոյք յուսան 'ի տէր՝ ողորմութիւն
սեառն շուրջ եղիցի զնոքօք։ (Սաղմ.
լ. ՟ի։)

Այլ աղօթ առ Նոյն։

Կըսեմ նախ այսօր տէր՝ խմին թշուա-
ռութիւնս, և պատմելով արարչիդ իմ
հոգւոյս խեղճութիւնը, ներումն կը-
խնդրեմ մեղքերուս։ Ես աս աշխարհիս
մէջ ճամփորդի մը նմանեցայ, որ յան-
կարծ վիպհանալով ճամփուն մէջը սա-
զանկերուն ձեռքը ընկայ։ Իս թալե-
ցին, ամէն բանս առին։ անկէց ետքը
խաչ զարկին, վիրաւորեցին, չնորհք
նէր ունէի մկրտութեան, ամէնը տա-
րին, անմեղութիւնս կորնցուցի, ո-
վին։ Ան ճամիոս աւազակներըդ՝ ան-
գութ սատանաներդ՝ հոգիաս վիրա-
ւորեցին, հաւատքս խաւարեցուցին,
իս մեղքէ մեղք ձգելով թուլութեան

մը մէջ ձգելին՝ որ ալօթք չեմ ուզեր
ընել, ալօթքիալ նսեմ՝ համ չեմ
առներ. բերանսալ կըգոցվի, ամմէն
հոգւոր բանի սրտնեղութիւն կուգայ.
աշխարհային բաներու սէրկուգայ քա-
րեգործութեան բանէրը ետ կրձգեմ:
անոնց վրայ է սիրտս միաքս. ասանկ
Թշնամւոյ ձեռք եմ ընկեր, կաղաղա-
կեմ արարչէդ: Ախ, դուս սէր բարե-
գութ, դուս որ գթած սամարացիին
պէս օտար կերպարանք մտար, մարմին
առիր, հասարակ մարդ եղար, աս աշ-
խարհս անցնելով իմ խեղճութիւնս
տեսար, հասկըցար իմ ամմէն ցաւս, մի
զանց ըներ ուրիշներուն պէս, նայէ
վրաս ու գթա. բժշկէ իս աս հոգւոր
հիւանդութենէ, ուրնորէն եկեղեցւոյ
պանդոկին յանձնելով, տուր եկեղե-
նայ զանազան խորհուրդներով շնորհք
նէրով իս ամրցընելով գարմանէ, հոգի,
ինչվան մեկալ անգամ գալուստդ մեռ-
նելուս առեղը. ինչպէս որ սամարա-
ցին օրինակովը մեզի հասկըցուցիր. որ
մեռնելուս առեղը առողջ ըլլամ հո-
գւորապէս, պարզերես ելլամ քու առ-

ջեզ, ու յաւիտեան քեզի հետ մնամ։ Սերձ է տէր առ այնոսիկ՝ որ մաշեալ են սրտիւք, և զհոգեվհա կեցուցանէ։ Ալ անձն իմ ցնծասցէ ՚ի տէր, ուրախ եղիցի ՚ի փրկութեան նորա, և ամենայն ոսկերք իմ ասասցեն, տէր ո՞նման է քեզ։ Զի փրկեաց զաղքատան ՚ի ձեռաց հզորի, զաղքատան և զանանկն յայնցանէ՝ որ յափշտակեն զնա։ (Սաղմ. ՀԴ. ՀԵ։)

Ալ աղօթք առ Նոյն։

Ես որ բոլորովին մեղաւոր եղերեմ, մեղքերու մէջ թաթխըվերեմ, արքայութեան ժառանգութենէ զրկըվերեմ, հիմա թէ որ քու մարդասիրութիւնդ իմ զղջումս ընդունի, իմ մեղքերս ազատէ, բոլորովին փրկիչ դուն կըլլաս ու ողորմութեանդ Աստուածորդի իս փրկելու համար խորհուրդ իսոստովանութեան և սուրբ հաղորդութեան սահմանեցիր։ Ամէն սուրբք և հրեշտակք պիտոր զարմանան անքաւ գթութեանդ վրայ, որ մէկ մեղաւոր մը ասանկ անարժան՝ ինչպէս երեսէ

չիձգեց , չիդատապարտեց , նորէն իր շնորհքներուն արժանի ըրաւ . մանաւանդ թէ արքայութեան որդի ըրաւ, որոց հետ մէկ տեղ նստեցուց : Եւ այլ զարմանալով կաղալակեմ անաւետները , ո՛ անբաւ մարդասիրութիւն Քրիստոսի . փառք գթութեան քո տէր , փառք մեծի բարերարութեան . որչափ հրեշտակք կան և սուրբք երանելիք՝ ամէնինալ օրհնեն գովեն մեծացուցանեն սիրտը տասնկ անհուն գթութիւնը՝ որ իմ վրայ ըրած կըլլաս. եւալ անոնց հետ մէկտեղ օրհնող, փառաբանող սիրտը ըլլամ յաւիտեան : Ո տէր ձ առանձին զսիրոս նոցա , ի միտ առնու զամենայն գործս նոցա : Անձինք մեր համբերեսցեն տեառն , զի օգնական և պաշտպան մեր է : Եղիցի ողորմութիւն քո տէր՝ի վերայ մեր, որպէս յուսացաք ի՛քեզ : (Սաղմ. ղգ :)

Այլ աղօթք առ նոյն :

Գթած, ողորմիկ տէր իմ, ինչպէս որ ողորմեցար բորոտին . ծունկ չոքելով առջիդ՝ եւալ անոր պէս կաղաղակեմ.

Տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել: (Մատ. Ը. 40:) Գարշելի է իմ հոգւոյս բորոտութիւնը, ընկայ, կորսուեցայ, մեծ մեծ մեղքերու մէջ սլլեցայ, մէկ հրեշ մը դարձեր եմ որ չճանչցուիր. եսաւ ինծմէն կըգանիմ, առաւնդ կըհաղցընեմ, ինչ ընեմ որ բժշկըվիմ, զի յոյս չունայ իմ դիւացէն: Հրեշտակները սուրբէր ինծմէն կըգանեն, երես կըդարձընեն. դուն ես միայն ան երկնային գեղած բժիշկը՝ որ չես գաներ. դու կարող բժիշկ ամէնն ցաւերու՝ բժշկէ իս. դու հզոր փրկիչ ամէնայն աշխարհի՝ ազատեա զիս. եկո, նայէ որ մէկ դիս ողջ չէ մնացեր. քու սեղծուածդ է, բայց այնչափ օտարացեր մեղքերով որ չճանչցուիր: Տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել: Դուալ աս իմ խղճալի ձայնս առնելով տէր իմ, գեղեց, խղճաց, ձեռքդ երկնցուր իմ վրայ, մօխիկցիր ինծի ինչպէս որ մօխիկցար բորոտին. լեցուր ինծի ան ուրախալի ձայնդ ըսելով, կամիմ, սրբեաց: Ո՛ւր է, արդեօք աս ձայնս օր մրնալ ինծի պիտոր գայ.

ևրը պիտոր լեմ ան ուրախութեան
ձայնը, թէ եկայ տեսայ քու ողորմ-
լուութիւնդ, սրբեցի մեղքերէդ քու հո-
գիդ: Իմ բորոտեալ հոգիսալաս ձայ-
նը առածին պէս՝ շուտ մը բորոտու-
թենէ կըսրբըվի քու խրատովդ շնորհ-
քովդ ուժ կառնէ, որ երթայ քա-
հանային համարձակ ցըցընէ ինքը.
իբեն բորոտութեան մեղքերուն վե-
ճակը մկիկ մկիկ խոստովանելով
պատմէ. եւքը պատարագ մատուցա-
նէ վան սրբութեան: Ըն առենը տէր
իմ, եսալ կառաջադրեմ որ՝ փոխվիմ,
որչափ որ քենէ հեռու էի, այնչափ-
ալ աւելի քեզ մօտիկնամ, քեզ քարո-
զեմ, իմ վարքովս իմ խօսքովս բարի օ-
րինակ տամ ուրիշներուն, որ անունք-
ալ քեզի գան, քենով փրկութիւն
գտնան ամէնքը:

Սաղմոս ԻԳ.

Յիշեա տէր զգթութիւնս քո, և
ողորմութիւնս քո, որք են յաւի-
տենից:

Զմեղս մանկութեան իմոյ և զանգի-

տուԹեան խնդ մի յիշեր, այլ յիշեա զնահատ ըստ ողորմուԹեան քոյ վասն քաղցրուԹեան քո, զի քաղցր և ուղիղ ես :

Վասն անուան քո տէր քաւեա զմեղս իմ զի բազում է ինձ. ով է մարդ որ երկնչի՝ ի տեառնէ, օրէնսդիր առնէ զնա ՚ի ճանապարհի՝ յոր և հաճեցաւ :

Աչք իմ յամենայն ժամ առ տէր, և նա հանէ յորոգայԹէ զոտս իմ :

Ցէս զխնարհուԹիւն իմ և զվաստակ իմ, և Թող ինձ զամենայն զմեղս իմ :

ԱչաղօԹ առ նոյն :

Ես սուրբ եկեղեցւոյ որդի եմ, սուրբ աւազանին միրուԹեամբ լըւացեալ եմ, իմ մեղքերով կորնչացուցի հոգւոյս մաքրուԹիւնը. յարաչարմեղ քերով աղտոտեցայ, կերպ կերպ երկան ցաւերով հիւանդուԹեան մէջ ընկայ. կուզեմ նորէն լուացվիլ, նոր Պրոբատիկէ աւազանը ապաշխարուԹեան մանալ, բայց չեմ կրնար: Ընդամենը մը դարձերեմ մեղքերուս, դանդաղուԹիւնը վեցս տիրեր, ծու-

լութեան և ձանձրութեան սատանան
իս կասկածէ, իս կըխղդէ, ոսքս ձեռքս
առաջ չերթար՝ սուրբ ապաշխարու-
թեան աւազանին մօտիկնալուս, տա-
բակուսեր կեցեր եմ, մէյմը չունիմ որ
իս հոգայ դարմանէ։

Հիմա դու բժիշկ հոգւոց, ես տես
աս երկան ժամանակվան իմ ցաւս.
եկո՛ ինծի տեսութիւն, ինչպէս որ ե-
կար երասնը ուղը տարվան անդամա-
լուծին քովը. հարցո՛ւ ինծի աստուա-
ծային քու բերնովդ, կամիս ողջ լինել։
(Յհ. Ե. 6։) Ան առեղը իմ բերանսալ
կըբացվի, կըսկսիմ խոստովանիլ, իմ
ցաւերս իմ տկարութիւնս պատմել.
Տէր ոչ զոք ունիմ թէ յորժամ ջուրքն
յուղեցին՝ արկցէ զիս յաւազանն. և
մինչ ես դանդաղիմ՝ այլ ոք քան զիս
յառաջագոյն իջանէ։ Տէր իմ, ցաւս
անբժշկելի է. վասն զի շատոնցինէ
պզտիկուցմէ բնութիւնս գէշի կըդի-
մէ. զղջումալ չունիմ, առաջադրու-
թիւն չեմ պահէր, խոստովանութիւ-
նը ծանր բան կուգայ ինծի, և ամէն
նէն աւելի ինծի գէշ աս է որ՝ մէկ մը-

Նալ չունիմ որ ասֆ բանիս ձար լինէ, բայց եթէ ձեզ, որ հիմա քահանայի կերպարանքը եկերես, իս կըհրաւիրեմ որ՝ պատմեմ զուրցեմ իմ ցաւս, անանկով քաջկուրթիւն գտնամ։

Ես կըպատմեմ քեզի իմ հոգւոյս ցաւը սէր իմ, դունալ լսեցիր ինձի ան քու ձայնդ. Աղի, ու զմահիճս քո, և գնա։ Քու ցաւերուդ պատճառը ան է որ կըսես, արի չես, դուն քենէ մեղքերուն մահիճէն չես ելլ լար. ու քեզի անանկէնէ արիւնեան ընորհքը Հոգւոյն սրբոյ, վերցիր մեղաց մահիճը, գնա քահանային քովը ձգէ խոստովանելով։ Ա ձայնս երբոր իմ հոգիս առնէ, շուտ մը կըյառնէ, կոչ ընենայ, կըքալէ։

Բայց շատ թշնամինէր իս կըպաշարեն, չեն ուզեր որ մեղքերս վերցընեմ. Ո՞ է արժան քեզ առնուլ զմահիճս քո, կըսեն։ Ուրայ իմ ձանձրութիւնս դեմ կելլայ, քիչ մը առայ ինչ որ կարողանամ եաքը կրնթունամ պահել. ես իս պէտք էր միշտ զղջման մէջ պահէի որ չնթունամ, Դաւիթ մար-

գարեհին պէս ըսելով. Եւ մեզք իմ առաջի իմ են յամենայն ժամ: Բայց խոստովանեցէս մեղքերս կըմոռնամ, իբր Թէ յայտնի Թողութիւն գտած եմ՝ անանկ հանգարտ կընստիմ: սիրտս միաքս աշխարհային բաներուս կուտամ: Թէ որ քիչ մը ուրախութիւն գտնամ, ան ուրախութիւնը բոլորովին մարմնաւոր կըգտնեմ, հոգևորէն կըպաղիմ, աս է իմ կորստեանս պատճառը:

Առանք մէկիկ մէկիկ առջևդ կըդնեմ, ով Քարասար բժիշկ հոգւոյ մերոյ Քրիստոս, ինչպէս որ հիւանդ մը իր բժշկին կըզուրցէ, որ ինծի դեղը տաս, Ջարը գտնաս. վասն զի իրաւի ինծմէ յոյս չկայ, քեզմէ է միայն բժշկելը: Դուն խոնարհին գալը խոստովանեցէս եւ աս սուրբ տաճարիս մէջը, ու ըսէ ինչպէս որ ըսիր ան բժշկեալ անդամալուծին. Ննջաւոգիկ ողջացար, մի ևս մեղանչեր, գի մի չար ևս ինչ լինիցի քեզ: Աս խոստիս զօրութիւնը եաալ իմ պատիս մէջը առնելով աս օրէս եւ ևս վտիտիմ, միայն մեղքերուս վրայ յա-

ա֊ել ողջույն հետ ըլլամ, որ ինչ ա֊ռաջադրութիւն կընեմ, պահեմ։

Թէ որ կուզես մեղքերդ միաբդ քե֊րել, ու աւելի ողջոյն ընել, կրնաս նաև մեծ պաքին երրորդ և չորրորդ շաբթուան աղօթքներնալ ըսել, որ են աղօթք ողջոյնի ու խոստովանութեան։

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

ԱՒ ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

ԵՒ

ՀՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ԱՂՕԹՔ

ՅԱՌԱՋ ՔԱՆ ՋՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆՆ

Ա՛Ր պետս բաբելացւոց անդ նըստաէք և լայաք, յորժամ լինէաք գքեզ Սիոն : (Սաղմ. ճլ:) Երբոր խարայեղացիք իրենց մեղացը համար գերի ընկան, ինչուան Բաբիլոն քրշվեցան անդուռ քաղդեացւոց ձեռքովը, հառաչեցիր Երուսաղէմը կըսիէին ու կուլային. Ինչպէս կորանցուցինք քեզ Երուսաղէմ կըսէին, երբ պիտոր տեսնանք քեզ Երուսաղէմ մեր քաղաքը: Հիմա իմ հոգիաս ատոնց պէս անդուռ սատանաներուն ձեռքը ընկեցիր, մէկ մեզէ մէկալ մեզը գըլորե-

լոմ քենէ հեռըցաւ, կորսընցուց վե-
րին Երուսաղէմը, աղքատութիւնը,
կորսնցուց սրբոց ընկերութիւնը. մաս
նակից եղաւ սատանաներու: Ամէնէն
աւելի զքեզ կորսնցուցի ահը իմ, ա-
րարիչ իմ. գերի եղայ մարմնոյ,
աշխարհի, և սատանայի, որ նորէ նոր
կըջանայ իս մեղքերու մէջ ձգելու.
անհաւատի մը պէս զրկըվեցայ հեռը-
ցայ սուրբ խորհուրդներէն, սուրբ շը-
նորհքներէ. Թողացի զանապական
մարմին և արիւն Յիսուսի, եղայ մարմին
և արիւն աշխարհի, որք ոչ կարեն ժա-
ռանգել զաղքատութիւնն Աստուծոյ:

Հիմա զրկըված խեղճ մնացած հո-
գիս կլսէ ան սուրբ խորհուրդները,
ան հոգևոր շնորհքները որ առեն մը
կըվայելէր. կուլայ կըհառաչէ, ան
կըսէ սուրբ Սիոն, սուրբ խորան ան-
մահ պատարագիդ, ինչպէս քեզ կոր-
սընցուցի, ինչպէս քեզ Թողացի: Ա՛յլ
դուռ Աստուած ողորմութեան, Աս-
տուած միխիթարութեան, որ կրգը-
թաս քու ստեղծուածիդ վրայ, այս-
օր գթա իմ վրայ. եկ, երևցուր քու

սուրբ երեսդ հրաշալի խորհրդով մաղ-
մոյ և արեան քո. ինչպէս որ գթալով
երկնքի թոմայի առաքելոյն . կանչէ
քովինքազդը ձանուդ իմ սրտիս՝ որ
գործքով անհաւատ եղեր է , ըսելով ,
Բէր զմատունս քո , և սրկ այսր : Մի՛
Թողուր ըսելով սրբոց ընկերութիւնը՝
որ երբոր ես իս ցրցընեմ անոնց, դուն-
ալ իմ տեսութենէս չիզրկրվիս . մի՛
խոտացըներ քու սիրոդ առաքեալնե-
րուն քարոզիչներուն ըսածին դէմ, որ
անհաւատի գործք չըլնես: Այն առեն-
ալ աս ձայնս ըսելով իմ քարացեալ
սիրտս կրկակղնայ , քեզի կրդառնայ ,
կաղաղակէ թոմայի հետ , Տէր իմ և
Աստուած իմ: Ակնէց եաքը քեզի կը-
հաւատամ ոչ իմ, քու սուրբ առա-
քեալներուդ խրատը խօսքը կրըսնեմ.
հերիք է որ քու սուրբ ձեռնէներդ կը-
դպչին ինծի, քու սուրբ մարմնոյդ խորհ-
հուրդը կրհաղորդվի ինծի, քու սուրբ
արիւնդ կրկաթի իմ վրայ. ակնէց եաքը
չեմ բաժնվիր քենէ , քեզ միայն Ա-
ստուած կրդաւանիմ հաւատքով , և
քեզ կուզեմ ծառայել մարմնով և հո-

գալով, որ յաւիտեան քեզ փառաւո-
րելու արժանի ըլլամ. Ամէն:

Այլ աղօթք առ նոյն:

Կըցաւիմ մեծապէս առիմ Յիսուս,
որ մեղանչելովս քենէ հեռացայ. կը-
ձանչնամ այսօր՝ որ քենէ հեռընալով
ամէն բարեաց զրկըվեցայ. կուզէի
հանգստութիւն երջանկութիւն, կար-
ծէի որ՝ կամքս կատարելով մեղքէ
հեռանալով ուզածս կրգտնամ. բայց
մեղանչելովս ասոնք չեմ ստացեր,
քեզմէ աւերդ իմ կորընցուցի, սիրտս
աւրեցի, խաղաղութիւնս կորընցուցի,
խղճմտանքս չփոթցուցի, չեմ ուզեր
որ քենէ դուրս երջանկութիւն չկայ:
Հիմա սիրտս թշուառացեալ, հո-
գիս այրիացեալ, զղկեալ ու արարչէդ,
իր փրկչէդ, կուլայ, քեզ կըփնտռէ.
կըգտնայ քեզ ատ սուրբ խորանին վրայ՝
շնորհաց աթոռը նստած տեսակատ
խորհրդոյ հաղորդութեան, կըկանչէ
կաղաղակէ, Յիսուս վարդապետ, ողոր-
մեայ ինձ: Իրաւի չեմ կրնար համար-
ձակիլ առջեդ երեւնալու, ո՛ւր մնայ

զքեզ սրբութիւնդ սրբոց իմ մեղաւորս սրտիս մէջը առնելու խորհրդով հաղորդութեան. վասն զի կամքս զքեզ Թողուցի, քու Թշնամիներուդ հետևեցայ, որ է աշխարհ, մարմին, և սատանայ:

Բայց քու անբաւ մարդասիրութեանդ ապաւինելով, ոտքդ կկնամ, մեղայ կըսեմ, նորէն Թողութիւն կուզեմ, նորէն քեզի կըմօտիկնամ առ սուրբ խորհրդով հաղորդութեան, փեշդ կըփակչեմ. ինչպէս որ հիւանդները մինակ փեշիդ փակչելով կըբնայցնէիր, հիմայալ իս ըսբնացիր մահացու հիւանդութենէս, որ հոգիս ալ կուզէ սպաննել: Ինչպէս որ Ջաքէոսին տունը գալով, քարացեալ սիրտը փոխեցիր, մեղաւորը արդար ըրիր, չար սովորութիւնները փոխել տալիր, անանկալ եկո իմ սրտիս մէջը նստէ սուրբ խորհրդովս, խաչ արդարացնէ անոր պէս: Վասն զի քու գալ նստիլդ միայն, ան տունը արդարութիւն և սրբութիւն կըլլայ, անանկալ իմ սիրտս քու գալովդ բնակարան և օ-

թևան կըլլայ ամենասուրբ Երրորդու-
թեանդ ։

Այլ աղօթք առ նոյն ։

Ե՛կ տէր իմ, տէս ինչ եղեր է ան հո-
գին՝ որ դուն ստեղծեցիր։ Ե՛կ տէր իմ
տէս ան միաքը՝ որ աշխըրհիս ունայ-
նութեան մէջ ընկղմեր է։ Ե՛կ տէր իմ
տէս ան աչքը՝ որ դուն ստեղծեցիր աշ-
խըրհիս գեղեցկութիւնը վայելելու,
քեզ փառաւորելու համար, ան աչքը
աշխըրհիս մեղքերովը կուրացեր է. ան
բերանը որ պէտք էր քեզ օրհնելու՝
պիղծ խօսքերով անէծքով լեցվեր է.
ան անկաճը՝ որ երկնային աւետարա-
նին ձայնը պէտք էր մտիկ դնել, սա-
տանային ձայնը կըլսէ, անոր խրատը
ըսածը կըպահէ. աշխըրհիս հոտը իր
հոտառութեան անուշ կուգայ. երկ-
նային անուշահոտութիւնը աղօթքի՝
քարոզի՝ իրեն աղէկ չիգար ։

Ասոնք տեսնալով տէր իմ, եկո՛ դուն
սիրէ քու ստեղծուածդ վրայ. մի՛
թողուր որ օտար սատանան սիրէ ։
Մի՛ ընկենուր զիս տէր յերեսաց քոց,

և զՀոգի քո սուրբ մի հաներ ինձնէն ։
Այլ քու սուրբ խորհրդաւոր գալըս
տեսանէդ որ հիմա պիտոր գաս, իմ սըր-
տիս մէջը պիտոր նստիս , դուն տիրէ,
դուն իշխէ , Թագաւորէ շնորհքովդ ,
վասն զի քու ստեղծուածդ եմ: Սիրտ
սուրբ հաստատեա յիս Աստուած , և
զՀոգի ուղիղ նորոգեա 'ի փորձ իմում:
Նոր միաք , նոր աչք , նոր ղայլատանք
նէր անկէ , որ բոլորովին քուինդ ըլ-
լամ, ասկէց ետքը մէկ կամք՝ մէկ վարք
ունենամ քեզի նման ։ Ապաշխարու-
թենէ՝ խաչ քաշելէ չվախչիմ, որ ան-
դինալ յաւիտեան քեզի հետ մէկտեղ
ըլլամ դէմ յանդիման քու սուրբ է-
րեսդ տեսնալով. Ամէն ։

Այլ աղօթք առ նոյն ։

Տէր իմ Յիսուս Քրիստոս, ահա կը-
տեսնամ քեզ մարմնով նստած սրբու-
թեան սեղանոյս վրայ՝ որ էտեղի ողոր-
մութեան. հոս չես նստած հիմա գա-
տաւոր արգարութեան , հապա հայր
ողորմութեան , որ ամէնուն կըբաժ-
նես հոգ կենդանութեան,կարօտներըդ

կրկեբակրեա : Ասանկ ողորմութեան տեղը՝ ողորմութ օրերը՝ մեկը չպատահ֊ ժրվեր, որչափ անարժան ու մեղաւոր ըլլայ. ես որ հիմա ասանկ ողորմութեան տեղդ եմ տպաւներ, որ է պատարա֊ գիդ սուրբ սեղանը, մի պատժեր տեր իմ, այլ ողորմած. քու գթութ շնորհքդ ինծի՝ մեկ բաժին մը՝ մեկ փըշրանք մը հանէ ըսելով. Գթամ՝ի ժողո֊ վուրդդ, զի արդ երիք աւուրք են՝ զի կան առ իս, և ոչ ունին զինչ ուտիցեն. (Մաթ. ժե. 32.) ինչպէս որ ըսիր չորս հազարին վրայ. ասանկ զի իրաւ֊ նէ հոգիս չունի բան մը ուտելու առ աշ խըրհիս ճամփուն մէջ. մեռնելու մօ֊ տիկ է անօթութենէ. ասանկ զի ինչ շնորհք ինչ բարիք որ տըվեր կիր հոգիս կերակուր ըլլալու համար, անոնք ամ֊ մէնը կորնցուցի, մեկ ոչինչ մեղքի մը համար գուրս նետուեցի, մեկը չիկայ կե֊ րակուր տըվող: Աւազակները՝ քահա֊ նաները՝ ամէնինալ տարակուսերեն իմ անապատացեալ հոգիս վրայ :

Դուն միայն ես որ կընաս իս կե֊ րակրել, և չես ուզեր որ անօթի արձ֊

կես Թողուս, զըլայ որ՝ աշխըրհիս ճամփուն մէջ անօթի մնամ. Թէ որ դուն ասանկ չկոգաս տէր իմ, որ աշխարհ կերակրեցիր, իս մէկը չկրնար հոգալ. Թէ որ դուն իս չկշտացընես, որ չորս հազարը օխար հացով կշտացուցիր, մէկը իս չկրնար կըշտացնել, ոչ աշխարհ, և ոչ մարմին: Իրաւի ես ինչ վան հիմա կըկարծէի որ անոնք իս կըշտացնեմ կշտացնել, անոր համար աշխարհի ու մարմնոյ հետևեցայ. բայց խաբվեցայ. հիմա խմացայ որ՝ դուն ես միայն հոգիս կշտացընող անմահական սեղանովդ: Տուր ինծի աս սուրբ մարմինդ հաց անմահական, կերակուր յաւիտենական, անանկով գանիմ հեռընամ աշխարհային բաներէն, միայն քեզի մօտիկնալով քու կամքդ կատարելով զմայլիմ յաւիտեան. Ամէն:

Այլ աղօթք առ նոյն:

Ահա կըհամարձակիմ կոգամ կըմօտիկնամ քեզ առնելու ով երկնային մանանայ, ով հաց հրեշտակաց, որուն մէջը պայծառ հաւատքովս կըտեսնամ

բազմեալ զհերդ իմ Յիսուս Քրիստոս.
կուգամ ոչ իմով արժանաւորութեա՛ն,
այլ քովկին անհուն գթութեամբդ
և անհուն կարողութեամբդ՝ որ իմ սի-
րոյս համար այս խոնարհ կերպարան-
քը մտար: Ահիկայ ըլլայ ինձի քաւու-
թիւն և թողութիւն անհերքելի մեղաց
իմոց, հաշտութիւն ամենասուրբ Եր-
րորդութեան հետ, ներքուին ամե-
նայն պատժոց որ մեղքերս վաստակե-
ցան: Ըլլայ ինձի դեղ կենաց, շնորհք
յարատեւութեան, որ ամէն մեղ-
քերէ՝ չար սովորութիւններէ կորը-
վիմ: Ըլլայ կատարիչ խնդրուածոց,
թէ ինձի՝ և թէ անոնց՝ որոնց համար
պարտական եմ աղօթելու, կենդա-
նեաց և մեռելոց: Ասով հոգիս զօրա-
նայ՝ որ առաքինութեան հետևիմ, քեզ
տեառնդ բնակարան ըլլամ, ինչուան
սուրբ երեսդ տեսնալու արքայութեան
մէջ արժանի ըլլամ: Ամէն:

ԶԿՆԻ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Ո՛վ մարդասեր աեր իմ Յիսուս, ինչ ալեկուԹիւն սեասաը իմ վրայ՝ որ եթը հասնելով արժանի համարեցար սուրբը մարմնովդ ինձի գալ՝ իմ վրկուԹիւնս հոգալու համար. իակ ես անպիտան ծառաս միայն ապերախտուԹիւն ընելու հետ եղայ ինչվան հիմա: Ինչ ալեկուԹիւն ըրած ունիմ աեր իմ, բայց՝ ի մեղաց. աս ինչ սեր է ասրիչ իմ որ իմ վրայ կրցոցընես. յայտնի կերևցընես որ՝ դուն ես իմ արարիչս, և ոչ այլ ոք. քու ձեռաց ստեղծուածդ եմ, չես ուզեր որ կորսրվիմ: Քանի որ ես քենե կրփախչիմ, մեկ մեղքե մեկալ մեղք կինալով կրհեռընամ, այնչափ աւելի դուն մարդասիրուԹեամբդ իմ եռանես կուգաս, քաղցր ձայնով ինձի կրկանչես. Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ:

Ա՛ս հերիք չիսեպելով հիմասլ իմ սիրտս կուգաս կըհանգչես, մարմնով և արեամբդ կրկերակրես իս շահելու համար։ Քուկինդ եմ ասէր իմ, քու կինդ է աս սիրտս, աս միտքս, որ ես ինչման հիմա մեղքի ծառայեցուցի. բայց քու աս սէրդ՝ աս քու գալուստդ տեսանելով հիմա բոլորովին կըդառնամ, մեղքերս կըձգեմ, քեզի կուգամ։ Սան զի դու Թագաւոր Թագաւորաց՝ առաջ ինձի եկար։ Կազաչեմ ասէր իմ, աս սէրդ իմ վերայես մի պակսեցըներ ինչման եաքը. եկո՛, իշխէ իմ վերայ. Թող մի տար որ օտարանայ. ինչման որ երես երեսի պըքայուԹեան մէջ քեզ տեսանելու, քեզի հետ մէկ տեղ նստելու պըժանի ընես ասէր իմ և Աստուած իմ։

Այլ աղօթք առ նոյն։

Ո՛վ պատուական մարմին Քրիստոսի, որ եկար իմ մարմնոյս հետ խառնըվեցար, դու սրբութիւն սրբոցդ՝ մեղաւոր սրտիս մէջը բնակեցար. իս սրբէ, իս կեցո՛, իս մաքրէ։

Ո՛վ մեղսաքաւիչ արիւն Քրիստոսի, որ իմ մեղսասէր արիւնիս մէջ խառնը- վեցար, վառէ՛ իս քու սիրովդ անուշ- ցո՛ւ իմ լեզվի բարկութենէս, լեզվի հայհոյութենէս, և մնացած ամէն մեղքերէս։

Ո՛վ պատուական ջուր կողին Քրիս- տոսի, անմահութեան ջրովդ կեն- դանացո՛ իմ հոգիս, մարմինս, և միաք- բժշկէ՛ չարաչար մեղքերու բորոտու- թենէ։ Թէ որ Յորդանանու ջուրը նեեման ասորիին բորոտութիւնը լը- ւաց՝ Եղիսէ մարգարէին խօսքովը, քանի՛ աւելի դուռ ի՛ւ անհուն ջուր արարչին, որ ըսուղծոլն է Յորդանանու և Ովկիա- նոս ծովու, որ խաչին վըրայէն Քրիս- տոսի կողէն բացված աղբիւրի պէս մե- ղաւորիս վրայ կըվազէ, քանի՛ աւելի պէտք է որ լուանաս, մաքրես սրբես մեղքերուս գարշելի բորոտութիւնը։

Ո՛վ պատուական քրտինք Քրիստոսի, որ ինձի համար արիւն քրտընեցար, դո՛ւ ինձի կեանք տուր, զըրուխիւն տուր, որ քու սուրբ պատուիրանք- նէրդ պահեմ, քու կամքդ կատարեմ։

Ո՛վ անգին չարչարանք Քրիստոսի, ո՛ւր ինձի արիւնեան ընդրկէք, որ եսալ սիրով քաշեմ իմ խաչերս. քու սուրբ վէրքերդ տպաւորէ իմ սրտիս մէջը, որ ուրիշ բան չխորհիմ աս աշխարհս՝ բայց եթէ քեզի նման խաչակից ըլլալով անդինալ քեզի նման ըլլամ, վայելելով քու թագաւորութիւնդ, քեզ դէմ յանդիման տեսնալով յաւիտեան. Ամէն:

Այլաղօթ առ նոյն:

Ա՛ս սուրբ խորհրդով հաղորդուեան տէր իմ Յիսուս Քրիստոս, որ քեզ բոլորովին ինձի կուտաս, եսալ բոլորովին քեզ կընուիրեմ, քեզ պատարագ մատուցանեմ իմ անձս, իմ ամէն կարողութիւնս, միտքս, կամքս, ամէն զգայարանքներս. ինչպէս որ դուն ինձի համար քեզ պատարագ մատուցիր Հօր առաջի, և սուրբ մարմինդ և արիւնդ հիմա ինձի հաղորդեցիր: Ա՛ս սուրբ խորհուրդին ուժովը ըրէ տէր իմ, որ ասկէց ետքը մեղմնալ չիթաժնուիմ քենէ մեղանչելով,

հեռու ձգեմ աւելորդ հոգերը, միայն քու սիրովդ տաքնայ իմ քարացեալ սիրտս, միայն քու վառդ խօսիմ, քու չարչարանքներդ մտածեմ, և ինձի ըլսած բարեբարութիւններդ յիշեմ, զըսարձանամ. վասն զի արժանի ես սիրելց, պատուելց, և պաշտելց տէր իմ Յիսուս:

Ինչ աղէկութիւն, ինչ երախտիք ես տէր իմ, որ արժանի համարեցար ինձի պէս մեղաւորին սիրալ գալ դու որ սըրբուի սրբոցդ ես, դու որ թագաւոր թագաւորաց ես, արարիչ ամենայն արարածոց, ուսկից կըդողան երկինք և երկիր, հրեշտակք սերովբէք և քերովբէք: Երբոր կըմըտածեմ, եսալ կըդողամ կըսարսափիմ. ուրիշ խօսք չեմ կրնար ըսել բայց եթէ տէր, դու ատեղծեցիր աս ատեղծուածը, դու այսչափ երախտիք, պարգևներ, շնորհքներ ըրիր. դուն ինայէ, մի կորսնցըներ, մի յիշեր իմ մեղքերս, այլ քու կիրն շնորհքովդ պահէ իս սատանայի, աշխարհի, և մարմնոյ փորձութիւններէ, որ մեռնեի եսալ քեզի հետ մեկ տեղ ըլ-

լամ արքայութեան մէջ զնայլելով յա-
ւիտեան. Ամէն :

Այլ աղօթք առ Նոյն :

Ո՛վ արդարութեան աստուածային,
ասկից եաքը ալ չէս բարկանար մեզբէ-
րուս համար, տեսնալով որ Մխածնին
արեանը մէջ թաթաւեր է իմ մեղաւոր
մարմինս. Թէ որ պատուհասող հրեշ-
տակը՝ մարմնաւոր անքան գառին ա-
րիւնը տեսնալով Հրէականերուն դռնէ-
րուն վրայ, անցաւ. գնաց, չխոտիկ-
ցաւ չմեռցուց Հրէականերուն անդրա-
նիկները, հիմա որ իս կըտեսնաս ա-
րեամբ անարատ գառինն Աստուծոյ
լըւացված, ինչպէս պիտոր բարկանաս,
ինչպէս պիտոր սուրն բարկութեան
չդարձընես: Կրնայ ըլլալ որ վրէժխն-
դիր ըլլայ արդարութիւնդ ան մեղաւո-
րին՝ որ արիւնն Յիսուսի վրան թափե-
լով սրբեց, ու միջնորդ Աստուծոյ և
մարդու ըլլալով Աբէլին արիւնէն ա-
ւելն կրիաստ, յերկինս կաղաղակէ.
Հայր, թող սա մեղաւորիս. վասն զի
ես իմ արիւնս ասոր վրայ թափեցի,

իմ արիւնս ասոր Ճաշակել տալվի, իմ արիւնս ասոր արեան հետ խառնեցի. մէկ մարմին եղանք սուրբ խորհրդով հաղորդութեան:

Ո՛վ ձայն սուրբ արեանն Յիսուսի, ձայն զօրաւոր քան զձայն իմ սոսկալի մեղքերուս, հզօր բարեխօս, ինդրօղ ողորմութեան, որ մէկ ձանով աւազակը արդարացուցիր արբեցիր՝ քու աւետեանդ մտիկ կենալովը, հիմա իս սըրբէ, իմ մեղքերս ջնջէ, աստուածայինն արդար բարկութենէն իս ազատէ, որ քու արիւնդ Ճաշակեցի: Եւ դուն, ով արդարութիւն Աստուծոյ, դարձուր քու բարկութեանդ սուրը, մի պատժեր իս իմ չարաչար մեղքերուս համար. վասն զի արիւնն Աստուծոյ քսուած է վրաս անդին անհուն արիւնն Յիսուսի է՝ որ վրաս կաթեցընելովիմ մեղքերուս ներսում կքինդրէ: Աստուած է որ կաղաղակէ կըբարեխօսէ ինծի համար: Այլ պատժելուն տեղը Հոգւոյն սրբոյ հնարքով լեցուր, զարդարէ, որ աստկէց ետքը միայն աստուածայինն կամքը կատարելով, արդարութեամբ

սըրբուԹեամբ անցընեմ մնացած իմ
կեանքս :

ԱղօԹ+ պէՏի հաղորդուԹեան առ սուրբ
կոյս Աստուածածին :

Աստուածային անհուն գԹուԹիւն է՛
որ ինձի աս կոչմանքը աս հարկինքը
ըրաւ, արժանի ընելով հաղորդելուս
Յիսուսին մարմնոյ և արեան . որ է
հոգւոյ հարանիք ուրախուԹ սիրոյ, ուր
մէկտեղ հաց ուտելով վայելենք . բայց
իմ գինիս չնորհաց պակսեցաւ , ամ֊
Թով մնացեր եմ ամէն սրբոց ու հրեշ֊
տակաց առջին . դու ով ամէնօրհնեալ
սուրբ կոյս Աստուածածին , որպէս
մայր գԹած, ինչպէս որ կանայ գալի֊
լեացւոց հարսնիքին մէջ երբոր գինի֊
նին պակսեցաւ, ծածուկ գացիր Քրիս֊
տոսի յայտնեցիր , խնդրեցիր հրաշ֊
քով մը գինի ընելու , որ տանուտէրը
ամԹով չմնայ , ասանկալ այսօր իմ
պակասուԹիւնս բաց, Քրիստոսի առ֊
ջին դիր , ըսելով՝ Թէպէտ կուտեմ
կըվայելեմ աս հոգւոյ հարսնիքին սե֊
ղանէն , բայց գինի չնորհաց հոգւոյն

սրբոյ չունիմ. անմահական բաժա-
կաւ հոգևոր ուրախութեան չեմ կըր-
նար զմայլիլ : Դու այն հզոր բարեխօս
ես, որ թեև իմ անարժանութեանս
համար Քրիստոս չուզէ հրաշք ընել,
բայց քու միջնորդութեանդ համար
կրկատարէ. քու ձեռքովդ դուն
ընդհատ Քրիստոսի կրբացվի իմ վրայ,
ինծի կասկածորեն ջուրս արտասուաց ա-
պաշխարութեան լեցնելէ իմ երկու
աչքիս ամանները, իմ քարացեալ սիրտս
ալիրեն ընդհատվ կրբղխայ ջուր զղջ-
ման, աչքընկերս արցունքով կրլեցվի՝
մեղքերս լալու համար. ինչպէս որ ան
հարսնիքին մէջը թախտինները ինչման
վերը լեցվեցան. ան ջուրը ապաշխա-
րութեան Քրիստոս անեղեւոյթ զօրու-
թեամբ կրփոխե, գինի ուրախութեան
կրդարձնէ :

Ա՛ն առեւը կրզարմանան իմ վրայ
հարսնիքին տաճարապետանները, տուրբք
երկնայինք՝ և հրեշտակք, թէ ինչպէս
ան հոգին որ՝ պարապ էր ընդհատներէն,
գէշ էր, հիմա լեցվեցաւ ու անուշցաւ
հոգւոյն սրբոյ ընդհատք. առաջ որ լե-

ղեսուԹիան ունէր իր գէշ վարքովը, էղե
կերունային իրեն Աստուածոյ պատուի
րանքները, փոխուեցաւ, Աստուածոյ պա
տուիրանքներուն համը քաղցրուԹիւնը
հիմա առաւ : Եսալ կառնեմ կրկին
Աստուծոյ պատուիրանաց բաժակը
փրկուԹեան ու կրզմայլիմ երկնային
սիրով. անկէց ետքը աշխարքէս համ
չեմ առներ . միշտ Աստուածային բա
նէրու վրայ սիրտս ձգելով ես ինծի
կըսեմ. Ինչ յոռի ու գէշ է եղեր աշ
խարհիս գէնին , աշխարհիս ուրախու
Ժիւնը , որ առաջ կըպաշտէի . հիմա
ետքի օրերս կիմանամ ինչ անուշ է ե
ղեր գէնին երկնային կեանց, և չկրտեմ
որ՝ աս հրաշական գէնիին փոխուելը՝
քու աղաչանքովդ եղաւ , չէնէ ես ոչ
երբէք արժանի էի աս շնորհքիս :

Նախամայրն Եւայ՝ առջի պատուղը
մեղի կերցուց՝ Աստուած ըլլալու հա
մար , ամէնիքսալ անէծքի ու տրտմու
Թեան մէջ ընկանք , կորանք : Հիմա
դուն երկնային դրախտին առջի խաղո
ղը մեղի կերուցիր, անապական անուշ
գինին Քրիստոսին ձեռքովը բաժնեիր

տրվեր, որ խաչին ծառին վրայ ոչկուզն նման քահանեցաւ անմահական բաժակին մէջ. ան բաժակը ամենեքսան խըմելու օրհնութեան մէջ զմայլեցանք, Աստուած դարձանք, անմահացանք, սեղանակից ըլլալով Որդւոյն Աստուծոյ աս աշխարհիս մէջ։ Քանի հզօր բարեխօսութիւնդ ընէ որ սեղանակից ըլլանք անդինալ արքայութեան մէջ. անով օրհնենք զԱստուած, օրհնենք և զքեզ Հիմարիտդ Եւայ՝ մեր նախամայր յաւիտենական կենաց։

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ԸՆԴ ՀՈԳԻՈՑ

ԶԿՆԻ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Յարմարեալ բանից երգոց երգոյն
Սողոմոնի։

Ի ՍՏՈՒԱԾ երբեմն մարդս սահեալ ծռեց, մեկ ալլոյ դրախտի մը մէջ դրաւ. հոն մարմնաւոր զուարճութենէն զատ հոգևորնալ մեկ սեղ կրնայէր, անմեղ ըլլալով Աստուած մարմնաւոր կերպով մը մարդուս կերևար, իրեն հետ կրխօսեցնէր, իրեն բանէր կըսորվեցընէր. մարդասէր Աստուած կըսիրէր, սիրտը զուարթ, խղճմտանքը հանգարտ, Աստուծոյ հետ կրխօսեցնէր, կրզմայլէր։

Ադամայ մեղքը՝ մեկ արգելված պտուղ մը ուտելով, զինքնալ և իրեն որդիքներնալ դուրս ձգել տվաւ, զրկեց ան մարմնաւոր ու հոգևոր զուարճութենէն։ Երբոր Քրիստոս սէրն մեր աշխարհ եկաւ, նորէն մեզ մեկ

հոգևոր դրախտի մը մէջ խօթեց, որ Ադամայ դրախտէն շատ վեր գերազանցեց։

Ա՛ս դրախտը՝ է հրաշալի խորհուրդ սուրբ հաղորդութեան. հոս Աստուած մարմնաւորապէս մարդուս կուգայ և ընդհօք կրնօսի, մարդասէր Աստուծոյ հետ կրնօսրանէ, կազանէ, հոգևոր բանէր կըսորվի, երկրաւոր բանէրը կրմոռնա, երկնային բանէրուն սէր կրձգէ։ Ան Աստուածային սէրը՝ որ մարդս երկինքը պիտոր վայելէ Աստուծոյ հետ, աս սուրբ խորհրդովը իւր թէ անոր համեստը կընէ աշխարհիս վրայ։

Սոդոմին խնամատուն հոգւով սրբութիւնալով աստանկ սէրը Աստուծոյ ու մարդու մէջ, մէկ գիրք մը շարադրեց Երգ երգոց անունով. հոն կը ձևացընէ իւր մէկ դրախտ մը, ուր Աստուած հոգիին հետ կրնօսրանէ, սէր կրզրցընէ, մարդուս հոգինալ Աստուծոյ հետ կրնօսրանէ։ Ա՛ս սէրը ու խօսակցութիւնը կրլլայ մէկմէ երկինքը ոլքայութեան մէջ, մէյմինալ երկրիս

վայ Յիսուս առնելու առեղը սուրբ խորհրդով հաղորդութեան: Ան երդ երդոց գրքին խօսքերը հոս կրկարդաս հիմա օխտը խօսակցութեան մէջ, որք են խորհուրդք գաղտնիք և զարմանալիք:

Ա. ԽՕՍՔ ՔՐԻՍՏՈՍԻ

ԸՍ ՀՈԳԻՆ ՀԱՂՈՐԴԵԱԼ

Ո՛վ է սա որ ելեալ գայ յանապատէ, իբրև ծխոյ ծառացեալ բուրվառոյ զմռնոյ և ինդրուկ յամենայն փոշոյ խաղողործոյ. (Գ. 6:) Եւեր զկնի գարշապարացն հօտից, և արածեա զուլս ի վրանս հովուաց. (Ա. 7:)

Ո՛վ է սա հոգին, որ անապատ եր դարձեր մեղքերով, չնորհքներէ զըրկըվելով. իմ պատուիրանքներս իրեն առնլի ծանր կերևային. երկնային բաները ձգեր եր, երկրաւոր բաներ ը մինակ կըսիրեր. անոր համար ինձմէն հեռու կըքալեր: Հիմա սա սիրոյ աղօթքովը դէպ ի վեր ինծի կու-

գայ, ինչպէս մէկ մուխ մը մեղքե-
րով սեւցած՝ որ երկիրս կրճգէ, մէկէն
վերկենդանի ծառիմը պէս կրբարձրնայ.
հեռանալ անուշահոտութիւն կրբերէ,
զմուռս ապաշխարութեան, կնդրուկ
աղօթից, խառնըւած սուրբ խղճով
ողորմութեան և բարեգործութեան,
ինծի հաճոյ երևնալ կուզէ, իս կրփըն-
տրէ, մէկտեղ ըլլալ կուզէ:

Ամէն որդեակ, պէտքը չէր ասանկ
մեղանչելիր, պէտքը չէր ասանկ խեղճ
ձգելիր հոգիդ, ան հոգիդ որ՝ ես ինծի
համար ստեղծեր էի: Բայց ողորմու-
թեան Աստուած եմ, նորանց կրնդու-
նիմ քու ապաշխարանքդ, քու մե-
ղադ, կրըսեմ քու աղօթքներդ՝ որ հի-
մա հաղորդըվելէդ ետև աղաչեցիր:
Բայց դուն մէկ պակասութիւն մը ու-
նիս, որ ան քեզ շատ ատելի կրնէ ին-
ծի: Դուն մէկ առաջադրել մը ունիս
որ՝ հոս խօսք կուտաս, ասկէց դուրս
ելածիդ պէս կրմոռնաս. երբոր մէկ
մեղքի մը առիթ կուգայ՝ հոն պէտք
էր յիշել քու առաջադրութիւնդ,
ամենևին չես յիշեր:

Հիմա դուն ելար մեղաւորներուն մէջէն, եկար հեռանալու ոչխարներուն հօտին եւ անոնց բայց քիչ մը անցնի՝ մեղքի մը առիթ գայ, կերթաս ուրիշ տուն (քէչինէրուն) ծողովքին հետ մէկ տեղ կարծելիս, մէկ տեղ կրնաս նըլիս: Ահա աս կերպ առաջադրուելիւնդ է՝ որ քեզ Թող չիտալ առաջ գալու, Թող չիտալ որ միշտ մէկտեղ ձնանք. մէյմը ինծի կուգաս, մէյմը ինծմէն կրըաժնըվիս: Եթէ կուզես որ միշտ մէկ տեղ ձնանք, հոս ինչ որ կաոաջադրես, ան առաջադրուելիւնդ միշտ հետդ տանիս, միշտ յիշես որ ինծի ինչ խօսք ըսվիր:

ԽՕՍՔ ՀՈԳՒՈՅՆ

ԱՌ ԿՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

Զայն էլբօրդե՛ս իմոյ բաշխէ ղե՛ռն. մերկացայ զպատմուճան իմ, զիա՛րդ զգեցայց զա՛ն ինձ. լո՛ացի զոտս իմ, զիա՛րդ աղտեղեցից զնո՞ա: (Է. 2. 3:)

ՎԱՒԱՍԻԿ կըլսեմ իմ սրտիկն՝ իմ փրկչին ձայնը, որ ըսեն սիրալիր ձայնովը իմ իշխմանքիս դուռը կը զարնէ, իս կարթընցնէ. Ճամփայ կրցըցնէ որ՝ ալ մեղքերու մէջ չյնամ, իրմէ չիբաժնըվիմ: Տէր իմ Յիսուս, ես ան մեղաւորի հագուստը հիմա մերկացայ Թողուցի, մէյնալ ինչպէս հագնիմ: իմ մեղքի Ճամփան փոխեցի, ոտիկներս սուրբ խորհրդով ապաշխարութեան լուացի, ինչպէս մէյնալ ալոտեմ: Ո՛վ տէր իմ Յիսուս, գոյայ ես գըեզ, որ մեղքերովս կորսընցուցեր էի, ասկէց ետքը անանկ կառավարեմ, որ մէյնալ ո՛չ երբեք մեզանչեմ, ո՛չ երբեք քենէ բաժնը-

վիմ. միշտ մեկ տեղ նստինք քեզ սի-
րելով, ինչպես որ դուն ալ ես սիրեցիր:
Որչափ բան քաշեմ, քեզ ունենալով
անհուն Աստուածդ, միշտ սիրտս՝
հոգիս՝ մարմինս ուրախ կըմնայ:
Միայն աս կաղաչեմ ձվ սիրելի Յի-
սուս. Թշնամիներս շատ են. երբոր իս
մեղք խօթել պիտոր տան, դուն իս
չեմողաս, ընդհակառակ հանիս, մեղ-
քերէս պահես, որ միշտ քեզի հետ
մկատեղ ճոանք, մկմկիկ բնաւ չի-
բաժնըվինք: Ա կաղաչեմ՝ չէ թէ իմ
արժանաւորութեանս համար, հապա
քու արարչական ու փրկչական սիրոյդ
համար:

Բ· ԽՕՍՔ ՔՐԻՍՏՈՍԻ

ԱՒ ՀՈԳԻՆ ՀԱՂՈՐԴԵԱԼ

Աւետարանիչ պէտք է որ մը իմաց, և ի սենեակ յաղթելոյն գիրք ծրարելոյ ետք ի ձիոյ իջաւ, յօշարակէ ընծայեցաւ: (Ը· 2:)

Ո՛վ որդեակ, երբոր ես աշխարհս քեզ բաժնուելի պիտոյ, յիշեցի որ քուկդ առջի հարդ Ադամ երբոր դրախտը դրի, ամէն աշխարհ պտուղ նէր երեն կերակուր տրվի· բայց ինչ կերակուր որ տրվի երեն, Ադամ մինակ ան պտուղը աւելի ուզեց ուտել՝ որ ինծի նմանիլ մը կրնէր հասկցաւ: Ես աս յիշեցի, քեզալ միաքս բերի, ըսի որ՝ Թէ որ ադամ կերակուր մը չկրցաւ ուտել որ ինծի նմանի, գոնէ իր զաւկընէրուն մէկ կերակուր մը հնարեմ որ, անիկայ կերածնին պէս ինծի նմանին: Հայն զոր ես տայ՝ մարմին իմ է, զոր ես տայ վասն կեանց աշխարհի: (Յ·Ո· Ը· 52:) Քեզ

ալ միտքս բերի, ըսի որ՝ անանկ կե-
րակուր մը ընեմ որ՝ մինակ իմ աեհղի
քրիստոնէները չվայելեն, հապա յա-
վիտեան քշէ, որ դուռնալ անկէց վայե-
լես ուտելով։

Ա՛ ըսի, իմ ամէն խնամատարութիւնս
բանեցուցի, հացն ու գինին՝ որ մար-
դուս ախորժական կերակուր էի սեղ-
ծեր, անանկ մէկ հրաշալի խորհուրդ
մը դրի որ՝ ով որ ուտէ ան կերակու-
րը, ով որ ըմպէ ան գինին, երբ Թէ
մէկ օշարակ (շերպէթ), մէկ երկնայ-
ին ըմպելի մը կառնէ, որ երբա՛ կրկըշ-
տացընէ, երբա՛ կրժայլեցընէ անմա-
հական բաժակով։ Ձի մարմին իմ Ճըշ-
մարիտ կերակուր է, և արիւն իմ Ճըշ-
մարիտ ըմպելի է։ (Ղ. 56։) Եւ երբ
Թէ իմ տունս իմ սենեակս (օտաս)
տարված կըլլայ, ուր որ ես արարիչս
կուսածին մարմնով յղացայ և ծնայ
՚ի սուրբ Կուսէն. ինծի հետ մէկտեղ
բնակակից կըլլայ, իս կըմխիթարեմ։
Որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն
իմ, յիս բնակեսցէ, և ես ՚ի նմա։
Վասն զի ես իս կերակուր տըվի իրեն։

Ա՛ըրի քու սիրոյդ համար՝ որպէս զի չմեռա՛ծ՝ երկրիս վրայալ իս գըտ֊նաս, իս վայելես, ինծի հետ մէկ ըլ֊լաս, անով հեշտ ըլլայ քեզի իմ առջի պատուիրանքս պահելու՝ որ ապաշը֊րելեմ. Սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, յամե֊նայն անձնէ քումմէ, և յամենայն զո֊րութենէ մտաց: Վասն զի հոգի մը Աստուծոյ հետ հաղորդված՝ առանց ապաշրելու ալ ինքիրեն պէտք է որ միանակ Աստուած սիրէ:

ԽՕՍՔ ՀՈԳԻՈՑՆ

ԱՒՐ ՔՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

Տարա՛ զիս արտայ ի սենեակ իւր, յաճախեցո՛ զսա ե՛ւ զարմանա՛ լիցո՛ւք մեք ի գեղջ։ Ծրար սրտաչին է եղբօրորդին իմ ինձ։ (Ա. Յ. 12։)

Տէր իմ Յիսուս Քրիստոս, սա ինչ մեծ շնորհք է որ ըրիր ինծի. դուն ա՛ րարիչ գոլով եկար իմ սրտիս մէջը հանգչելցար, ոչ միայն շնորհքով, այլև սուրբ մարմնովդ. Թէ որ մէկ իշխան կամ թագաւոր մը հողեղէն ըլլար իմ տունս եկօղը՝ անանկ մեծ շնորհք չէր կրնար ըլլալ աս աշխարհիս մէջ. Հապա դու Թագաւորդ Թագաւորաց Աստուած, արարիչ երկնի և երկրի։ Ա՛ ինչ սէր է՝ որ արժանի սեպեցիր չէ Թէ իմ տունս՝ հապա իմ սրտիս մէջը գալու. Ես որ մարդ մինեմ ոչինչ, ես որ քեզի Թշնամի եղեր էի. ես ոչինչս որ քեզի դէմ ձեռք վերցուցեր էի, քու սուրբ պատուիրանքներդ ոտքի տակ

առեր էի. քանի որ կրնէիմ աս քու ըրած սէրդ իմ վրայ, այնչափ ուրախութիւն՝ այնչափ զարմանք կուգայ վրաս:

Հիմա աս կաղաչեմ աեր իմ, որով հետև արժանի ըրիր գալ, և իս քու սուրբ սենեակդ տանիլ, հոն զքեզ ինքդ հոգևոր կերակուր ընծի հանել, ըրէ որ՝ ասկէց ետքը սիրտս միտքս քեզ նով ուրախանայ, քու անուշութիւնդ առնէ, աշխարհային բանէրը ձգէ: Եւ ինչ ծրար որ ունիս անուշահոտ խունկ կերու, հոգւոյն սրբոյն շնորհքնէրու, բայց քու գանձդ, զարգարէ իմ մերկացեալ հոգիս՝ առաքինութեամբք, ցուցնէ ընծի ինչ ընեիմ որ փրկութեան ճամբան գտնամ. վառէ իս քու սիրովդ, վասն զի դու տէր իմ Յիսուս մեկ պահուած ծրար մընես ստաչիին (պուհուրի), մեկ գաւազնի խորհուրդ մընես, երբոր սիրոյն կրակին մեջը կնայես՝ ան առեղը քեզ կրցրցընես ծուխ երկնային հանելով, զմայլողական անուշահոտութիւն բուրելով:

Գ. ԽՕՍՔ ՔՐԻՍՏՈՍԻ

ԱՌ ՀՈԳԻՆ ՀԱՂՈՐԴԵԱԼ

Ի պաբպեղս ընդ-ուզաց ինչի հայել՝ի յարմը
պիս ուղխից, պեսանելնե ծաղկեալիցն
որքն, ընե ծաղկեալիցե՞ն նաննենի: (Ղ.
10:) Ե՛ղ՝ի լիբանանե եկեսցես և անցցես
՝ի սկզբան հաւատոյ: (Ե. 8:)

Ա՛վ որդեակ, երբոր ես մեղաւոր
բաց համար մեռնելու եղայ, մտածե-
ցի ինչ ընեմ որ՝ մեռնելէս ետեւը չի-
զատվիմ իմ եկեղեցիէս, ան տեղը
քեզալ մտքս բերի: Հիմակվան հա-
ւատացեալները իս մարմնացեալ կը-
տեսնան ըսի, բայց ան հոգին՝ որ շատ
տարիէն ետեւ աշխարհ պիտոր գայ՝
որոնց մեկը դուն ես, իմ աշխարհ գալը
պիտոր լսե, բայց իս մարմնացեալ պի-
տոր չիտեսնայ. ինչ ընեմ որ՝ քու հո-
գիդ իս տեսածի պես ըլլայ, մեղքին
նայող մտմտալով իմ ամենակարօդ
զօրութիւնս ձեռք առի, անանկով աս
սուրբ հաղորդութեան խորհուրդը
սահմանեցի, ամեն քահանայից իշ-

խանութիւն տալին՝ որ երբոր անոնք պատարագեն, ամէնն ալ հեշտ (խոշտ) ուտեսա իս։

Հիմա՝ ամէնն հեղ որ սուրբ պատարագը կըտեսնես, իս կըտեսնես հոն մարմնով նստած չնորհաց աթոռը քու աղաչանքդ լսելու, քեզի օգնութիւն հասնելու։ Եւ ամէնն հեղ որ՝ կըհաղորդվիս սուրբ խորհրդոյն, դուն ինծի կուգաս, ես քեզի, մեկ տեղ նստած կըլլանք։ Միայն իմ փառքս մեծ ըլլալով չես կրնար մարմնաւոր աչքով նայիլ. անոր համար հացին ու գինիին տեսակաւը կերևնամ, որով կրնաս համբաւակ իմ վրայ նայիլ. վասն զի հացին նեղքիը ես եմ նստած։ Ինչ կըսես՝ կըլըսեմ, ինչ նեղութիւնդ՝ սիրտդ կըբանաս, մեկ կրդնեմ. ասկէց աւելի ինչ սէր կրընայի ցցցնել, ինչ կարողութիւն կրնայի բանեցնել։

Դուն որ հիմա աս իմ սէրս տեսար, պէտքը չէր որ քեզ բոլորովին ինծի տայիր, պէտքը չէր որ գիշեր ցորեկ իս մնած էիր, չնորհակալութիւնդ ընելու, իմ կամքս կատարելու, որ երբոր

եսաւ Հոգւոյդ վասյ նայէի, կերպ կերպ առաքինութեան պտուղներով ու ծաղկներով ծաղկած զարդարված տեսնայի քեզ պարտեզն մը պէս: Բայց ես կըտեսնամ որ՝ ասոր դէմ չէ թէ իմ կամքս չես կատարեր, սէր չես ցըցըներ, հապա և ոչ տեսնալ կուզես երբոր պատարագ կըլլայ, և ոչ կուզես հաղորդըվիլ, ինծի մօտիկնալ· այլ կամայ կըտեսնաս պատարագ, և ակամայ կըհաղորդըվիս:

Ա՛ն ինչ պաղութիւն, ինչ ապերախտութիւն է քու ըրածդ, և ինչ սէր է իմ ըրածս: Ա՛ն կըցըցընէ որ՝ հաւատք չունիս, անկէց առանկ պաղութեան ու ապերախտութեան մէջ կիյնաս· կուզեմ որ՝ ասկէց եաքը դուրս ելլաս առանկ օտար լեռնցիի բնութենէ, հաւատքդ բաց ու պայծառ պահես, որ է սկիզբն ամէն բանի· վերցընես սրտիդ մէջէն առ պաղութիւնը, ջերմեռանդ ըլլաս:

ԽՕՍՔ ՀՈԳԻՈՑՆ

ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ.

Ահաւասիկ սա եկաց յերեսս որմոյն մերոյ յառաջաւ ընդ պատուհանան, հայելով ընդ վանդակապատն: Յայսմ ինչ պէսի ո՛ւ, և լսելի արար ինչ պիտոյիցն ո՛ւ. վասն զի յայն ո՛ տաղտըր է. և դէմ ո՛ գեղեցիկ: (Է. 9. 14:)

Ո՜վ, տէր իմ, ալ մի յիշեր, մի երեսիս տար իմ ապերախտութիւնս. թէ որ աթոռը ընորհաց նստած՝ սասանկ անուշութեամբ զուրցելով ես դող կելլամ լսելուս առեղը, սոսկալիս գետինը անցնիլ կուզեմ, հապա ինչ պիտոր ըլլայ՝ երբոր դատաստանին օրը սաստկութեամբ դատաւորի պէս զուրցելու ըլլաս: Սակայն տուր հաստատակութիւն որ՝ իբրև դթած հօր սիրոս բանամ: Իրաւի՝ մեծ ընորհք է որ կրնես ինծի, պատարագին խորհուրդին մէջ գալովդ՝ և սուրբ սեղանին վրայ նստելովդ մարմնով, հաղորդ

դուքեան առեւնալ իմ սրտիս մէջ նստելով. բայց քուկին դէմքդ ես լուսընեը ենծի, այլ երբ քէ պատի մը եսուէ, վանդակի (խափէսի կամ փէրտէի) մը եսուէ՝ անանկ գոցված կըզըգընես: Խաչին վրայ աստուածուքիւնդ գոցված էր, այլակերպուքեան աստենը մարդկուքիւնդ լուսով գոցված էր. բայց աս սուրբ խորհուրդիս մէջ աստուածուքիւնդ ալ մարդկուքիւնդալ կըգոցես հացին նեքքես: Իմ տեսանելքս՝ շօշափելքս՝ ճաշակելքս՝ ամէնեան կըխաբվին. մինէ ծածկըված է, մեղի ջերմնալ, լեատնք կըսեն. միայն լսելքս կըլսէ քու սուրբ ձայնդ ասեսաբանէն, և հաւատքիս աչքը կըտեսնայ: Բայց ես ըլալով տկարամիտ՝ մուքի բան մը կերմնայ ենծի, ինչպես պէտք է քեզ ընդունիլ, ինչ պատիւ ընել, չեմ կըզնար:

Երբոր Պետրոս առաքեալը այսկերպուքեան օրը մէկ քիչ մը տեսաւ քու գեղեցիկ դէմքդ, զմայլելէն վնտռը ինչ կըզուզեր, չէր ուզեր լեռ-

նէն բաժնվիլը: Երբոր Սովսէս մարգա-
րէին շատ բարեկամութիւն ու սէր
ցոյցուցիր, շատ մօտիկ խօսութիւնիր, չի-
դիմացաւ՝ այնչափ ալաչէց որ՝ վեր-
ջապէս դէմքդալ ցոյցուցիր: Ես ինչ-
պէս դիմանամ որ՝ իմ սիրտս կըհանգ-
չիս սուրբ խորհրդովհաղորդութեան,
բայց քեզ ամենևին չես ցոյցներ: Չի-
մա աս կաղաչեմ վասն արդեանց հինդ
վիրացդ ով տէր իմ Յիսուս, որ իմ հա-
ւատքս զօրացընես, լուսաւորես, քու
դէղէցիկ դէմքդ պայծառ սեւնամ
հաւատովս աս սուրբ խորհուրդին
մէջ, ինչպէս որ սուրբերը տեսածի
պէս կըլլային, երբոր սուրբ հաղոր-
դութիւնը կառնէին: Քու խօսքերդ-
ալ մէյմէկ ընորհք՝ մէյմէկ զօրու-
թիւն ունին, ան զօրութիւննալ տպա-
ւորէ իմ սրտիս մէջը, որ քու քաղցր
ձայնդ սրտիս մէջէն առնեղուի, պա-
հեմ ինչ որ ինծի կըպատուիրես:

Դ. ԽՕՍՔ ՔՐԻՍՏՈՍԻ

ԱՌ ՀՈԳԻՆ ՀԱՂՈՐԴԵԱԼ

Այգի եղև Սողոմոնի՝ Բէեղհամոն. եւ
ղայգի ի՞ր ցպահապանս, բերցէ այր ի՞ր
րոփանէի՞ր՝ ի պտղոյ ի՞րմէ հազարս ար-
ծաթոյ: Որ նոքի՞ւ՝ պարտէղս՝ այլ
անոյ տէղ: (Ը. 11. 13:)

Ո՛վ որդեակ, ես մարդկային քնու-
թիւնը մէկ այգի մը անկեցի, քեզ անոր
վրայ պահապան դրի որ՝ հազարապա-
տիկ պտուղ բերես. բայց դուն աս
պարտէզին մէջէն ինծի պտուղ տա-
լուն տեղը՝ ուրիշներուն իսկը կըը-
սես, ուրիշներուն կուգես հաճոյա-
նալ, աշխըրհիս՝ մարմնոյ՝ ու աստա-
նայի՝ որ իմ թշնամիներս են: Ասանկ
ընելով թէ որ ես հիմա դէմքս ցըցը-
նէի, բարկացած դէմքս ալ ոտը ցըցը-
նէի նման դատաւորի մը պէս՝ ու քեզ
պատժէի. լինչ բարեգործութիւններ
ըրած ունիս որ՝ անուշ հայրական
դէմքս քեզի ցըցընեմ: Պետրոս առա-

քեալը ինչ սեր ունէր վրան՝ գիտես։ Մովսէս մարգարէն ինչ սրբութիւն սրսի, ինչ հաւատարմութիւն։ Քու կին ըրած գործքերդ ինչման հիմա՝ ամէննալ Աստուած բարկացնող են, իմ պատուիրանքներս կատարող ես մոռցած՝ բոլորովին աշխարհային գրսի ղբաղմունքներու տրվերես դուն քեզ։ Անանկենէ՝ ազէկ է որ՝ հիմա չկրցար նեմ քեղի դէմքս. դուն իս հիմա հաւաքով աեմնալով, բարեգործութեան հետ եղիր ու ազօթից։

Աբրահամ նահապետ ուզեց խաղակը իր զաւակը մորթելով պատարագ մատուցանել. ուրիշ բան չիտես՝ բայց եթէ մէկ խոյ մը կախված ծառէն խաղակին տեղը. բայց երբոր խնացաւ որ՝ աս բանս խորհուրդ ունէր, օրինակ էր իմ պատարագվելուս, այնչափ ուրախացաւ որ՝ իս տեսածի պէս եղաւ։ Թէ որ դուն խնամես որ փէրտէին կամ խաչէսին հետ մարմնաւոր թագաւորը նստած է, յաւիտենի տեսածի պէս քու աղանչանքներդ կրնես. իսալ անանկենէ՝ հոգին նեղքի

լուր Թէ փեսաէի եաւ նաուած խմնա-
լով քովէն աղաչանքներդ ըրէ : Եւ
ամէն բանէն աւելի հաւատքիդ հետ
յոյդ ըլլայ , հետակ սրտով անէրկ-
բայ յուսա , Թէ որ իմ պատուիրանք-
նէրս պահէս , խոնարհութեամբ աղա-
չելով իմ վրայ յոյդ դնես , իրաւցնէ
մէկ օր մը արժանի կըլլաս իմ դէմքս
յայտնի տեսնալու իմ արքայութեանս
մէջ :

ԽՕՍՔ ՀՈԳԻՈՑՆ

ԱՒ ՔՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

Յարեայց և աղբեցայք ընդ խաղաղն ի քաղաքացս և ի հրապարակս, և խնդրեցից՝ զոր սիրեաց անձն իմ: (Գ. 2. 4:) Խնդրեցի զնա և ոչգտի. կոչեցի զնա, և ոչ եհաց ինձ պէտս: Կալայ զնա և ոչ թողից զնա, մինչև պատեայց զնա ի տուն մօր իմոյ: Ահա ես գնեղբեղւոյ մերոյ մեծաւոր իմ, բայց ի լուռ ինեն քոմմէ: (Ա. 1:)

Այս, տէր իմ, ան առեն վէր՝ որ մեզ Ադամայ հետ դրախտէն դուրս հանեցիր, միշտ սիրտս քեզ կուզէ, քեզ կըփնտռէ. վասն զի դուն ես արարիչ իմ, յոյս իմ. ես դիս ան դին քեզ կըփընտռէի գտնալու, բայց չիգիտնալով որ ուր ես, արարածոց մէջ աշխարհային զբաղմանց մէջ քեզ կըփընտռէի, կարծելով որ՝ իմ սիրելի Աստուածս հոն է, բայց խաբվեցայ. ամէն ստեղծուածոց մէջ փնտռէի, չիգտայ. կանչեցի, քու ձայնդ որ դրախտին մէջը կառնէի, ամենևին չկըր-

սեցի։ Նոքը գոյ զքեզ աս սուրբ սե-
ղանին վրայ, ոչ ահարկու կերպարան-
քով ինչպէս որ Մինա լերան տեսան Խա-
բայէլացիք • այլ քաղցր և գեղեցիկ
կերպարանքով, վասն իմ մարդացեալ
վասն իմ խորհրդացեալ հացին և բա-
ժակին կերպարանքով։ Հոս կրբունեմ
կրճօշափեմ զքեզ իմ արարիչդ • հոս
ուզածիս պէս կառնեմ կրտանիմ իմ
տունս՝ որ է իմ մեղաւոր սիրտս։

Ամենք ամենեքը աղէկ են և գեղե-
ցիկ • բայց քու լուռ կենալդ՝ ձայն չի-
հանելդ և չիխօսելդ՝ ինծի շատ տըրտ-
մութիւն կրբերեն ու վիշտ։ Գիտես,
մեր բնութեան կարեկից ես, գիտես
որ քանի թշնամի ունինք • նոյն իսկ
մեր մարմինը՝ որ մեզի հետ մեկ տեղ
է՝ թշնամի է մեզի։ Երբոր կընեղիմ,
երբոր փորձութիւնները չորս դիս կը-
պատեն, քեզի կրդիմեմ, չես լսեր,
չես խօսիր, անանկ կրցրցընես որ երբ
թէ ամենևին հոն չես, ամենևին չես
տեսնար։

Հիմա աս է աղաչանքս • վասն ար-
դեանց հինգ վիրացդ՝ և եօթը խոցին

սրբոյ Աստուածածնին, թէ որ քու
Աստուածութեանդ և մարդկու-
թեանդ դէմքը ծածուկ կըպահես
ինծմէ, գոնէ քուկին ձայնդ արժանի
ըրէ լսեցընելու, ինչպէս որ սրբոց հետ
ներսէն շնորհքով կըխօսիս: Ան առե-
նը իմ յոյսս կըղըրանայ անոնց պէս,
և առաքինութիւններդ գործելու հետ
կըլլայ: Ամենակալ Աստուածոյ մաքառո-
ղը մէյմը կանչելով աւետարանիչ ը-
րիր. Զաքէոսին անունը տալով որդի
փրկութեան ըրիր. Պօղոս առաքեա-
լը մէյմը երկնքէն կանչելով հոգւոյն
սրբոյ անօթ ըրիր:

Ե · ԽՕՍՔ ՔՐԻՍՏՈՍԻ

ԱՒ ՀՈԳԻՆ ՀԱՂՈՐԴԵԱԼ

Դիէր ալ՝ իբր՝ ալնի՛ 'ի վերայ սրտի
մ. իբր՝ վտանի՛ 'ի վերայ բազկի մ.
վասն ալ հոգը է իբր՝ ամհ սէր։ Զո՛ր
բազմա՛ռ ալ կարէն ջիջո՛ցանել զսէր, և
գերա ալ արգելցէն զնա · երկն պայծ այր
զանձնայն վճռանա իւր 'ի սէր ։ (Ա· 7 ։)

Այս խօսքերը անոր է՝ որ միշտ սի-
րելի եղեր է իր հօրը. միշտ իր պատուի-
րանքները պահեր է. դու ինչ մեղքե-
րով վշտացուցերես իմ՝ գիտես. ինչ
արդիւնք ունիս. ինչ արժանաւորու-
թիւն ունիս, որ քու ձայնդ լսեմ, քե-
զի հետ խօսակցիմ։ Հապա քեզի
հաւատաք, յոյս, և ամենէն աւելի
սէրը պէտք է՝ որ արժանի ըլլաս։ Ես
աւազակին միայն քովը կեցայ, ինչ-
պէս հոս սուրբ խորհրդովը հաղորդու-
թեան՝ քովդ կեցերեմ. ես անոր հետ
բան մը չխօսեցայ, ինքը իր խօսքովը
իր հաւատաքը ինծի խրկեց · իր յոյսը
փրկվելու իմ վստայ դրաւ · իր սէրը

ցըցուց. ան առեւնը արժանի եղա ւ
իմ Հայնս իր վերկութեան համար լսե
լու. Այսօր ընդ իս խցես ՚ի դրախտին:
Մեղաւոր կնիկը ինքիրեն եկաւ ոտքս
ընկաւ. ես բան մը չըսած ձիսօրաթած՝
իր հաւատքը, յոյսը, սէրը ցըցուց
իր ղղջմամբը ու արցունքովը. ան ա
ւետնը արժանի եղաւ իմ Հայնս լսելու.
Թողեալ լինին սմա մեղք իւր բազում,
զի յոյժ սիրեաց. Հաւատք քո կե
ցուցին զքեզ:

Ասանկէնէ առաջ ան աւելի նայէ
որ սէր Աստուծոյ ունենայս. ինչպէս
որ՝ մարդիրանները հաւատք և յոյս
ունենալէն զատ՝ անանկ սէր ունեցան
վրաս, որ մահը յանձն առին ինծի
համար: Ան առեւնը թէ որ աշխարհայ
ին պաղեցուցիչ խօսքերը ջուրի պէս
վրադ վաղեն, չեն կրնար քու սէրդ
մարել. ան առեւնը կերպ կերպ փոր
ձութիւններու՝ նեղութիւններու ա
լեկածութիւնը գետի պէս վրադ կո
խեն, քեզ չեն կրնար արգելել ինծի
գալու, իմ պատուիրանքներս պահե
լու. Թէ որ բոլոր կեանքիդ մէջը դուն

քեզ Աստուածդ սկզբին տաս, [illegible]
որ եսալ քու սկզբդդ համար [illegible] քեզի տվվի։

ԽՕՍՔ ՀՈԳՒՈՅՆ

ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

Սիրելին 'ի սէնէաից մեր, երգէսցուք ասէր։ (Բ. 13։) Աբէ հիւսիս, և եկ հարաւ. ընկէ՛ 'ի պարտէզ իմ, և բուրեսցեն խունկք իմ. ինձէ եղբօրորդին իմ 'ի պարտէզ իւր, և ուտիցէ պտուղս ծառոց իւրոց։ (Գ. 16։ Ե. 1։)

ՎՈՒԿԱՆ սկզբ տէր իմ Յիսուս, ով կրնայ պատմել, որ [illegible] համար աշխարհ եկար մարդացար. մեկ կաթիլ մը քու արեանդ հերիք էր իմ փրկելու, ամեն արիւնդ թափեցիր [illegible] համար, խաչվեցար և մեռար. [illegible] հերիք չհասկնալով հիմնալ հրաշալի խորհրդով հաղորդութիւնն հաստին և բաժակին տեսակաւը եկար իմ սրտիս սենեակը (օտան) նստար։ Կըրնա՞յ ըլլալ ասկէց եաքը որ քեզ չսի-

րեմ, քեզի դեմ մեղքերովս Թշնամու Թիւն ընեմ, քաւ լեցի . այլ միշտ քեզ սիրել կառաջադրեմ, քուկին սիրոյդ վայ զուրցել, պատմել, երգել, օրհնել կրնասանամ: Ա՛ս է իմ առաջադրութիւնս, իմ բաղձանքս. բայց իմ հատուածս՝ յոյսս՝ սէրս տկար են, միտքս պղտոր, կամքս անզօր . իսկ Թշնամի նէրս շատվոր, ոգք են մարմին, աշխարհ, սատանայ . ով պիտոր իս ազատ առնցմէ, եԹէ ոչ դու . ով պիտոր իս բռնել պահել իմ առաջադրութեանս մէջ, եԹէ ոչ դու :

Ընանկ էնէ կաղաչեմ. Թէ որ իս արժանի չես սեպել իմ ծանր մեղքերուս համար դէմդ ցցընելու, ձայնդ լսեցընելու, գոնէ արժանի ըրէ քու Հոգւոյդ սրբոյ շնորհացը՝ որ մէկ ա նուշ հովի մը պէս շնչէ իմ հոգւոյս պարտէզը : Ինչպէս որ աշխարհիս մէջ աս դիս ան դին մէյմը հիւսիս, մէյմը հարաւ կըփչէ, անով ամէն կենդանի նէք չունչ կառնեն, անով ամէն տապանք՝ կերպ կերպ պտուղներ ծովէն խալըսած նաւերով քաղաքը կըբե-

բեն . անով պարտէզներուն մէջ ծա-
ղիկները անուշ հոտերը կըբուրեն, ծա-
ռերը կըպտղաբերեն, անանկ ալ հրա-
մէ քու Հոգւոյդ հրաշալի հովերուն,
Աըի՛ հիւսիս, Եւ կարաւ :

Ա՛ն տաճարը իմ հոգւոյս պարտէզը
անուշահոտութիւն կըբուրէ խունկին
բուհման . ան տաճարը իմ սիրտս գալու
ըլլաս խորհրդով հաղորդութեան ,
կըգտնաս կերպ կերպ պտուղ առաքի-
նութեանց՝ իբրև քու պարտիզդ մէջը :

Զ . ԽՕՍՔ ՔՐԻՍՏՈՍԻ

ԱՒ ՀՈԳԻՆ ՀԱՂՈՐԴԵԼ

Ես ծաղիկ դաշտաց, և շուշան հովտաց :
Կաղարտ մէջ աղեղեաւոնս ի փուշս պա-
պանիլս այգեաց, և այգի մը ծաղ-
կեօղին : (Բ . 2 . 15 :)

Ո՛Րդեակ , ես այնչափ սիրելի
մարգս , որ Մարգասէր ըսվեցայ . ես
անհուն սիրով սիրեցի քեզ սա տուրբ
խորհրդով հաղորդութեան , որով
կուգամ քեզի՛ չէ թէ միանակ ընդհանուր

հասա իմ մարմնովս ալ : Դուն երբոր մեկը սիրես՝ սրտիդ մեջը կուզես դնել և չես կրնար . ես ասոր հրաշքը ասոնց սուրբ խորհուրդիս մեջ կատարեցի, որով երկնի և երկրի ստեղծող Աստուածս կուգամ, մարմնովսալ քու սրտիդ մեջը կընտրիմ : Ես աւելի հրաշք ըրի որ՝ չէ թէ մինակ մեկ անգամ կեանքիդ մեջ աս սէրս տեսնաս , հապա միշտ երբոր ուզես . ասանկ իշխանութիւն տալով քահանայից . որով նմանեցայ ես ան ծաղկիներուս , ան շուշաններուս , որ դաշտերու և հովիտներու (օվանէրու , տէրէներու) մէջ կըլլան . ամէնէնալ ուզածնին պէս կըփրցընեն , կըվայելեն . գոցված պարտէզի մէջ ծաղկիներուն չինմանեցայ՝ ուր որ մինակ տէրը կըվայելէ :

Գիտցիր որ՝ քու չերմեռանդութեանդ ձեռքն է . ամէն անգամ որ դուն արժանապէս կըհաղորդուիս, զանազան շնորհքներ կառնես . և մեկ առնելդ՝ մեկալ առնելուն արժանաւորութիւն կըբերէ, և շնորհքը կըկրկնապատկէ . անանկով ամէն մեկ հեղ

առնելդ աս սուրբ խորհուրդը՝ կըլ-
լայ մէկ առաւտուր մը խիստ շահաւոր,
որուն շահը յանհունս կաւելնայ, յան-
հունս կարդիանաւորի, կըըերէ քեզի
գանձ (խազնա) շնորհաց: Անոր հա-
մար իմ ծառանէրէս ով որ արժանա-
պէս առաւ, թէպէտ երկրիս վրայ էր՝
բայց իրր թէ երկինքը նստած հրեշ-
տակ մը կըդառնար. վասն զի մէկ էնիք
եղած աս սուրբ խորհրդովը: Ան
ծառանէրուս մէջը ամէն առաքինու-
թիւն կըփայլէր. սրբութիւն հոգւոյ
և մարմնոյ, արիութիւն, արդարու-
թիւն, խոհեմութիւն, հանճար, խո-
նարհութիւն, հեզայրսիրութիւն. իսկ
Աստուծոյ սէրը անչափ կըվառէր սըր-
տերնուն մէջը, որ երբոր կըհաղորդը-
վէին՝ շուտ մը կերթային կուապաշտ-
նէրուն առջին, իս խոստոս վանելով
տանջանքներ կըքաշէին, իրենց արիւ-
նը կըթափէին:

Հիմա դուն որ կուզես հոգւոյն սրբոյ
շնորհքները վաստակիլ, պէտք է որ
արժանաւորապէս առնես աս սուրբ
խորհուրդը, և շատ հեղ: Իսկ թէ որ

չես տեսնար ընորհք, քուկին պաղուց
Թխնդ է պատճառ. գիտես Թէ իմ
վրայ ամենեին սէր չկայ քու սրտիդ
մէջը, ան վաստակները՝ ան հոգևոր
գանձերը (խաղնահերը) ուրիշները կը-
շահին կըվայելեն, դուն անանկ աղ-
քատ ու մերկ կըմնաս:

Ա պաղութեան պատճառնալ ան
է որ՝ Թէպէտ մենծ մեղքերին կըզգու-
շանաս, բայց պզտիկ մեղքերին հեզը-
նալու ամենեին հոգդ չէ: Ան պըզ-
տիկ մեղքերը կըվանին պզտիկ պաղուէս
նէրու (Թիլքինէրու). ով որ բանի
տեղ չիդնէր պզտիկ սեպհըտի, բոլոր
այգին կաւրըվի կապականվի: Դուն
կըհաղորդըվիս՝ եռքը կելլաս մէկէն
դատարկաբանութեան հետ կըլլաս,
սիրտդ ունայնասիրութեան մէջ կըզ-
բաղեցընես, աղբարդ կըբամբասես,
աղբարդ կըդատես, տանը զբաղմանց
մէջ բոլորովին կընկրկիս, առաւտու-
ըիդ մինակ խնդրդ կուտաս, քարող
ըսելը կըձգես՝ պարապ խօսքերով ա-
տենըդ կանցընես, մէկ գթութեան
ողորմութեան գործք մը ընելու հոգ

ունիս, անոր տեղը կծու խօսքերով աղբօրդ սիրտը կաւրես։ Առջի քու բանդ սա աշխարհիս բաներէն դրեթէս, բոլոր օրը խելքդ միտքդ անոնց կուտաս. իսկ իմ բաներս՝ իմ սէրս՝ երկրորդական չորրորդական գործք կրսեպես, ետ կրձգես. վերջապէս սիրտդ չիտակ չէ իմ վրայ։

Ասոնք առմէնը պզտիկ բաներ սեպելով կրզարմանաս որ՝ հաղորդուելէն ետեւ ինչպէս Հոգւոյն սրբոյ շնորհքը չես առներ։ Անանկ էնէ՝ հիմա մէկ նոր առաջադրութիւն մը դիր. սրբափ պզտիկ մեղքեր պակսութիւններ կան, անոնքալ բռնես զսպես պզտիկ աղաէնեներու (թիլքինեներու) պէս. վասն զի պզտիկ չըսվիր ան մեղքը՝ որ Հոգւոյն սրբոյ շնորհքը կարգելէ. ան աստենը կրսեւնաս Հոգւոյն սրբոյ զօրութիւնը. ան աստենը քու հոգիդ կերպ կերպ շնորհքներով կրծաղկի կրզարդարվի, ինչպէս որ պաղտէս չեղած այդին կրծաղկի ու պտուղ կուտայ։

ԽՕՍՔ ՀՈԳՒՈՅՆ

ԱՒՐՔՈՒՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

Ինոյի եպիսկոպոս իմոյ, եպիսկոպոսին իմ էանոյ, և հոգի իմ եւ ընդ բանի նորա. խնդրեցի զնա՝ և ոչ գտի, խնդրեցի զնա՝ և ոչ լուաւ ինձ: Գտին զիս պահապանքն որ շրջէին ի քաղաքին, և վիրաւորեցին զիս. առին զխլայն իմ յինէն պահապանք պարսպաց: (Ը. 6. 7:) Ահեակ նորա ընդ գիւով իմով և ալ նորա պատճոյ զինեաւ: (Ը. 3:)

Տէր իմ, անուշ են քու խօսքերդ, զօրաւոր ու շահաւէտ. բայց մէկմէկ կը խօսիս, ետքը կանցնիս կերթաս, իս անանկ կրնծողաս. ան ատենը իմ հոգիսալ խօսքիդ հետ մէկտեղ քեզնէ կը բաժնուին կրհեռանայ. նորէն կրնատիմ ալօթք ընելու, քեզ կանչելու, չէս լսեր, կրմնամ իմ առջի կիրքերուս ձեռքը՝ որ սրտիս մէջը միշտ կրքարշեն, նորէն իմ հոգիս կրխօցին կրվիրաւորուին մեղքերով. ինչ խելայ՝ ինչ պարգև հոգւոյն սրբոյ առի նէ սուրբ հալոր

դուԹեան խորհրդով ձեռքէս կառ-
նեն , իս մերկ կրԹողուն : Քուվին
պատուիրանքներդ սրչափ քաղցր ու-
պղտիկ ըլլան , ինծի խիստ կերևնան .
մանրաքննին դատաստանդ՝ ինչվան դա-
տարկ խօսքերուն վրայ համար ու-
զէդ՝ իմ սիրտս խիստ կրվախցընեն :
Քու Ճանիւդ ահռելի մը կերևնայ
ինծի , անկէց կրձգեմ կրհեռանամ ,
կարծելով որ կրնամ խալըսիլ . Թէ-
պէտև ալ աւելի արդարուԹեան դա-
տաստանիդ տակը կրմնամ : Ո՛ւր է
որ՝ հալորդուԹեան առենը ինչ սէր
կունենամ Աստուծոյ , նոյն սէրը հե-
տս մնար :

Ըրէ տէր իմ , որ հալորդըվէրջէն
ետև չվրաժնըվիս ինծմէ , միշտ հետս
մնաս , քուվին պատուիրանքներդ ա-
կէց ետքը անուշ ըղձընես. լուծ քաղցր ,
և բեռն վոքրոգի : Ըրէ որ՝ արդարու-
Թեանդ հետ անհուն ողորմուԹիւնդ
ալ յիշեմ , յոյսս առատ ըլլայ անգին
արեանդ միջնորդուԹեան վրայ , և
սուրբ մորդ բարեխօսուԹեանը վրայ :
Ա՛ս երկուքն են ինծի աջ և ահեակ

ձեռք գթութեանդ Աստուծոյ, որ զնա կրբունեն կրպահեն, և յոյս կուտան որ՝ դատաստանին օրը քաղցրութեամբ կարես իմ դատաստանս։

Է. ԽՕՍՔ ՔՐԻՍՏՈՍԻ

ԱՒՐ ՀՈԳՒՆ ՀԱՂՈՐԴԵԱԼ

Ահա յիշեան եանց, անյրևք անդին, և գնացեալ ձկնեցան. ծաղիկ երևեցան յերկրի. ժամանակ հասանելոյ եհաս. ձայն փափկաւի լսելի եղև յերկրի մերում. ըզնէ ընկիւղեաց ըբողբոջ խոր. այգիք մեր ծաղկեցան, և բոյրս պհոպս խրեանց։ Արի եկ մերձաւոր իմ, գեղեցիկ իմ. ա՛ղաւնի իմ եկ ընդ հովանեաւ վիմին, մերձ առ նախապարիսպն։ (Բ։)

Ո՛ՐԴԵԱԿ, դեղ իմ սերս պահելու՝ է մտածական ընելը աս սուրբ խորհուրդին զօրութիւնը. պատճառ՝ որ դուն միայն հաղորդութիւն առնելու աւետիք սէր Աստուծոյ կունենաս, եսքը կըմոռնաս կըպաղիս, աս է որ՝ աւետեսին չես մտածեր ինչ էր առա-

ծրդ, [illegible] նի. Թէ որ դուն քիչ մը մտածէլու ըլլայիր, անհուն սէրն աստուածային կիմանայիր, քու սրտիդ մէջնալ սէրն Աստուծոյ չէր մարէր։

Մտածէս սիրոյդ՝ որ քահանային հետ ես եմ հոն՝ որ կըպատարագեմ, հացն ու գինին մէկ խօսքով ՚ի մարմին և յարիւն կըփոխարկեմ. ես եմ հոն որ [illegible] գողգոթա լեռը խաչելեցայ, անանկ բաղկատարած խաչված սեղանին վրայ զոհ (զուրպան) կըլլամ քեզի համար. կըմորթըվիմ անարիւն պատարագով, ու կըմեռնիմ առանց մեռանելոյ, որպէս զի քու մեղքերուդ թողութիւն տայ Հայրն երկնաւոր։ Մտածէ որ անհուն է գերազանցութիւն քահանային՝ որ եմ ես. անհուն է գերազանցութիւն զոհին (զուրպանին) որ եմ ես. վասն զի զոհ մընէ, որով Աստուծոյ կենդանի քահանային ձեռքովը կըսըրվի կենդանի Աստուծոյ. պարգևողը՝պարգևը՝ամենն ալ անհուն, որ է պանչէլիք պանչէլեցայ։

Աստվ դուն Թէպէհան հոնաւոր
ես, բայց անհուն Թողութիւն կըգըտ-
նաս քու մեղքերուդ՝ որչափ շատ ըլ-
լայ. անհուն պատիժներուն ալ լիով
վճարումն կըգըտնաս, որ քու մեղք-
րուդ համար ունելիք քաշելու. անհուն
կըփառաբանես աստվ դուն զԱս-
տուած. վասն զի որչափ դասք հրեշ-
տակաց և սրբոց մէկ տեղ ժողվին, նա-
հապետք, մարգարէք, առաքեալք,
մարտիրոսք, կուսանք, և փառաբանեն
զԱստուած, մէկ պատարագին պա-
տիւը աւելի է Աստուծոյ առջին:
Վասն զի ես եմ որ սուրբ սեղանոյն
վրայ կուգամ, խոնարհ կերպարան-
քով աղաչող բարեխօս կըլլամ Աս-
տուծոյ, քահանայ կըլլամ, երկրպա-
գօղ և փառաբանող իմ երկնաւոր
Հօրս. զոհ կըլլամ պարտաւորի մը պէս
քու պարտուցդ համար, և կըխօրվիմ
կըպատարագվիմ ասս պատարագովս
քեզ վրկելու համար:

Ա՛ս է մէկ գանձ մը որ քու ջերմե-
ռանդութեդ ձեռքն է. որչափ կուզես՝
այնչափ աւելի կըշահիս, կառնես կըն-

դունես ամենեն բարիք՝ որ հարկաւոր
են քու փրկութեանդ. կընդունես
շնորհք Հոգւոյն սրբոյ ի մկրտութեան
քերուդ վրայ. կազատես նեղքեն փոր-
ձութիւններէ՝ որ քու չար սովորու-
թիւններդ կրգբերեն. կառնես օգնու-
թիւն Աստուածայեն շնորհաց. նաև
ժամանակաւոր բարի, առողջութիւն,
խաղաղութիւն, յաջողութիւն քու
գործքիդ՝ որը որ հաճոյ է Աստուծոյ.
կառնես ապաշխարութեան շնորհք,
ազատութիւն մարմնաւոր պատիժնե-
րու՝ որ քաշել ունէիր. նաև թողու-
թիւն պատժոց ննջեցեալ հոգինե-
րուն:

Ա՛ն է կերակուր՝ որով քու հոգիդ
սնունդ կառնէ, կապրի: Հայց ՅԱ-
տուծոյ է՝ որ ինձանէ յերկինից, և կեա-
նըս տայ աշխարհի: (Յո՛հ. Զ. 33:)
Ասով դուն մարմնաւորդ կըլլաս հո-
գևոր-աստվածեղու ատենդ՝ քու հո-
գիդ կընայ ազքայութեան արժանի
ըլլալ. վասն զի ազքայութեան Համ-
փուն Թոշակը պաշարը քու հոգիդ՝
աս պիտոր ըլլայ: Եթէ ոք ուտիցէ ի

հացէ յայտանէ՝ կեցցէ ի յաւիտեան։
(ՀԲ. 52։) Երբոր երկինքը ելլալու Համ
փուն մէջի աւազակները՝ որ են սա
տանահները՝ աս Թոշակով քեզ պահ
ված տեղնան, քենէ պիտոր փախչին,
հրեշտահները քովդ գան։ Կամ եաքի
դատաստանին օրը քու մարմնոյդալ
յարութիւն առնել տալով՝ աս հացս
պիտոր ըլլայ, որ է իմ մարմինս. վասն
զի իմ մարմինս Հաշակելովդ՝ կրկլաս
իմին մարմինէս, որ գերեզմանի մէջ
չիմնաց, յարութիւն առաւ. ան իմ
մարմնոյս զօրութիւնը եաքի օրը քեզ
մեռելներուն մէջէն յարութիւն առ
նել պիտոր տայ, ըլլալով նման ինծի՝
որ եմ առաջին պտուղ ննջեցելոց։ Որ
ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ,
ունի զկեանան յաւիտենական, և ես
յարուցից զնա յաւուրն յետնում։

Հիմա տես որ՝ ասկէց աւելի կրնայի
իմ սէրս ցոյցնել. անոր համար գիտ
ցիր որ իմ սէրս իմ հաղորդութեան
խորհուրդն է. և որովհետև աս խոր
հուրդը միշտ քովինն ձեռքդ է, քու
աչքիդ առջին է, եսալ անանկհինէ հոն

եմ, քեզնէ չեմ հեռընար. մեկ հատիկ պատճառ հեռընալուն՝ է քու չմոռնալդ ասոնք։

Ակնէց եաքը կուզես որ քեզնէ աչնեմին չհեռընամ, միշտ քովդ մնամ։ Առաջ մըտածէ աս անհուն խորհուրդը, աս մտածականը քեզի կըլլայ նախապարիսպ մը. մտածականով ընդհովանեաւ վլմին կեցած կըլլաս, որ եմ ես. ան ատենը անհնար է որ քու սէրդ պակղի ինծմէ։ Ադամ ուզից ուտել արգիլված պտուղը՝ որ ամէն Աստուծոյ բանը իմանայ, Աստուծոյ պես ըլլայ. ահա ո՛վ որ աս հացը արժանաւորութեամբ ճաշակէ, և իր խորհուրդը մտածէ, կիմանայ Աստուծոյ անհուն կարողութիւնը, և անհուն իմաստութիւնը, և Աստուծոյ նըման եղած կըլլայ։ Երկրորդ՝ դունալ ինծմէն օրինակ առնելով նեղութիւն և խաչ քաշելը սիրէ. վասն զի ան խաչը պատճառ կըլլայ որ՝ իմ սէրս քու սրտիդ մէջը չփակվիր. դունէ ինչ խաչ որ ես կըխրկեմ քեզի՝ մի մերժեր, մի ձչգոհար. վասն զի ո՛վ որ իս կըսիրէ, ու

ինձի հետ մեկտեղ կընտրի սուրբ խորհրդով հաղորդութեան, պէտք է որ խաչ քաշէ. եւսւ ինչո կըսիրեմ՝ ես աշխարհս խաչ կըսիրկեմ. անոր համար իմ առաքեալներուս որ ինձի սիրելի էին, ամենէնառաջ մեծ մեծ տանջանքներ քաշել տըվի։ Եւ երբորդ՝ քու հոգւոյդ հօրդ հնազանդ եղիր ամէն կրթութեանդ մէջ։

ԽՕՍՔ ՀՈԳԻՈՅՆ

ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԼ

Ակաա՜տիկ ես գեղեցիկ եղբօրըդէ իմ՝ վայելո՜ւ. ա՜ա գահոյս մեր հովանաւորը, գերանե՛ փանդ մերոյ մայրե՛, զարմա՜նդե՛ր ըր նո՜ճե՛: (Ա. 15:) Որպէս խնձոր՝ ի թուփ անպտուղ՝ այնպէս եղբօրըդէն իմ՝ ի մէջ ոստիկոյ. ընդ հովանեա՜ նորա ցանկացայ նստիլ և նստայ. և պտո՜ւղ նորա քաղցր է՝ ի կոկորդի իմո՜յ. մո՜ծի՛ պէս՝ ի քո՜ւն գիւո՜յ. կարգեցէ՛ք՝ ի վերայ իմ զսէր. հատպատիկէ՛ք զիս խնդրո՜. կոպեցէ՛ք ինձ խնձոր, զի խանդաղած եմ ես սիրով: (Բ. 3:)

Ա՛հա տեսայ սէր իմ Յիսուս քրիստոս զերեզկումիւնդ աս սուրբ հաղորդութեան խորհուրդին մէջ, տեսայ քու անհուն զօրութիւնդ և խնայասութիւնդ, լսեցի աս խրատներըդ՝ որք են շահ և փրկութիւն իմ հոգւոյս. ակնկեց եղբը ես որին պիտոր երթամ, ինչպէս մոռնամ առաջադրութիւնս, ինչպէս ստեղծուածնիդը ստեղծողիդ

վեր գնեմ, քեզնէ բաժնվիմ: Միայն
աս կաղաչեմ. դու որ Թագաւորի պէս
նստեր ես հիմա իմ սրտիս մէջ իբր քու
գահիդ (Թախտիդ) մէջ, հովանաւոր
ըլլ աս Թախտը, միշտ հովանի ըլլաս՝
ինծի օգնես: Ան տեղը իմ տանս դէ-
րանները (քիրիչները) ամուր փայտէ
կըլլան, չեն փտիր. առաջագրու-
Թիւնս չեմ կորսեր. անուշ հոտալ կը-
հանեն անուշահոտ նռՃիի (սէլվիի)
պէս շինված. անանկով հաստատուն
տան մէջ նստած կըլլանք մէկտեղ
ընորհօք:

Ես ինչման հիմա տեղծողդ Թո-
ղուցեր էի, տեղծուածոց մէջ իբր
փայտէ անտառներու մէջ կըմինտաէի.
հիմա ինծորի մը ծառ գտայ որ Ա-
դամ կորնցուցեր էր, ան ծառն է
սուրբ խորհուրդը հաղորդուԹեան,
որ է ինծ որ գիտուԹեան, նաև անմա-
հուԹեան. աս պտուղը ուտեղով կաս-
տուածանամ, ամէնն ըան կըգիտնամ:
աս ծառիս տակը կուզեմ կառաջա-
դրեմ նստիլ ու նստայ. տակէց հեռը
չեմ բաժնվիր. վասն զի ատոր պտու-

զը՝որ էքու սուրբ մարմինդ և արիւնդ, ահը իմ Յիսուս, խիստ անուշ է իմ բերնիս մէջ։

Դո՛ւ պահապան հրեշտակս, դո՛ւք իմ պաշտպան սուրբերս, ազատեցէ՛ք զԱստուած՝որ միշտ աս սուրբ գինւոյն տունը ճամ, Յիսուսին սիրովը երբ անուշ գինւով վառված ըլլամ, մեյ մընալ չերաժնըվիմ։ Եղբայրսիրու թեան ոդորմութեան եղովակս հասատեցէ՛ք, որ եղբարնէրս սիրելով Յիսուս սիրած ըլլամ. մէյմէկ ընորհքով իս միխիթարեցէ՛ք, որ երբ մէյմէկ խնծորի պատուհնէր ուտելով, միշտ հոգևորին մտիկնամ, սէրս չփակվե ցընեմ. մէկ օրմընալ արժանի ըլլամ գէմ յանդիման զինքը տեսնելու արքայութեան մէջ, որուն միշտ կրբաղ ձամ. Ամէն։



PENTECÔTE
PINKSTEREN

ՂՂՕԹՔ

Ի ԺԱՄ ՊԱՏԱՐԱԳԻ

ՊԱՏԱՐԱԳԻՆ սուրբ խորհուրդը աւանդելու առնելդ՝ երկու բան պէտք է որ մտածես։ Մէկը մտածէ որ Քրիստոս տէրն մեր քեզ հարկինք կը կանչէ, սեղան (զիաֆէթ) կընէ, ինչ պէս որ առաքեալներուն ըրաւ վերնատունը մէջ։ Ան սեղանին վրայ իրեն սուրբ մարմինը և արիւնը տրվաւ իրենց ձաշակելու, որ է մէկ կերակուր մը անմահարար. և ուրիշ բանէրէն զատ՝ իրեք բան պարգև ըրաւ առաքեալնէրուն. մէկը ամենասուրբ Երրորդութեան խորհուրդը տոլվեցուց, լուսաւոր խօսքերով հասկըցուց։ Երկրորդ՝ համարձակութիւն տրվաւ որ՝ յիսուսին անունովը խնդրեն ինչ որ ուզեն, խոստանալով որ իր անունովը ուզածնին պիտոր առնեն։ Եւ երրորդ՝ սրոյ պարգև տրվաւ, սէրը իր կատկովը իրեն նշան Թողուց։

Ասանկ հիմա դուն ալ սուրբ սե-

ղանին վայ կանչված ես Քրիստոսի առաքեալներուն պէս. հաւատքով ջերմեռանդութեամբ տես պատարագը. մէյմը որ Աստուած միտդ լուսաւորէ, պայծառ խնայաս առջևի տեսած խորհուրդդ, և Աստուածային գաղտնիքները. երկրորդ՝ Յիսուսին անունովը ինչ որ ուզես քեզի պէտք եղած հոգևոր նաև մարմնաւոր բաները տայ քեզ Աստուած. երրորդ՝ սէրն Աստուծոյ եղբայրական սիրոյն հետ վառէ Աստուած քու սրտիդ մէջը, որ է մէկ հաւիկ Ճանիպայ աղբայրութիւն հաստիլը։

Երկրորդ՝ մոռացէ, աչքիդ առջևին բեր Գողգոթա լեռը, իբր թէ իրաւցնէ հոն ես, ու աչքովդ կրսեւնաս որ Յիսուս քեզի համար խաչին վայ կրգամէն, ինքն Յիսուսալ իրեն սուրբ արիւնը վազցնելով կրմեռնի, խաչին վայ կրպատարագվի, որ քեզ փրկէ յաւիտենական մահուանէ։ Ասոնք մոռացելով, խնայիր որ պատարագը ուրիշ բան չէ որ՝ քուվիին փրկութեանդ բանն է. նայէ ինչ վախտ գով, ինչ սիրով պէտք է որ տեսնաս սուրբ հրաշալի խորհուրդը։ Եւ գիտցիր որ՝ որչափ քու կեանքիդ մէջը աւելի աղօթքներ ըրելես ինչվան հի-

մա, ան ամէնէնաալ մէկ տեսած պատա-
ղաձին արդիւնքին չէն կրնար հասնիլ:
Ընանկ գիր որ՝ ամէնէն մէկ պատարագ
տեսնալուդ առեներ հազար քէսէ վա-
ռկէկեր, ինչպէս սիրով կը վազեր տես-
նալու, անանկ սիրով տէս. վասն զի
իրաւցնէ անանկ հազար քէսէ չնոր-
հաց կը վատնուին, որ չարդկեր: Ա
քէսէներդը հիմա չես վայելէր, հապա
մէկ մահսէնի մէջ բալլեքի տակ կը պա-
հես, որ երբոր առներդ գայ, ան տես-
նդ ըանաս վայելես ուզածիդ պէս, ա-
նանկալ առնդ պիտոր վայելես մեռ-
նելու առենդդ ան գիտի աշխարհքը, որ
է հարըստութիւն մը անանց յաւիտե-
նական:

Առնք մտածելէն ետև՝ դիտաւո-
րութիւն (նիէթ) գիր տեսնելու առջևի
պատարագը ի փառս ամենասրբեր
երրդութեան, ի պատիւ ամենայն
սրբոց և հրեշտակաց, յօգուտ ամէն
քրիստոնէից, թէ անոնց որ՝ քեզի
բարեկամ են, և քեզի աղօթք յանձ-
նեցին, և թէ անոնց որ՝ քեզի թշնամի
են. սրբերեկեղեցւոյ խաղաղութեանը
և փառաւորութեանը համար, ննջե-
ցելոց հոգիներուն հանգստութեանը
համար, մանաւանդ անյիշատակ ննջե-
ցելոց: Բայց ամէնէն առջի քու ան-

ՀԻՆԳ օգտին համար, ինչպէս լսվ չնորհք որ՝ առջև մեզքերուդ թողութիւն առնես, վարդդ չակես, ժամանակ ու նեղնաս ձչմարտասէս ապաշխարելու. և Հոգւոյն սրբոյ միխիթարութիւնը ու նեղնաս քու ամէն նեղութեանդ մէջ. մարմնաւոր գործքերուդ համարալ յաջողութիւն ունենաս, որն որ բարի կերևան Աստուծոյ: Առանցմէ զատ՝ ինչ ուրիչ դիտաւորութիւն (նիկեթալ) կունենս թէ հոգւոյդ և թէ մարմնաւոր ի փառս Աստուծոյ՝ կրնաս դնել, վասն զի անհոն է օգնութիւն և զօրութիւն պատարագին:

ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ

Ի ԽՈՐՀՈՒՐԴ ՊԱՏԱՐԱԳԻՆ

ՊԱՏԱՐԱԳԸ՝ Քրիստոսին ջարչարանքը կընկերակցըննէ. անոր համար քրիստոնէին ան է ամէնը որ՝ ամէն պատարագ ներնալուն առնելը Քրիստոսին ջարչարանքը մտածելով ներնայ:

Առանկով պատարագ սկսվելու ա-

աւետը մուածէ Քրիստոսին պարտէզին մէջ մնալը, աղօթելը, ու արիւն քրտընելը։

Սկիզբը բանալու ու բաժակը դնելու աւետը՝ մուածէ Յուդային համբուրելով մատնելը զՅիսուս. Յիսուսին բռնելը, կապելը, ու քահանայապետին առջեւն տարվելը։

Դիրք ու աւետարան կարդալու աւետը մուածէ, երբոր երդվընցնելով կուզեն որ Քրիստոս ըսէ, հասկըցընէ իրեն համար մէ՞, ինչ է։

Հաւատամքին աւետը մուածէ Քրիստոսին անեղկիւղ յայտնի դատանիլը իր Աստուածութիւնը, և իրեն դատապարտուիլը։

Սկիզբ բանալու և լուացվելու աւետը մուածէ Քրիստոսին իր լեթէրը հանելը, կարմիր քղամիդ հագնիլը, փշով պսակվելը, ծեծվելը, ու պիղատոսին լուացվելը Քրիստոսի արիւնին պարտաւորութենէն ազատվելու համար։

Սուրբ Սուրբ ըսելու աւետը՝ մուածէ Քրիստոսին նախատական խօսքեր ըսելը, ծաղր ընդվելը, այն որ հրեշտակներուն երգերով միշտ սուրբ սուրբ կըսէր, կրփատաբանվէր։

Առէք կերէք ըսելու աւետը մը-

. տածէ Քրիստոսին խաչին վրայ գամ-
վելը , արիւնը վազցնելը :

Ի սրբութիւն սրբոց ըսելու աստիճը
մտածէ Քրիստոսի խաչին վրայ գամ-
ված վեր վերցրվելը, գեհենին վրայ
տնկրվելը ամէնուն առջին, ու երկ-
նաւոր Հօրը առջին, որ մեր մեղքերուն
քաւութիւն ու թողութիւն գտնայ :

Նշխարքը բեհանելու՝ և մէկ մասը
բաժակին մէջ ձգելու աստիճը մտածէ
Քրիստոսին հոգին աւանդելը, և լմ-
պոսը ինկնալը, նախահարց հոգիքը
ազատելու համար :

Ճաշակելու աստիճը մտածէ Քրիս-
տոս խաչին վար ինկեցընելը , ու իրեն
թաղումը :

Եաքի աւետարանին աստիճը մտածէ
Քրիստոսի նորին կենաց աւնելը փա-
ռաւոր յարութեամբ :

Ի գալ ահանայինն առ Տէրն :

Տէր իմ Յիսուս , զքեզ կըտեսնամ
աչքովս որ քահանայի կերպարանք մը
տած կերլաս ձիթենեաց լերը , հոն
կըհոգաս կըպատրաստվիս պատա-
րագ մատուցանելու Հօրն երկնաւո-
րի , չէ թէ մէկ ոչխար մը , մէկ ար-
ջառ մը, մէկ խահակ մը, այլ զքեզ

ինքդ կըպատրաստես սեղանին վրայ մորթըվելու իմ փրկութեանս համար իբրև մեկ գառն մը անարատ : Ո՛վանձ հուն գթութիւն , հերիք չէր անչափ աղօթքնէրդ , անչափ քաշածնէրդ, որ ինծի համար քաշէիցիր , այլ իմ վրայ այնչափ գութ ունեցար որ՝ ձեռք ա- ռիր քուկին անհուն խնամատութիւնդ, և չեղած բանը ըրիր: Մեկ անգամ պա- տարագվեցար արեամբ Գողգոթա լե- ռը . հիմա նորէն անարիւն պատարա- գով կըպատարագվիս, ղուրպան կըլ- լըվիս իմ առջիս ինծի համար, բայց մի և նոյն պատարագդ ես , ինչ որ եղաւ Գողգոթա լեռան վրայ :

Յաւէտ հանապազ . Ես վասն սրբոհոյ Ապրածծինն :

Ո՛վ սուրբ կոյս Աստուածածին , դուն որ Գողգոթա լեռան վրայ եղած պատարագին առջին կեցար , և որդ- ւոյդ հետ մեկտեղ պատարագվեցար կենդանւոյն խորվելով սըրտիդ մէջը , որ ես խալըսիմ՝ի բարկութենէ Հօրն երկնաւորի , մեղքերուս թողութիւն

գանամ, ուր կաղաչեմ քու բարե-
խօսութեամբդ՝ որ սա պատարագիս
առջին ես ալ ընդունիս պէտք է անանկ
կենամ, որուն մեջտեղը սա պատարա-
գը Հօրն երկնաւորի մատուցանեմ։
Ետա ապաշնորհներս ունիմ ընդու-
քովին բարեխօսութիւնդ զօրաւոր
է Աստուծոյ առջին մայր սուրբ, բա-
րեխօս եղիր ինծի մեղաւորիս համար,
որ ձայնս լսէ, խնդիրքներս կատարվի։

Յաւէն, Խոսովանիմ առաջի Աստու-
ծոյ։

Ո՛վ ամենասուրբ Երրորդութիւն,
քահանայիս խոստովանութեանը հետ
իմ խոստովանութիւնսալ ընդունիլ
ողորմէ, ուան զի իմ մեղաւորիս մեղ-
քերը քահանան իր վրան առած ա-
նանկ կըխոստովանի. մանաւանդ թէ
նոյն ինքն Յիսուս միածին, ճշմարիտ
քահանայապետն, անմեղ գառն Աս-
տուծոյ իր վրան առած իմ մեղքերս
քահանայի կերպարանքով անանկ
կըխոստովանի քու առջիդ ով Հայր
երկնաւոր, մեղայ կըսէ, Թող կըսէ

աս մեղաւորիս մեղքերը, եւ անոր տեղը ահա կրպտտարադվիմ դուրսան կըլլամ: Ընանկէհետ երբոր քահանայապետին Յիսուսի աս խոստովանութիւնը իմ դիտցած կըլլայ ու ոտը մուխեան Աստուած, Թողութիւն տուր իմ ամէնն մահացու և նեղելի մեղքերուս որ ինչվան հիմա գործեցի. և Յիսուսին պատարագիլը մորթելը ալ աս սեղանիս վրայ ընդունէ, այսօր ինծի հետ հաշտուիլ. որպէս զի կատարեալ հաշտութիւն Աստուածութեանդ հետ՝ տաս ինծի ան ամէնն շնորհքները, ինչ որ պատարագիս մէջը պիտոյ ուզեմ. լսէ, կատարէ ան խնդիրքներս, ինչ մտքով որ առաջադրեցի աս սուրբ պատարագը սեանալու:

Մխիթ առաքի սեղանոյ առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութեան իմ:

Եսալ մտնամ աս սեղանս, որ Յիսուս կըսանչէ, ես լցեալ մեղքերով մտնամ վայելեմ աս սեղանէս՝ որ Յիսուս կըպատրաստէ. վասն զի ինքն Յիսուս հարկինք ըրաւ, հրաւիրեց

իր սեղանը կաղէր, կոյրեր, խեղճեր, ան մարդկինեերը՝ որ ոմանք լոյս հաւատոյ չունէին, հոգեւոյ կոյր էին, ոմանք կաղալով կերթային, մէյմը Աստուծոյ ծառայելով մէյմը սատանայի, ոմանք մէյ մէկ դին ցաւ ունէին, մէյ մէկ կիրք և մոլութիւն. սասանկիներուն հիմա կըսէ. Դուք մեղաւորք եկէք աս գառս կերէք, որ ձեզի դէղ ըլլայ, ձեր մեղքերուն թողութիւն գտնաք, Հոր Աստուծոյ հետ հաշտութիւն գտնաք: Ա՛ս սեղանս է որ ձեզ կուրախացընէ. հոս ես կրխորվըվիմ ձեզի համար, իմ սուրբ արիւնովս ձեր մեղքերը կըլուանամ, նորէն անմեղութեան շնորհքով ուրախ կընեմ ձեզ. ինչ որ մանկութեան պզտիկութեան աուէնը ունէիք սկրտութեան շնորհքովը:

Դոփ արա՛ ինչ Աստուած, և իբա՛ արա՛ ինչ ի՛ գործածանէ իմաստ:

Ո՛վ հայր երկնաւոր, հիմա իմ գաստատանս դուռ կորէ, ան ազգէն՝ որ ոչ է սուրբ, որ է իմ մարմինս, ան մեղաւոր ու նենգաւոր մարդէն՝ որ է

իմ կիրքս՝ փրկէ իս , սատանային որո-
գայթներէն խալըսէ իս աս սուրբ պա-
տարագին վրայ նայելով : Քու միա-
ծինդ է որ ինծի համար կազաչէ , որ
մեղքերուս թողութիւն գտնալու հա-
մար ինքիր զինքը կըպատարագէ աս
սուրբ սեղանին վրայ :

Դու Աստուած հզօրութիւն ես , ընդէր
մոռացար ինս , ընդէր պրպտամ գնամ ես
ի նեղութենէ թշնամւոյ իմոյ :

Տէր իմ Յիսուս , աս բարեբարու-
թիւններդ դուն ես որ ըրեր ես ինծի .
աս պատարագովը դուն ես որ կըպա-
տարագին կըմորթըվիս , քու կիր-
բիւդ կըթափէս իմ սիրոյս համար .
հիմա ինչքա մոռցեր ես իմ մեղք-
րուս համար , իմ սիրտս քեզի պա-
տած ըլլալով չեմ կրնար պատարագը
սիրով փափաքով ասանալ ինչպէս որ
պէտք է . թշնամին որ է սատանան ,
աշխարհ , և իմ կիրքերս , կընեղեն իս
փորձութիւններովանկէց եսալ սըրտ-
մըտութեան մէջ կիյնամ : Բայց դու ա-
մենակարող Աստուած , հզօրիչ իմ ես

զօրացո՛ զիս Աստուած, աս սուրբ պա-
տարագին զօրութիւնը տո՛ւր ինձի, որ
անով փարձութիւններուն յաղթեմ,
սիրտս՝ միտքս՝ բոլորովին քեզի ըն-
ծայեմ. ինչպէս որ դուն ալ քեզ բո-
լորովին ինձի կուտաս, եսալ ես բո-
լորովին քեզ նովիրեմ, քեզնով միշ-
տ ապրելու։

Խոսողան եղէ հետ օրհնութեամբ, Ա-
ստուած Աստուած իմ։

Կրնստատովանիմ Աստուած իմ, և
կօրհնեմ քու վկին անչափ բարերարու-
թիւնդ, որ աս պատարագովը ինձի
կրցընես. իմ մեղքերուս քաւու-
թեանը համար յանձն առիր չէ թէ ոչ
խար մը կամ գառ մը մորթել տալ,
հապա դուն ինքդ մարդացեալ Ա-
ստուած իմ Յիսուս, կուսածին մար-
մինդ իմ սիրոյս համար խաչին վրայ
բոլորովին խորվեցիր, Հօրն երկնաւո-
րի պատարագ մատուցիր. կրնստատո-
վանիմ Աստուած իմ օրհնելով աս ե-
րախտիքը որ ինձի ըրիր, կրնստատո-
վանիմ կըզղջամ նաև իմ ապերախ-

տուժելնելուս վրայ, որ մեղքերով գործեցի. կըցաւիմ քանի անգամ որ քեզ վշտացուցի հինգ զգայարանքներով, օխտը մահացու մեղքերով: Ա սեղանոյն առջեւն ձգելով իմ մեղքերս, կըինդրեմ ներումն, քու սուրբ արիւնովդ լուանալս. մեղքերուս յիշատակը ջնջես արդեամբք և զօրութեամբք սուրբ պատարագիս:

Աւետ ընդէր գրգռեմ ես անձն իմ, կամ ընդէ՞ր. և այլն: Օրհնեցո՛ւ Հայր. և այլն:

Կըհարցընեմ ես իմ անձինս, ինչո՞ւ սրտառմէս, ինչ է որ ոչ երբեք կըհանգչիս: Ինծի ներսէն պատասխան կուտայ, չեմ հանգչիր՝ վասն զի Աստուած կըփնտռեմ՝ չեմ գտներ, ապրարածոց մէջ հանգստութիւն կուզեմ, չեմ գտներ հանգիստ. մեղք կըգործեմ որ կամքս կատարեմ, բայց անոմ սէր աւելի խռովութեան ու թշուառութեան մէջ կիյնամ՝ կուլամ կըպըղտըտիմ, մէկ հանգիստ տըվող մը մէկ փրկիչ մը չեմ գտներ: Մէյմը-

Նալ մեկ ձայն մը կառնէ իմ հոգիս խո-
րանէն, ինչո՞ւ արտում ես, ինչո՞ւ կը-
խռովես, ահա վրկիչ մը կերևնայ, ա-
հա Աստուած կուգայ աս սուրբ խո-
րանին վրայ. դուն Աստուծոյ վայ
դիր յոյսդ, խոստովանէ, հաւատա,
հաւատքովդ ուղղծովդ պաշտէ անկ
կայ. Աստուածալ հիմա կուգայ, փրը-
կիչ երեսաց քոց կըլլայ. ուրիշ տեղ մի
փնտռեր ոչ Աստուած և ոչ քու հան-
դստութիւնդ, այլ միայն աս խորանիս
վայ փնտռէ, որ ամէն ցաւիդ միխ-
թարութիւն գտնաս: Ա՛ն ձայնս կըլը-
սեմ՝ սուրբ սեղանոյն վրայէն, յոյս
կառնեմ, հոգիս կուրախանայ, կը-
փառաւորեմ ամենասուրբ Երրորդու-
թիւնը ըսելով. փառք Հօր, և Որդւոյ,
և Հոգւոյն սրբոյ. կօրհնեմ ամենա-
կարօղ Աստուածը՝ որ իս արժանի
ըրաւ ատանկ սուրբ տեղ կենալ, ուր
որ իմ Աստուածս՝ իմ արարիչս՝ մար-
մնացեալ խորհրդացեալ աս սուրբ
խորհուրդիս մէջ հիմա պատր ա՛ե-
նամ:

Ի ՅԱՐԻՒ ԱՐՔԱՆԵԱՆ ... ԽՈՒՆԱՐՀԵԱԼԵՐ-
ԿԻՒՂԻ- ԵՐԿԻՐ ՊԱՓԱՆԷՄ :

Երկրպագեմ ահը իմ Յիսուս քու անչափ երկայնմտութեանդ , երկրպագեմ քու անչափ խոնարհութեդ , երկրպագեմ քու անչափ մարդասիրութեանդ՝ որ աս պատարագովը ցուցիր իմ վրայ : Առաջ խաչելեցար թաղվեցար ինձի համար , և յարեար վառաջ, հիմայ նոյն խաչելութեանդ յիշատակը անարիւն պատարագովդ կը հրաշագործես՝ ինձի կընկերկայցընես , անով աս տեղս կըլլայ հրեշտակաց բնակարան , որունց հետ եսալ միկ տեղ ձայնակից ըլլալով ահով դողով խոնարհեալ երկրպագութիւն կուտամ , և փառաբանութիւն կերգեմ :

ՕՐՀՆԵԱԼՈՒԹԻՒՆ ՀՕՐ Ս ՈՐԴՈՅ :

Ա յսօրվան ասնին յիշատակը որ սուրբ եկեղեցին կընէ , եսալ բարեխօս միջնորդ բռնելով ինձ ամենասուրբ Երրորդութիւն , խնդրեմ որ տաս ինձի ան շնորհքնիերը՝ ինչ որ պէտք է ինձի :

. Թէ որ երկրաւոր իշխանները երկնից
ոճներուն մեծ մեծ շնորհքներ պարգև-
նեն կըրաժնեն, քանի՛ աւելի գոնէ աեր
իշխան մեր ամենեցուն այսօրուան ու-
նին պատիւը մի պարապ հաներ . որ-
չափ շատ է իմ մեղքերուս ծանրու-
թիւնը՝ մի՛ յիշեր . այլ՝ի պատիւ ոճնին
Թողութիւն տուր առաջ իմ մեղքե-
րուս՝ որով կատարեալ հաշտութիւն
ըլլայ . անկէց ետքը տուր ինծի հա-
ւատ, յոյս, աեր, և բարեգործութիւն.
որ ձեռացած կեանքս ապաշխարու-
թեամբ և բարի գործքերով անցընե-
լով, բարի պատրաստութեամբ հոգիս
քեզ աւանդելով, երկինքը ոճնելար-
ժանի ըլլամ աս ոճնս ամէնէն սրբոց և
հրեշտակաց հետ մեկտեղ :

Ս-ՐԲ Ա-ՓՈՓԱԾ , ՍՐԲ Ե ՀԶՈՐ , ՍՐԲ
Ե ԱՆՀԱ ՈՂՈՐԴԱ ՄԵՂ :

Հրեշտակային փառաբանութիւնը
բերանս առնելով, քովիկին մարդասի-
րութիւնդ օրհնելով կալաչեմ աեր ա-
մենակալ՝ ողորմի՛ ինծի որ իս սահեղծե-
ցիր, ողորմի՛ ինծի իմ ամէնէն հարկաւո-

բուԹեանս առեն,ողորմՀ ինձ ի,ինայՀ փրկՀ իս ամենն պատիժներէն, որ արդար բարկուԹիւնդ Աստուածայնի իմ մեղքերուս համար կրնկրկՀ վրաս : Ամանաւորապէս ազատեմ, ազատՀ պահՀ իս մահառաջամՀ,կրակՀ,յանկարծակի մահուանՀ, երեՀելի և անեծելոյԹ փորձանքներէ, չար ԹշնամիՀ բէ,նայելով սուրբ պատարագիս վերայ որ սուրբ եկեղեցիայ դիտաւորուԹեամբ բոլոր պատվՀ քեզ կրմատուցանեմ, ընկալու ողորմՀ :

Հաւատամ ՚ի Ս Աստուած :

Հաւատամ ան ամենն խորհուրդները, ինչ որ կրհաւատայ սուրբ եկեղեցին . իրեն հետ միակեՀ զուբ ցեԹով աս հանդանակը , կրխնդրեմ ԹողուԹիւն ԹՀ որ հաւատքիս դէմ մեկ խօսք մը մեկ գործք մը ըրեր եմ ու չեմ Ճանչնար. և կաղաչեմ որ աս սուրբ պատարագիս արդեանցը համար տաս ինձի շնորհք որ՝ ուղղափառ հաւատքս սըրտովս՝ մտքովս՝ խոստովանիմ, և հաւատքիս կէօրՀ ալ գործք ունենամ

ինչ որ սուրբ աւետարանը կասկածէ, գործքով կատարեմ։

ԽՈՂՈՂՈՒԹԵԱՄԲ ԻՒՐ ՔՐԻՍՏՈՍ ԷՒԼԷՐ ՄԸ։

Քրիստին խաղաղութիւնդ որ աշխարհ բերիր մեր իմ Յիսուս, պարգեւէ ինծի սուրբ պատարագիս արդեանցը համար, խաղաղութիւն իմ սրտիս ու մտքիս մէջը՝ խղճմտանքս մաքուր պահելով, Աստուծոյ հետ միշտ հաշտուած ընալով։ Խաղաղութիւն իմ տանս մէջ հեռըցնելով ամէն խռովութիւը որ սատանան կրնայ բերել մեզքերով։ Խաղաղութիւն քաղքիս մէջը, փոխանակներէ՝ չար պատահմունքներէ պահելով։ Եւ ան ամէն խաղաղութիւնը կենցաղավարութեանս մէջ որ հարկաւոր է քրիստոնէապար քեզ ծառայելու. որպէս զի հոս քեզի ծառայելով, հոգը անդինալ գանամ երկնային խաղաղութիւնը արքայութեանդ մէջ։

Աղաչեմ սրբությամբ պահես իմ։

Աստ տեր իմ Յիսուս՝ իմ հոգիսալ ամենն ապաստանեմ, որ մեղքերովս ապաստեցի. մաքրէ՛, սրբէ՛ իս ինչ որ քեզ դէմ մեղքերովս գործեցի փառաւորեամբ և անգիտութեամբ, կամայ և ակամայ. որպէս զի արժանի ըլլամ առնել անմահ պատարագդ սրբութեամբ քեզ մատուցանելու և առնելոյն ամենն ընդհանր՝ որ հարկաւոր են իմ հոգւոյս փրկութեանը համար։

Ողջոյն քոյ մխեանդ։

Ա՛ երկնային ձայնը լսեցուխորհեցին վայելն՝ ասկէց եաքը ողջոյն կուտանք, սէր կըցցնենք մեկմեկու վայ։ Եւ ա՛լ ե՛ որ չխոբէ իր ընկերը, չնենէ իր թշնամին երբուն, առնելով՝ Յիսուս Քրիստոս բանն Աստուած մեզի համար երբոր իրեն թշնամի էինք, մեզ առաջ մեր վայ այնչափ սէր ցցուց որ՝ հիմա խորանին վայ երբ է՝ յանձն առեր է մեզի համար իր սուրբ արիւնը թափելու, որ մեզ երկնաւոր հօրը հետ

հաշտեցընէ : Տուր սէր իմ, որ եսալ քեզի հետևելով ան սէրը ունենամ Աստուծոյ վրայ, ընկերներուս վրայ, թշնամիներուս վրայ. ամենունալ եղ բայրական սէրս ցցընեմ սրտովս և գործքովս՝ որ քեզնեալ սէր գտնամ : Իս սիրով ընդունիս սէր իմ, այն սրբոց ընկերութեձ մէջ, որ սիրով զմայլեալ ալքայութեան մէջ, անձառելի տեսութեամբ քով և քալցր ընկերութեամբ միմեանց՝ կուրախանան յաւիտեան :

Ահէ՜ կացցո՛ւք, և այլն : Պապարագ վրէս պոռ մոտի անարատ գառն Աստուծոյ :

Կըտեսնամ ահա քահանան խորանին վրայ ելած, Յիսուս Քրիստոս ձեռքովը կըպատարագէ, զուրկան պիտոր ընէ . կըլսեմ ձայնը որ կըսէ, աս է գառն երկնաւոր, որ մեղքըվն պիտոր աս խորանիս վրայ . ինչ կուզես խընդրէ, զուրցէ, Հայրն երկնաւոր աս պատարագիս սիրոը չիդխանար, ուզած պիտոր կատարէ : Եսալ աս ձայնս առնելով, սիրտս կըքաջալերի. կը

խնդրեմ առաջ իմ վերայ ողորմութիւն, որպէս զի արդարութիւնը մեզ դի Թողու, իմ վերայ դթութեամբ ողորմի. երկրորդ՝ կրնդրեմ խաղաղութիւն. մեղքերս Թշնամի ըրաւ իս Աստուծոյ հետ, Աստուած ինծմէն հեռցուց, խռովութեան սատանան քովս նըստեցուց, հիմա պատարագիս զորութեամբը մեղքերուս Թողութիւն տալով խաղաղութիւն հաստատութիւն ըլլայ իմ մէջ և Աստուծոյ մէջ. խաղաղութիւն ըլլայ իմ տրտիս և խղճմտանքիս մէջ, իմ տանս մէջ, և ընկերներուս մէջ. երրորդ՝ կրնդրեմ որ ասանկ ըլլալով ես պատարագին ուժովը օրհնեմ իս հայրն երկնաւոր. օրհնեմ իմ ամէն տունս, ամէն գործքս մարմնաւոր և հոգևոր, հեռցընեմ մեղքերս, սատանային ուժը, և ամէն Թշնամեաց տեսութիւնը:

Ընդհատ. սէր, և ապահովացին սրբարար ջրոսիկան... եղիջ ընդ յիս ամենեսին:

Ահա կըլլեմ խորանին ուրախութեան ձայն, պատարագիս ուժովը

կրնամ առնել հնորհք Հոգւոյն սրբոյ, որ ամէից եաքը չմեղանչեմ. ամ խորանէս կառնեմ աչքն երկնային, որով սիրտս միաքս երկրաւոր բանէրէն կարեմ. ամ խորանէս կառնեմ աստուածային սրբարար զօրութիւնը, որով մեքէրուս Թողութիւն գտնամ, սրբըվիմ, զօրանամ աշխարհիս՝ մարմնոյս՝ սատանայի դէմ, և ամ կէց եաքը ըլլամ Հնմարիա աշակերտ Քրիստոսի:

Ի վեր ընծայեցոյց պիտս յեր:

Խնդրեմ ասէր իմ, ամ պատարագիս զօրութեամբը՝ որ հաւատքս պայծառացընես, բայց աչքը տեսնամ ամ աշխարհիս ունայնութիւնը և ոչնչութիւնը. սիրտս անոնցմէ կըտրեմ հեռացընեմ, բոլորովին Աստուծոյ դարձընեմ: Ցոյս զօրացընես բարեգործութիւն ընել տալով, սէրս շտկես որ միայն աստուածայինն երկնայինն բանէրուն սէր ձգեմ. այսօրուս մնաս նաւորապէս կաղաչեմ մեքէրուս ամ ուիճնէրէ պահես, որ առանց մե-

ղաց անցընեմ. սովորական մեղքերս
ձգեմ, մանաւանդ բարկութիւնը հպարտ
սութիւնը, և նախանձը։

Ե- գ-հաղարձ- ղինչ ԲՈՂՈՔ ՍՐԲԵ-։

Ի՞նչպէս չվգոհանամ սասանկ բարե-
բար ունենք, որ իմ սիրոյս համար ինքը
պիտոր մորթվի զուրպան ըլլըվի. սա
է ան ոչխարն խոյն անարատ կախեալ
խաչին ծառին վըրայ Խաղակաց տէղ.
սա է անմեղ գառն զոհական խորո-
վեալ սա սուրբ սեղանիս վըրայ, որուն
արիւնը իմ վրայ քավելով, խալըսիմ
պիտոր երկնաւոր Հօրը բարկութենէն։
Ամեն համար բոլոր սրտով կըգոհա-
նամ, սրտանց շնորհակալ կըլլամ։

Ս-ՐԲ, Ս-ՐԲ, Ս-ՐԲ, ՏԷՐ ՂՕՐ-
ՌԷԱՆՑ։

Տէր ղորութեանց թագաւոր Ա-
սուած, դու ես սրբութիւն սրբոց.
երկինք և երկիր լեցուն է քու կին փառ-
քովդ. ալ չնինաց մեր քովը խօսք քեզ
փառաւորելու, այլ խօսքերնիս հաս-
նելով հրեշտակներուն խօսքը մեր

բերանը կառնենք, քեզ կըգովենք։ Օրհնեալ և փառաւորեալ ըլլայ անէր զօրութեանդ քու անունդ յիսուս, որ աշխարհս եկար, մարմնացար մեզի համար, ու նորէն պիտոր գաս. մենքալ սերոբէնէրուն քերոբէնէրուն հետ զքեզ կօրհնենք, զքեզ գովենք, և զքեզ կըփառաւորենք, զի գու միայն ես արժանի ամենայն պատուոյ ընդ Հօր և սուրբ Հոգւոյն։

Ա՜ֆ, ֆէրֆ։

Ո՛վ հայր ամենակալ, մեծ է իմ մեղքերուս ծանրութիւնը, մկը չկըրնար քաւել. հիմա քու սիրելի Որդիդ միածին աս խորանին վրայ եկեր կաղաչէ. Ահա ես, ահա ես աս մեղաւորին տեղը կըմորթըվիմ, չորս դիտացէս ալ ինձ կըթափեմ. միայն թէ աս մեղաւորիս մեղքերը սրբէ, ասոր հետ հաշտըվէ. իր տեղը ես կըպատժըվիմ, խաչին վրայ գամելով կըպատարագըվիմ։ Ո՛վ հայր գթութեանդ, երբոր աս քու միածնիդ ձայնը կըլսես, ա սանկ խոնարհութիւնը կըտեսնաս, ինչ

պէս սիրագ պիտոյ դիմանայ : Եսալ անոր ձայնին հետ մէկտեղ ուրիշ բան չեմ կրնար համարձակիլ ըսելու , բայց եթէ մեղայ տէր իմ մեղայ : Քու միածնիդ ձայնն է , քու միածնիդ մարմինն և արիւնն է , որ ինծի համար կրակատարագիւ կը թափի . իմ վրայ կօծվի , իմ արեանս հետ կը խառնըվի . նայէ ողորմէ , արդարութենդ մուրիլը , պիտուքինդ չիչէ , մեղքերս քաւէ :

Աբէկ ։ ամէն :

Նայէ ո՛վ արդարութիւն աստուածային , Յիսուս միածինն է՝ որ քեզի զոհ , աղջակիդ ղուրպան կըլլայ իմ տեղս . ան Յիսուսն է՝ որուն Հայր Աստուած երկնքէն վկայեց , Թէ դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ : Ահա ան սիրելի որդին անմեղ գառն անարատն է , որ իր սուրբ արիւնը կը թափէ հիմա ինծի համար , կրիսդոսի , խաչին վրայ բոլորովին կրակատարագիւ վի , որ ես փրկըվիմ , որ իմ մեղքերս նեբես , ինծի հետ հաշտըվիս :

Ե-ՂԵՑՈՒԹԻՒՆ: ՅԱՂԵՑԱՅԻՆ ՕՐՀՆԵԱԼ ԷՈՒ:

Քուկին անհուն բարեբարուեցիդ որ ցոյց ըերես մեր վրայ տէր իմ, կրկայէր որ մեծ մեծ բաներ զոհ պատարագ մատուցանէինք, զուրպան ընէինք, ընտիր պարգեւներ քեզի ընծայէինք • բայց բան մը չունինք, վասն զի ամէն բանը քուկինդ է, դուն ես ստեղծեր, մեզ ալ դուն ես ըրեր ոչնչէ: Ա՛ խորա նիս վրայ ահա ունինք մեկ հատիկ քու սիրելի Որդիդ, անիկայ քեզի կրպատարագուինք անարիւն պատարագաւ, անիկայ քեզի կընծայինք: Բայց կը տեսնանք որ անալ քուկինդ է, անալ դուն ես ալ անքաւ Աստուածութիւն, անհուն մարդասիրութիւն: Ի՞նչ կրնանք ըսել սա հրաշալի գործքերուդ վրայ, բայց եթէ տէր քու կինդ քեզի կրմատուցանենք, անոր հետ մեկտեղ մեր միտքնալ սիրտնալ որ դուն ստեղծեր ես, քեզի կրնուիրենք • ա՛ռ ինչպէս որ ուզես անանկ ըրէ • ինչ խաչ, ինչ նեղութիւն ուզես խրկէ՝ սիրով կրքաշենք: Միայն

նայելով աս Յիսուսին պատասխանին վրայ, մէջերնիս երեն քաշած չարչարանքները, խաչելութիւնը, մեղի հետ հաշտվիս, մեզ սիրես, մեր մեղքերը քաւելով հայրաբար մեզ նախանձոտես, որ մենքալ քեզ օրհնենք, գովենք, գոհանանք, հոս և անդինալ յաւիտեան:

Որպես զի եղիցի սա ամենեցուն մեզ մերյեղելոցս յանդիմանութիւն, ի սուրբ ութիւն, և ի ներողութիւն մեղաց:

Ահա կելլամ Գողգոթա լեռը, աչքիս առջին կբռեմնամաէրն իմ խաչին վրայ կախված, ձեռվընէրը՝ ոտվընէրը գամ ված, իր սուրբ արիւնը մէկ անհուն աղբերէ մը կբվազէ իմ մեղաւորիս վրայ. սուրբ Աստուածածինը մէկ դին կեցած, իր միածին որդուն հետ սրտին մէջը խորվեբով լալով կբբարեխոսէ ինծի համար. մէկալ դին Մարիամ Մագդաղենացին զղջում ընելով, Յիսուսին սուրբ արեամբը լըսցվելով, Թողութիւն կբգտնէ իր մեղքերուն, օրինակ տալով իս կբսորդոցի.

ինքն Յիսուս հալած մաշվածի նեղ-
ղութիւնը մոռցած, քահանային հետ
մէկտեղ ինծի համար կաղաչէ. Հայր
երկնաւոր, թողութիւն տուր ատ մե-
ղաւորիս մեղքերուն: Հոգիդ սուրբ,
թող մի յիշեր ատ մեղաւորիս ըրած
հպարտութեան, բարկութեան, և
ատելը մահացու մեղքերուն ծանրու-
թիւնը. քաւէ ատ մեղաւորիս բերնով,
ձեռքով, աչքով, ականջով, մտքով
ըրած մեղքերը կըսէ. ես ահա անոր
համար կըքաշեմ. ես սիրելի էակիդ
անոր համար ամէն զգայարանքներս
դամեր եմ խաչին վրայ, որ ատ մեղա-
ւորիս թողութիւն տաս:

Ա՛խ, եսաչ հիմա ատ ձանն խոթա-
նին վրայէն լսեմով, ատ ահաւոր ան-
ատալի տեսիլքս տեսնալով, կըվազեմ
հաւատքովս սուրբ խաչին տակը, ոտ-
վընէրուդ կըպչըմիմ Մարիամ Մագդա-
լենացիին պէս, կաղաղակեմ. իմ վրայ
թափէ ատ սուրբ արիւնդ աէր իմ
Յիսուս. իմ չարաչար մահացու մեղ-
քերս լուա քու սուրբ արիւնովդ: Ես
պզտիկուցմէ բորտավեր եմ գտըչելի

մեղքերով ասս սուրբ պատարագիդ ա-
րիւնովը որ կրթափես ինծի համար ,
խս սրբէ , լուա , մաքրէ . վասն զի կը-
խոստովանիմ կրհաւատամ որ՝ դուն
ես պատարագ քաւութեան և Թողու-
թեան, որ կրմորթըվիս սուրբ սեղանին
վրայ , և կրլլաս ողջակէզ հաշտու-
թեան հօր Աստուծոյ :

Ո՛վ Հայր երկնաւոր, թէ որ իմ ձայ-
նիս չես լսեր բարկանալուդ համար ,
տես քու սիրելի Որդիդ է՝ որ ինծի
համար կրքաշէ , հիմայ քահանային
հետ կաղաթէ , կրբարեխօսէ . ասոր
ձայնին լսէ , ասոր արիւնին վայ նայէ ,
որ սուրբ պատարագովս՝ քահանային
ձեռքովը բռնած քեզի կրզրկնեմ :
Ե՛րկինք, սուրբ հրեշտակներ, դուքյալ
տեսէք աս նոր տեսիլքս , ցրցուցէք
երկնաւոր Հօրը : Ո՛վ ալքիւր ողորմու-
թեան , նայեցիր աս պատարագիս
վրայ , ողորմի սրբէ իմ աղտոտու-
թիւնս , տուր ինծի պատարագիս ան-
հուն արդեանցը համար մէկ զօրաւոր
շնորհք մը յարատևութեան , որ աս-
կէց ետքը բնաւ չմեղանչեմ, միշտ

շնորհաց մէջ հնամ, քեզ ծառայեմ, քեզ սիրեմ և փառաբանեմ հոգ և ի հանդերձեալն յաւիտեանս. Ամէն:

Յիշէ տէր, և ողորմէ:

Դողդոջեալ լեզուս կեցած, սրտով մաքուս խաչին վրայ ելած, քեզ Յիսուսի Թագաւորիդ խաչակից ըլլալուս բարի աւազակին հետ մեկտեղ կաղաղակեմ. Յիշէ զիս տէր, յորժամ դայցես արքայութեամբ քով: Դուն նովին տէր իմ Յիսուս, միշնորդ Աստուծոյ և մարդկան, յիշէ քու խոստումնիդ որ անոր ըրիր. ինծի ալ այսօր քու քաղցր ձայնիդ լսել տուր ըսելով. Այսօր ընդ իս եղիս ի դրախտին: Ինչ մեծ մեկնելը որ ըրիր՝ Թողութիւն կուտաս այսօր, դրախտն շնորհաց կը մոցընես, մեռնելուդ աւետեհնալ դրախտի երկնային կը մոցընես:

Կաղաչեմ ալ որ՝ յիշես, ողորմիս աս սուրբ պատարագովս անոնց համ մեհնուն, որոնց համար կը մատուցանամ աս պատարագս, և որոնց որ պարտական

եմ աղօթել ու, իմ ծնօղքս, ազգական-
նէրս, բարեկամնէրս, և անոնք որ՝
ինձի մեկ բարեբարութիւն մը ըրեր-
են, յիշելով սա սուրբ պատարագիս
մէջ բարիք հատուցանես, ողորմու-
թիւն պարգեւես: Նաև անոնց որ՝ ին-
ձի թշնամութիւն ըրերեն, կալաչեմ
նէրես, ողորմիս, չնորհք պարգեւես:

Յիշէ տէր իմ, նաև ննջեցեալ հո-
գիքնէրը իմ առջիննէրուս, ծնօղքնէ-
րուս, բարեկամնէրուս, և ան հոգի-
նէրը՝ որոնց համար պարտական եմ
աղօթելու. սա անմահ պատարագիս
արդեամբք քաւէ այսօր իրենց մեղաց
պատիժը, տուր մխիթարութիւն, ա-
զատէ և ցրցուր քովէն անճառելի
տեսիլքդ, որ քեզ փառաւորեն յաւի-
տեան:

Եւ եղիցի ողորմութիւն մեծի Աս-
տուծոյ:

Ո՛վ տէր ղօրութեանց, Աստուած
ամենակարող, որ զամմանալի հրաշա-
գործութեամբ երկիրքէն վար ինջած
սա սուրբ պատարագիս մէջ, խորանին

վըայ նատեր էս մարմնովդ, որ իմ ազա-
չանքներուս մեռիկ դնես, իմ մեղքե-
րուս քաւութիւն պարգեւես. Թէպէտ
հացին նեղըլեր էս, բայց իմ աչքս հա-
ստով գիտէ, կըխոստովանի, կըհա-
ստայ որ դուն էս հացին նեղըլեր-
տած, անանկ ինչպէս Թագաւոր մը
կընտի փերեզէն էտին. աչքս փեր-
տէն կըտեսնայ, բայց գիտնալով որ
հոն է Թագաւորը, զինքը տեսածի
պէս կըլլայ: Հիմակ աս խորանիս
վըայ դուռ ամենակարօղ տէրդ էս՝ Թա-
գաւոր Թագաւորաց Աստուած՝ որ նըս-
տեր էս. իսկ հացը փերեզ մընէ աչքիս
առջին քաշած. դուռ Ճշմարիտ քա-
հանայապետ էս՝ որ մորթըվելովդ
երկնաւոր Հայրը կըհաշտեցընես ինծի
հետ. ինչ հրաշք, ինչ գթութիւն և
սէր է ասարիչ և փրկիչ իմ:

Հիմա ասչափ սէր, ասչափ աչխա-
տանք ցըցընելէն ետև իմ վըայ, միթէ
կըկորսնցընես իս տէր իմ, միթէ կը-
մերժես իմ աղաչանքս. այլ քաւիչ բա-
րեարար, մարդասէր, նայէ քու սա-
տարագվելուդ վըայ, ողորմէ ինծի

քահանային աղօթքովը, դարձ տուր ինձի, որ քու արիւնդ պարապ չերթայ: Ինչպէս որ մէկ դառնալովնայելով Պետրոս առաքեալին վրայ, իրեն հոգին մեղքէն խալըսցուցիր, մեքին փորձութիւնը չփոխուելիւնը փարատեցիր, սրտին ղղջումու դարձ տուիր, որ միշտ կուլար. հիմա ինձիալ գթած աչքովդ նայելով ողորմութիւնդ անպակաս ըրէ, մեղքի փորձութենէ ազատէ, սրտիս ղղջումուր, որ Պետրոս առաքեալին պէս միշտ լամ, մեղքերուս թողութիւն գտնամ:

Ե- ԳՒՐ ՄԵՂ ՀԱՄԲՅԱՅՆ ԲԱՐԲԱՌՈՎ. ՀԱՅՐ ՄԸ:

Հայր երկնաւոր, բոլոր սուրբ եկեղեցիդ հետ եսալ կաղաչեմ, ինչ որ պէսք է հոգւոյս և մարմնոյս՝ ինձի շնորհես. քու կին սիրելիդ միածինն Յիսուս որ խորանին վրայ է, ինձի սուրբ վեցուց ասանկ հաւատարմութեամբ քեզի Հայր ըսել յաղաչէ. ինքնալ ինձի համար մկսուէր կաղաչէ. անոր բարեխօսութեանը համար տուր ան ամէն

մարմնաւոր բարիքը՝ որ ինձի հարկաւոր կըճանչնաս. տուր ինձի ան ամէն ինորհքը՝ որ պէտք է հոգւոյս փրկութիւնը գտնալու, որով աս աշխարհիս մէջ փրկըվելով ամէն փորձութենէ, աքսայութեան երկնից արժանի ըլլամ:

Ի ԱՐԵՒԵԱՆ ԱՐԵՒՈՑ:

Իմ աչքս քեզի կընայի ով արեւութիւն, ով մարմին և արիւն Յիսուսի. դուն ալ ամենասուրբ Երրորդութեան առջին խօսէ միշնորդ ինձի համար: Թէ որ արիւնն Աբէլի կըխօսի, քանի աւելի պիտոր խօսի բարեխօսէ աս անգին արիւնը: Թէ որ մէկ մեղաւոր մարմին մը իր արիւնը թափէ՝ ձայնը լսելի կըլլայ, հապա որչափ աւելի լսելի պիտոր ըլլայ Հօրն երկնաւորի՝ աս սուրբ արեան զօրութիւնը, որ է արիւն գառնին երկնաւորի, և արիւն Որդւոյն Աստուծոյ, որուն Հայրն երկնաւոր վկայութիւն տըւաւ: Ահա աս սուրբ մարմին և արիւնն որ կըբարձրացընէ քահանան՝ է գին խոյ փրկու-

թեան, որ տեւնաս երկնքէն Հայր երկ-
նաւոր, և դադրեցընես ինձմէն քու-
կին բարկութիւնդ։ Իրաւի ծանր են,
մեծ են իմ մեղքերս, բայց աւելի մեծ
և անհուն են արդիւնք արեանն Յիսու-
սի, որ իմ վրայ Թափելով կընդրկե
քաւութիւն և Թողութիւն մեղաց։
ասոր վրայ նայելով հաշտվէ, իմ մեղ-
քերուս Թողութիւն պարգևէ։

Օրհնութիւն և փառք Հօր, և Որդւոյ և
Հոգւոյն սրբոյ։

Ի՞նչ չնորհակալութիւն, ինչ գո-
հութիւն կրնամ տալ այսչափ անհուն
բարերարութեան Աստուծոյ, եթէ
ոչ միայն օրհնելով կաղաղակեմ. Օրհ-
նեալըլլայ Հայրն երկնաւոր, որ իր միա-
ծին Որդին իմ սիրոյս համար սրւաւ։
Օրհնեալ ըլլայ Որդին Աստուած, որ
իր սուրբ արիւնը ինձի համար Թափե-
լով ինքիր զինքը պատարագ մատոյց։
Օրհնեալ ըլլայ Հոգին սուրբ, որ աս
սուրբ մարմինը և արիւնը երկնային
մանանայի պէս հրաշագործելով, ին-
ձի անմահական կերակուր կըպատ-

բառոյ: Ա՛ օրհնեցեք արժանի ըլլ
ով ամենասուրբ Երրորդութիւն, երկ
նայինԵրուսաղէմի մէջ սրբոց հետ մէկ
տեղ երգելու յաւիտեան ալէլուիա
ըսելով. Ամէն:

Ի ՈՒՐԲ Ի ՈՒՐԲ:

Աչխա աղքայութիւնը աչքովս կը
տեսնամ. Յիսուս գառն Աստուծոյ
Որդին միածին ընդաչմէ հօրն Աստու
ծոյ նստած կերևնայ ինծի. հրեշտակ
նէր չորս դին բոլորված, սերոբէք
քերոբէք փառաջ դոցված, ձայն կել
լայ քաւութիւն և թողութեան մե
ղաց. Թողութիւն եղաւ կրսէ քու
մեղքերուդ. աս սուրբ պատարագովը
քաւվեցաւ քուկին մեղքերդ, ընջը
վեցաւ քուկին անօրէնութիւնդ: Ես
ալ աս աւետաց ձայնը առնելով խո
րանին վրայէն՝ սակեց հաքը յոյսս կը
սկսի, հաստատ գիտնալով որ աղքայ
ութիւնը իմն է, մեռնելուս առեն
չեմ մնար անանկ, այլ Քրիստոսի
նման յարութիւն կառնեմ, կեանք
յաւիտենական կըգտնամ, կեանք յա

վոհեռնական փառաց . վասն զի խո-
րանին վայելն հրեշտակներըը կըքա-
րոզեն որ ինքն Քրիստոս ինձի հա-
մար արդիւնաւորեցաւ վաստակեցաւ
աս ընորհքներըը : Ընանկ է նե ես ալ
սաղմոս ըսեմ օրհնելով զՅիսուս , որ
իս ասանկ խալացուց յաւիտենական
մահուանէն . սաղմոս ըսեմ օրհնելով
զՀայրն Աստուած , որ ասանկ իմ հո-
գւոյս փրկութիւնը հոգաց . սաղմոս
ըսեմ օրհնելով զՀոգին սուրբ Աս-
տուած , որ աս ընորհքներս՝ աս հրաշք-
ներս՝ ինձի պէս մեղաւորիս վայե
ըրաւ :

Եւ սուրբ արիան էս ի էստուածութիւն և ի
նաղուածութեան մեղաց :

Ո՛վ Ջեմարիա քահանայապետ
Յիսուս Քրիստոս , ով միջնորդ Աս-
տուծոյ և մարդկան , որ սուրբ ա-
րիւնդ թափելով զքեզ պատարագե-
ցեր սուրբ սեղանիս վրայ , իս երկնա-
ւոր Հօրդ հետ հաշտեցընելու համար
ինքիր զինքդ զոհ մատուցիր . ես պի-
տոր քաշէի , դու իմ տեղս քաշեցիր :

Կաղաչեմ քահանային հետ, առ ան-
դին արեանդ համարը ըլլայ որ իմ վրը
կուրթեանս գինն է, մի թողուր իս
ասկէց ետքը իմ մեղքերուս մէջը մնալ.
այլ ինչպէս կրհաւատամ որ անձա-
ռելի սիրոյդ համար առ պատարա-
գովս քաւութիւն թողութիւն տուիր
ինծի, հիմա նոյն պատարագին զօրու-
թեամբը տաս ինծի հոգւոյն սրբոյ
շնորհքը յարատեւելոյ ի բարին, որ
սուրբ արիւնդ իմ վրայ կաթիլցնե-
լով իս սրբեցիր:

Գոհանալ ըստ պէտի:

Գոհութիւն և փառս մատուցա-
նեմ տէր իմ, որ այսօր արժանի ըրիր
առ սուրբ պատարագս տեսնելու,
պատարագին անհուն գանձը և շնորհ-
քը առնելու. հիմա առ պատարագիս
հետևանալ ինձ պատարագ մատուցանեմ
տէր իմ, բոլորովին ինձ քու կամացդ
յանձնելով: Ուստի կրզջամ կրցաւիմ
բոլոր սրտովս իմ անճնասիրութեան
ու կամապաշտութեան մեղքերուս
վրայ, որ ինչպէս հիմա իմ կամքս պաշ

սեր եմ. քեզ բոլորովին Թողուցեր եմ.
ինչ խաչ որ ինձի տըւեր ես, ինչ պըղ-
տիկ հիւանդութիւն ձա-
խորդութիւն իրկեր ես, սիրով չեմ
քաշած, մանաւանդ Թէ ՀՀդոհացեր
եմ քու կամքիդ դէմ. չեմ յիշած
քու պատարագվիդ, որ անով ամէն
օր իմ աչքիս առջեն կրցրցընես և կըմ-
չեցընես քու անսահմանելի չարչարանք-
ներդ. մոռցեր եմ ամենևին քու սուրբ
արիւնիդ Թափվիլը որ անարիւն պա-
տարագովդ իմ աչքիս առջեն կրբերես.
Թէև մեղք մը ըրած չըլլայի, միևնակ աս
պատարագվիդ տեսնելով կամակար
սրտով պէտք էր որ խաչ քաշէի փնտը-
ռէի: Հիմա աս քու սուրբ պատա-
րագդ իմ սիրտս բոլորովին փոխեց:
Քու մեռնիլդ աս անմահ պատարագիդ
մէջ ինձի համար՝ իմ սիրտս կակըղցուց.
եսաւ ատկէց եաքը չեմ ուզեր հանգըս-
տութիւն, հեշտութիւն, զբօսանք.
հապա միևնակ խաչվիլ կուզեմ, չարչա-
րանք քաշել կըբաղձամ իմ մեղքերուս
համար, ինչպես որ դու սէր իմ ինձի
համար քաշեցիր. քու սիրոյդ սեր հա-

տուցանել կըսփափագիմ, որ քեզ նման խաչակից ըլլալով, անդին ալ քու վա-
ռացդ մասնակից ըլլամ. բայց երեսով
զքեզ տեսնալով, անանկով յափտեան
զքեզ սիրելու և գոհանալու արժանի
ըլլամ. Ամէն:

Եղիցի անուն փառաւ օրհնեալ: Օրհնեալ
եղերա՛ծ ի ընդհաց առաբ Հոգւոյն:

Օրհնութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն
սրբոյ աս պատարագիս զօրութեամբը
ըլլայ իմ վրայ, օրհնվի իմ տունս
տեղս: Աստուածային օրհնէնքը ըլլայ
իմ առաւօտուընս վաստկիս մէջը՝ որ
այսօր կերթամ ընելու. բարի յաջո-
ղութիւն պարգևէ որչափ որ պէտք է
իմ ապրուստիս համար: Ընդհանք Հո-
գւոյն սրբոյ հետս ըլլայ, պահէ իս ան
մեղքերէն՝ որ այսօրվան իմ գործ-
քերուս մէջը կրնան հանդիպիլ. պա-
հէ իս բարկութենէ, գեշ խօսքերէ,
անիրաւութենէ, զրկողութենէ. չի
մեղանչեմ ո՛չ Աստուծոյ դէմ, և ո՛չ
եղբօրս դէմ. այլ մնանամդ ի փառս
Աստուծոյ ընեմ իմ ամէն գործքս և

աչխատանքս՝ որ մարմնոյս շահը ինձ
վասն հոգւոյս շահուն : Արդարև
թէ ամբ վաստակեմ, և ան վաստակա-
ծիս վրայ Աստուածային առատու-
թիւնդ և օրհնութիւնդ ըլլայ որ՝ ան
քիչովը առանց մեղաց իմ տունս տեղ
կարենամ պահել. իմ ամէն գործքս
վրս ինչվան մեռնելուս օրը զԱստուած
փառաւորող ըլլամ, որ հաքնալ ալքայ
ուրեանդ ժառանգ ըլլամ. Ամէն :



Wolff Benaumps. Le Pautre

SAINTE FAMILLE

DE HEILIGE FAMILIE

ԱՂՕԹՔ

ՏԻՐՈՒՆԱԿԱՆ ՏՕՆԻՑ

ՆԱ ԵՒ

ՄԵԾԻ ՊԱՀՈՑ

Եբեալբաք կարգի քահանային։

Ի ՏՕՆԻ

ԾՆՆԴԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Ո՛վ անհուն խորք գթութեան տեառնդ Աստուծոյ. ինչ գթութիւն է, որ այսօր կրցրընեաս իմ վրայ. դու յաւիտենական բանդ Աստուած, ա՛ րարիչդ երկնի և երկրի՝ Թողուցիր երկինքը, իջար երկրիս վրայ իս փըր՛ կելու համար։ Ո՛վ խորք մարդասի՛ րութեան. բանդ Աստուած ամենա՛ կարող գոլով մարդացար, տղայ եղար, իմ եւսէս եկար, իս մեղրեալ ոչխարդ գտնելու համար։ Ո՛վ անբաւ խնա՛ մութիւն, որ առջի օրէդ ծնանիլդ առեննալ ինձի քարոզել սկսար գործ՛

քով, իս ապաշխարութիւն կանչել ակսար քու օրինակովդ, ցրտութիւն, ապքաստութիւն, և օտարութիւն քաշելով: Ամէն հարստութիւն դու սահղծեր էիր, մէկ տուն մը վիգլանը վեցաս քեզ արարչիդ ծնանելու համար: Ամէն հանգստութիւն դուն տըւեր էիր մարդկիներուն, քեզի մէկ տեղ մը չտալին մարդիկ:

Ա՛ խնչպէս է տէր իմ, որ այսօր կը ցցընես իմ վրայ. ես քեզ Թողուցեր էի, չէի ճանչնար, չէի պաշտեր. դունալ ինծմէն քաշվելով անասնոց մէջ գացիր, հովուաց հետ նստար. և անանկ խեղճ ոտայական կերպարան քով իմ համակորութիւնս, իմ բարբարոսութիւնս ուզեցիր անուշցընել, ճաշիկայ բերել: Ես իրաւի իմ ապաւաժ սիրոսալ տեսնալով քու կին խեղճ կերպարանքդ, փոխվեցաս, ինչպէս, քովդ գալու համարձակեցաս: Ձիշտ ժեցաս իմ չարութիւնս ոչ ջըր հեղեղին պահիժովը, ոչ երկնաստեղաց կրակովը, ոչ Սինայ լեռան վրայ եղած ահեղ տեսիլքովդ. այլ երբոր

այսօր Բէթլէհէմին մերին վայ կընայ-
իմ, երբոր քաշած խեղճութիւնդ կը-
տեսնամ, սիրտս չդիմանար, ըրած
չարութեանս ու ապերախտութեանս
վրայ ցաւ կուգայ, սիրտս կրկըղձկի:
Մեղայ կըսեմ տէր իմ մեղայ, եսաւ
հովուաց հետ Բէթլէհէմ կուգամ,
քու աղքատութեանդ՝ քու ձգնու-
թեանդ կըհետեւիմ. ինծիալ ցըցու
քուկին տեսիլքդ, ինծիալ լսեցնու քու-
կին ձայնդ, որ հովուաց պէս հրեշտա-
կաց հետ քեզ օրհնեմ երգելով.
փառք՝ի բարձունս Աստուծոյ, և յեր-
կիր խաղաղութիւն, ՚ի մարդիկ հա-
ճութիւն:

Փառք խոնարհութեանդ քո տէր,
որ աս աղքատութիւնս, աս խոնար-
հութիւնս չանձն առիր վասն սիրոյ
մեր: Փառք մարդասիրութեան քո
տէր. այնչափ իս սիրեցիր՝ որ իս փըր-
կելու համար մուտքար քու երկնային
փառքդ, թողուցիր հայրական ծոցը՝
եկար հողին վայր իս փնտռելու:
Փառք խոնարհութեան քո տէր, որ իմ
չարութեանս վայ՚չտատակութեամբ՝

այլ քաղցրութեամբ յաղթել ուզե-
ցիր : Այսօր ահա յաղթվեցայ քու
գթութենդ առիթ Յիսուս վասն իմ
մանկացեալ սիրտս ողորեցար . մեղայ
գոչելով ոտքդ կուգամ՝ վասն իմ
մարդացեալ : Տուր ինձ լալան շնորհքը
աղքատութեան , որ աչխարհային բա-
ները սրտէս դուրս հանեմ : Տուր ինձ
բարեխօսութեամբ սրբոց Աստուածա-
ծնի մոր քոյ՝ քու խոնարհութենդ,
քու խնայտութենդ , որ քու այսօր-
վան արեւածագիդ մտածելովմէն
բան ձգեմ , քեզի հետևիմ , հաւատքս՝
յոյս՝ սէրս՝ ամրցնելով զղջմամբ
անցընեմ օրերս որ ինչպէս՝ տեսայ
քովիդ մարդեղութիւնդ , անանկալ
քովիդ Աստուածութիւնդ դէմ յան-
դիման տեսնալու արժանի ըլլամ.
Ամէն :

Ի ՏՕՆԻ

ԱՆՈՒԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՈՒՍԻ

Երկրպագեմ հրաշափառ անուանդ
տեառն մերոյ Յիսուս . անուն՝ որ զօ-
րութիւն կուտայ մեզ հաւատացե-

լոց, կրկրկէ՛ի Թշնամեաց, Հալածիչ
է դիւաց, կատարիչ ամենայն խնդրուա-
ծոց: Զի յանուն Յիսուսի Քրիս-
տոսի կրկնեսցի ամենայն ծունը երկ-
նաւորաց և երկրաւորաց և սանդարա-
մետականաց կրսկ Պօղոս առաքեալ:
Եւ դուն՝ալ ըսիր տէր իմ, Թէ Զոր
ինչ խնդրեցիք յանուն Յիսուսի, եղի-
ցի: Ա՛ս սուրբ և ահաւոր անունս միշտ
բերանս առնելով, նոյն անուանը զօ-
րութեամբը կրկնդրեմ՛ի Հօրէն յա-
ւիտենական տալ ինծի ան ամէնն շը-
նորհքը՝ ինչ որ պէտք է հոգիս փրկե-
լու: Երբոր յիշեմ աս սուրբ անունս Յի-
սուս, փախչին ինծմէն ամէն փորձու-
թիւնք, փախչի ամէն ծուլութիւն.
հոգիս արիանայ, միտքս լուսաւորվի.
ապաշխարհեմ իմ մեղքերուս վայ,
թողութիւն քաւութիւն գտնամ:

Ո՛վ Յիսուս, անուն ցանկալի, ա-
նուն հրաշալի, յոյսդ մեղաւորաց,
բարեխօս վան մեր. ցոյց զգօրութիւն
անուանդ քո տէր զօրութեանց. հաշ-
տեցո՛ իս այսօր երկնաւոր Հօրդ հետ.
անցո՛ զբարկութիւն արդարութեան

Աստուծոյ վասն անուան քոյ սրբոյ. քու անունովդ պաշտպանէ իս ահէդ դառաստանէդ Աստուծոյ: Չեմ ար ժանի ընդհիդ, բայց անուն քո կոչ ցեալ է ի վերայ իմ. վասն փառաց անուանդ Յիսուսի ազատէ իս ամէնէն հոգևոր ու մարմնաւոր փորձանքնէ րէ այժմ և ի ժամու մահուան իմոյ, որ եսալ օրհնեմ զանունդ Յիսուս ընդ սուրբս քո յաւիտեան. Ամէն:

Ի ՏՕՆԻ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Այսօր յայտնեցիր զքեզ տէր իմ այն Թագաւորաց, որ քեզ հեռու տեղէրէ եկան փնտռելու՝ երկրպագելու համար. Ծածկեցիր զքեզ մօտիկ եղող Հերովդեսէն՝ որ քեզ կրկին սուէր մեռցընելու համար: Երանի՛ ան արդար հոգիներուն՝ որոնց դուն քեզ կըցոլցընես. վայ՛ ան մեղաւոր հոգիներուն՝ որոնցմէ դուն քեզ կըծածկես, կըհեռըցընես: Տո՛ւր ինծի այսօր ան ընդհակը տէր իմ, ինչպէս որ ան Թագաւորները՝ երկայնմտութեամբ սպասելով

աստղին՝ վերջապէս տեսան աստղը, անոր առաջնորդութ ըրին ան երկան ճամբորդութիւնը, եկան գտան զԱ- տուած մարդացեալ. այն լոյս հաւա- տոյ՝ այն երկայնմտուն աղօթքի՝ եսալ ունենամ: քեզ սպասեմ, սրտով մխա- քով քեզի գամ, որ քեզ աս աշխարհիս մէջ չնորհքով տեսնամ, անդինալ Ա- տուածուդիդ պայծառ տեսնալու ար- ժանի ըլլամ: Քու աստղդ չնորհայ իս լուսաւորէ, առաջնորդ ըլլայ իմ կե- նացս երկարատև ճամբորդութեանըս մէջ, ամէն փորձութիւններէ պահէ, երկնային Երուսաղէմը հասցընէ:

Կսկիծեմ տեր իմ, երբոր ան իրեք մոգերը մտուրը մտան, ինչպէս աղբայ- ութիւն դարձած գտան ան մտուրը, հոն տեսնալով զքեզ Յիսուս մանկա- կտալ, զտուրը Աստուածածին, և զտուրը Յովսէփ, ամէն հրեշտակներով: Ես ինչպէս որ ան իրեք մոգերը քեզ տեսած- նին պէս՝ երկրպագութիւն տըւին, իրենց գանձը բացին, քեզի ընծայեցին ոսկի, կընդրուկ, զմուռս. եսալ անոնց հե- տևելով քեզ միայն երկրպագեմ, քե-

զի ընծայեմ ոսկի՝ որ է իմ հաւատոյս առաքինութեան գործքերով զարդարեալ, քեզ ընծայեմ խնդրուկ՝ որ է անուշահոտութիւն աղօթից, և զմուռս մեռելութեան ախտից: Եաքնալ պա-տասան հրեշտակիս աւազնորդու-թեամբ անունդ ակն ազատիմ սատա-նայի ոտգայթնէրէն՝ որ նման հերով դէն կուգէ իմ ձեռքդուս՝ իմ մեղքե-րով՝ սպանանել զՅիսուս, իս չնորհքէ զրկել: Ո՛վ աննման հնեալ սուրբ կոյս Աստուածածին, ինչպէս որ այսօր քուկին ներկայութեամբդ արժանա-ցան ան իրենք մոգքը Յիսուսի տես-լեանը, քու բարեխօսութեամբդ իս-ալ արժանացնէ Յիսուսը տեսնելու արքայութեան մէջ՝ ի յաւիտեան. Ամէն:

Ի ՏՕՆԻ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

Ո՛վ անբաւ խնայարհութիւն Աս-տուածային, որ ինծի համար յանձն առիր այսօր մեղաւորի կերպարան-քով գալ, քու ծառայէդ մկրտու-թիւն ուզել ջրով. մարմինն որ առիր

ըլլալով մարմին ադամային՝ մեղաւորի պէս երեցաւ, և քու ծառայդ սուրբ Յոհաննէս Մկրտչին լուացվիլ ու մկրտուիլ ուզեցիր. ան ծառան որ՝ դուն առեղծեր էիր, անկէց մաքրվիլ ուզեցիր, անալ զարհուրեցաւ քու խոնարհութենէդ, հրեշտակներնալ երկնքէն նայելով դողացին: Բայց դու իմ սիրոյս համար չանձն առիր մեղաւոր երևնալ լուացվիլ ինծի՝ալ մեծ պարգև մեծ խորհուրդ տալիր որ՝ եսալ լուացվելով սուրբ մկրտութեամբ սկզբնական մեղքէն Ադամայ լուացվիմ, սրբվիմ, հոգւոյն սրբոյ շնորհաց ընդունակ ըլլամ, սատանայի ծառայ ըլլալով հրեշտակաց մէջը գտնըվիմ:

Սակայն ես ապերախտս փոխանակ աղէկ պահելու աս մաքրութիւնը և փոխանակ շնորհակալ ըլլալու, մեղանչելով կորսընցուցի աւազանին շնորհքը, հոգիս աղտոտեցի, նորէն սատանայի ծառայ եղայ մեղքերով: Այսօր մկրտութեան ծոցը ըլլալով ով մարդասէր տէր, ասանկ մեծ օրը դիտեմ որ՝ նոր շնորհքներ կրբաժնես,

ամէնուն մեղքը կրլուանայ , եկէք
առջի կ'երթանք, Թողութիւն կը խնդրենք
ամէն մեղքերուս համար : Կալաչիմ
Նորէն լուանայ , և ան միւռոնթեան
ընորհքը որ կորսընցուցի , Նորէն ինծի
դարձնէ :

Գիտեմ ասիկ , որ իս լուանալու հա-
մար ինծմէն չուր պատասուց կուզես,
ահա աս աղթիքս կը մատուցանեմ: չու-
նիմ պղտնձէ , չունիմ կատարեալ ցաւ
սրտի , սիրտս քար է կարէր . իմ մեղ-
քերուս շատութիւնը ապառաժի պէս
կարծրցեր է , բայց իմ ապաշխարու-
թեան ձանձ պղտնձէ Թափողի պէս
ընդունէ . ու քու միւռոնթէ չուրիդ
հետ խառնելով Նորէն իս ընորհքով
միւռէ :

Այլ աղօթք :

Մի նայիր իմ սրտիս կարծրու-
թեանը ասիկ իմ Յիսուս , այլ նայէ իմ
կամքիս՝ իմ բաղձանացս, որ ասկէց ետ-
քը երբայցնէ կուզիմ եւ կենալ մեղ-
քերէս, և իմ չար սովորութիւններէս:
Ինչման ասորիին պէս բորոտվելեմ

մեղքերովս , լուա կաղաչեմ իմ ամէն մեղքերս նորոգ պորտանանու Ջրով սպաշ խարուեթեան . կըզղջամ կըցաւիմ չէ թէ անոր պէս եօթն անգամ, հապա ամէն օր . դու Ճշմարիտ Եղիսէ՝ լուա բժշկէ , ով սէր նեղողութեան , ով Աստուած գթութեան : Սրբէ իմ ձեռվընէրս՝ որ զանազան մեղքերով ալտոտեցի . սրբէ իմ աչվընէրս՝ որ մեղքով պղծեցի . սրբէ իմ բերանս՝ որ գէշ խօսքերով, բարկութիւնով, բամբասանքով վերաւորեցի . սրբէ իմ անկաճնէրս՝ որ գէշ խօսքերու անկաճ դրի . լուա իմ ոտվընէրս՝ որ չարի վազեցի, ապկի չդացի . սրբէ իմ սիրտս իմ միտքս՝ որ ապկի բան չմտածեցի , չար բանէրու խէլք տըվի : Ասանկ սրբըբվելըվս այսօր եսալ ապկի դառնամ, ինացած կեանքս քեզի ծառայեմ, քու սուրբ պատուիրանքներդ պահեմ, և մահուանս տաեն Հոր Աստուծոյ սիրելի որդի ըլլալով, երկեն երանական ձայնը լսեմ ըսելու պատրաստ ըլլամ . Ամէն :

ՏԵԱՌՆ ԸՆԴ ԱՌԱՔԻՆ

Ով մեքրուհեան սիրող Յիսուս, դու որ անարատ մորդ հեալը եկար աստՀարը, և Հօր Աստուծոյ ընծայվեցար վեղ մեքրեցկը և Աստուծոյ ընծայեցկը, զիս որ մեքրուհեան կայսոտ եմ, սրբէ, և ինչ մեղքերոր ըրեր եմ պղտիկուց ինչվան հիմա, և մեղքերով հոգիս աղստաերեմ, տուր քաւութիւն և թողութիւն: Եւ ինչպէս որ Սիմէոն ծերունին չատ աղօթքով սպասեցէն եւս արժանի եղաւ քեզ տեսնելու, իր գիրկը առնելու, անոր պէս իսալ արժանի ըրէ աղօթքով աղաչանքով սպասել պատրաստվիլ. քեզ Հաւատքով պայծառ տեսնալ և սուրբ և արժանաւոր Հաղորդութեամբ իմ սրտիս մէջը առնել, շնորհքով զարդարվիլ. քեզ տեսնալուս սուրբ պատարագիս խորհուրդին մէջ վմայվիլ:

Երբոր ասանկ արժանապէս առ-
նէմ սուրբ հաղորդութեան խորհուր-
դով քեզ Յիսուս, հաւատքիս աչքը
կրբացվի, զքեզ փրկիչդ պայծառ կը-
տեսնայ, սէրս կրվառի, յոյսս կրհաս-
տատվի: Ան ատենը իմ հոգիսաղ Սի-
մէոնի պէս քեզ կրփաթաթի՝ քեզի կա-
ղաղակէ ըսելով Աբդ՝ արձակէս զծա-
ռայս քո: Տեսայ իմ փրկիչս վասն
իմ մանկացեալ, տեսայ իմ տէրս հա-
ցեն տեսակաւ խորհրդացեալ, ասկէց
առջը դանեցայ աշխըրքէս, չեմ ուզեր
աշխարհային բաները. ալ չեմ ուզեր
աշխարհիս վրայ կենալու. ասկէց ետ-
քը արձկէ իս մեղքերէն. արժանի
ըրէ բարի մահուամբ քեզի դալու,
քեզի հետ յաւիտեան ապրելու ովտէր
իմ, արարիչ իմ, և փրկիչ իմ:

Դու սուրբկոյս Աստուածածածնէն, այս-
օր կատարեալ տուր իմ ինդիրքս, և ինչ-
պէս որ Սիմէոն ծերունիին գիրկը
դու արիր այսօր զմանկացեալն Յի-
սուս, քուկին բարեխօսութեամբդ
ըրէ որ՝ ետալ արժանապէս առնեմ
զՅիսուս փրկիչն իմ սուրբ հաղորդու-

Թէ անխորհրդով իմ սրտիս մէջը անով
զմայլիմ, ուրիշ բանի չկայնակամ իմ
կեանքիս մէջը։ Դուն որ անկարօտ կեր
սրբութեան՝ բոլորովին սուրբ ըլլալով,
ուրիշ հասարակ մարդ պէս աղօթքներ
ու օրհնութիւններ կարդալ տրվիր։
Ես եմ մեղաւոր կարօտ մաքրութեան
և սրբութեան, իմ վրայ տպաւորել
տուր աղօթքներուն զօրութիւնը՝ որ
իմ առջի ըրած մեղքերս ջնջվին։
Ակնկէց եղբը սրբութեամբ անցընեմ
մնացած իմ կեանքս, եղբը արժանի
ըլլամ արքայութեան մէջ պայծառ
երեսօք տեսնելու զՅիսուս ընդ Հօր և
սուրբ Հոգւոյն։ Ամէն։

ԿՐԹՈՒԹԻՒՆ ԱՂՕԹԻՑ

Ի ՄԵԾ ՊԱՀՍ

ՍԵՂԱՒՈՐ հոգին երբոր առ Աստուած կրդաւնայ, առաջ Ճանչնալ կըսկըսի՝ կըմնասած է իր մեղքին գարշելութիւնը, ինչ փորձանք՝ ինչ չար բերաւ իրեն սատանային փորձութիւնը, և իր հետևիկը սատանային կամքին. և ինչպէս զըկըվեցաւ Աստուծոյ շնորհքէն իրեն մեղանչելովը։ Երկրորդ՝ կըցաւի կըզղջայ սրտանց իր ըրած մեղքերուն վրայ։ Երրորդ՝ կերթայ քահանային, կըխոստովանի իր մեղքերը։ Չորրորդ՝ սրտանց աղօթք կընէ Աստուծոյ շնորհք խնդրելու, որ խոստովանած մեղքերուն թողութիւն տայ։ Հինգերորդ՝ կըպատրաստըվի իր սրտին մէջը առնելու Յիսուս սուրբ Հաղորդութեամբ։

Ա կարգիս վրայ առջի հայրապետները կարգաւորեցին ըսելու մեծ պատքին կըրակինէրուն աւետարանները և

չարականները : Առջի և երկրորդ կի-
րակին կամ շաբաթը՝ Ադամայ ու Ե-
ւայի փորձութիւնները յիշելով որ և
պատճառ մեր ամենին մեղացը , յոր-
դորվինք անոնց պէս՝ ըրած մեղքեր-
նիս ապաշխարել : Ադամայ մեղքը մեկ
է , բայց ուրիշ մեղքերալ կրնանան ,
որ մենքալ միտ ան մեղքերուն մէջ
կընանանք , հպարտութիւն , որկրամո-
լութիւն , ծուլութիւն կամ անհո-
գութիւն Աստուծոյ պատուիրանքը
պահելու , և անճնահաճութիւն՝ որ
է իր կամքը և ուրիշին կամքը՝ Աստու-
ծոյ կամքէն վեր դնել : Յիշենք և
Քրիստոսի փորձութիւնը , անով զո-
րանանք փորձութիւններուն դէմ դնել
սատանան քամահրել , և մեղքերէ
զգուշանալ :

Երրորդ շաբաթը՝ Նոահաւակ որդի-
ին օրինակը կարդալով յորդորվինք
անոր պէս մեղայ դոչել , ղղջալ :

Չորրորդ շաբաթը՝ Ցնոահեան օրի-
նակովը համար տալ մեղքերնուս վրայ՝
խոստովանելով քահանային :

Հինգերորդ շաբաթը՝ Քրիստոսի
օրինակովը սրտանց աղօթքի հետ ըլ-
լալ , մեղքերնուս համար թողութիւն
առնելու , և Աստուծոյ հետ հաշտը-
վելու :

Վ. Եգեբորդ չաբաթը՝ Քրիստոսի գալուստը յիշելով, պատրաստվիլ իրեն գալստեան սուրբ խորհրդով հաղորդութեան, պատրաստվիլ և բարի մահուան:

Հոսալ ահա աս կարգով գրված էն բոլոր մեծ պաքին ապօթքներըը ամէն օրվան համար, որ է հոգևոր կրթութիւն ցիսուս առնելու սուրբ հաղորդութեամբ:

ԱՒԱՆՁԻՆ ՇԱԲԱԹ

ՄԵԾ ԳԱՀՈՑ

Կրե՜ւրեան պատարա՜գեան ընդդէմ խոր-
հո՜ւրեան, յիշատակա՜ւ խորհո՜ւրեան Ա-
տամայ և Քրիստոսի:

ՇԱՐԱԿԱՆ

Որ ըստ պահոց քառասնօրեայ փըր-
կոլին պահելով հարմնացեալ եկե-
ղեցի, զի մոցե՛ի յառաջաստ ընդ-
հեռային յարուցելոյ: Եկայք հաւա-
տացեալք Քրիստոսի, ցնծութեամբ
պահեսցուք, ընդ անմահին մահու
մեռանելով մեղաց, զի յարութեամբ
նորա կենդանասցուք աւդարուեթը:

ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Առաջին օր մեծ պահոց:

Տէր իմ Յիսուս Քրիստոս, այնչափ
հարկաւոր սեպեցիր պաք բռնելը որ
առջի մարդուն Ադամայ՝ նշան իր հնա-
զանդութեան՝ պաքը ապրապրեցիր,

ջուտեվ ԳիտուԹեան ծառէն : Եաքը երբոր դունալ աշխարհ եկար , ինձի ապաշխարանք սորվեցընելու համար՝ առջի բանդ եղաւ քառասուն օր պաք բռնել ջուտեվ , անանկով սատանայի փորձուԹեանը յաղԹել :

Տ՛ուր ինձիալ տէր իմ այսօր ընորհք, որ աս սուրբ օրինակիդ հետեւելով, եսալ որ քառասուն օր պաք բռնել կըսկըսիմ աս օրէս , բարի գիտաւորուԹեամբ բռնեմ. ու պաքին հետ լեզուսալ բռնեմ. ետ կենամ գէշ խօսքէր հանելէն , անէծք տալէն , բամբասանքներէն , և ուրիշ իմ ամէնն մոլուԹիւնէս ու մեղքերէս գադրիմ: Տ՛ուր մեզ տէր տէր մահու քո նմանիլ մուեւլուԹեամբ մեղաց, զի և կենաց քոց հաղորդիլ արժանասցուք կենդանաբար ալքայուԹեանդ : Ամէնէն աւելի կաղաչեմ, պահես իս ան մեղքէն՝ որ ըրաւ Ադամ, լսելով ձայնի կնոջ՝ Աստուծոյ կամքը ոտքի տակ առաւ . զըլայԹէ եսալ ուրիշին կամքին չիդըլալէլու համար՝ Աստուծոյ կամքին դէմ բան ընեմ, Աստուծոյ պատուիրանքը

կատարեմ, անով Աստուծոյ սէս դրախտէն քշուիմ դուրս ընկնիմ: Այլ քեզի հետ հիմա՝ի պարտէզն աղօթից և սաղմոսարուեստեան մնալով զատկին սուրբ Հոգովդ զարդարուիմ, երկնային դրախտին արժանի ըլլամ:

ԵՐԵՔԱՐԱՆ

Երէքշաբթի օր Ջէֆ պահոց:

Մարգասէր տէրիմ Յիսուս, ան առջի փորձուելեանդ համար որ քաշեցիր, կառարէ այսօր իմ աղաչանքս որ քեզի կրնդգեմ. յիշէ երբոր սատանան քեզ չէճանչնալով քովդ եկաւ յանդգնեցաւ քեզի փորձուելիւն բերելու Աստուծոյ սէս, ու անօթիութեանդ համար ըսաւ որ՝ քարերը հաց դարձնես: Դուն անիկայ սուրբ գրոց խօսքով մեկնէն քըշտեցիր, հաց ուտելը հոգալու բան մը չէ ցըցուցիր. մինակ Աստուծոյ բանը հոգալու է ըսիր. անով Աստուծոյ որկրամոլութեան մեղքը ջնջեցիր:

Կաղաչեմ քաւէս սրբես իմ որկրամոլութեան մեղքերս՝ որչափ որ ըրեր

եմ պզտիկուց ինչվան հիմա. և սաօր վընեմ իմ սրտէս հանեմ ան աւելորդ հոգերը իմ ապրուստիս վրայ: Վ՚ան զի սրտովս մտքովս աւելի հոգ կըտանիմ ապրելուս վրայ՝ քան թէ Աստուծոյ բանէրուն վրայ, և հոգիս հոգալու վրայ: Ադամայ պէս մեկդի ձգերեմ ան բանէրը՝ որ Աստուած ըսվեր է ինծի, եաւէ ընկեր եմ ան բանէրուն՝ որ Աստուած արգիլեր է, որով դուրս ընկաւ կորնցուց ձեռքի եղած դրախտնալ. եսալ անոր պէս խելքս ըսվեր եմ անոնց որ արգելեր ես, որ է աս անցաւոր աշխըրհիս բանէրը, մուցեր մեկդի ձգեր եմ ան դիի աշխըրհին բանէրը: Ընհոգ կեցեր եմ Աստուծոյ պատուիրանքները պահելու. աղօթքիս՝ պատարագ տեսնալուս աոեղնալ՝ առանկ պարապ բանէրու ըսվեր եմ միաքս, մտածելով ինչ ընեմ որ ապրիմ, ինչ ընեմ որ տունս պահեմ. չեմ մտածած ինչ ընեմ որ քու կամքդ կատարեմ, քեզ փառաբանեմ:

Աս աւելորդ հոգերը իմ ապրուս-

սիա վասն ինձմէն վերցընելս , որպէս մոլութեան մեղքէ պահելս , ժուժկալութեան շնորհք պարգեւելս , որ խեղքըս միաքս տամ բարեգործութիւն ընելու , և աստուածաշունչ գրոց խօսքերը մտածելու ։

ՀՈՐԵՔՐԱԲԱԹԻ

ԵՐԵՔ օր ՄԵՋ պահոց ։

Խոնարհութեան օրինակ տէր իմ Յիսուս Քրիստոս , որ Թող տալիր սատանային քեզ առնել քերել Երուսաղէմ , տաճարին աշտարակին վասն հանել . հոն ինքնալ սուրբ գրոց խօսքերով յանդգնեցաւ փորձութիւն բերելու . տեսնելով որ դուն սուրբ գրոց խօսքերով իրեն դէմ կրպատերազմիս , ուզեց հպարտութեան մեղքի մէջ ձգել Ադամայ պէս , Աստուած փորձել , պարապ տեղը հրաշք ընել ըսաւ փառաւորվելու համար : Դուն ինքն որ խոնարհութեան Ճշմարիտ օրինակն ես՝ նորէն աստուածային սուրբ գրոց խօսքերով անոր խօսքերը ցրվեցիր , ամեն ըրիր . փառասիրութեան մեղ-

քը Ագաճայ՝ որով դրախտէն դուրս
ընկաւ՝ ասով քաւեցիր: Ցո՛ւր ինծի քա
կաղաչեմ մէկ շնորհք մը խոնարհու
թեան, որ հպարտութեան և փառա
սիրութեան մեղքերը իմ սրտէս հա
նեմ. քանի որ սատանան միաքս փոր
ձութիւն ձգէ, սատուածաշունչ դրը
քին խօսքերը միշտ միաքս բերեմ, բե
րանս առնում, անով մերժեմ ցրվեմ
սատանային բերած սիրդ և հպարտ
միաքերը: Ասաւ կաղաչեմ, քու զօ
րութիւնդ ապաւորես ան խօսքերուն
վրայ, որ զուրցածիս պէս սուրբ դրոց
խօսքերը, սրտէսաւ հպարծ ամէն
փորձութեան շրշորդնելը. Ամէն:

ՀԻՆԳՀԱՐԱԹ

Շ՝ՐՐ՝ՐՏ օր մեջ պահոց:

Աղքատութեան սիրոյ տէր իմ
Յիսուս, երրորդ փորձութիւնալ քա
շեցիր սատանային ձեռքէն ինծի հա
մար, երբոր քեզ տարաւ բարձր լե
ռան վրայ, ցոյց աշխարհիս ամէն
թագաւորութիւնը ու իրենց փառա
ւորութիւնը, ու քեզի պարգևելու խօսք

տրւաւ, թէ որ իրեն երկրպագութիւն
ընէիր : Ինչպէս որ Ադամայ միաբը ա-
պաւսւթեան ու աստուածանալու
մեղքը ձգելով պղտորեց, անով գրախ-
տէն դուրս հանեց, անանկալ կարծեց
որ քովին մարդկութիւնդ ալ Աստու-
ծոյ դէմ մեղքի մէջ կրնայ ձգել : Խակ
դուն տէր, անաստեղը սաստելով հա-
լածեցիր. Աստուծոյ պատուոյն դէմ
ան չարին խօսիլնալ չուզեցիր, ըսելով
Աստուծոյ միայն տալու է երկրպա-
գութիւն . անով Ադամայ մեղքը՝ որ
չարին ըսելով Աստուծոյ փառքը իրեն
ուզեց առնել, և աղաւ ըլլալ, ջնջե-
ցիր, Աստուծոյ փառքը տեղը դրիր :
Ո՛վ տէր իմ, իմ սրտիկալ շատ հեզ
կանցընէ աստանան սիրելիդիս մեծու-
թիւնը, հարստութիւնը, փառքը,
պատիւը ուներսէն բանէրուն բաղ
ձանք բերել կուտայ . ես չունիմ կա-
րողութիւն ան չարին սաստելու, իմ
մեղաւոր մարմնոյս համար կրթուել
նամ : Դուն տէր իմ, ան զօրութիւնը
ինծիալ տուր, որ ան սատանային միա-
քերը մէկէն վընասեմ գուրս ձգեմ .

միևնակ Աստուծոյ մեծութիւնը՝ Աստուծոյ փառքը ուզեմ իմ ամէն գործքիս մէջ. Ամէն։

ՈՒՐՐԱԹ

Հինգերորդ օր մեծ պահոց։

Ո՛վ երկայնամիտ տէր իմ Յիսուս Քրիստոս, որ Ադամայ որդիքներդ փրկելու համար՝ աշխարհ եկար, և ամէն մէկ Ադամայ փորձութեանը ու մեղացը համար՝ թող տալիր որ սատանան քեզ Ադամայ պէս մարդ կարծելով, ասչափ անգամ փորձեց, բայց դու ամէն մէկ փորձութիւններու վրայ եկար, Ադամայ ընկած փորձութիւնները երեսպաշտութեան, որկրամոլութեան, հպարտութեան, ազահութեան, անձնասիրութեան, ասոնց ամէն մէկ մեղքերը քաւեցիր, անոր տրված չար օրինակներուն դէմ՝ ամէն օրինակներ տալիր. անանկ որ սատանան ամէն ըլլալով փախաւ, հալածվեցաւ, հրեշտակները անոր տեղը քովդ եկան քեզ պաշտելու։ Տուր ինծիալ ան շնորհքը՝ որ քեզ նոր Ադամայ հե-

տևէլով, ամէնէն փորձուենէրուն վրայ
էլլամ: խէլքա՝միաքս,սիրտս միևնակ Ա-
ստուծոյ ծառայէլու տամ, որ ատա-
նան բոլորովին ինծմէն հեռնայ,
հրեշտակնէրը քովս գան, ու բարի
միաքէրով օրհրդս անցընեմ. Ամէն:

ՀՈՒԹԹ

ՎԷՅԵՐԴԵ ՕՐ ՄԵԾ ՊԱՀՈՑ:

Գիտած սէր Յիսուս Քրիստոս, ինչ
որ սատանան փորձութիւն բերաս Ա-
դամայ, ինծիալ միշտ կրքերէ, կուզէ
իս յաւիտենական մահուամբ կորսըն-
ցընել, Աստուծոյ պատուիրանքնէրը
մոռնալ կուտայ, Աստուած վար դնել
կուտայ քան զկիրս իմ և քան զՀաճոյս
իմ, քան զբարեկամս իմ: Ըստ հէղ
իմ կամքս՝ և բարեկամաց կամքը կա-
տարէլու համար՝ Աստուծոյ կամքը
ոչքի տակ առեր եմ, ես ինծի հաւ-
նէլով անձնատաստան եղեր եմ Ադա-
մայ պէս, դուրսի զուարճութիւն-
նէրու, դուրսի բանէրու խէլքս տը-
ւեր եմ, ու իրը թէ ես ինծի սէր ա-
ղատ ըլլալ ուզեր եմ Ադամայ պէս:

Ա՛ս մեղքերս այսօր խոստովանելով քու առջիդ կը դնեմ. դո՛ւ որ Աստ֊ված մեղքերը քաւեցիր, իմ մեղքերս ալ քաւէ. տո՛ւր ան առաքինութեան շնորհքնեդ՝ որ փորձութեանդ մէջ ցրցուցիչը. և ինչ որ ալօթք կընեիր Հօր Աստուծոյ քառասուն օրվան պաքիդ մէջ՝ մանաւանդ աս առջի շաբթուն մէջ, իմ անարժան ալօթքնեդ ալ խառնէ, միացո՛ւ, և ընծայէ Աստուծոյ, որ արժանի ըլլամ աս շնորհքնեդ ընդունելու. Ամէն:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՒԱԹ

ՄԵՆ ՊԱՀՈՑ

ԿՐՕՆՔԻՆ ՏԱՀԱՑՈՒՑՄԱՆ ՊՓՅԱՐԱՆՑ, ՅԻՇՈՂԱՒԱ ԴՐՅՈՒԵՆ ԵՒՑԻ ԼՕՐԻՈՍԻ։

ՀԱՐԱԿԱՆ

դարված արժանի ըլլոյ զքեզ ընդու-
նիլ զտակական սուրբ հաղորդութեան
խորհրդով: Եաքնալ երբեր հոգիս
մարմինէս բաժնվի՝ արժանի ընէս
պահապան հրեշտակը ինծի ուղեկից
իրկել և առաջնորդ, որ սատանանէ-
րէն ես խալսըննէ:

ՈՒՐԲԱԹ

ՔԱՌԱՆԵՐՈՐԴ օր ՄԵԾ պահոց:

Պարգևատու բարեաց տէր և Աս-
տուած, արդարներուն դատաստանը
սեւնալէն եաև՝ իրենց բարի գործոցը
կեօրէ մէկ վարձք մը պիտոր տաս որ՝
լեզուով չկրնար պատմվիլ՝ բաերով:
Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառան-
գեցէք զպատրաստեալ ձեզ զարքայ-
ութիւնն 'ի սկզբանէ աշխարհի: Ան
արքայութիւնը՝ ուր ընկերութիւն է

ամենայն սրբոց, ուր ամենքը բարի, ուր ամենքը մեկմեկու խիստ սիրելի, մեկմեկէ գերազանց. հասյա հրեշտակաց հետ նստիլը՝ որ բոլորովին հոգեղէն գերագոյն տեղծուած ըլլալով մեզի չեն նմանիր, դաս դաս սերոբէ նէրու քերոբէնէրու: Սուրբ Աստուածածնայ փառքը եօթնարփեան լուսով զարդարված: Քու մարդկու թեանդ փառքը սէր իմ Յիսուս, որ ամենն մեկ վերբերեդ մեկմեկ լոյս պիտոր ճառագայթէ: Բայց ամենէնն վեր մեկ լոյս փառաց մը ծագելով ամէն սրբոց վրայ, անանկ քու ԱստուածուԹեանդ փառքը պիտոր ցոյցնես, որ խելքէ միաքէ դուրս է. հոն տես նելով ամենասուրբ ԵրրորդուԹիւնդ, Հայր, Որդի, և Հոգին սուրբ Աստուած, ամենն բարուԹիւն պիտոր տեսնան ու խմանան, ամենն գեղեցկուԹիւն, զուարճուԹիւն, խնդասուԹիւն, և զօրուԹիւն. և միշտ տեսնելով զմեզնին պիտոր յաւիտեան:

Ամէն, երբոր աս սուրբերուն փառքը կզնիշեմ, սիրտս վեր կելլայ, կըցան

կամ արքայութիւնը մոռնալու. բայց երբոր իմ մեղքերս կը խոստովանիմ, յայտնի կը տեսնամ որ՝ դուրս ալիսոր մնամ: Ա՛ս մտածելով կ՚երկնչիմ կը տոչորվիմ իմ ըրած մեղքերուս վըրայ. և թէ որ հիմա ասչափ կ՚երկնչիմ, հապա ինչ պիտոր ըլլայ դատաստանին օրը, երբոր տեսնամ որ՝ իրաւ կը բաժնուին իս սուրբ ներուն մէջէն, կը հեռըցընուին Աստուծոյ տեսութենէն:

Ա՛յլ ով ողորմութեան Աստուած, դո՛ւ որպէս զԹագաւոր Հայր յիշէ՛ քու միածնիդ քառասուն օրվան պաքը, և այլ ամէն չարչարանքները՝ որ իմ փրկութեանս համար քաշեց: Յիշէ՛ սուրբ Աստուածածնին օխտը խոցը, որ միածնին որդւոյն հետ մկկտեղ քաշելով այնչափ կսկիծով ու խոցերով չարչարվեցաւ իմ մեղքերուս համար: Ասոնց արդիւնքը յիշելով նայէ՛ այսօր վերէն երկնքէն, և աս յիշատակը արքայութեան՝ միշտ սրտիս մէջը տպաւորէ՛, որ քանի՛ որ աստէն ունիմ՝ լամ առջի ըրած մեղքերս Դաւիթ մարգարէին պէս, բնաւ չմոռնամ տպաշխա-

բելէն ու բարեգործութիւն ընելէն ։ Ինանկով քեզ հետ հաշտելիմ, զատկական հաղորդութեան խորհրդով անբաժան միամտ Աստուածութեանդ հետ աս աշխարհիս մէջ, որ մեռնելու օրս դատաստանին մէջ բարեկամի պէս լսեմ քենէ ան երանական ձայնը, Սուրբ յուբախութիւն տեառն քո ։

ՀԱՐՑ

Քառասնեմի օր մեծ պահոց ։

Քրիստոս Յիսուս, յոյս մեղաւորաց, Ձեմարիա բարեխօսդ վասն մեր. քանի որ քու գալուստդ կսպիեմ, որ դարուներեանդ գատաստանը, մեղաւորաց տանջանքը, արդարոց փառքը, սիրտս դողալէն բանմընալ չեմ կրնար ընել. վասն զի տեսնալով իմ չար գործքերս, իմ ծոյլ կենալս, անհոգ ըլլալս ապաշխարելու և ազթելու, գիտեմ որ չկրնամ պիտոր ժառանգել արքայութիւնը, իրաւ պիտոր դատապարտվիմ ։ Ինչ պիտոր ըլլայ իմ բանս, մտածելով յուսահատված կեցկերժ, հոգիսալ մեռելը է, սիրտս

ալ մեռելէ , մեկ բարի բան մը չեմ կրնար ընել :

Դո՛ւ սվ բժիշկ հոգւոց , յարուցիչդ մեռելոց , աս իմ մեռած հոգիիս խեղճ ՀուԹիւնը լեզուվ հասիր ինծի , ինչպէս որ հասար այսօր Ղազարու բանլուվ Ղազարոս բարեկամ մեր մեռաւ , այլ երԹամ զի զարԹուցից զնա : Ո՛վ տէր , ես Թէպէտ քու բարեկամդ չեմ իմ մեղքերուս համար , բայց քու ստեղծուածդ եմ , քու գնծու ծառադ եմ , ես իս մեռուցի , մեղքերու մէջ Թաղեցի , չէ Թէ չորս օրվան՝ այլ շատ տարվան . հիմա իմ լալագին աղօԹքս քեզ ընդ առաջ կը խրկեմ Ղազարոսին քրոջը պէս գոչելով . Տէր , եկ , և տես . եԹէ աստ էիր դիտեալ , ոչ էր մեռեալ հոգի իմ : Եւ յուսահատուած ըլլալով իմ հոգւոյս ողջունալուն վրայ կալալակեմ . Տէր , արդ հոտեալ լիցէ : Ե՛կ տէր իմ , տես մեկիկ մեկիկ իմ խոցերս , իմ փտուած կիրքերս . լայ իմ հոգւոյս գերեզմանին վրայ , ինչպէս լայիր զազարոսին գերեզմանին վրայ : Տուր առաջ հաւատք

ըսելով. Եթէ հաւատացեր, տեսցես զփառսն Աստուծոյ: Որ եւս ըսեմ սրտէս. Ա՛յո՝ տէր, ես հաւատացի, եթէ դու ես Քրիստոս որդի Աստուծոյ: Դու ես մեղաւորաց յարութիւն և կեանք, կարող ես մեղքերս քաւել:

Դու կարողդ ամենայնի, հրամէ իմ քարացեալ սրտիս ըսելով. Ի բաց ա՛ր քէ զվէմդ: Վերցընել տուր սա ապառաժ քարը խստասրտութեան իմ վըայէս, որ լոյսդ Քրիստոս ծագի խաւարած մտքիս մէջ, ինչպէս որ ծագեցաւ և լուսաւորվեցաւ Ղազարոս գերեզմանը: Սաստիկ ձայնով կանչէ իմ մեռած հոգիիս. Ղազարէ, արի՛ ել արտաքս: Ելնէր դո՛վ հոգի, ինչ կեցեր ես մեռեալ մեղաւորներուն մէջ: Ելնէր, գնա՛ր եկո՛ դո՛վ մեռեալ հոգի. ինչո՞ւ լսես, կեանքը Թողուցիր, որ եմ ես. գացիր խաւարին ու մահուն քովը, որ է մեղքն ու սատանան: Այս կենդանարար ձայնը արարչիդ առնելով իմ մեռած հոգիս՝ կելլայ կըկենդանայ, բայց մեղքերուս չար սովո-

րութիւնէրը կրնան. վասն զի սատա-
նան անոնցմով փաթթեր է իս, ջրս
դիս կարեր կապեր է, ուզեմալ ելլալ
չեմ կրնար ելլալ: Դուն աեր իմ հրամ-
մէ հրեշտակներուս, որ քակեն փա-
րատեն ինծմէն չար ախտերը՝ աս ու-
նակութիւնները՝ ըսելով. Լուծէք
զդա, և թողէք երթալ:

Ահա, տեր իմ, աշխարհ աղաչանք և
կրթութիւնները որ ըրի աս մեծ պա-
քին մէջը, կրթութիւն զղջման, խոս-
տովանութեան, ապաքէն, ու բարի
մտածման պատրաստութեան, տանք
պարապ չանցնի: Այլ կաղաչեմ որ
քու անբաւ մարդասիրութեամբդ
ընդունելով, իս արժանի ընես աս
պատիկս մաքրութեամբ ընդունիլ
քեզ սուրբ հաղորդութեան խորհուրդ-
դով. որպէս զի մեկ նոր յաստուած
շնորհք մը առնելով յարատեւութեա,
բոլոր տարին աս կրթութեանս վայե
ցնամ, վարքս շտկեմ բարեխոսու-
թեամբ մեր քո և կուսի, բարի մտ-
հուան, և գալստեանդ առեն սուրբ
առաքութեանդ արժանի ըլլամ: Ամեն:



Wed. H. Landamps. Ze Vanloo

DESCENTE DE LA CROIX

AFDOENING VAN HET KRUIS

ԱՒԱԳ ՀԱՒԱՏ

Կրնա՞ք ատոփիոնէն յիշատակ
կա՞ Շարլատանին Քրիստոսի։

ԿԻՐԱԿ

Ծաղկաքար։

Ովգոնիոր Թագաւորաց Քրիստոս, քու հոգեւոր Թագաւորութեանդ օրինակ մը տալ ուզելով առաջ Երկնքով քաղաքը մտար. հոն Ջաքէոս մեղաւորը տեսար ժանեաթզենի ծառին վրայ ելած, մէկ ձայն մը տալով վար ինկեցուցիր ան ժանետ ծառէն. զղջումով սիրտը լեցուցիր, ապաշխարեց դարձաւ ամէն մեղքէն։ Այսօր տէր իմ, ինծի՛ալ մէկ ձայն մը տո՛ւր, իսալ կանչէ ըսելով փուխ էջ այսի։

Երբոր իմ մեղաւոր հոգիսալ քու ձայնդ առնէ, ձայն արարչիդ ըլլալով

շուտ մը վար կինջնայ ան ժանտ ու գարշելի ծառէն՝ որ իր մեղքերով բարձրացած է, կրնատարմի իր բարձրամիտ հպարտութենէն ու խստասրտութենէն, սիրտս կըփղձկի, շուտ մը զղջումի կուգայ ըսելով. տէր, ինչ մեղք որ ըրի, հոգիս չնորհքներէն զրկեցի, չորեքկին զղջամ, չորեքպատիկ վհատեմ լալով, խաչ քաշելով. դունաղ դառնաս ըսես ինծի որ, Այսօր՝ի տան քումմարժան է ինձ ապաշնել: Այսօր քեզի կուգամ, քեզ մեղքերէ կըսրբեմ, քու հոգիդ կըփրկեմ: Եսաչ ան առենը բոլորովին կըփոխվիմ, սրտանց կըդառնամ, և արժանի կըլլամ ան խօսքը լսելու. Այսօր եղև փրկութիւն տանս այսմիկ, զի և սա որդի Աբրահամու էր:

Ո՛վ տէր իմ Յիսուս, ինծիսալ արժանի ըրէ լսելու, սա հոգիսալ փրկութեան որդի է, սասլնախասասահմանեալ է. մեղքերուն Թողութիւն սրվի, արքայութեան որդի ըրի, ան արքայութեան որ լեզուով չկրսասիվի, ուր որ ամենասուրբ Երրորդու-

Թիւնդ յաւիտեան վառաւորելու ար-
ժանի ըլլամ. Ամէն :

Այլ աղօթք :

Ա յսօրուան ըրած շնորհքներդ՝ տէր
իմ, ինծի՛ալ պարգեւէ որ, երբոր մե-
տիկացար ձիթենեաց լեռը, Երուսա-
ղէմ մանալէն առաջ՝ կապած էշը ար-
ձկէ՛, քու քովդ բերել հրամայե-
ցիր, անով մտար Երուսաղէմ : Իմ հո-
գիսալ սատանան կապեր է մեղքերով
Թող չիտար քովդ գալու, խոստովա-
նութեամբ զղջմամբ մեղքերս զուրցե-
լու, իրեն ուզած բեռնները՝ որ է մեղ-
քը՝ վրաս կրբեռցընէ : Դո՛ւ երբեմ ա-
րարիչ՝ երբեմ տէր Թագաւոր՝ Թող մի
տար իս ատանի օտարներու ձեռք, այլ
ինչպէս որ իրիկնցիր առաքեալները
հրամայեցիր Լուծէք, ածէք ինձ,
ինծի՛ալ իրիկ տէր իմ այսօր քու երկ-
նային շնորհքդ, և հրեշտակներդ, որ
սատանային կապէն իս արձկէն, քե-
զի բերեն ըսելով. Տեառն իւրում պի-
տոյ է : Ո՛ւան զի քովինդ եմ, դո՛ւ
ես իմ տէրս :

Երբոր քու գալուստդ լսեցին, ան
պըղտիկ տղոց կապված լեզուները
արձկվեցան, քեզ օրհնելու փառա-
տրել չեին կրնար. իմ լեզուսալ
աչք իմ՝ սատանան կապեր է ծուլու-
թեամբ, թող չիտար որ լեզուս ար-
ձկեմ, քեզ օրհնեմ: Թէ որ այսօր
ինծի ալ գաս աչք իմ հնորհքով իմ լե-
զուսալ կըբացվի, աղօթելու սիրտս
կըշարժի, միտքս վրաս կըլլայ, կամքս
կըբաղձայ կըյօժարի, Ջերմեռանդու-
թեամբ ախորժամբ աղօթքի հետ
կըլլամ աղաղակելով Ովսաննա բարձ-
րեալն, օրհնեալ որ գալդ յանուն
տեառն, խաղաղութիւն յերկինս,
և փառք ի բարձունս: Եւ թէպէտ
սատանան կըջանայ իս խափանել ա-
ղօթքէն, ինչպէս որ Հրէաները ուզեցին
խափանել տղոց բերանը, բայց դուն
սատակ քուվին իշխանութեդ, ինչպէս
սատակեցիր Հրեից՝ որ քարացեալ սիրտս
շարժի քեզ օրհնելու, և փառաւորե-
լու. վասն զի քու գալստեամդ քա-
րերնալ կըշարժին յօրհնութիւն:

Նոքը մնար տաճարը, տեսար որ՝

Աստուծոյ տունը Հրէանէրը առու-
տուրի տուն ըրեր էին, աղօթքին տե-
ղը՝ աւազակներու տեղ դարձուցեր է-
ին: Եկօ իմ սիրտս լսէս որ՝ ան քու
չինած հոգևոր տաճարը՝ որ քու
տունդ պիտոր ըլլար, սատանաները
մեղքերով՝ իմ չար սովորութիւննե-
րովս, իրենց տուն վաճառի ըրեր են,
առուտուր՝ կընեն, մէկը չկայ որ՝
դուրս հանէ. այսօր երկիր մէյմը,
ապաշխարութեան շնորհքով անոնց
աթոռները սեղանները ցրուէ, դուրս
հանէ իմ սրտէս ըսելով. Տուն իմ տուն
աղօթից կոչեսցի: Ա՛ս սիրտս ես տեղ-
ծեցի, որ ես ընակիմ շնորհքով. իմ
Հօրս տուն և տաճար պիտոր ըլլայ. աս
մեղքերը ինչ գան ունին հոս:

Աամէն իմ սիրտս սրբելով տէր իմ,
եկօ այսօր տաճար ըրէ քեզի. նրատէ,
թափաւորէ իմ վրայ, քեզի ծառայ
ըրէ, որ ուրիշը չչնէ. եսալ միացած
իմ կեանքիս մէջ քեզ միայն պաշտեմ,
որ եաքի շունչ տալուս առեիւը քեզի
հետ թափաւորելու արքայութեան
մէջ արժանի ըլլամ. Ամէն:

ԱՒԱԳ ԵՐԿՈՒՀԱԲԱԹԻ

Ի յիշատակ աղօթից Քրիստոսի ՚ի պար-
տիզին ։

Տէր իմ Յիսուս Քրիստոս, այնչափ
բարերարութիւնդ, այնչափ բարի
խրատդ և օրինակդ տալէն ետև,
այսօր ուղեցիր քու սուրբ չարչարանք-
նէրովդ իս փրկել, առաջ պարտէզի
մը մէջ մատաղ ածելու, որ պարտէզի
մէջ ըրած մեղքը Ադամայ քաւես.
ծնրադրութեամբ խոնարհութեամբ
աղօթքի նստար, որ ոտքով ձեռքով
Ադամայ ըրած մեղքը հպարտութեան
ընկճես, որ ոտքով արգելեալ ծառը
գնաց, ձեռքով արգելեալ պտուղը
կերաւ ։ Մէկ դիացդ քաշելու չար-
չարանքներդ միտքդ բերելով, մէկալ
դիացդ մարգկային մեղքերը յիշելով
ան սոսկալի տագնապը քաշեցիր, ինչ-
վան արիւն քրտինք քրտնեցար ։ Ան-
օրը ՚ի հարկէ իմ մեղքերաս յիշեցիր,
ինչ որ մտքով՝ աչքով՝ բերնով՝ և
բոլոր մարմնով գործեցի. իմ մեղք-
րուս գարշութիւնը, մեծութիւնը,

մաքիդ առջին գալով ան տագնապը բերելու պատճառ եղան :

Յաւագին սրտով աղաղակեցիր . Հայր անցո՛ յինէն զայս բաժակ : Բայց Հայրն յաւիտենական ուզեց որ՝ դուն մարմնով չարչարանք քաշես , որ ես հոգւով չքաշեմ , չդատապարտը վիմ . դուն նայ իբրև դառն հնազանդեցար իմ սիրոյս համար Հօրն երկնաւորի , ըսելով . Ո՛չ որպէս ես կամիմ , այլ որպէս դու : Յանձն առիր որ՝ դուն չարչարվիս , միայն թէ ես փրկվիմ : Ահ տէր իմ , աս քու սէրդ՝ և երկնաւոր Հօրդ սիրոը տեսնալով այսօր իմ վրաս , կամենամ իմ ըրած մեղքերուս վայ , կրդողամ ըրած ապերախտութեանս վայ . և կաղաղակեմ առ Հայրն երկնաւոր . Հայր , անցո՛ յինէն զբաժակ բարկութեան քո : Ա՛ման թէ քու Որդիդ միածին իմ տեղս կառնէ զայս բաժակ չարչարանաց . ինձի համար աս տագնապը կրքաշէ , իմ մեղքերուս համար աս արեան քրտինքները կրթափէ . որչափ որ մեղք ըրեր եմ պզտիկութենէս վեր , ամ

մէնակ աչքին առջեւն է դրեր, անանկ
կաղաչէ քեզի ու՛ր Հայր երկնաւոր :

Ո՛րչափ որ շատ էր տագնապդ՝ այն-
չափալ մտադիւրութեամբ աղօթքի
հետ եղար, մէկէ մը մէկ մսխեցար-
թիւն մը չիգտար, առաքեալներուն
քովը եկար՝ բայց անոնքալ քունի
մէջ գտար : Կաղաչեմ ա՛ռ իմ Յիսուս,
այն աղօթքիդ արդեանցը համար տաս
ինծի այսօր շնորհք Հգատատութեան
և Ակնածութեան : Մէկ անհոգութիւն
մը կայ վրաս հոգիս հոգալու, Աստու-
ծոյ պատուիրանքները պահելու . աս
անհոգութիւնը ծուլութիւնը մէկդի
ձգեմ, արթննամ, իմ մեղքերուս
վրայ ապաշխարեմ : Ամէնէն առաջ
աղօթքիս հոգացող ըլլամ, ամէնէն քա-
նիս մէջ առաջ աղօթքի վազեմ . ինչ-
պէս որ դուն չարչարվիլ սկսեցուս ա-
տենդ՝ աղօթքի հետ եղար : Ես միտքս
վրաս պահելով անանկ մտադիւրու-
թեամբ աղօթք ընեմ, ինչպէս որ դուն
օրինակ տուիր : Երբեմն նեղութիւն,
կամ հիւանդութիւն, և կամ մըտմըտ-
ուք մը ունենամ՝ չխրտնիմ, ա-

զօթքնէբս չեմ զրկեմ։ Ո՛րչափ որ քուն բերէ սատանան աղօթքիս առենը՝ փախցընեմ։ Ո՛րչափ որ ծուլութեան, ձանձրութեան, մաղձոտութեան սատանան իմ հոգևոր գործքերս խափանել ուզէ, իս ջերմեռանդութենէ պաղեցընէ, անոնք ամէնը փախչին, հալածվին քու աղօթելովդ սէր իմ Յիսուս, որ ինծի համար աղօթեցիր, աչափ արեան քրտինք թափեցիր, որ իս Ադամայ հետ նորէն նորոգելով երկնաւոր դրախտը մտցընես փառաւորել զամենասուրբ Երրորդութենիդ յաւիտեան. Ամէն։

ԱՒԱԳ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Ի չեշտակ լաբլաթանայն Քրիստոսի։

Ո՛վ ծայրագոյն մարդասիրութիւն աստուածային, որ իմ մեղքերս վրադ առնելով մեզաւորի պէս մսուրվեցար անօրէն Յուդայի ձեռքովը՝ որ քու աշկերտդ էր, սիրտդ կսիծային՝ իր մեղքը իր երեսին զարնելով ըսիր. Յուդա, համբուրելով մատնես զորդի մարդոյ։ Ե՛ս եմ Յուդան սէր

իմ, ես եմ՝ որ մեկտեղ սուրբ հաղոր-
դութեան սեղանը նստեցով, Հաշա-
կեցով, իմ սրբապղծութեամբս զիս
սատանայի և իմ մեղքերուս ձեռքը
կամաւորապէս մատնեցի։

Ա՛ազակի մը պէս բռնըվեըլով, սու-
րերով թուրերով քաշկռտըվեըլով դու
Ճշմարիտ քահանայապետդ՝ սուտ
քահանայապետին առջեւն կեցար,
արդար դատաւորդ՝ սուտ դատաւո-
րին դատապարտըվեցար, իմ աներ-
սութիւնս լըռութիւնս քաւելու հա-
մար սուրբ երեսդ ապտակվեցար։
սիրտդ չդիմանալով ապտակ զարնո-
ղին ողբմագին ձայնիւ ըսիր։ Ընդէր
հարկանես։ Այ ողբմած ձայնդ ին-
ծի է։ վասն զի ես եմ, որ ասանկ լըրբ
ըլլալով՝ քու սուրբ պատուիրանք-
նէրդ ու սուրբ խորհուրդնէրդ արհա-
մարհեցի։ ոտքի տակ առնելով իբր
թէ քու երեսիդ զարկի։

Վա՛յ ինձ մեղաւորիս, իմ մարմնոյս
չարաչար մեղքերը սրբելու համար՝ բո-
լոր մարմնովդ չարաչար ձաղկեըվով
խոցվեցար, որով կուսածին մարմնիդ

արիւնըլլայ եղաւ : Գլխով մեքով աչքով ըրած մեղքերուս համար՝ փըշով ապակվեցար , արիւնները աչվընեբուդ վրայ կըվազէին , մէկ սրբոյ մը չկար : Իմ զԱստուած անարգելուս համար՝ նախատական խօսքերով անարգվեցար : Ճշմարիտ Թագաւորդ Թագաւորաց՝ սուտ Թագաւորի պէս ծաղր եղար, եղեգով զարնըվեցար :

Ո՛վ հովիւ քաջ, որ աս ամէն չարչարանքները յանձն առիր , իս մոլորեալ ոչխարս փրկելու համար : Ա՛ս սոսկալի քաշածնէրուդ արդիւնքը մի պարապ հաներ տէր իմ Յիսուս : Իմ ըրած անօրէնութիւններս՝ ինչ որ պզտիկուցմէ եւս գործեցի մարմնովս հոգւով, քուվին սուրբ չարչարանքնէրովդ սրբէ : Ինչ որ անարժան մըտածմունքով կամ հայեցուածով Աստուծոյ դէմ բան ըրի , զԱստուած անարգեցի , դուն քաւէ :

Եւ քուվին քաշածնէրուդ արդիւնքը իմ վրայ տպաւորէ . առաջ տուր ինծի շնորհք մաքրութեան, որ ասկէց եաքը սուրբ մաքուր պահեմ իմ զգայ-

արանքնէրս : Ապտակողին հեզութիւ
պատասխանելուդ համար՝ տուր ին-
ծի շնորհք հեզութեան . բոլոր մարմ
նով ձակըվելուդ համար՝ տուր ինծի
շնորհք ձգնութեան , սուրբ պահէ
մարմինս՝ի մէջ փորձութեան։Գլուխդ
փշով պսակվելուն համար՝ տուր ինծի
շնորհք բարի խորհրդեան , որ միշտ
բարին մըտածեմ։ Նախատական խօս-
քեր լսելուդ համար՝ տուր շնորհք
լեզուի մաքրութեան , որ սուրբ պա-
հեմ լեզուս , հոգիս , և մարմինս ։ Որ-
պէս զի սրբութեամբ մեռնելով ար-
քայութեանդ մէջ քեզ տեսնալով
հոն քեզի շնորհակալութիւնս ընեմ
այսչափ երկայնմտութեանդ ու մար-
դասիրութեանդ վրայ զքեզ օրհնե-
լով յաւիտեան . Ամէն ։

ԱՒԱԳ ՀՈՐԵՔՀԱԲԱԹ

Ի յիշատակ բանին , Ահա այրէ ցՅեզ ։
(Յհ . ժԹ . 5 ։)

Հայր յաւիտենական , տես ահա
պատկեր միածին Որդւոյդ . իմ տեղս
ինքը կըքաշէ պատիժ անարգանաց՝

որչափ որ ըրեր եմ պզտիկուց ինչևան հիմա քու Աստուածութեանդ դէմ իմ մեղքերովս։ Ա՛ս պատկեր քու միածնին Որդւոյդ քեզի կընծայեմ Հայր սուրբ, տէս, և քու բարկութիւնդ իմ վրայէս վերցո՛։ Ինծի համար փշով պսակվեր է ան Որդիդ՝ որ գուն անչափ կսիրեիր։ Ինծի համար իր սուրբ արիւնը երեսնիվայր կրվազէ, իմ անարգական մեղքերուս համար՝ ապտակ անարգանաց սուրբ երեսին զարնված կեցեր է։ Իմ արբապզծութիւնս նէրուս համար թքով լեցված, սուտ թագաւորի տեղ ծաղր եղած, գաւազանի տեղ եղէգ ձեռքը առած, թագի տեղ սուրբ գլուխը փուշէր խոթված, ծիրանիի տեղ՝ կուսածին մարմինը մերկացած, քղամիթ նախատանաց հագած։

Ա՛ս կերպարանքով առջևդ կեցած կաղաղակէ. Հայր սուրբ, Թո՛ղ տուր, նեղէ՛ աս մեղաւորիս անհնարելի մեղքերը. ես ահա կըքաշեմ անոր տեղը, ես Թող մեռնիմ։ Իսկ այս անօրէն բարբարայն՝ Թո՛ղ որ խաչըսի։ Հիմա ես

ալ կազալակեմ, աս ողորմելի պատ-
կերը՝ քու սիրական Որդւոյդ պատ-
կերն է, աս ձայնս քու միածնիդ ձայնն
է, օտարի մը չէ։ Եւ աս մեղաւորս՝ ես
Բարաբբայս՝ այսօր քեզի կրցրընեմ
Հայր գթութեանդ, բարկութիւնդ
դադրեցո՛ իմ վրայէս, արդարու-
թիւնդ մոռցիր, գթութիւնդ ցրցո՛ւ,
իս խալըսէ մեղացս պատիժներէն։

Ոչ տեղ չէ ինձի եր մարմնոյն
վրայ, ուժ չէ ինձի եր կեանքին
վրայ. աւար խեղճութեանը վրայ մար-
դու սիրտը չդիմանար, ինչպէս դի-
մանայ քու հայրական սիրտդ։ Բո-
լորովին ջնջէ այսօր իմ մեղքերս,
վասն զի բոլորովին զինքը պատարա-
գեց չարչարանքներով քու անչափ սի-
րական Որդիդ ինձի համար. նայէ
Հոյն բարձրէն երկնքէն Հայր սուրբ
աս պատկերիս վրայ որ այսօր քեզի
կրցրընեմ, մի նայիր իմ անօրէնու-
թեանս վրայ։

Ես աս պատկերին տակը կապաւի-
նիմ կըսպահվիմ որչափ անգամ որ քու
բարկութիւնդ շարժի իմ վրայ, թէ

հիմա՝ և թէ իմ մեռնելուս առիթը։ Երբոր դատաստանին օրը ինծմէն հա մար ուզես իմ ըրած սրբապղծութիւն՝ յանդգնութեանս՝ անարգութեանս վրայ, ես առ պատկերին սպասինած ան օրը կալալակեմ աչքս, չիշէ, նայէ առ միածնիդ պատկերը, ու իմ ամէն մեղքերուս թողութիւն տուր։

ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԱԹ

Ի չէլապակ Ոփլուայի, և ամենասուրբ Խորհրդոյ Հաղորդութեան։

Ինչ խոհարհութեան օրինակ էր տէր իմ, որ այսօր մեզի ցըցուցիր. դու ինքդ մեքրութիւն ըլլալով յանձն առիր խոնարհիլ լուանալ մարդուս ոտքը, որ գրսի աղտը լուանալով հոգւոյն ներսի աղտն ալ լուանաս, որ մարդկայինն հպարտութիւնը վերցընես, խոնարհութիւն սորվեցընես։ Իմ հոգիս է աղտոտ կերպ կերպ աղտոտութեամբ, օխտը մահացու մեղքերով այս օր տէր իմ, իմ հոգիսալ լուա, սրբէ։ Իմ սիրտս է լեցուած հպարտութիւ, ամբարտաւանութեամբ, չեմ կրնար

սիրտս ինձէ ցընծանէր, ինծի անարգանք կըսեպեմ խոնարհիլ իմ եղբօրս : Եւ ես եմ մեղաւոր, իմ եղբարս յանցաւոր կեսեպեմ, կըհեռընամ իրմէ : Եւ ես եմ անարգանաց արժանի, իմ եղբարս կանարգեմ, կընախատեմ, կըդատեմ, կըբամբասեմ: Ո՛վ անհուն խոնարհութիւն Աստուածորդւոյդ • Ինչ պատասխան պիտոր տամ դատաստանին օրը, երբոր քու այսօրուան ըրած խոնարհութիւնդ ցըցընես ինծի, և իմ հպարտութիւնս երեսիս զարնես, որ չէ թէ եղբօրս ոտքը չկըսացի, այլև ոչ մէկ գութ մը ցըցուցի • քեզնէ օրինակ չառի սիրտս քար դարձուցի եղբօրս վրայ, զինքը քամահրեցի : Դու տէր, այսօրուան ըրած խոնարհութեդ իմ սրտիս մէջը տպաւորէ, որ փոխուիմ, քեզ նմանիմ ըլլամ:

Շատ են չնորհքդ որ ըրեր էիր մարդուս • բայց ինչ չնորհք՝ ինչ հրաշագործութիւն, ինչ պարգև էր, որ այսօր ըրիր տէր իմ, և Աստուած իմ: Աքանչելի օրինակ խոնարհութեան տալին եաև ինծի, ուրիշ ալ աւելի

պահչելիք մը ասելցուցիր, որ ամէն
սուրբք և ամէն հրեշտակք կըզարմա-
նան: Դուն որ սրբուհիանդ ես սրբոց,
ուղեցիր իմ մեղքով լցուած սրտիս մէջը
նստիլ: Դուն որ սարսափելին ես սե-
րոբէից, ինծի հարկինք ուրախու-
թեան ըրիր, մկտեղ սեղանակից ե-
ղար, ան սեղանին վրայ իս սաստիկ սի-
րելին՝ դուն քեզ մոռցար. ինծմէն չի-
բաժնըվելու համար՝ իմ սրտիակերա-
կուր եղար. ուղեցիր իմ մարմինս քու
մարմնոյդ հետ՝ իմ արիւնս քու արեա-
նըդ հետ խառնել:

Ո՛վ խնաստութիւն անհուն, ան
աստուածանալու կարծած պտուղն
որ՝ Ադամայ առեղը երկրաւոր դրախ-
տին մէջը կրփափագէի ճաշակել՝ բայց
արգիլած ըլլալով ինծի մահ կըբերէր,
այսօր փոխելով զան, աս սեղանը երկ-
նային դրախտ մը ըրիր, և պահչելի
պտուղ ինծի ճաշակել տըվիր որ Աս-
տուածութեանդ հետ միաւորիմ:
Փառք անբաւ խնաստութեան քո
տէր. որուն վրայ որ կըզարմանան
հրեշտակք, ուսկից որ կըդողան զը-

ւարթունք, ես անիկայ բերնովս կառ-
նեմ, կըճաշակեմ, սիրաս կըգինեմ,
մկ կըլլամ։

Ո՛վ սրբուհիներն սրբոց, գուն որ ես
արժանի ըլլիր ասանկ մեծ պարգևի՝
սրբէ հոգիս, մաքրէ մարմինս, հեռաց-
ցո՛ յուդայեան սատանաները, վրան-
տէ մեղքերը. եկո՛, թագաւորէ իմ
սրտիս մէջը։ Ակնէց եաքը մկը չիշնէ
իմ վրաս՝ որ գուն միանակ տէր իմ և Ա-
ստուած իմ. մկտեղ նստինք հնորհաք,
մկտեղ սիրենք աստուածայինն սի-
րով։ Ակնէց եաքը թող մի տար որ՝
մեղք մը գայ սրտիս մէջը. լուսաւորէ
հաւատքս, զօրացո՛ յոյսս, վառէ իմ
սէրս, որ միանակ քեզ սիրեմ, քեզ վա-
ռաւորեմ, քեզի նմանիմ հոս, որ ան-
դինաղ դէմ յանդիման տեսնալով մկ-
տեղ քեզի հետ միասին յաւիտեան.
Ամէն։

ԱՒԱԳ ՈՒՐԲԱԹ

Ի չիշապակ Բարբանաղային Վրիպոսոյ Ի Վերայ Խաչին :

Ո՛վ Հեղ արդարութիւն աստուածային, որ իմ մեղքերուս կուգես վերժինդրութիւն ընել երաւմունք, քեզ կրցրցնեմ կըներկայացնեմ աս սպասկերը միածնի Որդւոյդ Աստուծոյ. տես թէ ով է որ կըբարձրընայ խաչին վրայ : Թէ որ ես չեմ ճանչնար անոր մեծութիւնը, անոր անմեղութիւնը, անոր անձը՝ թէ ով է, սակայն դու տէր կըճանչնաս ու կըգթաս : Ահա ինծի համար է՝ որ գամերը ձեռվը ներսն մէջը խօթել տրվաւ, ինծի համար աւազակներու մէջ՝ աւազակի մը տեղ սեպվելով խեղճ կերպարանքով վայրին վրայ անկըվեցաւ :

Աս բանիս քարերը չեն դիմանար՝ կըպատռտըվին, արևը երեսը կըդոյժ, լուսինը կըխաւարի, քու հայրական՝ սիրոդ ինչպէս սիրտը դիմանայ ով Հայր երկնաւոր : Ինքն Յիսուս բաց կատարած ինծի համար խաչին վրայ

կեցած խղճալի ձայնիւ կաղաչէ. Հայր, Թո՛ղ սմա, զի ոչ գիտէ զինչ գործէ: Հայր, ես կըքաշեմ, կըզոհվիմ, միայն Թէ աս մեղաւոր հոգին չքաշէ, ազատվի: Երբոր ԴաւԹի մարգարէին ձայնը լսեցիր Թէ՝ իս զարկ, ժողովուրդը մի զարներ, երբոր ԴաւԹին զոհը անբան անասնոց տեսար, սիրտդ ինչաւ, ժողովրդեան հարուածը դադրեցուցիր, հիմա դո՛ւ Հայր գԹուԹեանց՝ աս ողորմելի ազկատուր ձայնը քու սիրեղի միածին Որդւոյդ լսելով ինչպէս պիտոր չնշարժիս աս կենդանի զոհը տեսնալով ինչպէս պիտոր չԹողուս իմ մեղքերս, ինչպէս չինչնայ քու բարկուԹիւնդ իմ վրայ՝ որ իմ անՆերելի մեղքերովս չարժեցի:

Բայց ես աս խաչին տակը պլլըված կըկենամ կըփաԹԹըվիմ՝ ինչպէս ըբաւ Մարիամ մագդաղենացին, ուր որ միածնիդ արիւնը իր խոցկերէն ծորվի պէս վրաս կըվազէ. աս անհուն ովկիանոսին ալեաց մէջ ես իս կըձգեմ կըլըվացվիմ: Քու սաստիկ արդարուԹիւնդալ տեսնալով ցնս աս սուրբ

արեանս մէջ թաթխուած, կատարեալ թողութիւն պիտոյ տայ իմ սոսկալի մեղքերուս. վասն զի արիւնն Յիսուսի է՝ որ լուսոյ իմ աղտոտութիւնս, ներ- կեց իմ հոգիս ու մարմինս. վասն չէ- լնելոյ ըրած մեղքերուս պղծութիւ- նը, այլ գոյն արեան քու Որդւոյդ կերևնայ, որ ամէնեսնալ ՚ի գուշ կը- շարժէ:

Այսօր է օր թողութեան ով Աս- տուած իմ, ինչ որ ինչվան հիմա հինգ ղպայարանաքս գործեցի, ինչ որ քու տան պատուիրանացդ դէմ եօթն մա- հացու մեղքերով ըրի, և քու բարկու- թիւնդ վրաս շարժեցի: Այսօր է օր հաշտութեան ով անհուն գթութիւն. ներեա, քաւեա, և հաշտեա ով ա- եր արարիչ և վրկիչ, որ եկար իս վրկե- լու. դուն անտուտ բերնովդ ըսիր. Ես ես յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսեան ձգեցից առ իս: Այսօր ահա կրբարձրընաս խաչին վրայ, և բարձրանալովդ՝ բիւրաւոր կորսուած մեղաւորները քեզի կրձգուես, կրփրը- կես. եսալ մեկին եմ անունդմէ, իսալ

քեզի ձգէ, քեզի քաշէ վրկելովդ, վասն զի եսալ քու արեամբդ պնդած ծառագ եմ: Տ՛ուր այսօր շնորհք որ՝ սակէց եաքը միշտ քեզ ծառայեմ, և աղքայութեանմէջ քեզ փառաւորեմ ի յաւիտեան. Ամէն:

Թէ որ ուզես՝ կրնաս զուրցել այս օր նաև ան աղօթքները Քրիստոսի խօսքերուն, որ խաչին վրայէն ըսաւ: Տէս եաքերը:

ՈՒՐԱԳ ՀԱԲՈՒԹ

Ի չէշտակ էլման ի խաչէն, և ըսելմանն:

Ո՛նչ օր եղաւ աս օրա՝ յորում Քրիստոս բանն Աստուած մեռաւ, աշխարհ հիս ըսուելղ օրը՝ աշխարհ աւրուղ պէս սպանվեցաւ. մէկ հասիկ անմեղ միաձին Որդին Մարիամու՝ Թագաւորս կըսանին իր ծալիկ հասակին մէջ մեռած: Ամէ, սուրբ Աստուածածին, աչքիդ առջին մեռած զաւակիդ ձեռվընէրը գամբէին հանելով խաչէն ինչէցուցին, գիրկդ տվին: Դուն ալ ողջագուրելով կողբայիր կըսէիր. վա՛ի

ով որդեակ, արդար, անարատ, ով քեզ ասանկ ըրաւ. վախ իմ միածին Որդի, ինչ մեղքիդ համար էր որ քեզ ասանկ անարգական մահուամբ մեռուցին. աւազակ մը չէիր տեսած՝ աւազակներու պէս քեզ ոչ ոչ սպանեցին, հիմնաւ քեզ Թագուհու կը տանին:

Ա՛ս ողբալու ձայնդ լսելով ով մայր ցաւագին, իմ քարացեալ սիրտաս չի դիմանար, կլսիչէ իր ըրած անօրէնութիւնը. Ես ինծմէն կուգամ կբխոստովանիմ մեղքերս: Թէ որ կըմիտաբերես՝ ով ասանկ ըրաւ, ես իս ահա կը ցրցընեմ: Ես կըզուրցեմ իմ ըրած անգթութիւնս: Իմ դատողութիւնները՝ իմ գէշ միտքմտածմունքերս էին՝ որ Յիսուս վիշտով պսակեցին. իմ մարմնասիրութիւններս էին՝ որ Յիսուս ծեծել տըվին. իմ գէշ խօսքերս՝ բամբասանքներս էին՝ որ ծաղրած Յիսուսին լեղի խմցուցին. իմ չարագործութիւնս՝ կամաւորապէս մեղանչելներս էին՝ որ մէկ եղան, Յիսուսին ձեռվը նեղնալ ոտքերնալ խաչին վրայ գա-

մէլ տալին, հիմնաւ մեռուցին, թա-
ղէլու կրտանին։

Բայց աս ըրած անօրէնութիւննէ-
րուս վրայ ես հիմա ցաւելով կըզգամ։
գիտեմ կըճանչնամ որ մեծ մեղքեր ըրի
Յիսուս տանչէլովս, և իրեն արիւնը
թափէլովս. բայց նոյն արիւնն է՝ որ
իմ աստսափէլի մեղքերուս համար թո-
ղութիւն կընդրէ. նոյն Յիսուսին
մեռնիլը ինծի կեանք կուտայ, կալա-
ղակէ. ե՛ս աս մեղաւորիս տեղը կը-
մեռնիմ կըսէ. որ աս մեղաւորը յաւի-
տենական մահուանէ փրկըվի, ինչպէս
փրկիցի աւազակը։

Օրհնեմ ըլլայ անհուն գթութիւն
Յիսուսի՝ որ իմ չէչարչարվելուս հա-
մար՝ ինքը չարչարվեցաւ։ Գովեմ ըլ-
լայ անբաւ մարդասիրութիւնն Յի-
սուսի, որ իմ չմեռնելուս համար՝
ինքը մեռաւ։ Փառաւորեմ ըլլայ Ը-
թած սիրան Յիսուսի, որ իմ թշնամու-
թիւնս չկիշելով իմ քովս կուգայ,
իմ սրտիս մէջը հնորհքով կըբնակի, որ
արքայութեան արժանի ըլլամ։ Ամէն։



Wm. H. Hontamps. de Vanloo

ASCENSION

DE HEMELVAART VAN CHRISTUS

Ի ՏՕՆԻ ՁԱՏԿԻՆ

Յաջորդին առաւօտ։

Տէր իմ Յիսուս, լուսաւորութիւնդ այսօր, որ ինչ խորհուրդներ որ ունի քու սուրբ յարութիւնդ, և ինչ գործքերով ինչ քարոզ ու օրինակ կուտաս, ան խորհուրդները մտածելով ու օրինակ առնելով, եսալ քեզի հետևիմ, սուրբ յարութեանդ պատուոյը շահիմ։

Դուն տէր իմ, սուրբ գերեզմանին մէջէն Արիւթեան քարոզ կուտաս օրինակովդ, որ ինչ ծանր քար դրած էր գերեզմանը գոցելու համար, արգելք քու յարութեանդ, մեզի նեռեցիր, բացիր։ Ան արիւթեան շնորհքը տուր ինձի այսօր սուրբ յարութեանդէդ, որ եսալ իմ ծուլութեան ծանր քարերը՝ որ սատանան վասն բնութեան էգոյեր է իմ հոգւոյ գերեզմանի մէջ մեղքերովս շատեր է,

Եսայ մարգարեի մեկնիչ

լումը։

Եւ ինչպէս որ Թշնամիները քեզ մեռուցին, բայց դուն անմահ չկրկեցար, այլ երեք տարեւար, կենդանացար, իմ հոգիս ալ սատանան իմ մեղքերովս սպաննէց, Թաղեց, եկեր կերեր է Թող չիտար որ երկամ։ Ցուր ինծի սուրբ յարութեան ան շնորհքը, որ զքեզմանը եւ սպաշխարութեամբ մեղքերէս երկամ, հոգիս կենդանացնեմ։

Գերեզմանին բերանը կնքով գոցեցին Թշնամիները, որ չիգան առաքեալները չիբանան, գերեզմանէն մարմինդ չիհանեն։ Իմ Թշնամիսալ սատանան՝ամուր կնքով կնքեր կապեր է բերանս, Թող չիտար որ՝ առաքեալներուն քահանայապետուն մօտիկնամ, բերանս բանամ, մեղքերս խոստովանիմ, մեռեալ հոգիս մեղքերուս գերեզմանէն դուրս հանեմ։ Դուն տէր իմ, տուր քու զօրութիւնդ որ եսայ ինծմէն ան սատանային կնիքը՝ ամենը մկրտի Հայր, Որդի եւ Հոգի Սուրբ յարութեան Հայկիս՝ հրեշտակային յարուցիչ բերնովը մեզ

քէրա խոստովանիմ, Թողութիւն պահանջեմ։

Թշնամիներդը գերեզմանին չորս դին զինուորներդ կեցուցին, որ պահեն, դրսէն մէկը չմօտիկնայ, գերեզմանէն դուրս չվհանէ. դո՛ւ անկարօտ դրսի օգնութեան՝ մէկէն հալածեցիր ա՜նոնք։ Տո՛ւր ինծիալ չնորհք՝ որ իմ թշնամիներս հալածեմ, իմ փորձութիւններս՝ որ չար զինուորներուն պէս իմ չորս դիս փաթթեր են, որ են սատանայ, աշխարհ և մարմին, ասոնք հալածելով մեղքերուս գերեզմանէն դուրս ելլամ։

Նոր մարմին մը առիր երանելի, անչարչարելի, հոգևոր ձրիւք զարդարեալ. քառասուն օր աշխարհիս վրայ կիր, բայց իբր թէ չէիր, աներևոյթ կերպով կըկենայիր, կըքալէիր։ Տո՛ւր ինծիալ որ՝ ալէկ խոստովանութիւնս ընէլէն ետև, փորձութիւններուս յաղթելէն ետև՝ ասօրվընէ իմ կիրքերս մեռցընելով նոր կեանք մը սկսիմ, բոլորովին հոգևոր ըլլամ, սիրտս միտքս աստուածային բաներուն տամ.

աստուածայնին բանէդը ինձի անուշ նայ, աշխարհս լեղընայ. երբոր խաչ քաշեմ, չարչարվիմ, իբր թէ չմահնամ: Աշխարհիս մէջը կրքաչեմ. բայց քեզի նման իբր թէ աշխարհիս մէջը չըլլամ. մեռած ըլլան իմ չար կիրքերս, իմ զգայարանքներս. իբր թէ աչք, ան կաճ, բերան չունենամ. մեռած ըլլայ ինձի հին մարդը մարմնաւոր, որ գոնէ նոր մարդդ հագնուր, տէր Յիսուս, կենդանի ըլլաս իմ սրտիս մէջը:

Առնք են տէր իմ, որ այսօր սուրբ գերեզմանդ օրհնակ կուտաս. տուր ինձի չարութեանդ շնորհքը՝ որ եսալ առնք մտածելով առջի չարութիւնը առնեմ, որ է մեռած հոգիս մեղքերէ վեր հանել, եաքը երկրորդ չարութեանդ արժանանամ. ապաշխարող մարմինս՝ ապաշխարող հոգիս հետ միանալով անանկով գերեզմանէն ելլամ, որ առաքելոց և իւղաբերաց կանանց պէս քու անճառ տեսոյդ արժանի ըլլամ յաւիտեան. Ամէն:

ՅԵՐԻՐՏ ԱՐԱՐԸ։

Ամենակալ և հզօր տէր, այսօր ցը-
յուցիր քու զօրութիւնդ, հրեշտակ-
րուն բազմը ամէն ըրիր, զինուորները
վռնտեցիր, սատանային իշխանութիւ-
նը կապեցիր, քեզի հետ դիրեզմանէն
մեռելները յարուցիր, դժոխքը աւե-
րեցիր, բիւրաւոր հոգիք նահապե-
տաց՝ որ քեզ փրկողիդ կըսպասէին
կրցանկային՝ խալցուցիր, արքայու-
թեան արժանի ըրիր, խաչին նշանաւ
սատանային թշնամոյն վրայ փառա-
ւորապէս յաղթանակեցիր, ինծի ալ
յոյս տալիր երջանիկ յարութեան։

Աղաչեմ ով տէր զօրութեանց, այս-
օր մեծ ուրախութեան օրդ է, պարգև
բաշխելու օր է, պարգևէ տէր իմ սա
ընդհ.քս, որ եսալ քեզ նման խաչա-
կից ըլլամ. իմ մեղաւոր մարմինս, իմ
չար կիրքերս՝ մոլութիւններս խաչին
վրայ գամելով մեռցնեմ, որ քեզ նը-
մանելով արժանի ըլլամ սուրբ յարու-
թեանդ։ Երբոր փուն գաբրիէլեան
դոչէ՝ Արիք մեռեալք, երբոր ամէն

մեռեալք որչափ մարդ որ եկեր է աս աշխարհս՝ պիտոր կենդանանան, առ- ջիզ գան, ոմանք՝ի յարութիւն կենաց մնռնալով, և ոմանք՝ի յարութիւն դա- տաստանաց, ան ահեղը օրը իմ հոգիս ապաշխարութեամբ սրբըված ըլլա- լով, մարմինս փտտած հողէն դուրս ելլալով, արժանի ըլլամ աջը իմ յա- րութեան կենաց. քու օրհնութեան ձայնդ լսելով, որով պիտոր հրաւիրես սրբոց արդարոց դասքը, ան սուրբե- րուն հետ մեկտեղ դասակից ըլլամ արքայութեանդ մէջ, քեզի հետ մեկ- տեղ թագաւորելով, հոգւով և մարմ- նով քեզ փառաւորելով յաւիտեան. Ամէն :

Յերդում ապար :

Հոգիս մեղքերով մեռած՝ քու տե- սութենէդ զրկըված՝ կարօտի կըփա- փագի աչը Յիսուս, սուրբ առաքելոց և խաղաղեր կանանց պէս քու քովդ գալ, քու տեսոյդ արժանանալ քեզ գտնալ, քեզի հետ խօսակից ըլլալ· բայց սատանան իմ սիրտս կըկոտրե ը-

սէլով, Ո՛վ Թաւալեցուսցէ մեզ զվէմն
ի դրանց գերեզմանին : Ահա աս տա-
րակոյսները՝ աս ծուլութիւնէն են՝
որ Թող չեն իտար ինձի քեզի գալու.
աւ՛ր ինձի անոնց ընորհքը՝ որ Ա-
ստուած ապաւինելով քեզի գալու
Ճամբաս առաջ երթամ, ետ չդառ-
նամ : Հրեշտակաց օգնականութեան
արժանի ըլլ՛ ես իմ, որ անոնք ան
ծուլութեան ծանր քարերը մէկդի
նետեն :

Աստուածնց կանուխ խունկ ալօ-
թից կուզեմ պատրաստել անոնց
պէս , սաստանան ալօթքը ինձի ծանր
քար մը կերևցընէ . բերանս չարժել
ալօթելու համար՝ գիտեմ թէ հիւան-
դութիւն կըբերէ . ալօթքալընեմ՝ նէ՝
քեզ չեմ գտնար , այլ պարապ գերեզ-
ման կըգտնամ, համ չեմ առներ ,
չերմեռանդութիւն չեմ ունենար :
Ցաւը ինձի անոնց ընորհքը . ինչպէս
որ քեզ չիգտան նէ՝ լալ ողբալ սկսան ,
ան լացով գտան զքեզ , եսալ զքա-
լով լամ իմ մեղքերս՝ որ ինձի կորսն-
ցընել սրվաւ զՅիսուս . և ան ողբա-

լավ գանամ անոնց չնորհքը ջերմե-
ռանդութեան :

Երբոր լալովալ չկրնան զքեզ տեսնել,
գերեզմանէն չեզատվեցան, կըմտնայ-
ին կելլային, անով հրեշտակաց հետ
խօսակից ըլլալու արժանի ե ղան, հրեշ-
տակներէն աւելիս մխիթարութեան
առնին : Եսալ որ լալով փնտռելով
քեզ չեմ կրնար իմ սրտիս մէջը գըտ-
նալ, վասն զի մեղքերովս չհիմուռ
մեռուցի, սիրոս հոտած գերեզմանի
դարձուցի՝ ուր չկրնար Յիսուս, ա-
նանկ տեղ չկայ Յիսուս չկըտրեմ, ար-
ցունք ապաշխարութեան թափեմ,
հրեշտակաց հետ խօսակից ըլլալով
գոչեմ. Արի տէր, օգնեա մեզ վասն
անուան քո, մի մերժեր զմեզ խոպան
վասն անուան քո. ցոյց ինձ զդէմս քո :

Չիդխմացաւ սիրտդ Մարիամիս ար-
ցունքին, եկար երեցալ՝ բայց փոխ-
ված լեզուիդով ըլլալով չճանչցաւ .
ինչվան որ դուն իրեն անունը տալով
զինքդ ճանչցուցիր : Ասանկալ տէր
իմ, թէպէտ կերևնաս ինծի ի խոր-
հուրդ հաղորդութեան, բայց փոխ-

ված կերպարանքով ըլլալով հոգին տեսակաւ երևնալով իմ տկար հասատքս քեզ չկրնար ճանչնալ. ան առենը դու լսել տուր ինծի քու ձայնդ, կանչէ իս ընդհաքով, բայց հասատքիս աչքը որ քեզ տեսնայ :

Ձիմաղուցիը Մարիամու մօտիկնալ, բայց խօսք տրվիր, ու աւետիս մխիթարութեան խրկեցիր առաքեալն Գերուն : Ասանկ ալ տուր ինծի աւետիս մխիթարութեան, որ հոգւոյս պատմեմ. տառապեալ հոգիս լսելով ընդհաքովդ ուրախանայ, և ուրախութեամբ սպասէ օր մը քեզ տեսնալու յարութեան առենը զքեզ իր տէրը անճառ ուրախութեամբ միշտ և յաւիտեան. Ամէն :

Բանդ Աստուած Յիսուս Քրիս-
տոս, միածին որդի Աստուծոյ. որ
այսօր երկինքը կրթողուս, երկիրս
կենդնաս, յերկնային փառաց յեր-
կրաւոր անարգութիւն կրնտնարհիս,
Աստուածութեանդ կերպարանքին
վրայ հողերէն կերպարանք կառնես:
Փառք տէր իմ, վառք անբաւ խո-
նարհութեանդ քո. հրեշտակք սա-
սանին, սերովբէք զարմանան: Ա-
տեն մը Աստուածութեանդ ահեղ
կերպարանօք իս կանչեցիր, ես չլսե-
ցի, մանաւանդ թէ պատուիրանքներդ
կոտրեցի անարգեցի. այսօր իմ սիրոյս
համար քու փառքդ քու Աստուա-
ծութիւնդ կրմոռնաս, մարդ կըլլաս
որ իս կանչես չհիս. իս աշակերտես,
ու քու անգին արիւնդ թափելով իս
ազատես: Ինչ չնորհակալութիւն ը-

նեմ տէր իմ. օրհնեալ են տէր փառք քո, մեծ են ողորմութիւնք քո, անհուն է խնամատարութիւն քո: Ցիշէ տէր իմ ասօրվան ըրած քու մարդասիրութիւնդ. Թող մի տար որ իմ չարութիւնս պարապ հանիլ տայ աս քու սերդ. մի Թողուր իս ինծի. դուն իս կանչէ ընորհքովդ, գալձնէ իմ մեղքերէս. հանէ իմ արատս հպարտութիւնը՝ որ շատ մեղքերու պատճառ կըլլայ. սիրտս կակղցնէ քու ձայնդ լսելու, քուկին խոնարհութեանդ հետևելու:

Այլ աղօթք:

Ո՛վ տիրամայր կոյս Աստուածածածին, այսօր է օր քու աստուածամայրութեան ընորհաց, որուն մէկը ի մարդկանէ չհասաւ: Հայրն Աստուած ասչափ մարդկանց մէջ միայն քեզի հաւնեցաւ. Որդին Աստուած քու արիւնէդ իրեն մարմին առաւ. Հոգին սուրբ Աստուած բոլորովին ինկնալով քու վրադ հովանի եղաւ. և բովանդակ ամենասուրբ Երրորդութիւնը քեզ

միայն հաճեցաւ: Դու հողեղէն գո-
լով ընտրեալ եղար, մարդէ վեր,
հրեշտակներէ վեր գերազանցեցար:
Բանն Աստուած ըլլալով այս օր խո-
նարհեցաւ ինձի համար մարդ եղաւ.
դու մարդ ըլլալով բարձրացար, Ա-
ստուծոյ ծնօղ եղար: Զարմացան հրեշ-
տակները՝ տեսնալով որ՝ մէկ հողեղէն
մը Աստուծոյ մարմին կուտայ, Ա-
ստուած կը ծնանի, Աստուած կը գրկէ,
ժուռ կածցնէ. խոնարհեցան քեզի
սերոբէք ու քերոբէք, տեսնալով որ՝
աթոռ եղար Բանին Աստուծոյ. օթա-
րան Հոգւոյն սրբոյ. Թագուհի երկնի
և երկրի: Ուրախացաւ մարդկային
ազգը՝ տեսնալով որ իր մէջէն մէյմը
անանկ փառաւորվեցաւ՝ որ հարսն
եղաւ Հոգւոյն սրբոյ. խնամակալ մայր
եղաւ Աստուծոյ, և Աստուածածին:
Էիմա եսալ հրեշտակաց հետ մեկտեղ
ուրախանալով, հրեշտակային ողջոյնը
կուտամ քեզի. Ուրախ լեր բերկ-
րեալդ, տէր ընդ քեզ: Դու որ աւետի
մեծութեան հասար սուրբ Աստուա-
ծածին, որ ամէնէն խեղճ մոգէ դուրս

է, այսօր ինձիալ մեկ ընորհք մը ըրէ, մեկ կատարեալ դարձ մը տուր, զըղջման ու չարաճուճեան ընորհք: Որ չափ որ անարժան ըլլամ քու ընորհացդ, բայց յիշելով ան մեծութեան հանելու օրդ, ան Աստուածամայր ըլլալու ժամդ, կաղաչեմ մի մերժեր իս այսօր. թէ որ կենդանի աչսըրհիս վրայ տեսնայի քեզ, ու աս օրվան փառքդ յիշեցընելով աղաչէի, չէիր իս մերժեր. հիմա կենդանի հաստատուած երկինքը աստուածամայրութենէ աթոռը նստած քեզ կըտեսնամ, կաղաչեմ, մի թողուր իս այսօր զուրկ ի ընորհաց: Ինչպէս որ զարմացան հրեշտակք ասօրվան հրաշքին համար, Աստուծոյ մարդասիրութեանը համար որ մեղաւորաց վրայ ցըցուց, անանկ ալ իմ վրայ տեսնալով քու մեծ ընորհքդ իմ կատարեալ դարձիս համար, զարմանան ալիտոր հրեշտակինէրը, ու քու անունդ փառաւորեն:

Ո՛վ աստղ առաւօտեան լուսաւորէ իս այսօր: Ո՛վ արուսեակ զուարթաբար՝ ուրախացո՛ իս այսօր: Միխիթարդ

վչտացեալոց՝ միխիթարէ իւ: Օգնական դ քրիստոնէից՝ հասիր ու օգնէ ինձի : Ապաւէնդ մեղաւորաց ազատէ իս բե լիարին ձեռքէն և իմ մոլութիւննէ ըէս. որդի Աստուծոյ ըրէ իս , որ եւ սալ քեզ ու քու Որդիդ միածին փա ռաւորեմ յաւիտեան . Ամէն :



Տե՛ր իմ Յիսուս Քրիստոս, քու վարդդ հայելի օրինակ տալիր ինծի. խորհրդով կատարեցիր ամէն ըրածդ. առաջ չարչարվեցար, խաչեցար, եաքը յարուԹիւն առիր, այսօր փառօք համբարձար երկինքը. ցոյցու ցիր ասով ինծի որ՝ առաջ պէտք է նեղուԹիւն և խաչ քաշել, եաքը ան քաջածնէրուն համար փառք վայելել:

Առաքեալները կանչեցիր՝ որ ձիԹենեաց լեռը ելլան. ուր որ սկսեր էիր քաշել քու սուրբ չարչարանքդ՝ հոն եաքի խրատանէրդ՝ եաքի ողջոյնդ տալիր: Իմ հոգիսալ ահա կեցած է այսօր անանկ տրտմած, կրըպասէ որ՝ դուն կանչես քովդ նեղուԹեան լեռը ձիԹենեաց, որ սրտովդ մաքովդ հեռընամ վեր ելլամ աս աշխարհէս իբր բարձր լեռան վրայ.

ձգեմ զղուիմ աշխարհային բանէրէ, և բարձր երկնային բանէրու փափագիմ. ինչնեղութիւն, ինչ խաչ իրը կեա՝ սիրով քաշեմ, Հոգւոյն սրբոյ շնորհքովը միխիթարվիմ:

Երբոր բաժնվելու եղար, հետեր նէին խօսելով իրը Թէ մեղքննալով բաժնվեցար, Հոգին սուրբ խրկել խոստացար, որ սիրտ առնեն: Իմ հոգիաս որ բաժնված է քենէ, կրկին դրէ քու կին սիրտ տալդ. կարօտ է Հոգւոյն սրբոյ շնորհքին միխիթարութեանը:

Ամէն խօսքէն եաքը՝ ձեռքդ համբառնալով վեր վերցնելով օրհնեցիր առաքեալները, անանկ համբառնալ սկսար: Ա՜խ, յիշէ տէր իմ ասօրվան ըրած քու կին մարդասիրութիւննէրդ: Ո՞ւր են տէր, ողորմութիւնք քո առաջինք: Եաւալ այսօր սուրբ լեռը եղած պատարագիդ առջին, քու քովդ ընկած կեցած եմ զքեզմամբ ու խոստովանութեամբ, քեզ կըսեմ նամ սուրբ խորանին վըրայ: Իմ վըրայալ ձեռքդ դիր, իաւ օրհնէ, որ մեղքերս սրբվին

հոգիս լուսաւորվի. Հոգւոյն սրբոյ շնորհքը խրկէ որ ասկէց ետքը միշտ քու խրատներդ բռնեմ, պատուիրանքներդ սիրով պահեմ. շնորհքով հոս քեզնէ չհրաժարվիմ որ՝ արքայութեան մէջնալ միշտ քեզի հետ միասին յաւիտեան. Ամէն:

Աղօթք:

Թագաւոր Թագաւորաց տէր իմ Յիսուս, այսօր է քու Թագաւորութեանդ օրը. ասանկ փառաւոր հանդիսաւոր օրը՝ երկրաւոր Թագաւորները պարտասականերուն կընծերեն, բանտարկեալները կազատեն, աղքատներուն պարգև կրբաշխեն: Քանի՛ անգամ պիտոր ըլլայ քու շնորհացդ չափը ով Թագաւոր երկնաւոր. նայէ իմ խեղճութեանս վրայ. մի Թողուր իմ այսօր առանց շնորհացդ. որչափ անարժան ըլլամ՝ Թողութիւն տուր, պատէ այսօր իմ անիրաւութիւնս մեղքերուս պարտեաց Թուղթը. ազատէ իմ սատանայի կապանքներէն, մեղաց բանտէն, և մեկ ողորմութիւն մը՝ մեկ

Շնորհք մը տուր ինծի, որ ասկէց ետքը սիրտս միայն բոլորովին աշխարհիկ կարեմ, երկինքը առ Աստուած համբառնամ։

Եւ երբոր սատանան իս յուսահատցընէ, հաւատքս խաբարեցընէ, որ քեզ չեմ տեսնար, աղօթքէ համ չեմ առնէր, աղօթքիս մէջը ամէնևին ջերմեռանդութիւն չեմ խմնար, քու սուրբ պատկերդ մտացս առջևէն աներևոյթ կըլլայ, սուրբ ձանդ կըհեռընայ, անոր տեղը աս աշխարհիս պղտոր ու ամպոտ փորձութիւնները կերևան աչքիս։ Ան ատենը խրկէ տէր իմ՝ քու երկու հրեշտակներդ. ինչպէս որ խրկեցիր առաքեալներուն, որ անոնք խօսելով իս միխթարեն, հաւատքս զօրացընեն, թմրութիւնս ափշութիւնս փարատեն, ցիտուս նորէն քեզի պիտոր գայ ըսելով աւետիս ուրախութեան տան։ Նաև առաքելոց պէս պայծառ հաւատքով ջերմեռանդ աղօթքի հետ ըլլամ, միշտ քեզի ծառայելով Հոգւոյն Շնորհացդ արժանի ըլլամ. Ամէն։

Յառաջին ասոր։

Ով հոգի երկնային՝ որ ամէնուն սիրտը հոգւոյդ եռանդ կը ձգես. չունիչ անմահարար՝ որ հիւանդացեալ հոգիները կը զնուցանես. ցող խնամալի՝ որ երկինքէն ինկնալով եկեղեցւոյ պարտիզին մէջ զարմանալի ծաղիկները կը բուսցընես, մեղաւորները կը սրբես, արդարները մարդկութեան պսակներն կը հասցընես, միտքը կը բանաս, կամքը կը զօրացընես։

Ո՞ր մեկը ըսեմ քու անբաւ զարմանալի արուեստներդ Հոգի սուրբ. ո՞րը ըսեմ՝ ինծի հալ այսօր մեկ նոր շնորհք մը շնչես, որ եաալ փոխվիմ։ Հաւատքիս աչքը բացվի, միտքս արթննայ, ան դիւի բանները յայտնի պայծառ տեսնամ, աս աշխարհիս ուռայնութիւնը խնամամ, զգուիմ անոնցմէ։ Յոյսս զօրանայ, զօրանալովը՝ սիրով

փափագով պահեմ քու պատուիրանքներդ : Սէրս վառվի , վառվելով՝ մեղքէ հեռընամ, Աստուածոյ ճամփան բռնեմ, աչքս սուրբ մաքուր պահեմ, ականջս ընդունայն դատարկ խօսքերէն հեռըցընեմ , լեզուս աստուածային օրհնութեան պարապեցընեմ, և ամէնն զգայարանքներս սուրբ պահեմ :

Ինչ մեղքեր որ ըրի ընդդէմ Հոգւոյդ սրբոյ՝ ի մանկութենէ , կամ յուսահատութեամբ, կամ յանդգնութեամբ , և կամ արհամարհութեամբ քու նեղքին ընչմանց դէմ, ամէնինալ զղջմամբ խոստովանիմ . խոստովանութեանս առէնը՝ մաքիս ալեկոծութիւնը որ սատանան կը խառնէ , դուն փարատէս, սուրբ Հոգւոդ ողորմութիւնը չերմեռանդութեամբ առնելու արժանի ընես :

Առնիք և ուրիշ զանազան շնորհք ներգ խնդրեմ տուր ինծ այսօր . բայց գանձդ բաշխելու , վասն զի առանց քու շնորհացդ իմ ամէնն ըրածս պարապ է , մեռեալ է . դուն Հոգիդ սուրբ

կենդանարար, եկ և կենդանացո՛ վասն արդեանց Յիսուսի միածնի, որ քեզ նորէն մեզի պարգեւել տվեալ :

Յերիցուդ առաջ :

Ո՛վ Հոգի՛ սուրբ տէր և կենդանարար, կընչես ուր որ ուզես, կը-պարգեւես որին որ ուզես, կուտաս ինչ պարգև որ ուզես. այսօր աստիկ հովուանման ինչնալով վերնատան մէջ՝ ձկնորսները առաքեալ ըրիր, բան ձկտացողները վարպետ քարոզիչ ըրիր, խօսիլ չկրցողներուն՝ զանազան լեզուներ սորվեցուցիր : Ո՛վ անմահական բաժակ, այսօր աստուածային բաժակէդ մէկ գինի մը խմցուցիր՝ որ զմայլեցան, երկրաւոր մարդիկ երկնային եղան, խաչէն փախչող առաքեալները՝ սիրով փափագով տանջանք քաշել սորվեցան :

Ես ամէնէն կարօտ եմ տէր իմ. հոգիս անապատ դարձեր է, զուրկ ծնացեր է շնորհքէդ. վասն զի ինչ շնորհք որ տալիր միրուռնեամբ և ուրիշ խորհուրդներով ամէնինալ

կորնցուցի մեղքերովս : Այսօր ին-
ձիալ չնչէ մեկ չնորհք մը՝ որ ան երկ-
նային բաժակին համը ետալ առնեմ.
հոգիս ծարաւը բժշկվի. ետալ զո-
րովին փոխվիմ, երկնային բաները
անուշ երևնայ, երկրաւոր բաները
առեղծ ըլլայ : Ամէնէն աւելի՝ ինչ-
պէս առաքեալները միշտ աղօթից
հետ պարապելով արժանի եղան
քու չնորհքիդ, տուր ինծի այսօր չնորհ
աղօթից, որ ուզելով փափագելով
աղօթքս ընեմ. ան չորութիւնը՝ որ
աղօթքիս առեղը սատանան կըբերէ
ինծմէն հեռնայ. միտքս չցնդի,
ձանձրութիւնը վրայէս երթայ. երբ-
որ սատանան աշխարհային հոգը մը-
տածմունքը աղօթքիս մէջը միտքս
կըբերէ իբր հարկաւոր մտածմունք,
անանկով աղօթքս բոլոր պարապ հա-
նել կուտայ, անպտուղ կընէ, ան ա-
ռեղը տուր ինծի քուկին անմահա-
կան բաժակին հոգևոր զմայլումը՝ որ
աս մրտածմունքները փարատէ, երկ-
նային մրտածմունքները իս զմայլեցը-
նէ, ինչպէս որ սրվիը քուկին սուր-

բերուդ : Ընանկով եսալ անունց հեռ
Մկոտել յաւխաեան փառաւորեմ
զամենասուրբ ղերրորդութիւնն զա-
հայր, և զՈրդի, և զՀոգիդ սուրբ.
Ամէն :

Յերգ առաջ :

Ինչ հնարհ լեզուաց էր՝ Հոգիդ
սուրբ, որ այսօր պարգևեցիր առա-
քեալներուն. և ինչ հնարհ լսողու-
թեան էր, որ այսօր պարգևեցիր լսո-
ղներուն : Յիսուս միածին երկնային
խրատներ կրիսօսէր, Մկ քանի հոգիին
սիրտը հալիլ կըշարժէր. Ձի էև էր
Հոգի : Խակ այսօր քովինն լեզուաց
պարգևովդ՝ Մկ անդամ խօսեցաւ
սուրբն Պետրոս, անուն իրեք հազար
հոգիի սրտերնին կակղցուցիր, հա-
լած մոմի պէս ըրիր, հաւատքի բե-
ռիր, որ զղջումով ապաշխարեցին,
մեղայ գոչեցին : Ախ, տեր իմ, իմ
սիրտաալ քարի պէս պինացեր է, մեղ-
քի մէջ կորեր է, ասչափ հոգևոր
խրատներ կըլսէ՝ չնկակըղնար. ա-
չափ հոգևոր խորհուրդներ կաունէ՝

մանաւանդ խորհուրդ սուրբ Հաղոր-
դութեան, մեկ չահ մը չիգտնար։

Դուն տէր, այսօր գանձդ շնորհաց
բացեր ես, կըբաշխես քուկին սիրե-
լիներուդ. մի նայիր իմ անարժանու-
թեանս վրայ. տուր ինծի լաւ գտնուս
ու շնորհք այսօրուան գարձողներուն
պէս, որ տեսնամ իմ անօրէնութիւնս,
զղօիմ անոնցմէ, զղջամ ապաշխա-
րեմ քու շնորհքովդ. և քու ծառադ
ըլլամ, քեզ փառաւորեմ հոս և ար-
քայութեան մէջ յաւիտեան. Ամէն։

Ի ՏՕՆԻ ՎԱՐԴԱՎԱՌԻՆ

Յաղագս սուրբ։

Աղքատ խնամողութիւն Յիսուսի
տեսանդ խոյ, առաջ խաչ քաշել
քարոզեցիր, տեսար որ՝ ծանր երե-
ցաւ խաչին նեղութիւնը, խնաման որ՝
եղբը ինչ փառաց պիտոր հանին
խաչ քաշողները, ցըցուցիր այսօր
քուկին վառդդ։ Ինչ երջանիկ ժամ,
յորում սուրբ առաքեալքը աս մարմ-

նոյն միջը ըլլալով արժանի եղան Աստուածածնէ փառքը տեսնալու, ինչ զնայլուձն, ինչ ուրախութիւն, որ իրենք զիրենք կորնցուցին, մոռցան մարմինը, մոռցան ամէն աշխարհի ծանրութիւնը՝ մէկ քիչ մը Աստուածածնութեան փառքը տեսնալնուն համար: Հապա ինչ մայրել պիտոր ըլլայ ինծի, երբոր բոլոր Աստուածածնութէ փառքը պիտոր տեսնամ արքայութեան մէջ:

Դիտեմ որ մինակ ան առաքեալնէրուն ցոյցուցիր քու փառքդ, որոնք որ մարդիկներէն՝ քաղքին միջէն՝ դուրս հեռցուցիր, բարձր լեռը հանեցիր: Եսալ կառաջադրեմ ես իմ, որ աս կէց եղբը սրտովս մտքովս դուրս ելլամ մարդկային դէշ վարմունքներէ. երկրաւոր պարապ զբաղմունքներէը՝ մարմնաւոր աւելորդ մոմոյքներէը միդի ձգեմ, վերին լեռը ելլամ, վերին երկնային բաներէը մտմտամ, աստուածային պատուիրանքներդ բընեղելով սիրտս սուրբ պահեմ, որ քու խօսք տրված երանիին հասնիմ. Եթա նէ այնոցիկ՝ որք սուրբ են սրտիւք, ի

նոքա զԱստուած տեսցեն : Դուալ տէր իմ մի արհամարհէր իս , մի յիշէր իմ չարութիւնս այսօրուան փառացդ համար . ինձ ալ ցոյց այսօր քու սուրբ երեսդ աս աշխարհիս մէջ շնորհքով իս լուսաւորելով , անդինալ դէմ յանդիման քեզ ինձի երևցնելով :

Յերէմիա մարգարէ :

Ամբէջք պիտոր հանիմ տէր ցիսա ան աստենին՝ որ հոգիս բոլորովին հեռընալով հրաժարեալով աշխարհային ուռնայն բաներէն , հոգևոր աչքով քեզ տեսնայ այլակերպեալ , մտածական աղօթքներով քեզ տեսնայ առաջ մարդկութեամբդ խաչով փշով պսակեալ , եղբը աստուածութեամբդ փառաւորեալ : Պատարագին մէջ դէմ յանդիման քեզ տեսնայ այլակերպեալ ի խորհուրդ հաղորդութեան իմ սիրոյս համար , միտքս բոլորովին քեզի գայ , կամքս բոլորովին քեզ սիրէ , քու վրադ խօսի . ինչպէս որ Մովսէս և Եղիա քովդ էկան ,

քուկին չարչարվելը կզգիչեին, կըհաս-
լաթեին :

Ան առենը իմ բանականութիւնսալ
սրբոյն Պետրոսի պէս զմեզ լեմ ասա-
ղակէ . Տէր, բարւոք է մեզ աստ լի-
նել . և արասցուք երիս տաղաւարս :
Տէր, աղեկ է մեզի աստանկ մինակու-
թեան մէջ կենալնիս . չկիշեինք թա-
գաւորական անէրը, չկիշեինք աշխըր-
հիս զուարճութիւնը, հապա մինակ
աս սուրբ մտածմանց լեռը նստինք,
թէև տաղաւարի (չատրըի) տակ ըլ-
լանք . վասն զի ուր դուն ես, հոն տա-
ղաւարնալ դրախտ կըլլայ, աքբայու-
թիւն կըգտանայ : Հոս կենանք աէր
իմ, մէկտեղ կենանք քեզի հետ՝ որ
ես ճշմարտութիւն և կեանք . մէկմէ-
կէ չիբաժնըվինք յաւիտեան : Թող
մի տար ինձ Որդի Աստուածոյ, որ իմ
առջի չար սովորութիւններս մեզքերս
իս քենէ բաժնեն . հապա հոս միշտ
հոգևոր կենօք քեզի հետ կենամ, որ
անդինալ երանական ձայնը լսելու
արժանի ըլլամ . Դա է որդի իմ սիրե-
լի. աբոլոր Աստուածութեան վաւքդ

դէմ յանդիման տեսնամ, որ է երա-
նելութիւն յաւիտենական :

Ի ՏՕՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ

Յաւելին առաջին :

Այսօր է օր գերազանց մեծութե-
քեզ համար ով վառաւորեալ տի-
րուհի, և բոլոր աշխարհիս օր ուրա-
խութեան : Այսօր հրեշտակաց բազ-
մութեամբ վերափոխեցար, բարձ-
րացար, կուսանաց՝ մարտիրոսաց՝ ա-
ռաքելոց դասերէն վեր ելլելով ընդ
այմէ Փրկիտոսի Նասար : Ամենասուրբ
Երրորդութիւնը էօթնարփեան ընդ-
հօք քեզ զարդարեց, թագուհի երկ-
նի և երկրի քեզ պսակեց, գանձապետ
ամենեն ընդհաց Հոգւոյն սրբոյ քեզ
դրաւ : Ամենեքնալ քեզ երանի տա-
լին երկինքը, մենք ալ քեզ երանի
կուտանք երկրիս վրայ :

Առանկ ուրախալի օրդ ով հրաշա-



W.H. Bartlompe te Veerlee

ASSOMPTION

DE HEMELVAART VAN MARIA

չափ աւելի չատցաւքու զօրութիւնդ օգնելու հասնելու ամէն հաւատաց եղոց վրայ. ինչպէս որ արևը ծրչափ աւելի բարձրընայ, այնչափ աւելի կը տաքցընէ աշխարհս: Եսալ մեկն եմ ան հաւատացեալներէն. իրաւ իմ անիներելի մեղքերս մտածելով կրնա սահատիմ, բայց քուկին այսօրվան փառքդ՝ թագաւորութիւնդ մտածելով սիրտ կառնեմ կըքաջալերիմ. ես ինծմէն խոստովանելով քահանային առջին մեղայ կըսեմ, որուանց կը ցաւիմ:

Ա՛ղջմանս վրայ նայելով քուկին հզօր բարեխօսութեամբդ՝ և մայրա կան գթութեամբդ՝ կատարեալ թո ղութիւն առնես այսօր իմ մեղաց. հաշտեցընես իս Աստուծոյ հետ, շնորհք տաս ասկէց ետև Աստուծոյ ծառայելու, որ արժանի ըլլամ քուկին փառքդ տեսնելու Փրկիստոսի թագաւորին հետ, և միշտ օրհնելու յաւիտեան. Ամէն:

Յերեւոյթ ա՜՜՜ :

Օրհնեալ փառաւորեա՛լ ըլլայ ա-
մենասուրբ Երրորդութիւնը՝ որ քեզ
միայն ընտրեց իր տեղծուածոց մէջ,
մարդ հողեղէն՝ մայր Աստուծոյ ը-
րաւ . մեր երկրէն զքեզ առաւ եր-
կինքը հանեց , հարսն Հոգւոյն սրբոյ
և թագուհի ամենայն սրբոց, տիրուհի
երկնի և երկրի պսակեց : Ձու թագա-
ւորութեամբդ սուրբք կուրախանան,
հրեշտակները կրզմայլին , երկրաւոր
մարդիկ կրցնծան կրօծնեն , մեղաւոր-
նեը կրմխիթարվին : Քանի՛ քանի՛
մեղաւորներ փրկվեր են քու ձեռ-
քովդ սուրբ Աստուածածին , որ ա-
ռանց քեզ՝ հասնելու չէին փրկու-
թեան . անով քու փառքդ մեծցաւ ,
Որդւոյդ թագաւորութիւնը ընդար-
ձակվեցաւ , ամենասուրբ Երրորդու-
թեան պատիւը բարձրցաւ :

Հիմա ինծի պէս մեղաւորը՝ որ ամ-
մինէն յուսահատված ոտքդ ինկեր
կուլայ կաղաչէ , թէ որ փրկես՝ ո՛ր-
չափ աւելի քու փառքդ կրմեծնայ ,

ամենասուրբ Երրորդութիւնը կրկա-
ռաւորվի, Թշնամին սատանայ ամե-
Թով կրծայ: Աչանկ էնէ ով մայր ո-
ղորմութեան, ով Թագուհի գանձա-
պետ չնորհաց, իսալ փրկէ այսօր, ա-
զատէ մեղքերէ, մի ձգեր երեսէ: Որ-
դին Աստուծոյ ասոր համար քեզ աս
փառքս հասցուց. ինչպէս որ սատա-
նան Եւայի ձեռքով մարդիկ կորսնց-
ուց, Յիսուսալ ուզեց քու ձեռքովդ
մարդիկ խալսցնել, մեղաւորները
փրկել, որոնց գլուխը ես եմ՝ իմ մեղ-
քերուս ծանրութեանը համար:

Այլ մեծ է քու փառքդ, քու բա-
րեխօսութիւնդ, քան Թէ իմ մեղքերս.
իս փրկելու համար Աստուած քեզ
աչքի փառքը փառաւորեց, աս բա-
նիս համար Թագուհի պսակեց այսօր:
Քուկին ձեռքդ է Աստուծոյ անհուն
չնորհքները, անհուն ողորմութիւնը,
որ մեծ է՝ քան Թէ իմ մեղքերուս մեղ-
ծութիւնը ով տիրամայր. այսօր մեկ
խօսքով Թողութիւն կրնաս առնել, և
զղջման չնորհք, որ ես ալ բոլորովին
փոխվիմ, առ Աստուած դառնամ,

Հնացած առեհնս բարեգործութեամբ անցընեմ. քու քովդ գալու, քեզ և Յիսուս փառաւորելու արժանի ըլլամ. Ամէն։

Ի ՏՕՆԻ ՆՆԴԵԱՆ

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

*Ս*ՏՂ. առաւօտեան սուրբ Աստուածածնին, որ մութ գիշերվան մէջ մխիթարութիւն կուտայ, ու առաւօտվան ճառիկ ըլլալը կիմացընէ։ Արշալոյս աւետաւոր՝ որ արեւուն գալը կիմացընէ, ամէն աշխարհ կուրախացընէ։ Այսօր մեզի եղար սուրբ Աստուածածին արշալոյս և առաւօտ ուրախարար. քուկին ծննդեամդ անմխիթար որդիք Ադամայ աեւան մէկ լոյս մը խաւարած գիշերվան մէջ, եմացան գալուստը արեգական արդարութեան Քրիստոսի, և ուրախացան։

Հիմա եասլ մէկն եմ անմխիթար

ձեացողներէրէն . մեղքերու մէջ կորսը-
ված ըլլալով, ուրիշ բան չունիմ, բայց
եթէ մեղքերէս զղջալով քու աւլիդ
կենաս խեղճ ողորմելի, զգկված ամ
մէն չնորհքէ : Դու որ ասանկ ուրա-
խութիւն եկար աշխարհի այսօր մայր
սուրբ , ասանկ փարատեցիր մեղաւո-
րաց ու արդարոց տրտմութիւնը , ա-
սանկ ուրախութեան օրդ՝ մի թողուր
զիս իմ խեղճութեանս մէջ, մի յիշեր
իմ անօրէնութիւնս, տուր ինձի պէտք
եղած չնորհքները : Ան հոգևոր ու-
րախութիւնը որ աշխարհ բերիր , ին-
ծիալ պարգևէ այսօր, որ է ազատու-
թիւն 'ի մեղաց, անմեղութիւն , և
խղճմտանքը մաքուր պահել: Տուր
ինձի նորէն սուրբ աւազանին անմե-
ղութիւնը՝ որ ես կորնցուցի . տուր
ինձի անկեղծ եռքը առանց մեղաց կե-
նալ , խղճմտանքս անարատ մաքուր
պահել. անանկ անմեղ ապրելով միշտ
Աստուծոյ հետ հաշտ ըլլամ , հոգե-
ւորապէս ուրախ ըլլամ, որ մեռնելէս
ալ յիվանիամ՝ յոյսով մաքուր ըլլալով
Ո՛վ սիրամայր սուրբ Աստուածա-

ծին, ամէն իշխանները իրենց ծնունդեան օրը պարգևները կրբաժնեն, յանցաւորներուն թողութիւն կուտան, իրենց հնօրեներուն խնդիրքին կկատարեն։ Դուն ալ շատ հրաշքներ ըրած ունիս քու սիրելիներուդ այսօր, որ է օր քու սուրբ ծննդեանդ։ շատ վըշտացեալներ այսօր գտեր են քենէ ողորմութիւն և միխիթարութիւն։ Հիմա եսալ որ դուռդ եկեր, քու սուրբ ծնունդդ բարեխօս բռնելով կաղաչեմ, ես պարապ մի հաներ, ետ մի դարձըներ, իմ ըրած անօրէնութիւնս նեբա մի յիշեր ասանկ ուրախութեան օրդ։ Խոստացեալ մեղաւոր մինեմ, տուր ինծի շնորհք կատարեալ զղջման. չունիմ յարատևութիւն գիտեմ, նորէնոր կմեղանչեմ. տուր ինծի շնորհք յարատևութեան՝ որ միշտ հեռու կենամ մեղքերէ, աղէկ մը խոստովանելով զղջման մէջ պահեմ իմ սիրտս։

Թէ որ միածին որդիդ պարապ ետ չդարձուց քանանացի կուսապաշտ կինիկը իր շատ աղաչանքին համար,

դու մայր կթուրեան, գանձասիրա
ստուածային չնորհաց, ինչպէս
պարապ դարձընես իս աստանկ ուրա
խութեան օրդ: Այլ նայէ երկնքէն
իմ վրայ, որ բոլորովին ողորմելի եմ
ինացած. այսօր իմ ինդիրքսաղ կա
տարէ, որ ինացած կեանքիս մէջ բարի
գործքեր ընելով զՔրիստոս փառա
ւորեմ. յաւուր արդար դատաստա
նին քումկին բարեխօսութեամբդ փրը
կուած ըլլալով, փառք պարծանք ըլ
լամ քու մեծութեանդ առաջի ամե
նայն սրբոց. Ամէն:

Ի ՏՕՆԻ ԽԱՉԻՆ

Յաղագս աղօթից:

Վանդ անհուն մարդասիրութեդ
տէր իմ Յիսուս Քրիստոս. հերիք չե
ղաւ որ՝ ինծի համար մարդացար, աշ
խարհ եկար, այլ նաև չարչարվեցար և
խաչվեցար իմ սիրոյս համար. ես ալի

տոր քաշէի սատանայի ձեռքէն տան-
ջանք յաւիտենական, դո՛ւ Որդիդ մա-
ծին անչափ սիրեցիր իա՝ որ յանձն
առիր քու խաչվէրդ արդարութիւն
հօրն երկնաւորի լեցընել իա դժոխոց
տանջանքէն խալսցընել, արքայու-
թեան որդի ընել։ Ինչ փոխարէն կըր-
նամ ես հատուցանել, բայց եթէ
միշտ յիշելով գոհանալ և շնորհակալ
ըլլալ։ վասն զի թէ որ մէկ հասարակ
մարդ մը ընէր աս բարեբարութիւնս,
ընծանէր տանելով շնորհակալութիւն
ընելու պարտական կըլլայի։ որչափ
առատ քեզ տեառնդ իմոյ, որ ես ա-
րարիչ իմ, Աստուած իմ, այսօր խա-
չիդ եղար նաև փրկիչ իմ։ Եւ նոյն
սուրբ խաչը ինծի դէղ՝ զօրութիւն՝ և
ապաւէն տվիր, որ ինչպէս Խարայէ-
լացիները երբոր պղնձէ օձին
վրայ կընայէին, օձին խայթոցէն կը-
բժշկէին, եսալ սուրբ խաչին վրայ
նայածիս պէս՝ամէնն սատանային հին
օձին փորձութիւններէը կըփարատին,
հոգւոյս հիւանդութիւնը կըբժշկվի,
սկարութիւնս կըզօրանայ, համբե-

բութիւն կըսորվի: Ընոր հանար ցըն-
ծութեամբ կերգեմ ըսեըվ փառք
սուրբ խաչիդ քո տէր, որ ասանկ զո-
րաւոր դէղ հաստատեցիր ինծի հա-
մար:

Յերէրդ ա---ր:

Երկրպագելով այսօր սուրբ խաչիդ
տէր իմ Յիսուս, երկու ընորհ խնդրեմ
պարգեւել. մէյմը որ՝ քու սուրբ վա-
րուց օրինակը տպաւորվի իմ վրայ.
ինչպէս որ առած մարմինդ՝ Ադամայ
մեղաւոր մարմնոյ նման ըլլալուն հա-
մար՝ բոլորովին խաչին վրայ գամեցիր
մեռուցիր, եսալ իմ մարմինս կրթու-
թեամբ և ճգնութեամբ խաչին վրայ
գամեմ, ճնշեմ, ադամային չար կիր-
քերս խաչին վրայ մեռցնեմ: Եւ ինչ-
պէս որ ադամային մարմնովդ մեռ-
նելով, նոր մարմին մը առիր գերեզ-
մանէն յարութիւն առնելով, որ բո-
լորովին անկիր էր, եսալ աս մեղաւոր
մարմինս մահացընելէն ետև, յարու-
թիւն առնեմ իմ մեղքերէս, և նոր
մարմին հոգևոր առանց կրից, հնա-

զանդ աստուածային պատուիրա-
նաց :

Երկրորդ ընդհանուր տաս ինձի, որ
արդարի խաչ խրիկ իմ վրաս աստուա-
ծային կարգաւորութիւնը, ամենին-
ալ սիրով համբերելով քաշեմ. քու
սուրբ խաչիդ մեկ նեղբին զօրութիւն
և ուժ մը առնեմ. վասն զի թէ որ
դուն արդար անմեղ էիր, և իմ սիրոյս
համար ասչափ խաչ քաշեցիր, քանի՞
աւելի պէտք է որ ես մեղաւորս քա-
շեմ: Բայց քու սուրբ խաչիդ զօրու-
թեանը կարօտ եմ, քու բաժակդ ըմ-
պելու՝ քովինն ընդհանդ պէտք է.
ինչպէս որ երկու սիրելի առաքեալ-
ներուդ ընդհանեցիր ըսելով, Քաժակին
իմ ըմպելիկէք. անով զօրացան, այնչափ
չարչարանք քաշեցին, անանկալ ընդհանդ
ինձի այսօր ան սուրբ խաչիդ մեկ նոր
զօրութիւն մը, որ հոս քաշեմ, ան-
դին չքաշեմ. սիրով քաշեմ մեղքե-
րուս համար՝ աստուածային կամքը
կատարելու համար, և քու սիրոյդ
համար, որ եւ յաջնալ երկնաւոր Հօրմէդ
արժանի ըլլամ մեկտեղ քեզի հետ
նստելու ի յարքայութեան. Ամէն :

Ո՛վ ամենօրհնեալ կոյս Մարիամ, սիրելի հարան Հոգւոյն սրբոյ, լի ընդ հօք. երբոր կրնամ ասօրվան ըրածդ՝ կրզարհուրիմ կրդողամ իմ վրայ նայելով: Դուն բոլորովին սուրբ ըլլալով աւելի սրբութեամբ Աստուծոյ ծառայելուզեցիր, անոր համար պզտիկուց դուն քեզ բոլորովին Աստուծոյ ընծայեցիր. եաքնալ ամէն օր՝ ամէն ժամ Աստուած օրհնելու հետ եղար, ու իրեն ծառայելու:

Ես պզտիկուց մեղաւոր ըլլալով ծանր անօրէնութեամբ լեցուած ըլլալով, ես իս ո՛չ Աստուծոյ կընծայեմ, և ոչ իր սուրբ պատուիրանքները պահելու հոգ կունենամ. Աստուծոյ ծառայելու չեմ նայիր, հապա իմ կամքս կատարելու. առջի ըրած մեղքերսալ չեմ ապաշխարեր, մանաւանդ թէ նոր մեղքեր կրգործեմ. ասանկ

կով բոլորովին նեւրհակ վարք կըվա-
րեմ քու սուրբ վարուցդ դէմ։ Դու
պզտիկուց Աստուծոյ ծառայօղ, ես
պզտիկուց Աստուած արհամարհօղ.
դու պզտիկուց Աստուած փառաբա-
նօղ, հրեշտակաց դասակից, ես պզ-
տիկուց Աստուած անարգօղ իմ չար
գործքերովս, և գործակից բեզնարայ.
հիմաալ չունիմ արիւրթիւն զքեզմամ
ընեալու, ծուլութեան սատանան իս
գերի է ըրեր։

Ա՛յլ այսօրվան տօնին շնորհացը
համար ըլլայ, մեյմը վերէն երկնքէն
նայէ մեր սուրբ իմ խեղճութեանս
վրայ, ինձի օգնութիւն հասկը. տուր
մեզ շնորհք մը որ՝ աս օրէս ետև ես իս
Աստուծոյ ընծայեմ, սիրտս միաքս
բոլորովին Աստուծոյ նուիրեմ. աս-
օրվան քու ընծայումդ ինձի օրինակ
առնելով, փոխանակ որ ինչվան հիմա
աշխարհի՝ մարմնոյս՝ ու սատանայի
ծառայեցի, աս օրէս ետև իմին մնա-
յած օրերս Աստուծոյ ծառայութեն
մէջը անցունեմ։ Ան աղօթքներդ՝ որ
քեզ ընծայելու առեներ Աստուծոյ

ըրկր , ան վառված սէրն աստուա-
ծային՝ որ այսօր ցրցուցիր , ան խօս-
քերը որ Աստուծոյ հետ խօսեցեիր
քեզ նուիրելուդ առիթը, եւ սէր անունք
կընուիրեմ Աստուծոյ , խմին աղօթ-
քիս հետ խառնելով Աստուծոյ կը-
մատուցանեմ՝ , որ քու բարեխօսու-
թեամբդ խաղ նորէն ընդունի , նո-
րէն սրբէ, ազբայութեան երկնից ար-
ժանի ընէ. Ամէն :

Ի ՏՕՆԻ ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ

Ո՛վ երկնաւոր Թագուհի , ով
հարան անարատ Հոգւոյն սրբոյ , որ-
ջափ սիրելի եղար Աստուծոյ որ չի՛ծը-
նած՝ սկսար սիրվիլ : Ո՛րջափ հաճոյ
էիր Աստուծոյ աչքին՝ որ Ադամայ
զաւակ էիր, բայց Ադամայ մեղքը չու-
նեցար , ազատ եղար սկզբնական մեղ-
քէն : Մարդ էիր՝ բայց չլացած առե-
նեղ մարդու մեղքէն խալըսեցար, մէկ
պատառ մը վրադ չիդանըվեցաւ , մէկ
անուն մը մեղքի վրադ չիփակաւ . ա-

նոր տեղը բոլորովին Հոգւոյն սրբոյ
շնորհքներովը զարդարվեցար :

Ա յսօրվան շնորհքին համար՝ որ
ամենասուրբ Երրորդութիւնը քեզ
սաստիկ անարատ պահեց ամէն մեղ-
քէ ու ամենասրբուհի , կաղաչեմ՝ իս
որ բոլորովին մեզք եմ կորեր պըղծե-
կուց , սրբեա զարգարացընես առջի
մեղքերէս : Կրնդդեմ որ՝ մէյմը եր-
կընքէն նայիս իմ վրայ , իս յիշեա որ՝
ամենևին մեղքերու մէջ կորսըվեր եմ
ի մանկութենէ. երկու յատուկ շնորհք
պարգևեցուիր ինծի այսօր , մէյմը՝ ապաշ-
խարութեան պղծման շնորհք, մէյմեալ՝
անմեղութեան , որով առջի ըրած
մեղքերս ապաշխարութեամբ լըսուվ
ընդեմ, ասկից ետքնալ մէկ մեղք մը
չի գործեմ. անանկով Աստուծոյ և
քու ամենապայծառ տեսութեանդ
արժանի ըլլամ. Ամէն :

Այլ աղօթք :

Մ այր սուրբ , սաստիկ ուրախալի
օրդ Ընծայատրութեան իս պարապ
մի հանիր , իմ ապաշանքս մի մեր-

ժեր, այլ սրբութեան աթոռիդ մէջ մը իմ վայել նայելով ողորմէ, որ անօրէնութեամբ ծանրացած՝ չարաչար մեղքերով լեցուած՝ կրդողամ, կզուսահատիմ, չգիտեմ ուր պիտոր երթամ, ինչպէս պիտոր երևնամ առաջդար դատաստանին առջին: Միայն քու մայրական աթոռիդ առջին իս կրձգեմ, գեանին կնայելով կաղաչեմ. ասօրուան շնորհքէն ինծիալ մէկ փշրանք մը շնորհացպարգևէ: Դուն որ յարդանդի մեր անարատ յղացար, իս անօրէնութեամբ մեծցածս այսօր սրբէ. ինչպէս որ ամենասուրբ Երրորդութեան անունը փառաւորվեցաւ զքեզ սկզբնական մեղքէ պահելով սրբելով, անանկալ քու և Յիսուսի միածնի անունը կրփառաւորվի, թէ որ այսօր իմ անեներելի մեղքերուս կատարեալ թողութիւն առնես, սրբես, որ Աստուծոյ հետ հաշտվելով, բարեգործութեամբք զաղքայութիւնն ժառանգելով, զԱստուած և զքեզ յաւիտեան փառաբանել արժանի ըլլամ. Ամէն:

ԱՂՕԹՔ

ԱՒ ՍՈՒՐԲՍ

Ի ՏՕՆԻ ԾՆՆԴԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻ

Երբ Աւլի եղաւ ով սուրբդ Աստուծոյ քու ամէն գործողութիւնդ յաղթեենէդ սկսեալ աւետեաց գաբրիէլ հրեշտակին աւետարանեալ։ Մեծ եղաւ քու սրբութիւնդ. յարգանդի մօրդ սրբվելով ամէն մեղքէ անարատ գտար առաջի Աստուծոյ։ Փառաւոր եղաւ քու ծնունդդ՝ սուրբ Աստուածածնայ և Ցիսուսի այց եվանելովդ. ան օրը Ցիսուսին մօտիկնալովը հնորհքով լեցվեցար, չիտեսած ըլալով յարգանդի ձանչցար հաւատով, և ուրախութեամբ երկրպագութիւն տվիր։ Տուր ինծի ով

սուրբդ Աստուծոյ, որ երբոր ալօթք կընեմ,ժամըԱստուծոյ առջին կելլամ, մանաւանդ երբոր պատարագ կլսեմ, նամ, Յիսուս տեսածի պէս ըլլալով հաւատաքիս աչքովը՝ ուրախութեամբ ալօթքս ընեմ. պատարագին մէջնալ Յիսուս դէմ յանդիման տեսածի պէս ըլլալով պատարագը զմայլելով տեսնամ, երկրպագութիւնս ընեմ:

Չարմանալն եղաւ քու մանկութիւնդալ՝ որ միշտ Յիսուսին հետ տեսնըվեցար, Յիսուսի հետ ընկերակից ու խօսակից ըլլալով անցուցիր ժամանակդ. տուր ինծիալ ան շնորհքը՝ որ իմ սիրտս միշտ միշտ Յիսուսին տալով Յիսուսի հետ խօսակից ըլլամ ալօթքով: Երբոր չափահաս եղար մեծցար՝ տունդ ազգականներդ Թողուցիր, լեռը փախար, որ մեղքերէ հեռընաս. տուր ինծիալ որ՝ սրտովս աշխարհային բաներէն հեռնամ, մեղքերէ փախչիմ: Երբոր Յիսուս Յորդանան եկաւ, դուն եղար վկայ և քարոզիչ, ամենհնուիալ քարոզելով որ սա է գառն Աստուծոյ, որ բառ-

նայ զմեզս աշխարհի. տուր ինձիալ որ՝ խօսքովս և վարքովս զՅիսուս քարոզեմ. ինչ որ Աստուծոյ կամացը դէմ բան մը ըլլայ՝ չամչնամ, վկայեմ:

Մեղք չունիկը՝ մեղաւորի պէս ապաշխարեցիկը, ալքատութիւն քաչեցիկը, չոր ուսերով կաչի հագնելով ձգնեցալ. տուր ինձիալ որ՝ ես գլուխս մեղաւորաց՝ իմ ծուլութիւնս, իմ ձանձրութիւնս մեկդի ձգեմ, ճգնութիւն ապաշխարութիւն յանձն առնեմ, կամքս և իմ չար ցանկութիւնս մահացընեմ: Երբոր Հերովդէս պիտոր մեղանչէը, մարդու ահը մեկդի ձգեցիր, Թագաւորէն չվախցար, մեռնիլը յանձն առիր՝ քան Թէ մեղանչելը, անանկով յայտնի դէմ ելար, յանդիմանեցիր. տուր ինձիալ որ՝ երբոր իմ չար կամքս, և կամ չար ընկեր մը Հերովդէսի պէս կուզէ իս մեղք խօթել, յայտնի դէմ ելլամ, Աստուծոյ պատուիրանքներս պահեմ, քու վարուցդ նմանելով քեզի հետ մեկտեղ զՅիսուս փառաւորելու արժանի ըլլամ. Ամէն:

Ո՛վ երանելիդ ի մէջ սրբոց, որ Յիսուսին քէնովը գովվեցար, Թէքլէ նման մէկ սուրբ մը չէ դանըված աշխարհիս վրայ, որ եղար Յիսուսի կատարեա՛ ու մկրտիչ, մարգարէ, Ճրագնաւոր, քարոզիչ, եաքնալ մարտիրոս եղար՝ արիւնդ թափելով Աստուծոյ պատուիրանացը համար, անանկով սուրբբէրուն ամէնն դասին մէջ ընկերակից եղար, ամէնն դասէրուն ա՛նուանի ըլլալով: Հիմա ան երկնային փառքիդ մէջէն նայէ այսօր իմ վայ ո՛վ սուրբդ Աստուծոյ, ու մէկ զօրաւոր շնորհք մը ընդունէ քու վարքիդ հետեւելու, մանաւանդ շնորհք երկիւղին Աստուծոյ, շնորհք Ճգնութեան և ապաշխարութեան:

Դո՛ւ էիր՝ որ խօսքովալ վարքովդ ալ ապաշխարութիւն քարոզեցիր, մեղքէրնէնխոստ ովանիլ սորվեցուցիր, փրկութեան Ճամփան ամէն արհետաւորներու՝ ինչվան զինուորներ բռնալ ցրցուցիր: Ե՛ս որ՝ այսօր քու

սուրբ ածնդ կըսօնեմ, եկեր առջեդ
ընկերեմ յուսահատված, ինչ պա-
տահման պիտոր տամ Աստուծոյ:
Ես որ մեղքի պատճառներէ չեմ
փախչիր, աչքս՝ ականջս՝ բերանս չեմ
դգուշացներ, առջի ըրած մեղքերուս
համարալ մեծ մեղաւոր ըլլալով ան-
հոգ եմ կեցեր ապաշխարելու, խոս-
տովանելու, ճգնութիւն քաշելու,
հիմա յոյս միայն քեզի դնելով կա-
պաչեմ որ չնորհք առնելով փրկու-
թեան ճամփան ինծի բերես:

Ինչ չփոթութիւն կրբերէ ինծի
սատանան, ինչ որ ապօթքիս ձանձ-
րութիւն բերել կուտայ, խոստովա-
նութիւնը ծանրը բան մը կրցցընէ
առնք ամէնը դուն փարատէ, լու-
սաւորէ, փորձութիւններէ ինծ պահէ
քու արդեանցդ և փառացդ միչնոր-
դութեամբ: Վասն զի գիտեմ որ՝ քա-
նի մեծ է փառքդ, անչափալ մեծ է
քու բարեխօսութիւնդ: Նաև սրբոյն
Գրիգորի լուսաւորչին ապաչանացը
համար՝ որ քեզ մեր ազգին պաշտպան
բռնել տալով ապաչէց որ բարեխօս

ըլլաս ամենեսուս : Եսալ ան սրբոյն աչկերան եմ, անպատուղ չըլլայ կալաչեմ անոր արդիւնքը, այլ իմ միրուելթեամբս՝ անոր և քու պաշտպանուելիւնդ՝ ի փառս ամենասուրբ Երրորդութեան փառաւորվի միշտ և յաւիտեան. Ամէն :

Ի ՏՕՆԻ ՍՐԲՈՑՆ

ՑՈՎՍԵՓԱՑ ԱՍՏՈՒԱԾԱՀՕՐ

Ով երկնային պաշտպան, հզոր պահապան, ինչ երջանիկ մահ երքու սուրբ մահդ, երբոր մկկդին Յիսուս, մկակզին Աստուածածնին քովդ կենալով, անոնց հոգևորական մխիթարութիւնները կըլսեիր, և դէռ աղբյուրութիւն չիգացած՝ իբր թէ աղբյուրութեան մէջ կըվայելէիր, տեսնելով զՅիսուս, և զԱստուածածնին, և անոնցմէ քաջալերութիւն առնելով: Ասանկ երջանիկ մահուամբ մեռնելդ ալ սուրբդ Աստուծոյ գիտեմ

որ՝ դուն ալ կուզես ամէնուն հասնիլ
իրենց մահուանը առեն , ով որ քեզ
պաշտպան բռնելէ՝ որ բարի մա-
հուամբ աս աշխարքէս ելլան :

Հիմա ես 'ի խորոց սրտէս կաղա-
չեմ , ան իմ նեղութեան գէշ օրս՝ որ
է մեռնելուս առեն՝ դուն իբրև հայր
և պաշտպան մեծազօր ինծի հասիր :
Երբոր մարմնոյս գիացէն տեսնամ ալի-
որ չունչս դժուարցած , աչքերնէրս
մթնցած , ձեռքերնէրս անշարժ , իմին
մտիկներս դուրս փախած : Հոգիիս
գիացնալ տեսնամ պիտոր՝ որ մէկ
չհասնիրված օտար աշխարհ մը պիտոր
երթամ , ահեղ դատաստանին առջին
պիտոր ելլամ : իմ ամէն գործքերուս
վրայ անաչառ դատաւորին համար
պիտոր տամ : Ա՛հ , սուրբդ Աստուա-
ծոյ , երբոր կըտեսնաս իս աս նեղու-
թեան առեն , հասիր ինծի վերէն
երկինքէն իբրև մէկ գթած հայր մը :
քովս գանուիլ ինչվան որ հոգիս ան-
դեմ , որով փարատի յուսահատու-
թիւնս , լուսաւորվի հաւատքս , հաս-
տատվի յոյսս , զօրանայ սէրս : որ քու-

կին հզօր բարեխօսութեամբդ մեզքե-
րուս թողութիւն առնելով ալքայու-
թեան երկնից արժանի ըլլամ :

Ա՛ աղօթքս որ հիմա կընեմ ո՛վ
սուրբդ Աստուածոյ , կաղաչեմ որ ետ-
քի մահուանս օրը ըրածի պէս ընդու-
նիս , որովհետեւ չեմ կրնար ան առե-
նը ընել : Եւ այսօրուայ որ քուկին սուրբ
օրդ է՝ կը խնդրեմ մեկ զօրաւոր ընորհք
մը ինծի առնուս զղջման , որ առջի ը-
րած մեղքերս լամ , և աղէկ մը առա-
ջադրելով ետ կենամ՝ մանաւանդ սո-
վորական մեղքերէս , բարի քրիստո-
նէի կեանք ունենամ ինչվան իմին
մահս :

Այլ աղօթք :

Ո՛վ երանեալ սուրբդ Աստուածոյ ,
դուն միայն այնչափ փառաք պատուե-
ցար , որ Աստուածահայր ըսվիլ ար-
ժանացար . վասն այնչափ փառացդ
կաղաչեմ ընդունիս ինծի ընորհք արթ-
նութեան , որ իմ մահս վրայ չեկած ,
արթուն կենալով արժանապէս պատ-

բաստրվիմ՝ ինչպէս որ կրպաստուիրէ տէրն իմ, ջրլայ թէ մահը իս մեղքի մէջ գտնայ ։

Եւ ամէնն ալ նէն վեր աս իրէք բանը կրնդրեմ որ ընես։ Մէյմը՝ յանկարծակի մահուանէ իս ազատես. ջրլայ թէ անպատրաստ եղլամ աշխրքէս, այլ ժամանակ ունենամ զղջում ընելու, սուրբ Աստուածածնայ և քուկին հզօր պաշտպանութիւնդ խնդրելու ։ Երկրորդ՝ կրխընդրեմ որ ան եաքի հիւընտութեանս մէջ՝ խելքս մէկէն չկորսնցնեմ, հապա գտնէ քանի մը օր մեռնելէս առաջ խելքս գլուխս եղած ըլլայ, որ հոգեւոր պատրաստութիւնս կարենամ տեսնալ՝ զղջալով, իս բոլորովին Աստուծոյ նուիրելով։ Երրորդ՝ առէն ունենամ քահանայ գտնալու, բերանս բաց ըլլայ խոստովանելու, որ եաքի խոստովանանքս զղջացեալ սրբոտով ընելով՝ ամէնն Քրիստոնէական պատրաստութեամբ և սուրբ հաղորդութեամբ քու պաշտպանութիւնդ և հզօր բարեխօսութիւնդ գտնամ ։

Անանկով Աստուծոյ առջին եկեղեցի, արժանի ըլլամ Յիսուսի բերնէն լսել։ Աջնիւ ծառայ, մեռայ յուրախութիւն տեսան քո։ Ամէն։

Ի ՏՕՆԻ ՍՐԲՈՑՆ

ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

Ով սուրբ Գրիգոր լուսաւորիչդ առաջ անտանելի չարչարանքներովդ՝ հոգը տանջուրս տարի խոր վիրապին մէջը անդադար աղօթելովդ՝ ես չահեցար, հայը հաւատոյ ինծի եղար։ քու քարոզութեամբդ գտայ ես աս սուրբ հաւատքս։ որով սուրբ աւազանին մկրտութեան շնորհքին հասայ։ Բայց ես անիկայ չտոնից կորսնցուցի, հոգիս մեղքերով վիրաւորեցի, հաւատացեալց անուն ունեցայ, անհաւատի գործքեր ընող եղայ։

Կաղաչեմ այսօր քու բարեխօսութեամբդ ընդունիս ինծի մէկ շնորհք

մը՝ որ հաւատքիս կէօրէքալ գործք ու-
նենամ. վասն զի իմ մեղուքիւններս՝
իմ չար կիրքերս՝ տիեզերին նման կա-
պաշտ Թագաւորի իմ սրտիս վրայ.
ինչպէս որ դուն Տրդատայ անհաւա-
տութեան՝ բռնութեան՝ հպարտու-
թեան՝ աչքարհասիրութեան՝ յայ-
թեցիր զարշարանքներ քաչելով ու
աղօթքով, ընդունէ՛ ինծի՛ալ ընդհ-
որ՝ եսալ հոգևորապես պատերազմե-
լով և աղօթքէ չհամնձրանալով իմ
չար ունակութիւններուս յաղթեմ:

Եւ ինչպէս որ՝ Տրդատ շահեցար,
շակեցիր, հաւատացեալ խոնարհ՝
աստուածասէր ըլլիր, եսալ Տրդատայ
պէս իս շակեմ, առաքինի ըլլամ:
Խոզ եմ դարձեր իմ գարշելի մեղքե-
րով, դուն հայր սուրբ՝ մկրտութեան
շնորհքը նորէն ինծի դարձընելով
Տրդատայ պէս իմ գարշելի մեղաւոր
կերպարանքս փոխես, շնորհքով զար-
դարես:

Եւ ինչպէս որ սատանաները Թող
չէին իսար կատաւնը քակելու, դուն
խաչակընքելով մը մեկէն քակեցիր, ե-

կեղեցի չինեցիր, սատանկալ այսօր եր֊
կընկէն վրաս խաչ հանելով օրհնէ իմ
սիրտս որ՝ սատանաները բռներ նսաե֊
րեն, կռատուն են դարձուցեր մերս֊
Թեամբ ու մեղքերով, Թող չեն խաղ
դառնալ ու ապաշխարել, աս քարա֊
յեալ սիրտս այսօր քուկին օրհնելով
փոխվի, Հոգւոյն սրբոյ տաճար ու ե֊
կեղեցի ըլլայ:

Յայլսմ փոնի նորին:

Ո՛վ Ճշմարիտ հովիւ հոգւոց, նայէ
մկյսմը երկնքէն իմ խեղճութեանս
ու ողորմելութեանս վրայ. լսէ այսօր
իմ ձայնիս, չեմ արժանի քու ողոր֊
մութեանդ, ինչու որ՝ կամաւորապէս
մեղանչեցի: Բայց քու բարեխօսու֊
Թիւնդ այսօր քու ծնիդ օրը զօրաւոր
է առաջի Աստուծոյ, մի բարկանար
վրաս՝ այլ ողորմէ. մի զրկեր վրս այսօր
քու հնորհքէդ. վասն զի քու անունդ
վրաս կոչված է, քու որդիդ եմ, պը֊
տուղ եմ քոց չարչարանաց և արո֊
Թից. իմ կորսուելուս սատանան չու֊

բախանայ, չըսէ որ՝ քու զաւակիդ մէկը կորնչուցուի։

Ինչպէս որ Ճշմարիտ հաւատքիդ խոժառանգ ըլլիր, անանկալ այսօր քու կին վարքիդ հետևող ըլլէ, որ հարազատ որդոյ պէս վարքովալ քեզի նմանիմ։ Դուն ամէն պատուղ քարոզութեանդ ընելէն ետև՝ բիւրաւոր հոգինէր շահելէն ետև՝ ամէն բան Թողուցիր, սեպուհ լեռը քաշվեցար, հոն ճգնութեամբ ու աղօթքով անցուցիր մնացած կեանքդ, օրինակ տալով ինծի որ՝ ամէն բանէն վեր Թէև ուրիշներուն հոգևոր շահը ըլլայ, իմ հոգիս պէտք է առաջ հոգալ, ուրիշներուն հոգը մէկդի Թողուլ։

Անոր համար եսալ այսօր ամէն բանէն աւելի աս կըխնդրեմ, ինծի համար զօրաւոր շնորհք մը առնես, որ Թողում ուրիշ հոգերը՝ միայն ես իմ հոգիս հոգամ, սովորական մեղքերէս ետ կենամ, աղեկ մը խոստովանելով իմ առաջադրութեանս վրայ հաստատուն մնամ։ Ա՛մէն անուան որ ով հայր երանեալ, ա՛ռ ինծի այս

օր աս հնորհքը, որ ասկէց ետքը բարե-
գործութեանց հետ ըլլալով աղքայու-
թեան ժառանգ ըլլամ: երկինքը քովդ
նամեղով Աստուածդ երեսը տեսնալու
ու քեզի հետ մեկտեղ Աստուած փա-
ռաւորելու արժանի ըլլամ. ան տուէ-
նը երևնամ քու հարազատ որդիդ,
քու արդեամբդ և բարեխօսութէ-
փրկութիւն գտնալով Աստուածդ:

Ի ՏՕՆԻ ՍՐՐՈՑՆ ՑԱԿՈԲԱՑ

ՄԾՐՆԱՑ ՀԱՑՐԱՊԵՏԻ

ՈՒՐԱՒՔ որ կրվախնանք աստուա-
ծային բարկութենէն՝ որ մեր մեղքե-
րը կրպատժէ զարհուրելի ժանտախ-
տին պատժովը, այնչափ աւելի ա-
ղաչանքով քեզի կրդիմենք ով հրաշա-
գործ սուրբդ Աստուածդ, որ ամէն
ցաւէ՝ բայց ալ աւելի ժանտախտէ
կրպահես ով որ քեզի կրդիմէ: Իրա-
ւի՝ իմ մեղքերուս համար քիչ է աս

պատիժս, բայց ես աւելի կը վախենամ իմ հոգւոյս համար քան թէ իմ մարմնոյս, ընդեայ որ՝ սասանկ ժանտախտով բռնըված ըլլալով զրկըվիմ սուրբ խորհուրդներէն, կամ թէ չկրնամ աղեկ պատրաստութիւն տեսնալ, անանկով հոգիս կորսընկ։

Հիմա ով սուրբդ Աստուծոյ, քու կեան համարձակութիւնդ որ մեծ է Աստուծոյ առջեւն, մանաւանդ սասանկ ժանտախտէ խալըսելու համար, ընդունէ իմ աղաչանքս չենայելով իմ անարժանութեանս վրայ. պահէ իս երբոր Ճամփան կերթամ, երբոր դուրս նետս կըմտնամ կենդանի. վասն զի միշտ վտանգի մէջ կըգտնըվիմ, ապաւէն մը չունիմ բայց՝ի քու հզօր պաշտպանութենդ։ Ըէ թէ մինակ ինծի համար կաղաչեմ, այլ նաև իմ ամենէն ազգականներուս ու մտերիմներուս համար, որք միաբան քու ողբդ կկենանք, պատասխանելով կայծակինք որ վրկես խալըսես սա սաստիկ ու ահաւոր պատուհասէն Աստուծոյ։

Թէ որ Դաւիթ մարգարէին աղա-

ջանքին չիդիմացաւ պատուհասող հրեշտակն Աստուծոյ, այլ անբան անասունն երուն պատարագով բարկութիւնը անցուց, սուրը ձգեց, հաշտ վեցաւ, հիմա քանի աւելի, որ մենք ամէնքս միաբան անմեղ գառն անբասիր զՅիսուս միածին պատարագ հանելով սուրը սեղանին վրայ՝ անանկ կաղաչենք քեզմով զամենասուրբ Երրորդութիւնը, ինչպէս աստուածային բարկութեան սուրը ետ չիդառնայ: Ո՛վ սուրբդ Աստուծոյ, քու հայրութիւնդ այսօր է որ պիտոր ցրցընես մեր վրայ, քուկին պաշտպանութեամբդ այսօր մեզ պաշտպանէ, որով և Աստուծոյ անհուն ողորմութիւնը և դըթութիւնը փառաւորվի քուկին բարեխօսութեամբդ: Մենքալ ցնծութեամբ ծանենք քու սուրբ յիշատակդ, և միշտ երախտագէտ ըլլալով գոհանանք Աստուծոյ բարերարութեանը վրայ հոս և՛ի հանդերձեալն արքայութեան մէջ. Ամէն:

Ի ՏՕՆԻ ՍՐԲՈՑՆ ԱՆՏՈՆԻ

ԱՆԱՊԱՏԱԿԱՆԻ

Ո՛վ սուրբ հայր Անտոն, գլուխ ճգնաւոր անապատականաց, առաջնորդ հոգևոր վարուց. դուն սրտիդ ցուցիր ինչպէս պէտք էր ծառայել Աստուծոյ՝ մարդիկներէ փախչելով, երկրաւոր մտմտուքները թողլով, երկնային խորհուրդները մտածելով. դուն սրտիդ ցուցիր մարմինը ճգնութեամբ զսպել, աղօթքով մտածականով զմայլիլ, սատանայի փորձութիւններու դէմ դնել, Աստուծոյ միայն ծառայել, անանկով դժոխքի կրակէն նաև մարմնաւոր կրակէն պահպանիլ ու պաշտպան եղար մեզի:

Այսօր որ քու սուրբ տօնիդ օրն է, յիշե՛ ով սուրբդ Աստուծոյ, ինչ քաղեցիր ինչվան որ աս շնորհքները առիր, իմ քաշածներուս տես հիմա յիշե. մէկ զօրաւոր շնորհք մը հոգւոյն

սրբոյ առ ինձի համար, որ եսայի՛ վարքս բոլորովին փոխեմ, քու վրադ հեռևիմ։ Յիշէ հիմա ինչ վատքի մէջ կըզմայլես, քաշածներուդ վարձքը կըվայելես, իսկ ես ասանկ ողորմելութեան մէջ կըտառապիմ, աշխըրհքիս՝ մարմնոյ՝ և սատանայի փորձութիւնները կըքաշեմ. դուն որ ան փորձութիւնները քաշելով վայելեր, յաղթեցիր, վերէն երկնքէն վրաս նայելով փորձ եղողն պէս ողորմէ։

Հոգևոր կրակը մեղքերնուս մէկ դիացէն մեզ կըտանջէ, մարմնաւոր կրակը մէկալ դիացէն մեզ կըպատժէ։ Դուն ով հզօր պաշտպան և բարեխօս, ան հոգևոր կրակէն մեղքէն մեզ պահէ, մարմնաւոր կրակնալ մարէ։ Աստուածոյ բարկութիւնը վրաներնիս հեռըցուր, վասն զի տունեքնիս տեղերնիս քու հզօր պաշտպանութեանդ յանձներենք, քեզի ենք ապաւիներ հաւատով։ Քուկին բարեխօսութեդ ով սուրբդ Աստուածոյ, արժանի ըրէ քրիստոնէական հանգստութեամբ

աս աշխարքիս մէջ սընեկընիս խաղաղ անփորձ նստիլ, որ բարի գործքերու հետ ըլլալով անդինալ աքայութեան մէջ զքեզ տեսանել, և քեզի հետ մէկտեղ զամենասուրբ Երրորդութիւնը միշտ փառաւորելու արժանի ըլլանք. Ամէն:

Ի ՏՕՆԻ ՍՐԲՈՑ ՀԱՒԻՓՍԻՄԵԱՆՑ

ԵՒ ԳԱՑԻԱՆԵԱՆՑ

Ո՛վ լոյս հաւատոյ, ովսիկը աս տուածայրն, որ այսօրուան տուրը կոս սանայց մովընին լուսաւորեցիր, սրբեր տրինին քորքորքեցիր: Ի՛նչ հաստատութիւն չնորհաց՝ որ աշխարհքիս թագաւորութիւնը մէյմը ձգեցին, մէյնալ երբոր ոտվընին եկաւ, չիդար ձան, չուզեցին, քաջութեամբ մէկդի նետեցին: Ի՛նչ սէր Յիսուսի, որ թագաւորութիւնը մերժելէն ետևալ՝ չափաւոր տանջանք յանձն առին, Յիսու-

սեն համար կեանքէրնեն ոչվեն :

Երբոր ես ասոնք կըմտածեմ, իմ վաղքիս վրայ նայելով կըզարհուրիմ, ուրչափ հեռու եմ ես ասոնց Ճամբէն, որ աշխըրհիս մեծութիւնը, փառքը, հանդստութիւնը աղէկ կըսեպեմ, իսկ Աստուծոյ ոչված խաչը՝ նեղութիւնը՝ դժար կըսեպեմ, կըՃըգդոհամ : Հիմա այսօրվան սուրբ կուսանաց ալդիւնքովը ով Հոգիդ սուրբ առջեդ կկնամ կաղաչեմ, անոնց հաւատքին՝ անոնց սիրոյն՝ մէկ ընորհքը տուր ինծի, որ ես ալ ասոնց Ճշմարիտ քրիստոնէութեանը նմանիմ : Մի նայիր իմ անարժանութեանս վրայ, այլ հիշէ՛ ան օրը՝ երբոր աս սուրբ կուսանքը մէկդիացէն տանջանք կըքաշէին, մէկալ դիացէն բորբոքեալ սրտիւ քեզի աղօթք կընէին :

Եսալ հիմա անոնց աղօթքը քեզ կըմատուցանեմ, և կըխնդրեմ որ տաս ինծի անոնց ընորհքը մաքրութեան և յարատևութեան . ասկից ետքը լեղի երևնայ ինծի աշխըրհիս հանգստութիւնն ու փառքը , և սիրելը ըլլայ ՅԻ-

սուսին խաչը և բաժակը՝ որ իրեն սի-
րուն համար ինչվան արիւնս թափելու
յանձն առնեմ: Ա՛ս սուրբ կուսանաց
արիւնը պատճառ եղան մեր հաւատ-
քին լուսաւորութեանը, ասոնց բա-
րեխօսութեամբնալ լսէ իմ աղաչան-
քիս, հաւատքս լուսաւորէ որ հա-
ւատքս գործքով կատարող ըլլամ.
յոյս հաստատուն ըրէ, որ ամենով
չելլամ, սէրն Աստուծոյ սրտիս մէջը
վառէ, որով զգայարանքներս սուրբ
մաքուր պահեմ, աշխըրհի՝ մարմնոյ՝
սատանայի չաղթող ըլլալով սրբոց
հետ մէկտեղ յամենասուրբ Երրոր-
դութիւնդ փառաւորելու արժանի
ըլլամ. Ամէն:

ԱՂՕԹՔ ԵՒ ՊԱՀՏՊԱՆ ՍՈՒՐԲ

ՍՏԵՓԱՆՈՍԻ ՊԱՏԱՐԱԳԻՉ

Ով սուրբդ Աստուածոյ ընտրեալդ
ի Հոգւոյն սրբոյ, ես անարժանս թէ-
պէտ լինիլ եմ մեղօք, բայց համար-
ձակեցայ ի հզօր բարեխօսութիւն քո՝
կընտրեմ քեզ պաշտպան, և կաղաչեմ
որ քո միջին բարեխօսութիւնդ անպա-
կաս ընես ինձի համար, հասնիս ինձի
երկնային զօրութեամբդ՝ որչափ որ
հոգւոյդ ու մարմնաւոր վտանգներու
մէջ կրնամ, և որչափ որ քեզ օգնու-
թիւն կանչեմ ինձի :

Յիշէ ով սուրբդ Աստուածոյ՝ որ աս-
տուածային անհուն զօրութիւնը քեզ
խաղցընելով աս աշխարհիս վորձու-
թիւնէ՝ անանկով ժառանգ եղար երկ-
նային արքայութեան, կրվայելես,
կըզմայլես հիմա աստուածային տե-
սութեամբ, իսկ ես դեռ աշխարհքիս
մէջը ըլլալով, խռովութեան ու ալե-

կոծումեան մէջ եմ. հոգիսալ մար-
մնսալ միշտ կըչարչարվի, մեղքի մէջ
ալ լցված ըլլալով չեմ կրնար համար-
ձակիլ չնտակ դիմել առ Աստուած՝ որ
մեղքերովս բարկացուցի: Քեզի կը-
համարձակիմ իմ պակասութիւններս
բանալ. դուն ալ վերէն երկնքէն
շուտ մը ձայնս լսելով միջնորդ ըլլաս
Աստուծոյ, ամէնէն առաջ մեղքե-
րուս թողութիւն առնես. ես հաշ-
տեցընես Աստուծոյ հետ. Հոգւոյն
սրբոյ զօրութիւնը ինծի պարգևէ
տաս, որ քանի փորձութիւն բերէն
ինծի սատանան, մարմինս, ու աշ-
խարհ, մեղքի մէջ չիյնամ, վըայ ելլ-
լամ:

Անկէց ետքը ինչ որ մարմնաւոր
կարօտութիւն ունենամ, քեզի դի-
մեմ, դուն ալ համնիս հոգաս որ՝ իմ
հոգիսալ կարենայ անդրադալ Աստու-
ծոյ ծառայել: Հիւանդութեանս ա-
տենը հասիր բժշկէ, առաստաղիս
մէջ ընտիք առ ինծի առանց մեղայ
արդարութեամբ ընելու, և յաջողու-
թիւն տուր չափաւորապես վաստը-

կելու, որչափ որ պէտք է որով ա-
պրինք Աստուծոյ ծառայելու հա-
մար: Շատ ձախորդութիւն, շատ
կաթօտութիւն չունենանք, ջրլայ թէ
մեր միտքը սիրտը աւելի զբաղեցընենք
անով աշխարհային հոգերու մէջ,
որով հոգիներնուս միաս ըլլայ: Ջա-
նալան փորձանքներէն, կրակէն, մահ-
տարաժամէն, դուն մեր տունը պա-
հես, յանկարծական մահուանէ փըր-
կես, քաղաքական չար պատահմունք-
ներէն որ կրնան հանդիպիլ նասիլ
ելլընելնի, ծովու վրայ, ցամաքի վրայ,
ճամբորդութեան մէջ, տանը մէջ,
մեզ ամէնքս ամէն ժամ պահես
պահպանես:

Ամէն բանէն աւելի կրնդրեմ,
մեռնելուս առենը քովս գտնըվիս որ
հոգիս պատրաստութիւնս լման
տեսնալովինչպէս որ պէտք է, անան-
կով քեզի հետ միկտեղ յամենասուրբ
Երրորդութիւնը փառաւորելու ար-
ժանի ըլլամ երկինքը: Եաւչ կառա-
չադրեմ որ՝ միշտ քեզի ծառայեմ
սուրբդ Աստուծոյ, քու անունդ պա-

տուեմ ու քարոզեմ ի փառս ամե-
նակալին Աստուծոյ :
Հայր մեր որ յերկինս ես :
Ողջոյն քեզ մարիամ :

Հիւանդութեան մէջ, կամ որբի վանգ-
ներու մէջ, ու հիպնեալ աղօթասու
ղորդէ :

Որ բուժեցեր զանբուժելիս ,
զհմայս բուժեա ըզցաւ անձինս ,
ի գառնութեան ժամանակիս ,
հաս ի թիկունս , անսա ձայնիս :
Որ զանարժանս , և զարժանիս ,
միօրինակ լիչես , հայիս :
Ձհմայս լիչեա զանձին կարիս ,
գթած աչօքդ լիս հայեացիս :
Երագահաս քոյին ընտրեալդ ,
Ճարտար մատամբքդ լիս մերձես-
ցիս :
Բարեխօսօղ հրաշը բանիւդ ,
փարատեացես զվիշտ վտանգիս . Ա-
մէն :

ԱՂՕԹՔ

ՈՒ ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿ

Ով պահապան հրեշտակ, դուն ես որ յաւուրք պահապան դրված ես ինծոյ իմ անձինս վրայ, քեզի յանձնըված է իմ հոգիս իմ մարմինս որ պահես: Կաղաչեմ ջըլայ որ իմ անարժանութեանս համար իս Թողութիւն, տեսնալով իս մեծամեծ մեղքերու մէջ չարաչար Թաղըշըրկված, որ գանիլ կրնեբուն քու հրեշտակային բնութեանդ, ջըլայ որ իս երեսդ ձգես, այլ օրինակ առնելով Յիսուսէն, որ մեղաւորներուն քովը կերԹալ շահելու համար, դուն նայէ որ իս շահիս: Անոր համար որչափ մեծ մեղաւոր ըլլամ՝ իս մի Թողուր, քու պաշտօնդ լման կատարէ իս պահելով ամէն հոգւոյ և մարմնաւոր վտանգներէ. անոր տեղը չար սատանան հալածէ քովէս, իրեն բերած

փորձութիւնէդը խափանէ, ասոնց
մէջ խաղաղութեամբ պահէ, ամէն
խռովութիւն և մեղք դուրս հանէ,
ճամփուս մէջ առաւտուրի մէջ խօսքս,
գործքս, և կացքս, դուն շտկէ ՚ի բա-
րին, որ ամէնօրեան իմ գործքս ՚ի
փառս Աստուծոյ ընեմ, Աստուծոյ
կամքը կատարեմ:

Քեզ յանձն ըրաւ իս Աստուած,
դուն հոգա ով հրեշտակդ Աստուծոյ,
բարեկամ ազգի մարդկան, որ հա-
ւատքս լուսաւոր ունայ, գործքով կա-
տարեմ հաւատքս, յոյսս ջերմանայ,
սէրս շատնայ, բայց յԱստուծոյ չխո-
րեմ ուրիշբան: Երբոր աղօթքի նըս-
տիմ, սատանան որ խիստ հակառակ
է աղօթքի, ձանձրութիւն կրբերէ,
միտքս կըցրուէ, դուն ան սաւեղը սա-
տանան հալածէ, միտքս վրաս ժողվե-
լու օգնութիւն ըրէ, և իմ ըրած ա-
ղօթքս Աստուծոյ առջին հանելու, և
Աստուծոյ հաճոյական ընդունելի
ընելու: Ամէնէն աւելի կաղաչեմ
որ՝ մեռնելուս սատնը քովս գտնվե-
լով քովէն պահպանութեամբդ չար

ատանանիքը վճնտելով, Ճանապար-
հորդակից ըլլաս մէկ տեղ տանելու՝ ին
սուրբ լեռը Երինայեն՝ Քրիստոսի ա-
ջին, և ահաւոր դատաստանին առնը
իմ դիացէն խօսելով և բարեխօսելով
քովէն օգնականութեամբդ արժա-
նի ըլլամ զԱստուած տեսնել, և սրբ-
ոց հրեշտակաց հետ զԱստուած
օրհնել յաւիտեան. Ամէն:



Wm H. Bontampo te Vanloo

INTERIEUR DE NAZARETH

HET H. HUISGERIN TE NAZARETH

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

ՄԱՀՈՒԱՆ

Եւ գոյ էպիկուրեան պատրաստ. պէ յո-
րոմ ժամու չէ ան ունիցի, գայ որդի
մարդոյ: Արիւնաւ կոչէ, պէ ու գիպէ
գօրն, և ու գժամն: Մատթ. իգ. իե:

Պէտք ամէն օր պէտք է քրիս-
տոնէին աղօթքով և զղջումով պատ-
րաստ կեղնալ մեռնելու, բայց սա
հետեւեալ աղօթքն է կրնայ շաբաթը
անգամ մը, կամ ամիսը անգամ մը
գործել. ասով երկու հոգւոյ շահ
կրնայ շահիլ: Մէյմը՝ մահուան յիշ-
տակը միշտ սրտին մէջը կրպահուի,
որ է ընդհանուր հարկաւոր խրատ
սուրբ գրոց: Երկրորդ՝ մահուան ա-
տենը չկրնալով ընել, հիմակուան
ըրածնէրը ընդունելի կըլլան Աստու-
ծոյ: Ակռեց զատ՝ ասոնք անանկ ա-

ղօթքներ են, որ կրնան նաև ղղջման աղօթքի տեղ անցնիլ ամէն խոստովանանքէն առաջ կամ ետև :

Աղօթք պաթրիարքութեան մահուան :

Երբոր կը հասնիմ տէր իմ ան օրը որ պիտոր ձգեմ աս մարմնոյս բանտը, ելլամ երթամ Աստուծոյ առջիդ, ըզ գայաթանքներս կապված կրլլայ, չէմ կրնար ան աստիճը իմ պատրաստուցեալ տեսնել, հիմա իմ ողորմեցիս աստիճը կրնեմ խնդրուածքս եղբի օրվան համար :

Դուն տէր իմ, հիմակվան ըրած աղօթքս ընդունիս՝ իբր թէ ան աստիճը ընէի, և ողորմիս ինծի ան թշուառութեան օրը երբոր աչքընկերս չեն տեսնար, ականջներս չեն լսեր, միտքս խաւարած կրլլայ, սիրտս և ամէն մարմինս ալեկոծութեան մէջ կրկնայ. վասն զի բոլոր շինքը մարմնոյս պիտոր քակվի, ապրվի, ան աստիճը յիշէ տէր իմ քովինն աստիճնուածդ զիս ղծառայ քո, որ կեանքը ընցուցած՝ որ-

չափ տալի որ ապրիլ դրերկիր յաւիտենից, կրթողու հնձա աս մարմինը գերեզմանի մէջ հողին տակը, իսկ հոգիս կենդանի առաստանիդ առջեւն իր վճիռը լսելու։

Ան օրը՝ որ մեկ մարդ մը չկրնար ինծի օգնութիւն հասնիլ, ան ժամին որ՝ սուրբ և արդարք կըդողան, դուն՝ ամէն ահեղ դատաւորդ արդարութեան աթոռը նստած, անաչառ պիտոր դատես իմ ամէն գործքս պզտիկ ու մեծ, հոգւոր ու մարմնաւոր, և եաքի վճիռը պիտոր տաս կամ կորուստ յաւիտենից, և կամ կեանք յաւիտենական։

Ամէն, յիշես ան ատենը Տէր իմ աղաչեմ, որ թէպէտ ծանրացեալ եմ մեղքերբայց քու ձեռաց ստեղծուածդ եմ, դուն ստեղծեցիր զիս, դուն ապրեցո՛ զիս յաւիտենական մահուանէ։ Յիշէ Տէր իմ, թէպէտ անթիւ են իմ մեղքերս՝ որ ամէն զգայարանքներս գործեցի պզտիկութենէ սկսեալ, բայց դուն ըրիր աս սիրտս՝ աս միտքս՝ աս աչքս՝ բերանս՝ և ամէն զգայա-

բանքներս, հիմա ինչպէս Թողուս որ՝ աս քու ձեռագործդ դատաստարը՝ վի, ինչպէս Թողուս որ աս քու ստեղ՝ ծուածդ՝ Թշնամոյդ սատանային ձեռքը անցնի: Աղաչեմ Տէր իմ, վասն արարչագործութեան սիրոյդ՝ որով կըսիրես ամէն քու արարածդ, և չես ուզեր որ ստեղծուածներդ մէկ պզտիկմընալ կորսըվի, ան սիրոյդ համար մի Թողուր որ կորսըվիմ, վասն զի քու պատկերդ եմ:

Աղօթք:

Մի մեռանիր ի դատաստան ընդ ծառայիդ քում, զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի:

Օգնեա մեզ Աստուած փրկիչ մեր, վասն մեծի փառաց անուան քո: Հը:

Խօսեցայ լեզուաւ իմով և ասացի, ցոյց ինձ տէր զկատարած իմ, և զթիւ աւուրց իմոց քանիօն է, զի գիտասցից Թէ որչափ պակասեալ է կենէն:

Ահա չափով եդիր զաւուրս իմ, և կար զօրութեան իմոյ որպէս ոչինչ է

առաջի իմ, սակայն ամենևին ընդու-
նայն է ամենայն մարդ մեղվ :

Ապաքէն որպէս ’ի պատկերի չքնի
մարդ , սակայն ’ի զուր խռովի , գան-
ձէ , և ոչ գիտէ ումմ ժողովէ :

Իսկ արդ՝ ո՛վ է համբերութիւն իմ,
թէ ոչ դու՛ տէր ,կամ կար զօրութեան
իմոյ՝ թէ ոչ ’ի քէն : ՀԸ :

Ասացի դու՛ ես Աստուած իմ, և ’ի
ձեռս քո է ժառանգութիւն իմ :

Փրկեա՛ զիս ’ի ձեռաց թշնամեաց
իմոց , և ’ի հալածչաց իմոց :

Երևեցո՛ զերեսս քո ’ի ծառայս քո,
ապրեցո՛ զիս տէր ըստ ողորմութեան
քոմ. տէր մի՛ յամօթ եղէց , զի կար-
դացի առ քեզ :

Ո՛րպէս զի բազում է ողորմութիւն
քաղցրութեան քո տէր , զոր պահե-
ցեր երկիւղածաց քոց : Ը :

Այլ աղօթ :

Երբոր իմ ըրածներս կը խնդամ, իմ
վարքս միտքս կը բերեմ, կը տուսահա-
տիմ բոլորովին , վասն զի դուն ատես

ծեղքը որ քեզ ծառայեմ, քեզ սիրեմ
յամենայն սրտէ, յամենայն զօրու-
թենէ մտաց, ես չէ թէ ամենէն սրտով
չեմ սիրած, հապա ամենևին չեմ սի-
րած, մանաւանդ քու Թշնամւոյդ՝
աշխարհի՝ մարմնոյ՝ սատանայի եմ
ծառայեր. դուն ապաշխեցիը որ եղ,
բայրսալ սիրեմ, ես չէ թէ չեմ սիրած,
հապա Թշնամւութիւնէը ըրեր եմ՝
առեղծ, զրկեղծ, ոխ պահելով,
բամբասեղծ: Երբոր ատոնք իմ դի-
մացս բերէ սատանան դատաստանին
առջեւն, երբոր մէկիկ մէկիկ յիշեցնէ
քու արդարու Թեանդ առջեւն, աս
հոգին խեղճ է, ինձի ծառայեց ըսելով
ուզէ իս իր հետը տանելու, ես ինչ
պիտոր ընեմ ան սարսափելի աաեղը.
ուրիշ Ճար չունենալով հիմակուընէ
կրվազեմ կրփաթթվիմ սուրբ խաչին
ոտքը, և կաղաղակեմ. Ո՛վ արդարու
Թիւն Աստուծոյ՝ ես մահապարտ եմ,
դատապարտված եմ, բայց նայէ ինչ
տեղ եմ ապաւիներ. աս է սուրբ խաչը
որ Մարիամ մադդաղենացւոյն մեղքը
լըվաց, աւազակը արքացուց, Բարաբ-

բան խաղցուց, հեթանոս հարիւրա-
պետը փրկեց, ես որ առ սուրբ խաչին
պըղծվեր կեցեր եմ, մեկը իս չկրնար
քաշեր առներ, մեկը իս չկրնար դա-
տապարտեր։

Եւ դուն ով բարի Յիսուս, լիշէ որ
հաքի օրդ ինչ նեղութիւններ քաշե-
ցիր, խաչին վրայ թևերդ բացիր իս
մեղաւորս գրկելու համար, հինգ վի-
րաք վիրաւորվեցար, սուրբ արիւնդ
գետի պէս վաղցուցիր, որ իմ մեղքերս
իմ աղտոտութիւնս լուանաս. ահա
հասաւ ան օրը՝ ան ժամը՝ որ իս սրբեմ,
իս գրկելով ազատեա թշնամիներուն
ձեռքէն՝ որ կուզեն իս տանելու։

Ամէն բարեկամներէն՝ նաև երկ-
նաւոր Հօրէն թողվեցար, բայց ինչպէս
որ դուն մեղաւորները չթողուցիր,
քու կողդ բացիր, տեղի ապաստանի
ըլլցուցիր. եաբնակ մեղաւորաց հա-
մար գլուխդ խոնարհեցընելով սուրբ
հոգիդ երկնաւոր Հօրդ ձեռքը աւան-
դեցիր, պահէ անանկէնէ զիս զմեղա-
ւորս քուկին խաչիդ զօրութեամբը։
Վասն զի իմ հոգիսալ ամէն սեղ-

ծուածնեբէն Թողված՝ ապաւինելու տեղ կըմնարուի. քուկին խաչելեալ դիրկդ կըդիմի, բացված կողդ մէջը կապաւինի, ընկալ զիս, Թող տուր որ քեզի գամ: Ահա կըԹողում աշխարհ, քուկին ձեռքդ կաւանդեմ իմ հոգիս, ներբէ իմ մեղքերուս, մի ձգեր երեսդ, վասն զի դու ես Աստուած փրկիչ իմ. առաջի քո է ամենայն ցանկութիւն իմ, առ քեզ փափագի հոգի իմ:

Աղաչեմ Յիսուս փրկիչ իմ. վասն փրկագործութեան սիրոյդ՝ որով իս սիրեցիր, և իմ փրկութեանս համար այսչափ չարչարանք քաշեցիր, աս ժամուս իս փրկէ, աստուածային արդարութենէդ իս ազատէ:

Սաղմոս:

Տէր, փրկեա զմեզ, և քաւեա ըղմեղս մեր վասն անուան քո: Հը:

Փրկեա զիս'ի Թշնամեաց իմոց,տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի:

Պանդուխտ եմ ես առաջի քո,

նժդեհ և անցաւոր որպէս ամենայն հալք իմ։

Թոյլ արա ինձ զի հանգեայց , մինչ զի երթեալ լցեմ , ուսոյն ոչ ևս գտա նիցիմ ։ ը

Հանես զոգի ի նոցանէ , պակասին և ի հող դառնան ։

Առաքես զոգի քո և ստեղծանին , և նորոգես զերեսս երկրի ։ ձ

Դարձ անձն իմ ի հանգիստ քո , զի տէր օգնեաց քեզ ։

Փրկեաց զանձն իմ ի մահուանէ , հաճոյ եղէց առաջի տեառն յերկրին կենդանեաց ։ ձժ

Լ՚ը իմ Աստուած պաշտպան , և տուն ապաւինի ապրեցուցանել զիս , զի հզօրիչ իմ և ապաւէն իմ դու ես ։

Վասն անուան քո տէր առաջնորդեցեր ինձ , և անուցեր զիս , և հանցես զիս յորոգայթէ յայսմանէ որ թագուցին ինձ ։

Դու ես պաշտպան իմ տէր , և ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ ։ը

Այլ աղօթք։

Յոյս մեր բանդ Աստուած, և միշ-
նորդ վերկուրեէ մերոյ Յիսուս Քրիս-
տոս, երբոր հոգեվարուրեանս ա-
տենը կըհասնիմ, երբոր ես վերջին
Թռչակս առած սուրբ հաղորդու-
Թեամբ կրպատրաստուիմ քու դա-
տաստանիդ առջին ելլալու, ուրիշ
նէրը կրպատրաստուին հողին տակը իս
Թաղելու, սատանանէրը այսք չա-
րուԹեան՝ օդոյն մէջը կրլեցվին հո-
գիս արգելելու որ Աստուած չիտես-
նամ, իրենց պէս արատաքին խաւարը
ծնամ: բանասարկուն իր նախանձէնլեց-
ված, արբանեակներով վրաս պիտոր
վազէ, դատաստանիդ առջին պիտոր
քաշէ, արդարուԹեամբ պիտոր ուզէ
իս դատապարտել տալ, իմ մեղքե-
րուս տէրԹէրները առջիդ Թափելով
մահացու և նեբելի մեծ ու պզտիկ
մեղքերս յիշեցընելով։

Դուռ արդար անհաւատ դատաւորդ՝
Թէ որ ան տեղը արդարուԹիւնդ

մինակ նայելու ըլլաս, ես պարտաւոր
կ'ելլամ, կըզատասպարտելիմ յաւի-
տենից կորուստը. բայց մեկալ դէս-
ցէն յիշէ ան առենը քուկին գթու-
թիւնդ, մանաւանդ ամենէն առելի յի-
շէ քուկին ըսածներդ: Դուն ըսիր
ՏԷր իմ անուտ բերնովդ. Որ ոե ո-
պիղէ 'ի սմանէ՝ մի մեռանիցի: Երբ ոե
ոապիղէ 'ի հոգէ յայսմանէ՝ ելցցէ 'ի յա-
ւիտեան: Հիմա ես եմ որ Ճաշակեր-
եմ քու սուրբ հացդ, որ է քու
սուրբ անմահական մարմինդ, մեկ
մարմին և արիւն ելլեր եմ քու հետդ,
ինչպէս ալիտը գատապարտեա մեռ-
ցընես յաւիտենական մահուամբ,
ինչպէս կրնաս մոռնալ քու խոսքդ
իմ չարութեանս համար: Դուն ըս-
իր որ. Եթէ ինձմէ եմ չառնէ հօր, և որ
ոապէն պիտ, և նա ինձմէ չառնէ իմ: Ե՛ս
չէ թէ մինակ մեկ անգամ, հապա շատ
անգամ Ճաշակերեմ զքեզ ով ան-
մահ հաց. և իմեր եմ սուրբ արիւնդ
անմահ բաժակէն, ան անգին արիւ-
նը՝ որուն մեկ կաթիլը հերիք է ամ-
բողջ աշխարհ փրկելու:

Իրաւի որ՝ես արժանի եմ բիւրդա-
տապարտութեան, վասնզի ուրիշ ան-
թիւ մեղքերէս զատ՝ քու սուրբ մար-
մինդալ անարժանութեամբ ու սըր-
բապղծութեամբ առեր եմ չատ ան-
գամ, բայց տես Տէր, որ քու սուրբ
արիւնդ իմ սիրտս ընդուներ եմ, ինչ-
պէս դատապարտվի ասանկ քրիստո-
նէն. ինչպէս խաղալիկ ըլլայ սատա-
նային իմ մարմինս՝որ քու սուրբ մար-
մինովդ է կերակրըված:

Անանկէնէ մինակ ասոր համար որ՝
չըլլայ թէ սատանան ծաղր ընէ աւե-
տարանին խօսքը, կաղաչեմ իմ մեղ-
քերս քուկին սուրբ արեանդ համար
լուանաս, քաւես, դոյես, և քու
սուրբմարմնովդ անմահացընես յաւի-
տենական կենօք: Մի ատասդ թշնա-
մին թէ յաղթեցի նմա, կամ նեղնիք
իմ ցնծասցեն, թէ ես սասանեցայց:
Ես յոյսդ ունիմ քո տէր յուսա-
ցայ, ցնծացաւ սիրտ իմ ի փրկու-
թեան քում, օրհնեցից զտէր զըա-
րերարդ իմ: Լուր մեզ Աստուած փըր-
կիչ մեր, յոյս ամենայն ծագաց երկ-

լի: Եւ ով է մեր յոյսը և փրկիչը, ե՞
թէ ոչ դուն Յիսուս. ով է մեր բա՞
րեխօսը, եթէ ոչ դուն Նորոգ կտակա՞
նաց միջնորդ Յիսուս, որոյ հեղումն
արեան առաւել խօսի քան զՀաբելին:

Տէր, ա՛ռ ՚ի երիցո՛ւք, բանս կենաց
յո՛ւիւնականաց ունիս, և մե՛ հա՛ւատա՞
ցած և ծանեա՛ւ: Տէր, որո՞ւն երթանք,
որո՞ւն կրնանք ասանկ Թշուառութե՞
օրը, ուր մեկ բարեկամ մը չկրնար
օգնել. քեզի կըդիմենք, որուն քովը
անանկ խօսք կայ որ յաւիտենական
կեանք կըբերէ: Ասանկ ըսաւ Պետրոս
առաքեալը, երբոր լսեց որ քուկին
սուրբ մարմինդ պիտոր ըլլայ մեզի հաց
կենդանարար: Քուկին խօսքդ բունե՞
լով թէ ով որ սուրբ մարմինդ և
արիւնդ ՃաշակէՀ, յաւիտենական
կեանք կունենայ,աս անսուտ խօսքիդ
բոլորով սրտիւ հաւատալով, քուկին
սուրբ մարմնովդ կերակրվեցայ, ինծի
Թոշակ Ճանապարհի առի: Թէ որ
գործք մը չունիմ, գոնէ հաւատքիս
համար հասիր ինծի, ազատէ զիս ար՞
դար բարկութենէդ, վասն զի հա՞

աստուածաք թէ Դուք էս որդի Աստուծոյ կենդանւոյ : Մատիցուք այսուհետև համարձակութեամբ առաջի աթոռոյ շնորհացն նորա , զի ընկալցուք ողորմութիւն , և գտցուք շնորհս ի դէպ ժամանակի օգնականութեան :

Սաղմոս :

Կերիցեն անանկաք և յագեսցին , օրհնեսցեն զտէր , որ խնդրեն զնա :

Կերան և երկիր պագին նմա ամենայն ազգաք երկրի , առաջի նորա անկցին ամենեքեան որ իջանեն ի հող :

Անձն իմ նովաւ կեայ , և զաւակ իմ ծառայեսցէ նմա :

Պատմեսցի տեառն ազգ որ գալոցն է : ի՜ :

Որպէս գթայ հայր ի վերայ որդւոց իւրոց , այնպէս գթասցի տէր յերկիւղածս իւր :

Զի նա գիտաց զաստեղծուածս մեր , և յիշեաց թէ հող եմք :

Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր , որպէս ծաղիկ վայրի՝ այնպէս ծաղիկ :

Ընչէ՞ ի նմա հողմ, և ոչ է, և ոչ ևս երևի առեղն նորա։

Բայց ողորմութիւն տեառն ինձ յաւիտեանս յաւիտենից ի վերայ երկիւղածաց իւրոց։

Տէր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր. արքայութիւն նորա ամենեցուն տիրէ։ Ձ։

Այլ նա ինքն գթած էր, քաւէր զմեղս նոցա, և ոչ ապականէր։

Յաճախէր դարձուցանել զբարկութիւն իւր։

Ցիշեաց թէ մարմին են նոքա, հոգի որ երանէ՝ այլ ոչ ևս դառնայ։ Հէ։

Այս աղօթ։

Տէր, առանց քեզ ես մէկ ոչինչ մինեմ, առանց քեզ թշուառութիւն եմ, նոյն ինքն մեղք եմ, ամէն աշխարհիս բարիք՝ չարիք են, առանց քու օգնութեանդ կընիմ, կոչընչանամ։ Մի թողուր զիս երեսէ։ Տէր իմ, քու ստեղծուածդ եմ, քուկին արեամբդ փրկուած, մի թողուր ա-

րարիչ իմ , Թագաւոր , լոյս , կեանք , և ամենայն ինչ իմ : Եւ զքեզ ուրա- ցայ գործքերովս , եւ քեզն Թշնա- մութիւն ցըցուցի , զոր ինծի գԹու- Թիւն ցըցու : Իմ բնութիւնս մեկ որդ մը , հող և ապականութիւն մընեմ , գոր ինքդ Աստուածութիւն , լոյս , կեանք , բարերարութիւն , գԹութիւն , որ չես կրնար ուրիշի չարիք հատու- ցանել : Միշտ նեղող , միշտ գԹած , գԹա , նեղեա ՚ի վերայ իմ ամ մար- գասէր տէր եղբի ատենս , երբոր սի- տող լինիմ , երբոր սիտող երԹամ մեկ աշխարհ մը որ չկայեմ : Առաջ նորդ , ուղեկից լեր տէր մարդասէր աս ճամբուս մէջ՝ որ ըսիր . Ե՛ս եմ ճանապարհ , և ճշմարտութիւն , և կեանք :

Սաղմոս :

Դարձոյց զանձն իմ առ իս , և ա- ւանձնորդեաց ինձ ՚ի ճանապարհս ար- դարութեան վասն անուան իւրոյ :

Թէպէտև գնացից ես ՚ի մէջ սառե-

բաց մահու , ոչ երկեայց ի չարէ՝ զի դու տէր ընդ իս ես :

Ողորմութիւն քո տէր զհետ իմ եղիցի զամենայն աւուրս կենաց իմոց , զնաւել ինձ ի տան տեառն ընդ երկայն աւուրս : ի֊ :

Տէր ապաւէն եղեր մեր ազգէ մինչև յազգ :

Հազար ամ յաչս տեառն որպէս օր երեկի զի անց , որպէս պահ մի գիշերոյ :

Ամենայն աւուրք մեր նուաղեցան , և ի բարկութենէ քումմէ խռովեցաք :

Ժամանակ ամաց մերոց անդադար որպէս սարդի , և թիւ աւուրց մերոց ի նոսա ԼՕԹանասուն ամ :

Ապաթէ առաւել հասութեսուն ամ , որ ինչ աւելի քան զայն՝ ցաւոք և հեծութեամբ :

Դարձ տէր , մինչև յերբ . ամխիթարեա ի ծառայս քո :

Հայեա տէր ի ծառայս քո , և ի գործս ձեռաց քոց , առաջնորդեա որդւոց նոցա . և եղիցի լոյս տեառն Աստուծոյ ի վերայ մեր : ձ֊ :

ԱՅԼ ԱՂՕԹՔ։

Ո՛վ որ վասն իմ երկինքը Թողութեան երկիրս եկար, մարմին առիր մարդ եղար, ողորմեա ինձ։

Ո՛վ որ վասն իմոյ փրկութեան երանելիքդ տարի աշխարհիս վրայ աշխատեցար, ի հասեալ ժամուս ողորմեա ինձ։

Ո՛վ որ վասն իմ արժանի համարեցար սուրբ արիւնդ Թափելու, ի ցաւագին ժամուս ողորմեա ինձ։

Դուն այն տէրն ես, որ իս ազատելու համար այնչափ խորհուրդներ սահմանեցիր։

Դուն այն Աստուածն ես, որ իմ փրկութեանս Համբոյ բանալու համար՝ այնչափ գանձ չնորհաց բացիր բաժնեցիր։

Հիմա ես հասեր եմ իմ վերջին ատենս, կը մեռնիմ, քեզի կուգամ, մի դարձընիր երեսդ. մի պարապ հաներ քու անչափ աշխատանքդ ու տէր ըլլալեանց։ Յիսուսիդ անուանը ա-

սաւինեբեմ բոլորով սրտիս, անուն
որ ի վեր է քան զամենայն անուն,
յորոյ անուն ամենայն ծունր կրկնեսց
ցի երկնաւորաց և երկրաւորաց, և սանդ
դարամեսականաց: Զարթի Յիսուս
զզօրութիւնս քո, և եկ ի կեցուցա-
նել զմեզ: Աստուած զօրութեանց
դարձո զմեզ, երևեցո զերեսս քո ի
մեզ և կեցցուք:

Յիշէ քու խօսքերդ որ ըսիր. Աթ-
ռի դաստատութեան է ալեաբհիս այսորիկ,
այնմիկ իշխան ալեաբհիս այսորիկ ընդ-
կէսոյ արդարս: Դուրս ըրէ հալածէ
սատանան, որ իշխան եղերկ աշխարհ
հիս, դուն որ լմնցուսին դժոխքը քա-
կեցիր, արդարոց հոգիքը սատանային
ձեռքէն խալըսցուցիր:

Յիշէ քու խօսքդ որ ըսիր. Ե՞ է
յորժամ բաբչըսցայս յերկրէ, զամենեսին
ձգեցից առ ինս: Եսալ ան հաւատա-
ցեալներուն հանիրքին մէջէն եմ,
դուն որ բարձրցար վայրէն վայր,
ձեռվընդդ տարածեցիր խաչին վայ
մեղաւորներդ գրկելու՝ խալ զմեզ,
խալ քեզի ձգէ ամենակալ ձեռքովդ,

ջըլայ Թէ յափշտակէ իս առիւծը։ Նայեա՛ց յիս աչօք ողորմութեան քո։ Իսկ արդ՝ յիշեա՛ և տե՛ս Թէ ո՛վ է իմ հանգիստ, միթէ՝ ի զո՞ւր ինչ ստեղծեր զամենայն որդիս մարդկան ։ Ո՞վ է մարդ որ կեցցէ և ոչ տեսցէ զմահ . կամ փրկեսցէ զանձն իւր ի ձեռաց դժոխոց ։ Ո՞ւր են ողորմութիւնք քո առաջինք , զոր երդուար Դաւթի ճշմարտութեամբ քով։ Սաղմոս։ ձբ։

Ո՛վ իսկ փրկութեան , ապաւէն յաւուր մահուան ։ Ո՛վ իսկ աղբիւր բարութեան , մեղաւորաց ապաստան։ Ահա տեսանեմ զտէրն իմ Քրիստոս բազկատարած խաչէն կախեալ , որ գլուխը խոնարհեցընելով, Թևերը բա՜ նալով , պատրաստ կեցեր է իս գրկե՜ լու , քաղցր ձայնիւ իս կրկանչէ եր՜ կինքը ։ Եկայք առ իս ամենայն աշ՜ խատեալք և բեռնաւորք , և ես հան՜ գուցից զձեզ ։ Ա՛ձանով կանչե՜ լով , քու սուրբ արիւնդ յիշելով Ներէ՛ Տէր իմ , Ներէ՛ իմ ծանր մեղքե՜ րաս . Թող որ պարզերես ելլայ քու առջիդ աս իմ հոգիս , ու քու սուր՜

բերուք հետ քեզ փառաւորել յաւիտեան: Բայց Յիսուս լուր ինձ, առաջնորդ լեր:

Սաղմոս:

Հոգի քո սուրբ և բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ:

Վասն անուան քո տէր կեցուսցես զիս, արդարութեամբ քով հանցես 'ի նեղութենէ զանձն իմ:

Ողորմութեամբ քով սատակեսցես զթշնամիս իմ, և կորուսցես զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ: Ձիւբ:

Տէր լուր աղօթից իմոց, և աղաղակ իմ առ քեզ եկեսցէ, մի դարձուցանէր զերեսս քո ինէն:

Յաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո առ իս զականջն քո:

Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ, և ոսկերք իմ որպէս խոհիւ չորացան:

Հարայ ես որպէս խոտ, և սամանքեցաւ սիրտ իմ. կցեցաւ ոսկր իմ 'ի մարմին իմ:

Աւուրք իմ որպէս հովանի անցին, և ես որպէս խոտ ցամաքեցայ : Ճա : :

Աղօթ+ Յիսուսի ի վերջին կռուին իւրոմ, ի ժամս մահուան վասն ամենայն քրիստոնէից : Յոհ . ժէ :

Յիշէ տէր իմ Յիսուս, որ երբոր ցաւագին օդս հասաւ, մեռնելու պատրաստութիւն կրեմնայիր իմ փրկութեան համար, ան օրը աչքերնիդ բուդ կոտակ ընելէն ետև՝ ելար ցաւագին սրտիւ աղօթք ընելու երկնաւոր հօրդ ամէն քրիստոնէից փրկութեան համար՝ որոնց մեկնալ ես եմ : Ես հիմա իմ հոգեվարութեանս առնը ան քու աղօթքդ քեզի կըմատուցանեմ, քու աղօթքովդ քեզի կաղաչեմ , որ ղՀայր Աստուած փառաւորելով եաքը իրեն աղաչանք ընելով քրիստոնէից համար , ասանկ ըսիր :

Ես վասն նոցա աղաչեմ, զորս եպուրն ինձ , զի ո՛ն են :

Հիմա ետաղ ծառայ քու հօրն երկնաւորիս որդիս եմ սուրբ մկրտութեամբ,

անանկ է նէ լինի հանարաչ ապաչէցիր
ան առէնը , հիմա ալ ապաչէ ինդրէ
քաւութիւն , Թողութիւն , և փրկու-
թիւն :

Պահէա զնոսա յանուն ք· : Սուրբ ա-
րա զնոսա ճշմարտութիւ ք· վ· Ըսիր :

Ընանկ է նէ պահէլ ուզր իս հիմա
աստանային յարձակմանէն , պահէլ
ուզր աստուածային արդար դատաս-
տանէն՝ որ հիմա բացվի պիտոր իմ
վրայ , և արբէ մաքրէ իմ ամէն մեղ-
քերուս ապաստութիւնը :

Ո՛չ վասն նոցա միայն աղաչեմ , այլ ե
վասն ամենայն հաւատացելոց բանիւն նո-
ցա յիս :

Ահա աս խօսքդ որ զուրցեցիր , յոյս
փրկութեան է լինէլ , խօսք միխիթա-
րութեան , և քաջալերութեան իմ
աս ցաւագին առենս . ցրցուցիր որ՝
չէ թէ միայն առաքեալց համար ըրիր
աս աղաչանքը , այլ նաև ամենայն հա-
ւատացեալ քրիստոնէից համար որ
աշխարհ պիտոր գան , որոնց մէջը ես
ալ կամ : Մեղաւոր եմ՝ բայց հա-
ւատացեալ , չարագործ՝ բայց զղջա-

ցեալ, բոլորովին յուսացեալ՝ի քեզ Քրիստոս, յոյս իմ՝ի մանկութենէ իմմէ, յոյս իմ՝ի ժամանակի ծերու- թեան իմոյ, և այսօր յոյս իմ յա- ւուր մահուան իմոյ:

Եւ պիտանի ղոր եղեր ինձ, եթե նո- ցա, ի ինէն մի որպէս և ես ի եմ:

Հայր երկնաւոր՝ ըստ որում կաղաչեմ որ մեզ ըլլան մեզի հետ, միանան մեր Ա- ստուածութեան փառքը տեսնալով, ինչպէս որ մենքալ մեզ ենք: Օրհնեալ լեսի այն բերան Յիսուսի, գովեսցի և փառաւորեսցի այն լեզուն Քրիստո- սի, որ ինձի համար սաստիկ զօրաւոր բարեխօսութիւն կընէ:

Հայր, ղոր եղեր ինձ, կամիմ զի ո- ւր եւն եմ, և նոքա ինձեն ընդ ես, զի պետանիցեն զիտութեան իմ:

Փառք մարդասիրութեան քո Յի- սուս, որ ան ցատագին օրդ, քուկին ցաւերուդ տանջանքներուդ մտմտուքը մեզ դի թողլով իմ փրկութիւնս կըհո- գայիր, իս մեղաւորս Հօրդ հետ հաշ- տեցընել կաշխատեիր. ինձի համար միշտորդութիւն կընեիր որ՝ դուն ուր

եա, ես ալ հոն ըլլամ, քու փառքդ տեսնամ. անանկ ենք ես ասկէց ետքը ինչո՞ւ համար տրամիմ տարակուսիմ իմ փրկութեանս համար:

Յիշէ տէր իմ Յիսուս, սա եղքի ա-ղօթքդ որ ըրիր ինծի համար, ման-ղի խիստ ցաւագին տրտիւ ըրիր. իմ ցաւագին առեղնալ հասեր է, իս քովդ ա՛ռ. հիմա իշխան աշխարհիս այսորիկ պիտոր գայ իմ վրայ մեղք վնասուե-լու, դատապարտուելու, իս կորսըն-ցընելու. գո՛ն անկայ կորսնցո՛ւ, դատապարտէ, գո՛ն որ չես ուզեր քու կենդանութիդ մէկը կորսնցընել: Աստուածային արդարութեան դա-տաստանը ինչ որ զուրցէ իմ վրայ դա-տաստանին մէջ, ես միշտ սա քու ա-ղօթքդ քեզի կրկնեցընեմ, քու ա-ղօթքովդ քեզի կաղաղակեմ, ուրիշ բան չունիմ. և կրհաւատամ որ ա-սանկ աղաչանքովդ Յիսուսի չեմ կորսըվիր, այլ յաւիտենական կեանքի հասնիմ, և Աստուած ամենայն ողորմութեան:

Սաղմոս :

Արդ՝ընդէր արտումէս անձն իմ, կամ ընդէր խռովէս զիս, յուսա առ Աստուած, խոստովանեա նմա, փրկիչ երեսաց իմոց Աստուած է :

Եաօրհնեցից զՏէր ի հնումէ ի հնումն ետուն, և ցնծացայց առաւօտուց յողորմութեան քում :

Զի եղեր իմ պաշտպան, և տուն ապաւինի յաւուր նեղութեան իմոյ օգնական իմ :

Քեզ սաղմոսասացից Աստուած ապաւէն իմ, Աստուած ողորմութեան իմոյ :

Ոչ թագեաւ ոսկր իմ ի քէն զոր արարեր ի ծածուկ, և կար զօրութեան իմոյ ընդ ստորինս երկրի :

Զանգործս իմ տեսին աչք քո, և ի գիրս քո ամենեքեան գրեցան :

Փորձեա զիս Աստուած, և ծանիր զսիրտ իմ. քննեա զիս և ծանիր զշաւիղս իմ, և տես թէ իցէն անօրէնութիւնք ի ճանապարհս իմ. և առաջ

նորդեա՛ ինձ՛ի Ճանապարհս քո յա-
վիտենից ։

Դու յարուցեալ դթասցես՛ի վե-
րայ սիոնի , ժամանակ դթալոյ նորա
հասեալ է ժամ ։

Պակասեցան՛ի ցաւոց կեանք իմ , և
ամք իմ յոգւոց ելանելոյ ։

Աղօթ ած սուրբ Աստուածածնին ։

Ո՛վ սիրուհի փաստաբան մեր , ե-
կաւ հասաւ ան առեւնը՝ որ ինծի հա-
մար խօսիս բարեխօսես ահաւոր ա-
ռեղին մէջ Քրիստոսի առջեւն ։

Ո՛վ պաշտպան մեր , եկաւ առեւնը
իս պաշտպանելու սատանային ձեռ-
քէն . ցուցո՛ւ քուկին պաշտպանու-
թիւնդ , քուկին մայրական զօրու-
թիւնդ ։

Ո՛վ հարսն ընծայեալ յերկրէ յեր-
կինս , մեք երկրաւորքս քեզ հարս խընդ
կեցինք երկինքը ամենասուրբ Երրոր-
դութեան , որ սատանայ սոսկալի օրըս՝
մեր ողորմելութեան հանախ ։

Դու՛ այն Եսթեր տիկինն ես , որ

մէկ խօսքով ջՀաման Թշնամին՝ սա-
սանան՝ կորսընցուցիչը , ամէնէն հաւա-
տացեալները մահուանէ ազատեցիչը .
ազատէ իւ յաւիտենական մահուանէ.
կորսընցնէ հինա բանսարկուն սատա-
նան , որ իմ ետևէս կըպըտըտի կոր-
սընցնելու :

Դու այն օրինակեալն Յուդիթ ան-
կիւն ես , որ ջՀոլոփեռնէսէ սադայէ-
լը սպանեցիր , խեղճ քաղաքը Բե-
թուլա՝ սուրը եկեղեցին մահուան
պաշարմանէ խալըսեցիր . ահա եկեր-
է Թշնամին սատանայ , իմ մեղ-
քերով իւ պաշարեր է , եւ՛ր ցըցնէ
քու զօրութիւնդ , և իմ հոգիս խալը-
ցնէ աս սադնապէս , աս պաշարմա-
նէս :

Միայն քու բարեխօսութիւնդ իւ
պիտոյ փրկէ . թէ որ դուն այսօր
քուկինդ ինկնութեան իշխանութիւնդ
չիբանեցընես , մայրական պաշտպա-
նութիւնդ չիցըցնես , չիբարեխօսես ,
ես կորսըված եմ . իմ աղօթքներս ան-
արժան են , պիղծ են Աստուծոյ առ-
ջին . իմ ձգնութիւններս ապաշխարու-

թիւններս ոչինչ են, սիրոս միաքս չի-
տակ չեն, Աստուծոյ հաճոյ չեն: Դուն
ես միայն մայր Աշմարիա, որ իմ աղ-
տոտութիւնս կրնաս դուցէ, իմ դէ-
շութիւնս ծածկել. վասն զի մէկ խօս-
քըդ՝ երկուք ջըլլար Քրիստոսի առ-
ջին:

Թէ որերկրաւոր Թագուհիներ մա-
հասարտմարդը ընդհանրապէս կա-
զատեն մահուանէ, որչափ փառքով
աոր ըլլայ Տիրամայր, երբոր դատաս-
տանին օրը ամէնուսնալ յայտնի ըլլայ՝
որ իմ փրկութիւնս յուսահատած
էր, միայն քուհեռքովդ եղաւ փրկը-
վիլս, միայն քու բարեխօսութիւնդ
պահեց զիս արդար դատաստանէն Աս-
տուծոյ: Ան առնը ուրախութեամբ
կարենամ եսալ քեզի հետերգել քու
երկնային երգդ. Մեծացուցէ անձն
իմ զտեր, և ցնծացաւ հոգի իմ Աստու-
ծով փրկչաս իմով: Ողորմութիւն ա-
րար յազգաց յազգս երկիւղածաց իւ-
րոց, և արար զօրութիւն բազկաւ
իւրով:

Եւ դուն տէր իմ Յիսուս նախա-

խնամով ամենայնի, ինձի պէս մենծ մե-
ղաւորը մօրդ բարեխօսութեամբը փրր-
կելով, փառաւորէ մօրդ անունը. ին-
ծի պէս ողորմութեան անարժանը՝
արժանաւոր ըրէ տէր իմ, նայելով
քու մօրդ միջնորդութեանը. աս ընե-
լով մօրդ անունը բարձրընայ ամեն-
նուն առջին: Դուն պատուէր տվիր
պատուելոյ զծնօղս. դուն իս մեղա-
ւորս և անարժանս թէ որ նեղելով
փրկես, ամենեն աւելի կըպատուես
զմայրդ Թագուհին հրեշտակաց, որ է
պարծանք աշխարհի, անդին գանձ
եկեղեցւոյ, ապաստան մեղաւորաց,
փրկութիւն յուսահատելոց 'ի ժա-
մու մահուան:

Աս աղօթքներէս զատ՝ թէ որ կու-
զես, կրնաս Օխտը խոցին աղօթքնէ-
րը ընել: Աւագ շաբթիին աղօթք-
նէրը, ու մեծապաքին Վեցերորդ շաբ-
թիին աղօթքներէը:

ԱՂՕԹՔ

ՎԱՍՆ ՆՆՋԵՑԵԼՈՑ

Տէր Յիսուս Քրիստոս, արարիչ և փրկիչ ամենայն աշխարհի, որ յա՛րուցեար ամենէն աշխարհս ուրախա՛ցուցիր. յիշէ այսօր քու արարչական սիրովդ մեր ննջեցեալց հոգիքն՝ որ ոչնչէն քաշեցար. մանաւանդ մեր ծնողաց հոգիքը, ու որոնց համար աւելի պարտական ենք աղօթելու։ Յիշէ նոյնպէս անյիշատակ հոգիները, քու սուրբ ծննդեանդ ու մարդանալուդ համար կաղաչենք՝ թողութիւն առնուր այսօր անոնց յանցանացը։

Յիշէ քու սուրբ չարչարանքներդ, հինդ վէրքդ, քու սուրբ անգին արիւնդ՝ որ մեզի համար թափեցիր. և

քու արեամբդ բարեխօսելով ինձէցուս
աստուածայնին արդար դատաստանին
բարկութիւնը: Տէր ամենակալ
Թարւելթիւն, Թեթեւութիւն, մանա-
ւանդ ազատութիւն իրենց տանջանք-
նէրէն, որ հրեշտակաց և սրբոց մէջ
խառնելվելով, անունց հետ մեկտեղ
օրհնեն զքեզ յաւիտեան. Ամէն:

Այլ աղօթք:

Ողորմէ տէր իմ ողորմէ. դու որ
երկնքէն ինձար, մեզի համար մարմնա-
ցար, դուն որ խաչին վրայ ամենա-
կարօղ ձեռվընդդ տարածեցիր, գամ
վեցար, ու մեզի համար սուրբ արիւ-
նդդ թափեցիր, դուն որ անմահ բնու-
թիւն ըլլալով մեզի համար մեռար
գերեզման մտար. դուն որ նորէն ող-
ջընալով, յարութիւն առնելով, մե-
ռած բնութիւնիս կենդանացուցիր.
ամէնուսալ յոյս յարութեան տվիր,
աշխարհ նորէն փրկեցիր, ու համբառ-
նալով երկինքը նստար ընդաջմէ հօր:
Ա՛ ամէն բանն որ քաշեցիր տէր

իմ մեղն համար՝ լինէ, այնչափ ննջե-
ցեալքը քուկին անդամնէդդ միաքդ
բեր, քու արդիւնքնէդդ պարապ մի
հաներ. ըզցոյնը քու հզօր կարողու-
թիւնդ տէր իմ առաջի սրբոց և հր-
րեշտակաց. ողորմէ մեր ննջեցեալց,
սրբոցդ հետ մկրտեալ այսօր արժանի
ըրէ բնակակից ըլլալ քեզ օրհնել յա-
ւիտեանս յաւիտենից. Ամէն:

Սաղմոս ԼԷ:

Տէր, լերկինս է ողորմութիւն քո,
ճշմարտութիւն քո մինչև յամպս:

Որպէս զի բազում ապարէր զողոր-
մութիւն քո Աստուած, այլ որդիք
մարդկան՝ ի հովանի թևոց քոց յու-
սացին:

Արբեսցին նոքա՝ ի պարարտու թէ
տան քո, և զուիս փափկութեան քո
տացես ըմպել նոցա:

Ի քէն է տէր աղբիւր կենաց,
և լուսով երեսաց քոց տեսանեմք
զոյս:

Ծագեա՛ զողորմութիւնս քո ոյք

Ձանազնեն զքեզ, զարդարութիւնս քո՝ ոյք ուղիղ են սրտիւք :

Այլ աղօթ :

Ո՛վ Յիսուս, որ պարտիզին մէջ այնչափ տրտմեցար, որ ինչվան արիւն քրտնեցար մեր փրկութեանը համար, ազատէ այսօր մեր մարմնաւոր ծնողաց հոգինէրը :

Ո՛վ Յիսուս, որ մեր փրկութեանը համար ձեռվընէրդ ոտվընէրդ ծակելով խաչին վրայ քաշկրտուելովդամ վեցար, յիշէ, ազատէ այսօր ան հոգինէրը, որ հոգևորապէս մեղի ծնօղ եղան :

Ո՛վ Յիսուս, որ խաչին վրայ ծարավեցար մարդկային փրկութեանը համար, ժիժկէ ծարաւը մեր ննջեցեալց, որ կրծարաւին կրփափագին աստուածային տեսութեանդ, ցրցո՛ւ այսօր արքայութեան մէջ քու փառդ մեր աղդականաց հոգինէրուն :

Ո՛վ Յիսուս քաղցրագութ, որ մեր փրկութեանը համար քացախ ու լե-

ղի ճաշակելով համբերեցիր, փրկիչ այսօրուան հոգիները՝ որոնց աւելի պարտականութիւն ունինք աղօթելու։

Ո՛վ Յիսուս մխիթարութիւն վշտացեալց, յիշէ՛ ան տրտմութիւնը՝ երբոր երկնաւոր Հօրէն թողութեան մեր մեղքին համար, թող մի տար աս հոգիները, մխիթարէ՛ այսօր քու տառապեալդ ան հոգիները՝ որոնցմէ մենք քաղեցարութիւն մը տեսանք աս աշխարհիս մէջ։

Ո՛վ տուրբ արիւն խաչելեալ Սիանծնի, ով անհուն արդիւնք զենման պատարագի, որ խորանին վրայ անմեղ գառան պէս զոհվելով կրպատարագիս։ Ա պատարագիդ անհուն արդեանցը համար կաղաչենք, յիշէ՛ անտուրբ հոգիները՝ որ քեզ սիրական են, բայց իրենց պակասութեանց պատիժը վճարելու համար կրպատժվին աստուածային արդարութեամբ։ Յիշէ՛ տէր քու առջի ողորմութիւններդ. թէ որ հին առենը անբան անասնոց պատարագի մը համար իրենց պատիժը կը դադրեցընէիր, քանի՛ աւելի պէտք է

ողորմիա քոյ անմահ գառինդ պատա-
րագին համար , դուն որ մեզի և մեր
ննջեցելոց համար կրպատարագվիս :
Ցիշէ տէր իմ Յիսուս , ինչ արամու-
թիւն որ քաշեցիր չարչարանաց ատե-
նը , երբոր քոյ բարեկամներդ , ծա-
նօթներդ , ամէնունալ քեզ թողուցին ,
չկար մէկը որ քեզ մխիթարէր : Ան
տրամութեանդ համար մխիթարէ այս
օր տրտմեալ հոգիըը մեր բարեկամ-
ներուն և ծանօթներուն , Յիսուս
ամենակարող , որ մեզի համար անանկ
ցաւ քաշեցիր որ՝ ամէն կարողու-
թիւնդ պակսեցաւ , ուժէ ընկելով ,
բոլոր արիւնդ թափելով գլուխդ խո-
նարհելով անանկ հոգիդ աւանդեցիր ,
մարդկային փրկութեան համար մե-
ռար . ազատէ այսօր տէր իմ ան հո-
գիները՝ որոնց մեկը պատճառ եղանք
մեզմէ . փրկէ տէր իմ ամէն հոգի-
ները , և արքայութեան քո ժառանգ
ըրէ որ քեզ փառաւորեն յաւիտեան .
Ամէն :

Ի խորոց կարդացի առ քեզ , Ես :

ՂՈՕԹՒ

ԱՒ ՏՕԹՆ ԽՆԴՈՒԹԻՒՆՍ

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ

Ա՛ստուածային խնդութիւն։

Խնդա՛, և ուրախ լեր ա՛վ ընդունա՛ր Աստուածոյ. միշէ այն ուրախութիւնը երբոր Գաբրիէլ հրեշտակ ուրախութեան աւետիսը միայն քեզ տուաւ. այնչափ կանանց մէջ դուն միայն ընտրուեցար առանց Հօրն երկնաւորի՝ մարմնական ըլալ Աստուածոյ, տէրն և քնակարան անբաւ Աստուածութեան, և անոր հետ մէկ տէր գործակից ըլալ փրկագործութեան մարդկային ազգին։ Ցիշեցուցա մեծ շնորհդ և անշահեցնէն ուրախու-

Թիւնդ սուրբ Աստուածածին, յիշէ այսօր իմ ողորմելի՛ Թիւնս, որ զանազան Թշուառութեանց մէջ ընկած, անբաւ փորձութեանց մէջ ձգած, աչքերէս ծովուն մէջը կը տատանիմ կընեղիմ մարմնաւոր և հոգեւոր տանջանօք, և մինակ յոյս իմ դուն ըլլալով քեզի ապաւիներ եմ բոլորով սրտիս: Յիշելով սա իմ Թշուառութիւնս, և քու կիւրեղութիւնդ, սուրբ կնձի այսօր մէկ շնորհք մը հոգեւոր ուրախութեան, փարատելով կնճռմէն ան ամէն տրտմութիւնները, յուսահատութիւնները, որ իմ մեղքերս կնճի կըբերեն:

Ողջոյն քեզ մարիամ:

Ա՛ե էլէոսէ խնդութիւն:

Խնդա՛, և ուրախ լեր ընտրեալդ՝ի մէջ ամենայն կանանց. յիշէ այն ուրախութիւնդ երբոր մայր Աստուծոյ եղար, կուսութեամբ ծնար ըզԲանն Աստուած, ուսկից որ՝ սերոբէները քերոբէները կըդողան, դուն

անիկայ զաւակ ունեցար, գիրկդ տա-
նելով, ձեռքովդ չօշափելով համար-
ձակ վայելեցիր, մայր եղար անոր՝ որ
աշխարհիս յոյսն էր և փրկութիւն, և
ամէնուն ուրախութիւն : Յիշէ սէր
սուրբ կոյս այն ուրախութեան ժամը,
և յիշելով տուր ինծիալ այսօր մէկ ու-
րախութիւն մը, յոյս տալով իմ մե-
ղացս Թողութեան, որ Թողութիւն
առնելով մեղքերուս՝ եսալ Յիսուսի
բնակարան ըլլամ շնորհօք. և յոյս առ-
նեմ զինքը տեսնալու արքայութեան
մէջ իրեն սրբոցը հետ. Ամէն :

Ողջոյն քեզ մարիամ :

Ա՛ երրորդ խնդութիւն :

Խնդա, և ուրախ լեր սուրբ Ա-
տուածածնին. պաշտպան, յոյս և բա-
րեխօս ամենայն քրիստոնէից. յիշէ այն
ուրախութիւնը՝ երբոր տեսար միա-
ծին որդիդ երկինքէն ինջած քովդ ե-
կաւ մահուանդ առեներ, երկինքը տա-
նելու համար. սերովբէները քերովբէ-
ները՝ դասք դասք հրեշտակաց՝ և ա-

մենայն սուրբք ընկերանալով, օրհնելով, ուրախանալով առվն երկինքը տարին: Յիշէ՛ ան ժամը ուրախութեան, և անանկ անպատմելի ինդութեանդ համար՝ որ Յիսուս մանչն քեզի պարգևեց, պարգևէ ինծիալ այսօր յոյս ապաւինութեան, տուր ինծի քուկին հզօր պաշտպանութիւնդ. ուշադիր փորձանք գայ վրաս մարմնաւոր, ուշադիր փորձութիւն գայ հոգևոր, սատանայէ՝ աշխարհէ ու իմ մարմինէս, քուկին հզօր անեղեայթ պաշտպանութեամբդ հանիս, պահես, պաշտպանես: Ա՛ս պաշտպանութիւնդ ցցընես ինծի մանաւանդ մեռնելուս առեն. երբոր ամէնէնալ իս կրթողուն կրծգեն, ան առեն քուկին մայրական պաշտպանութիւնդ առնալով միխիթարվիմ:

Ողջոյն քեզ մարիամ:

Ա՜ ՏԷՐՈՒԹԻՒՆ ։

Խնդամ, և ուրախ լեր կոյս անա՜ րատ, յիշէ այն ուրախութիւնը որ ու՜ նեցար, երբոր տեսար որ երկինքը ամ՜ ին սրբոց մէջ այնչափ հաճելացաւ քու վրադ ամենասուրբ Երրորդու՜ թիւնը, որ քովը առաւ, ընդ աջմէ մարդ դայեակ Յիսուսին նստեցուց, և ա՜ նանկ անհատնելի փառաք լեցուց որ՝ մէկին խելքը չհասանիր, միայն ամենա՜ սուրբ Երրորդութիւնը գիտէ, և դուն վայելելով կըզմայլես յաւիտեան ։ Ա՜ խնդութիւնդ յիշելով մի՛ ձգեր իս ա՜ սանկ Թշուառութեան խեղճութեան մէջ, ինծի՛ալ մէկ քիչ մը ան փառքէն պատրաստէ ։ Եւ որպէս զի եսալ հաս՜ նիմ ան փառքին, տո՛ւր որ վարքս շըտ՜ կեմ, զղջմամբ ու բարեգործութեամբ աշխատիմ, անանկով տո՛ւր որ կոյս ունենամ ալքայութեան և երանու՜ թեան, կոյս զԱստուած տեսնալու, և զքեզ մայրդ Աստուծոյ ան փառա՜ ցը մէջ ։

Ողջոյն քեզ մարիամ ։

Ա՝ հինգերորդ խնդրիւն։

Խնդամ, և ուրախ լեր դուստր լուսոյ Հօրն երկնաւորի. յիշէ այն ուրախութիւնը որ ունեցար երբոր Հայրն երկնաւոր տեսնալով քու ծայրագոյն խոնարհութիւդ՝ զքեզ դրաւ թագուհի երկնի և երկրի, մայրական հովանաւորութեամբ պաշտպանել ըզսուրբս, գթութեամբ գարձուցանել զմեղաւորս։ Ցուկին փառքովդ զարդարեցաւ լեցվեցաւ այն երկնային դրախտը, երկինքը եղած ամէն սուրբք և ամէն գասք հրեշտակաց յատուկ ուրախութիւն ունեցան՝ տեսնալով կոյսդ ամենախոնարհ ան փառքը բարձրըցած. և բոլոր եկեղեցին Քրիստոսի մեծ ուրախութիւն կխմանայ յիշելով քուկին փառքդ, որ եղար պարծանք քրիստոնէից, փառք Ադամայ և Եւայի։ Ա՛ խնդութեանդ համար տուր ինձի այսօր ով Թագուհի, սիրուհի երկնի և երկրի, շնորհք մը արդիւնաւորելոյ, որպէս զի չէ թէ մի-

այն մեղքերէ կորզվիմ, հեռընամ, հապա նաև արդիւնք վաստակիմ. քանի որ կեանք ունիմ, չունչս վրաս է, առենըս պարապ չանցընեմ, այլ իմ ամէն գործքս ի փառս Աստուծոյ ընելով վարձք չահիմ: Տ՛ուրալ որ ոչ չափ խաչ և նեղութիւն ունենամ, ան նեղութեանս մէջ մէկ ուրախութիւն մը խմանամ Աստուծոյ համար քաշելով իբեն կամացը ապաստան ըլլալով օրհնեմ զՀայրն երկնաւոր, որ սանկ մեծ նեղութեան քեզ զարձըցուց:

Ողջոյն քեզ մարիամ:

Ա՛ն վեցերորդ խնդութիւն:

Խնդամ, և ուրախ լեր մայր Բանին Աստուծոյ, յիշէ ան ուրախութիւնը ան փառքը որ ունեցար, երբոր քու սիրելի որդիդ միածին՝ որպէս զի առաջի հրեշտակաց և ամենայն սրբոց պատուեզքեզ իբրև մայրը մայրական պատուով ինչպէս որ արժանն է, զքեզ առաւ գործակից իր դատաստանին: Արդարութեան

դատաստանը իրեն պահեց, գթու-
թեան և ողորմութեան դատաստանը
քեզի յանձնեց. և կատարեալ իշխա-
նութիւն տուաւ որ՝ ինչ հնարհք ու-
զես իրմէ, իակոյն պիտոր ըլլայ, կա-
տարվի. որով եղաւ յոյս ամենայն
արդարոց քրիստոնէից, յոյս և ապաս-
տան մեղաւորաց: Վասնզով ան ծա-
ռանէդ՝ որ աս աշխարհիս մէջ յա-
տուկ ջերմեռանդութեամբ մը քեզ
կըծառայեն, քեզ դովաբանեն, մէկ
յատուկ հնարհք մը պիտոր առնեն աս
աշխարհս, և անդին երկինքը մէկ յա-
տուկ վարձք մը ու փառք. իակ ան մե-
ղաւորնէրը որ քեզի կըդիմեն, աս աշ-
խարհս հնարհք դարձի և ապաշխարու-
թեան պիտոր առնեն, և անդին փառք
յաւիտենական սուրբերուն հետ:

Հիմա ես որ գլուխն եմ մեղաւո-
րաց, և ապօթքով օխտը խնդրութիւն
նէրդ յիշեցընելով քեզի կըդիմեմ,
տուր ինծի այսօր կաղաչեմ հնարհք
դարձի և ապաշխարութեան, որ ծանր
մեղքերուս թողութիւն գտնամ, և
հնարհքներողութեան և քաւութեան

ամէն մեղքերուս պատիժներուն ։ վասն զի իմ չարաչար մեղքերուս համար շատ պատիժ քաշելու արժանի եղայ ։ Որպէս զի քուկին գթութեամբդ և միջնորդութեամբդ ցիւսուսին անաչառ դատաստանէն խալսիլ, և պատիժէն ազատուիլ, արքայութեանդմէ Աստուծոյ փառացը հետ քուկին փառքդալ տեսնելու շուտով արժանի ըլլամ , օրհնեմ զքեզ ցիւսուս միածին յաւիտեան , որ ամէնկ փառաց քեզ հասցուց ։

Ողջոյն քեզ մարիամ ։

Ա՜ ԵՕՒՆԵՐՈՐԴ ԽՈՐՀՈՒԲԻՆ ։

Խնդամ, և ուրախ լեր Հարսն անարատ Հոգւոյն սրբոյ ։ Լիշէ ան ուրախութիւնը որ ունեցար, երբոր տեսար որ Հոգին սուրբ քու ամենամաքուրկուսութեանդ վրայ զմայլելով զքեզ դրաւ գանձապետ իր ամէն ընորհաց, անանկ որ մեկ ընորհք մը չիբաժնըվիր չիտըվիր մեկի մը , ինչման որ քու ձեռքէդ չանցնի։ Ինչ մեծու-

թիւն, ինչ փառք, որ կրվայելես ով ամենօրհնեալ սուրբ Աստուածածին, որ ոչ երբեք պիտոր անցնի, այլ պիտոր մընայ յաւիտեանս յաւիտենից: Կաղաչեմ սուրբ Աստուածածին, աս խնդրուածիդ և աս փառքիդ համար տուր ինծի ընորհք ընդունելութեան, որ ընդունիմ ինչ ընորհք որ պէտք է հոգւոյս և մարմնոյս, ինծի և ամենն ազգականներուս, կենդանեաց և մեռելոց: Ինչ ընորհք որ պէտք է փրկութեան հասնելուս, դուն որ ձեռքիդ մէջը ունիս ծածկեալ ընորհաց գանձը, և մայրական գթութեամբ խնամես ամենն հաւատացեալները, հանէ աստուածային գանձէն ան ընորհքներէն, և արժանի ըրէ ընդունելու իս անարժանս, որ քովիկն բարեխօսութեամբդ աս աշխարհիս մէջ Աստուծոյ կամքը կատարելով, անդին աղաչութեան արժանի ըլլալով գովեմ, փառաւորեմ քեզ, և քենով զՀոգին սուրբ, որ յաւիտեան օրհնուի դրաւ քեզ իր ամենն ընորհաց:

Ողջոյն քեզ մարիամ:



W.H. Bontamps — Te Vanloo

ANNONCIATION
DE BOODSCHAP

ԱՂՕԹՔ

ԱՒԵՏԱՒԵՒՆ ՎԻՐՍ ԽՈՑՈՒԱՆՈՑ

ԿՈՒՍԻՆ ՄԱՐԻԱՄԻՒ

Ա՛ տաւչին.

Ո՛վ ցաւագին սուրբ կոյս Աստուա-
ծածին, յիշէ քու առջի խոցդ՝ եր-
բոր Սիմէոն ծերունին բերնովը լսե-
ցիր Թէ, ան կուսածին որդիդ որ կը-
դրկես՝ կրսիրես, ատեն պիտոր գայ
որ Հնան հակառակութեան ըլլայ.
անանկ բանէր պիտոր տեւնաս որ՝
սիրտդ խոցվի, իբր Թէ սուր խոթէին
սրտիդ մէջը: Ա՛ խօսքս լսեցէն եւս՝
սուրը սրտիդ չերաւ, Յիսուս չիչար-
չարուած՝ գուն սկսար սրտիդ մէջը խոց-
վիլու չարչարիլը քանի կընայէիր մի-

ածին Յիսուսին վրայ , սիրտդ ուրա-
խանալուն տեղը կըսըրսրէր կըտագ-
նապէր . արդեօք ինչ նեղութիւնների
պիտոյ քաշէ կըմտածէիր, ան մըտած-
մունքներով երասնեփրեք տալի կը-
տանջըվէիր :

Աոանք յիշէ սիրամայր , որ ինծի
համար քաշեցիր . որպէս ղի ես վրիկ-
վիմ, ես չիքաշեմ սատանային ձեռքէն՝
Յիսուս միածին յանձն առաւ իմ
տեղս քաշելու , անով քեզնայ ընկաւ
քաշելու աս խոցը: Եւ յիշելով առջի
քաշած վէրքդ , կաղաչեմ որ՝ այսօր
իմ սրտիս մէջը տպաւորես սուրբ
զրչման և արտասուաց,որ ինչվան ի
մահ ոչ երբեք պակսի իմ սրտէս ցան-
ապաշխարութեան . Հոգւոյն սրբոյ
շնորհքովը սկսիմ լալ իմ մեղքերս , որ
պատճառ եղան Յիսուսին չարչարա-
նաց , և քուկին ատանկ խոցվելուդ :

Աշխանկով Յիսուս ըլլայ ինծի կանգ-
նելու պատճառ և ոչ գլորելու . Յի-
սուս ըլլայ իմ սրտիս խորհուրդը, իմ
մեքիս յայտնութիւնը , ապաւորու-
թիւնը: Մտածմամբ ու ապաշխարու-

թեամբ անցը եմ իմ ճնացած կեանքս,
որով փառաւորվի առաջի սրբոց և
հրեշտակաց քոհկին առջև խոցեդ ար-
դիւնքը իմ վասյ։

Հայր մեր որ յերկինս ես։
Ողջոյն քեզ Մարիամ։

Ա- Եւ Ը-ԴՆ։

Ո՛վ ցաւագին ամենօրհնեալ կոյս
Մարիամ, յիշէ քոհկին երկրորդ քաշած
խոցդ, երբոր Հերովդէսին ձեռքէն
փախար Եգիպտոս. սրբոյն Յովսեփայ
հետ երկան ճամբորդութեան նե-
ղութիւնը քաշեցիր, որպէս զի Յի-
սուս խաղցընես Հերովդէսին կոտո-
րածէն՝ որ կուզէր սպաննել։ Ահա ես
եմ անՀերովդէսը՝ որ առաջ կեղծա-
որութեամբ երկրպագել կուզեմ
Յիսուսի՝ հոգը սպաննել. վայ ինծի,
քանի՛ անգամ անարժանութեամբ
առնելով սուրբ խորհուրդը հաղոր-
դութեան, իմ սրտիս մէջը խրաւցընե
ուզեմ սպաննել Յիսուս։

քուվին քաշածդ, տուր ինձի մէկ շնորհք մը դառնալու: Ինչպէս որ առաջ վախար Եդիպտոս, հեռըցուցիր զՅիսուս հալածչին ձեռքէն, եաքը դադարվելով հալածումը՝ դարձար նորէն հոն եկար, Յիսուս հետդ բերլով շնորհքնալ արքայութիւննալ հոն բերիր, ըրէ որ՝ եսալ դադրիմ մեղանչելէս՝ որ պատճառ կըլլայ Յիսուս հալածելու, սրտէս վախցընելու: Իմ դադրելովս՝ դառնալ Յիսուս դարձընես բերես նորէն իմ սրտիս մէջը շնորհք, անանկով սիրտս նորէն Յիսուսին բնակարան ըլլայ, և քուվին երկրորդ խոցիդ արդիւնքը ինձի համար ալ չահաւոր ըլլայ, տպրեցընելով յաւիտենական կորստենէ:

Հայր մեր որ յերկինս ես:
Ողջոյն քեզ Մարիամ:

Ա՜ Երրորդն:

Ո՛վ մայր ցաւագին, հերիք չեղաւ առջի քու քաշածներդ, հետդ տանելով բերելով զՅիսուս տառապան

քով աշխատանքով Եգիպտոսի երկան
ձամբորդութեան մէջ, հատա եր-
րորդ անգամ մեծ վէրք կրեցիր սրտիդ
մէջը՝ երբոր իրաւցընէ կորընչուցիր
զՅիսուս Երուսաղէմ նոր ճամբոր-
դութեանդ մէջ, իրեք օր սիրտդ սրո-
ւեցաւ պատառելով փընտռելով ու
դանաս այն անկորուստ գանձն աշ-
խարհի Յիսուս: Երբոր տաճարին մէ-
ջը գտար, ցաւագնեալ սիրտդ չիգի-
մացաւ, մայրական սրտով քու քա-
ջած տառապանքդ բացիր յայտնեցիր
Յիսուսի:

Հիմա իմ սիրտս կորնչուցեր ըզ-
Յիսուս, բայց ամենևին հոգ չունի
պտըտելու փընտռելու. այլ մէկ դի
թողլով զՅիսուս, իր հանգստութիւնը՝
երջանկութիւնը արարածոց մէջ օ-
տար տեղեր կըփընտռէ, և ոչ տա-
ճարի մէջ՝ սուրբ գործքերու մէջ,
անանկով մէկ հանգստութիւն մը
չկրնար գըտնալ. Յիսուսալ իր ե-
րեսը դարձուցած՝ ինծմէն պահվե-
րէ, չերևնար: Ասանկ զըրկըված ըլ-
լալով Յիսուսին տեսութենէն ուխո-

սակցութենէն, հիմա քեզի կաղաչեմ մայր ցատագնեալ, բայց այսօր քու կին քաշածնեցրդ, զուրցէ Յիսուսի, ՉՔՆԼ ԳՐՉ ԳՐՉԵՅԵԸ ՐՐԵ ԱՒ: ԻՆչՈՒ Թողուցիր աս խեղճ հոգին, որ կըսը՝ ալեկ քեզ գանալու, և չկրսէ ուր գանայ: Ա՛ս զուրցելով, առ այսօր ինձի համար մէկ նոր յարատևութեան շնորհք մը, որ մեղքերս զղջալէն եաև ալ ոչ երբէք մեղանչեմ, և մեղքով չիկորսընցնեմ իմ սրտիս զՅիսուս. այլ միշտ Յիսուսին հետ մէկ տեղ քնալ կակիս ըլլամ. իր Հօրը տանը մէջ տաճարի մէջ փընտռեմ զՅիսուս ուր կըգտնըվի: Եւսալ միշտ հոն մնամ, հոն տեւնըվիմ իր հետը՝ որ է ազօթք և բարեգործութիւն. հետու կենամ սատկածուածներէն՝ ուակից կըվախչի Յիսուս:

Հայր մեր որ յերկինս ես:

Ողջոյն քեզ մարիամ:

Ա՝ ԸՐԸՐԴ։

Ո՛վ մայր ցաւագին, ինչ եղաւ որ դէօք սիրտդ, երբոր քեզի խմացուցին որ՝ ան սիրելի միածին որդիդ բռնեցին, չարագործի պէս դատաւորին առջեւ տարին, ամէն հրէանէրուն ժողովքը վրան ժողվուած քահանայապետին առջեւ մահապարտ վճռեցին, ապտակեցին, Պիղատոսի առեւնին մէջ ձեռվընկերը կապեցին, չարաչար ծեծ ելին, գլուխը փշով պսակեցին. սուտ Թագաւոր ձեացընելով ծաղր ընելով սուրբ երեսը Թքին, և հիմա պիտոր տանին խաչ հանելու։

Ասոնք Թէ որ հասարակ մարդու մը վերայ լսվի, մեկի մը սիրտ չկդիմանար՝ որչափ օտար մարդ ըլլայ, ուր մնայ անմեղ միածնի վերայ մայրը լսե, ասանկ կուսածին Աստուած որդի, և ասանկ մայր Աստուծոյ կույս անապականի։ Ա՛խ, ինչ խօսքեր են, ինչ խորհուրդներ, ինչ տեսիլ անարգանաց, ինչ տեսիլ չարչարանաց խեղճ մարդկ

վեր. և սակայն ասանկ մայր ըլլալով սիրտդ դժնացուցիր, եւ ուզեն գայիր տեսնալու, որ դուն ալ Յիսուսին քահանայութեան խորհուրդին մասնակից ըլլաս։

Վասն զի այնչափ մեծ խորհուրդ ներուն ասչափ դառնակսկիծ չարչարանաց պատճառ ես անարդ որդա եմ, ես Բարաբբա մարդասպան աւազակս եմ որպէս զի ես Բարաբբա փրկուիմ, ինքն Յիսուս քահանայապետը յանձն առաւ իր չարչարանքով զինքը զոհել, պատարագ մատուցանել իմ մեղքերուս թողութիւն քաւութիւն վարկելու համար. դուն ալ մայր ես, որդւոյդ հետ մէկտեղ քաշելով գործակից եղար իմ փրկութեանս, մեծ խորհուրդներուն տեղեակ ու խելամուտ ըլլալով Սիմէոն ծերունին խօսքը միտդ բերիր. խնացար որ քովին Յիսուս միածինդ անգէղջ հրեշտակներուն գլորութիւն պիտոր ըլլայ աստուածասպանութեամբ, ինծի պէս մեղաւորիս կանգնուիլն պիտոր ըլլայ փրկագործութեամբ, որ հեթանոս

ազգէ դարձած՝ հաւատացեալ հրէա-
նէրուն անդրանկութիւնը առի, բայց
մահացու մեղքերովս նորէն կորսըն-
ցուցի անդրանկութիւնսալ, անմե-
ղութիւնսալ. և Յիսուսալ, ես եղայ
պատճառ որ՝ բռնեցին, չարչարեցին,
եաքնալ խաչվիլ վճռեցին։

Տո՛ւր ինծի այսօր մէկ յատուկ
ընորհք և օգնութիւն մը, փորձու-
թիւններէն պահվելու, աշխըրհիս՝
մարմնոյ՝ սատանայի խաբէութիւննէ-
րու չհաւատալու։

Հայր մեր որ յերկինս ես։

Ողջոյն քեզ մարիամ։

Ա՛ հինգերորդն։

Ո՛վ մայր ցաւագնեալ, ինչ եղաւ
սիրտդ, երբոր Յիսուսին բռնըվիլը
լսեցիր, ելար վնքը գտնալու և
տեսնալու, և առջի տեսնալդ սա
եղաւ որ, Յիսուս կուսածին՝ աչ-
քովդ տեսար արիւնլըվայ եզած, խա-
չը շալկած կըսանդիին խաչելու։ Ամ-
մէն իր քովի եղողները՝ դահիճներ

զինուորնէր, կատաղի անգութ հրէ-
անէր. մէկ հատիկ իրէն իբր օգնա-
կան՝ Սիմէոն կիւրենացի, որ խաչին
ծայրէն բռնած հետը կերթար, ուան
զի Յիսուսին վրայ ուժ չէր մնացած
ամենևին զարնելէն՝ ծեծելէն, իր
սուրբ արիւնը վազցնելէն: Մէյմիայ
առաջ որ՝ ան ամենակարող բանին Ա-
տուածն՝ որ բոլոր աշխարհս ձեռքին
վրայ կրնանի, ուժը հատնելէն զե-
տինը ընկաւ աչքիդ առջին, անգութ
դահիճները ողորմելուն առջը՝ զար-
նելով կուզէին վեր վերցնել:

Ահա, ինչ եղաւ արդեօք ան ատենը
մայրական սիրտդ. թէ որ օտար կա-
նայք Երուսաղէմի կուլային կողբային,
որ չէին անանկ ճանչնար իր աստուա-
ծուքիւնը, ինչ եղար արդեօք ան ա-
տենը դուն որ բոլորովին կը ճանչնայ
իր իր աստուածուքիւնը, իր կուա-
ծին ըլլալը, իր սուրբ վարքը, իր ան-
մեղուքիւնը: Ինչ եղաւ քու սիրտդ՝
երբոր նայեցիր՝ քու աչքիդ Յիսու-
սին աչքին դպաւ, ինչպէս խօսվեցաւ
Ամէնցաւ սիրտդ:

Մէ յինալ երբոր միտքդ բերիր սի-
մէոն Ծերունիին խօսքը՝ և Աստուծոյ
կամքը՝ մարգարէներուն բերնով ա-
ւասիկ զուրցուած որաս քու մի-
ածին որդիդ սասանկ ալմասը չարչարվի,
արիւնըլվայ ըլլայ, դէտինը կնայ, որ
բոլոր ազգ մարդկան փրկվի, ասչափ
բազմութիւն մեզաւորաց ոսք ելլան
կանգնին, գոնայ Յիսուսին հետ միա-
կամ, միասան սրտով Հօրն երկնաւորի
նուիրեցիր, գոնայ անոր հետ մէկտեղ
խորվըվեցար: Մարդիկ առաջ Աբրա-
համ նահապետին վրայ կըզարմանայ-
ին, թէ ինչ սրտով տեսաւ իր անմեղ
զաւակը Իսահակ իր վրայ փայտը շա-
կած լեռը կելլար որ մորթվի: Հիմա
հրեշտակներէդ կըզարմանան որ՝ բանն
Աստուած իր վրայ շալկեր է խաչա-
փայտը Golgotha լեռը կելլայ՝ խաչ-
վելու մեզաւորաց համար, և իրեն
կուսածին մայրը հետը կերթայ իր
աչքովը տեսնալու:

Ահա անմեղաւորներուն գլուխ ես
եմ, իս փրկելու համար Յիսուս ան
խաչը տարաւ, գոնայ իրեն հետ մէկ

տեղ խաչվեցար, իմ չարաչար մեղքերս քաւելու համար մեկ տեղ խորվըվեցար: Անանկ էնե ով մայր Աստուծոյ, ով իմ արժանաւորութեանս համար՝ հապա միայն Յիսուսին և քուկին քաշածներդ պարապ չելլալուն համար, այսօր մեկ զօրաւոր շնորհքը պարգեւէ ինձի հինգերորդ խոցիդ համար, որ Յիսուսին չարչարանքները խաչվելը՝ եսալ պայծառ տեսնամ հաւատքի աչքով, իմ մեղացս դարշութիւնը իմանամ, ձշմարիտ զղջմամբ ապաշխարեմ: Տուր շնորհքալ որ՝ եսալ Յիսուսին նման յօժարութիւն ունենամ խաչ քաշելու. գոնէ ինչ խաչ որ Աստուած խրկէ՝ սիրով քաշեմ, չիձգդոհամ:

Հայր մեր որ յերկինս ես:

Ողջոյն քեզ մարիամ:

Ա՜ վեհերուեն:

Ո՛վ սուրբ կոյս կուսաբին, ինչ զարհուրելի տեսիլ եղաւ, երբոր Յիսուս խաչը շալկած հոգնած գողգոթա լե-

ոը հասաւ, հոն աչքովդ տեսար որ՝ վհուրհրները խաչին վրայ տարածեցին, սուրբ ձեռվընները քաշկրատելով եր֊կընցընելով խոշոր գամերով գամեցին։ Ահա, ինչ եղաւ մայրական սիրտդ՝ եր֊բոր գամվելուն ձանը լսեցիր. կիսա֊նայիր որ՝ տախտակ չէր գամածնին, հապա մարմին կուսածնին, մէկ հա֊տիկ միածնին որդւոյդ ձեռվընկերն էր՝ որ տախտակի պէս կրգամէին։ Գամե֊լէն ետև աչքիդ առջին տեսար որ՝ ան կուսածնին Յիսուսը մէկ աւազակի մը պէս խաչին վրայ տնկեցին, բարձրը֊ցուցին, բոլոր աշխարհի անարգ տե֊սիլ մը ցցուցին, որուն մարմինը չորս դին վերաւորած, արիւնը գետնին վրայ կրվազէր կրլուանար։

Յիշէ աս ամէնն քաշածնէրդ սուրբ Աստուածածնին. յիշէ առջիդ եղած ողորմելի տեսիլքը, քուկին ցաւագին ժամուն տեսնը, ուր Թէ որ Աստու֊ածդ հրաշքով ջնջահէր, հազար ան֊գամ կրմեռնէիր։ Եւ յիշելով տառնք, բայց շնորհօք խին հաւատքիս աչքինալ որ ինչպէս դուն աչքիդ առջին տե֊

սար, ուր տեսնելով՝ սրտիդ կսկիծը
չիհանեցիր, Եսալ անանկ մոքովս աչ-
քիս առջին տեսնուլն պէս ըլլամ ան
կսկիծը, ոչ երբեք սրտէս հանեմ
Յիսուսին չարչարանքները, այլ միշտ
յիշելով լամ ողբամ իմ մեղքերս,
որ սատճառ եղան ան չարչարանքնե-
րուն, որով մեզ դին Յիսուս մարմնով
խաչվեցաւ, մեկալ դինալ դուն անա-
րատ Յիսուսին հետ սրտիդ մէջը մեզ
տեղ խաչվեցար:

Եւ ես որ հիմա բոլորովին ապաւի-
ներ փաթթուած կեցեր եմ սուրբ
խաչին տակը, այսօր կատարեալ Թո-
ղութիւն առնել տուր իմ պղծկոտ-
թիւնէ ըրած մեղքերուս, վասն զի եր-
բոր արդարութիւնն աստուածային
տեսնայ ան չարչարանքները Յիսու-
սին, ու քուկին քաշածներդ ինծի հա-
մար, գութը կըշարժի, ողորմութիւնը
կըդառնայ. և ես կարդարանամ ար-
դեամբք չարչարանացն Յիսուսի,
և միջնորդութեամբ քու վերացդ:
Ինանկով սրբոց հետ ընկերանալով
յաւիտեան կըփառաւորեմ զամե-

նաստրը Երրորդութիւնն, և զքեզ մայր կենաց և վրկութեան կըմեծա-
ըեմ :

Հայր մեր որ յերկինս ես :
Ողջոյն քեզ մարիամ :

Աւ- ԵՕՒՆԵՐՈՐԴՆ :

Ո՛վ Մայր ցաւագնեալ, որ միածին որդւոյդ հետ ինչուան եառքը քաշեցիր սրտիդ մէջը՝ ինչ որ Յիսուս քաշեց իր մարմնովը ինծի համար . Յիսուս ամ-
մէն բանը քաշելէն ետև՝ ամմէն չար-
չարանքները ընդունց . իր յաղթանակը տնկեց՝ սրբազնեալ հոգին աւանդե-
լով երկնաւոր Հօրը ձեռքը : Բայց քու-
կին խոցերդ Մայր ցաւագին՝ չիլըմըն-
ցաւ, այլ երբոր Յիսուս ընդունց, դուն ամմէնէն սաստիկ խոցը ան առինը կրեցիր սրտիդ մէջը : Երբոր աչքովդ տեսար Յիսուսին մեռնիլը , երբոր ղկրվեցար կենդանի տեսիլքէն Յիսու-
սի , կենդանի Յիսուսին տեղը՝ մե-
ռեալ Յիսուսը աչքիդ առջին խա-
չին վար առին , գիրկդ սըվին . ան

կենդանի գեղեցիկ Յիսուսը քեզնէ յափշտակեցին. հիմա բոլորովին խոցոտված, խորվըճած, արեան մէջ թաթխած՝ նորէն քեզի ծրվին։

Ա՛խ, յիշէ՛ ան ցաւագին ժամը ո՛վ Մայր ցաւոց, երբեք լինչ փոխած տեսար. ո՛ր վէրքը կընայէիր, երբեք փշերէն պակը, երբեք ձեռքին ծակերը, թէ ոտքին ու կողին պատուածքը, և բոլոր մարմնոյն. լինչ եղաւ ատենը սիրած՝ ո՛վ Մայր ծովացեալ վշաց, յիշէ՛ ասոնք որ ամէնենալ իմ պատճառովս քաշեցիր։

Հիմա ես գլուխս մեղաւորաց, իմ մեղքերուս ծանրութենէն յուսահատ ըլած, ահա աս սոսկալի օրը կքիշեցը նեմ ո՛վ Մայր ողորմութեան։ Մեծ են Յիսուսին և քաւչին քաշածներդ, մի՛ թողուր որ իմ մեղքերս պարապ հանէ ասոնք. անոնցնէ լի են ան կըսկիծներդ՝ որ սրտիդ մէջը կրեցիր, մի՛ անպատուեր թողուր իմ չարութենես համար։ Ա՛յլ ի խորոց սրտէ կաղաչեմ, յիշեցո՛ Յիսուսի դատաւորին, և յիշեցընելով իմ փրկութիւնս հո-

գա. վասն զի Թէ որ ես ինձի ինամ՝ չեմ կրնար փրկըվիլ, ասիկայ է մէկ հատիկ յոյս իմ:

Դար ես օրինակեաւն Եսթեր սի-կին. իմ փրկութեանս համար զքեզ ընտրեց Հայրն յաւիտենական, և աս փառքիս հասուց: Այսօր է օր փրկու-թեան. իրաւ սաստիկ է բարկութիւն Հօրն երկնաւորի իմ վրայ՝ քան Ա-սուէրի բարկութիւնը հրեից վրայ, վասն զի անհերեթլի են մեղքերս. բայց երբոր Եսթեր մէկ քանի խօսք մը խո-սեցաւ հրեից փրկութեանը համար, փոխվեցաւ, ողորմեցաւ Ասուէրս, ինչվան թագաւորութեան կէսը անոր տրվավ. հրեաներուն մահուան վճի-ռը ես դարձուց, թուղթը պատուեց:

Ասոնք քու միջնորդութեանդ օրի-նակ եվնով մայր Աստուծոյ, որ եղար թագուհի երկնի և երկրի, և գանձա-բան շնորհացն Ցիսուսի. երբոր ցը-ցընես աս քուկին եաքն խոցդ մեկալ խոցերուդ հետ մէկ տեղ, և մէկ քանի խօսքով բարեխոս ըլլաս իմ փրկու-թեանս համար, իրաւ կրգթայ սիրտը

Հօրն երկնաւորի, իմ դատապարտու-
թեան վճիռնալ կրպատռէ, իս որդի
աքեայութեան կրնէ քուկինն անուանդ
համար: Ան առեւնը աս քաշածներդ
պարապ չեն ըլլար ինծի համար. ան
առեւնը ես ողորմելի մեղաւորս կըլլամ
փառք պարծանք քու անուանդ. ամ-
մենալ կիսմանան որ՝ ինծի պէս մե-
ղաւորը պիտոր դատապարտըվէր, մի-
այն քու օխտը խոցիդ միջնորդու-
թիւնն իս փրկեց:

Ընոր համար կաղաչեմ որ իմ կեն-
դանութեանս առեւնը աս իրեր ընոր-
քը ընես ինծի: Մէյմը՝ երբոր՝ սա-
տանան իս փորձութեան մէջ ձգէ,
եսալ ինչ առեւն որ ըլլայ՝ երբոր քու-
կին օխտը խոցդ բարեխօս բռնեմ,
օգնութիւն կանչեմ, ան առեւնը մե-
կէն երկնքէն հասնիր ինծի, քու երկ-
նայնի զօրութիւնդ խրկէ. իս մեղքե-
րէն պահէ. Թող մի տար որ՝ ան փոր-
ձութեանս մէջը ինծմէ: Երկրորդ՝ մեռ-
նելէս առաջ կատարեալ զղջմամբ
սուրբ հաղորդութեան խորհրդոյն
արժանի ըրէ: Եւ երրորդ՝ ինչպէս որ

Յիսուսին մեռնելու առիթը գովը գանըվեցար, արժանի ըլլ՝ ով մայր Աստուածոյ իմ մեռնելուս առիթնալ որ՝ սուրբ հաղորդութեամբի մարմին՝ մի անգամ եմ եղած Յիսուսի, հնորհ՝ քով երկնքէն քուկին պաշտպանու՝ թեամբդ հասնիս իս մխիթարելու, և հոգւոյս թշնամիներէն ազատելու:

Ա հիմակվան ըրած աղաչանքս՝ միածնիդ մեռած օրվանը համար, կը՝ խնդրեմ ով մայր գթութեան, ընդունէ, ըսէ, թէ որ մեռնելու ցաւագին օրս չկրնամ աղաչել: Եւ մեռնելէս առաջ քուկին բարեխօսու՝ թեամբդ իս պարզերես հանէ Յիսուսի դատաստանին առջին, որ փրկութիւն գտնալով քեզ և քև զՅիսուս միածին յաւիտեան փառաւորող ըլլամ իր արքայութեան մէջ: Ամէն:

Հայր մեր որ յերկինս ես:

Ողջոյն քեզ մարիամ:

Թէ որ աս աղօթքները ամէն օր չես կրնար ըսել, սովորութիւն ըրէ գոնէ միայն օխտը ողջոյն ամէն օր մտադրութեամբ զուրցելու: Ինչ

մարմնաւոր փորձանքեալ գայ . ու ինչ մեզի փորձութիւն ելեկ սատանան , միշտ սովորութիւն ըրէ սուրբ Աստուածածնին օխտը խոցը բարեխօս կանչելու հաւատքով , վասն զի օխտը խոցին չէրմեռանդութեամբը շատ հրաշքներ առնըլած են :



ԱՂՕԹՔ

ԱՒ ԵՕԹՆ ԲԱՆՆ

ԶՈՐ ԱՍԱՑ ՔՐԻՍՏՈՍ Ի ԽԱՉԻՆ

Հայր, թմղդոցա , ղի ոչ գիտեն
ղինչ գործեն ։
Ղ֊ւ֊կ ։ ԻՁ ։ 34 ։

Ո՛ՀԱՐ երկնաւոր՝ աս ձայնս ուրիշ չէ, սիրելի Որդւոյդ ձայնն է, որուն դուն վկայեցիր, երբէք Որդի խմսիրեալ, ըստ որ հաճեցար։ Հիմա աս հաճոյական Որդին Թողերէ իր ցաւերը, խս կըհոգայ, աս մեղաւորին մեղքերը մի յիշեր կըսէ, որ ղինքն Ցիսուս մեղքերուվս խաչ հանեցի, քաւեցի, եւ աւերի նախատինք սրվի սրբապղծութիւն ընելով։

Ո՛վ արդարութիւն Աստուծոյ, խս

կուզես պատժել անհուն յաւիտենա-
կան պատիժով վասն զի անհուն Ա-
ստուածդ անարդեցի. բայց ահա ան-
հուն բանն Աստուծոյ է՝ որ ինձի հա-
մար կաղաղակէ. Հայր Բռնէ դուռս:
Ինձի համար ինքը կըպատժըվի, կը-
պատարագվի, իբրեն սուրբ արիւնը իմ
վրայ կը քամվի. աս հերիք չէ՝ ցաւա-
գին սրտովալ կաղաչէ քեզի որ Թո-
ղուս իմ մեղքս: Հայր, Բռնէ դուռս:
Իրաւ՝ արդարութիւն քո որպէս սուր
սրեալ է, չհնակ դատաստան պիտոր
առնայ, վասն զի իմ չար գործքերս
կեցած են, պատիժ կուզեն, և ոչ
ողորմութիւն, բայց իս զարնելը՝ է
նորէն զարնել նորէն պատժել բանն
Աստուած յաւիտենական, որ ինձի
համար մարմին առած, խաչին վրայ
դատապարտըված կըմերթըվի, մորթը
վէրս առնելնալ կողկողալով նորէն
կըմիչնորդէ: Հայր, Բռնէ դուռս, էի ալ
գիտեն վինէ գործեն: Պատճառնալ տա-
լով անանկ Թողութիւն կըխնդրէ ին-
ձի համար. վասնզի իրաւ չիգիտ-
ցայ որ մեղքը ինչ գէշբան է եղեր,

զԱստուած անարգել մեղքով որչափ սոսկալի բան է եղեր. ինծի ասոնք ջուրի ձան կուգային: Բայց հիմա որ ճանչցեր եմ մեղքս, խաչին եմ պլըվեր բոլոր սըրտովս, ես մեկը չկրնար անկէց հանել. որովհետև Աստուծոյ է որ կըվկայէ իմ ապիտուԹեանս, կըբաղխօսէ աստնկ ուժգին բարեխօսուԹեամբ:

Ո՛վ անհուն ողորմուԹիւնաստուածային, եղիր, խօսէ ինծի համար, խալըսէ ես աստուածային արդարուԹեան ձեռքէն ըսելով իրավի արժանի է աս մեղաւորս բիւր դատապարտուԹեան, բայց որովհետև բոլորով սրտիւ ապաւիներ է հիմա աս պատառագիս տեղը, կընդունիս կրնաս ողորմիլ իր մեղքերը: Եսալ ըսելով աս աւետեաց ձայնը՝ օրհներ փառաւորեր զՅիսուս միածին, օրհներ զՀայրն երկնաւոր և զՀոգին սուրբ, որ Յիսուսի ձայնին լսելով ողորմեցաւ ինծի:

Ա յսօր ընդ իս լցես ՚ի դրախտին ։
(Ղ-ւ. ԻՁ. 43։)

Ո՛վ երջանիկ բարբառ՝ որ եկաւ հասաւ Յիսուսին բերնէն աւազակին ականջը, թէ դատապարտուելոյս տեղը՝ մեղքերուդ Թողութիւն գտար, դժոխքին տեղը՝ դրախտը վաստկեցար։ Ո՛վ երջանիկ ժամ, երբոր մէկ մեղաւոր մը իր մահուան առեներ լսէ Յիսուսին բերնէն ասա խօսքս ։

Ախ, մարդասէր Տէր իմ Յիսուս, որովհետեւ աւազակը քեզի խաչակից եղաւ, քեզ խոստացաւ, ընդրկեք մը ըսելիր որ՝ երեն հաւատքը լուսաւորուեցաւ, քու աստուածութիւնդ ճանչցաւ, ճանչնալովը՝ իր մեղքը խոստովանեցաւ, եւ խոստովանելովը՝ աղաչանքի եկաւ սրտովը քեզի գիմելով։ Յիշեա Տէր, յորժամ գայցես արքայութեանդ։ Աւանկալ խոստովանելուն եւ աղաչելուն համար՝ երկրորդ անգամ ընդրկեք ըսելիր, որ է ընդրկեք ընդհաց, արքայութեան հասցընելով, երկնաւոր դրախտը մտցընելով։

Հիմա իմ հոգիսալ խաչին տակը քեզի կաղաղակէ. Յիշեա զիս Տէր, յորժամ գայցես արքայութեամբ քով: Ա՛ս հոգիս որ զանազան մեղքէ՝ րով լեցուած է, աւազակին աւելի չարութիւններ արքասպծութիւններ գործեր է, իր մահը մտիկցած տես՝ նելով քեզ վերկենդ կրդիմէ: Տո՛ւր ա՝ ռաջ աւազակին պէս քեզի նման խա՝ չակից ըլլալ, բայց տո՛ւր ալ ընդհա՝ ր՝ աւազակին պէս համբերելով քա՝ շեմ իմ խաչս, բիւր պատիժներու իս արժանի սեպելով: Լուսաւորէ իմ հաւատքս՝ որ քու աստուածութիւնդ պայծառ տեսնամ և հաւատամ, և հաւատքովս սրտանց ղղջալով խոստովանիմ իմ մեղքերս. միշտ քու արքայութեանդ բաղձանքով աւազակին պէս՝ իմ չարութիւններս ձգեմ, խաչին վրայ գամեմ թիւր և չար կամքս մեռցնելով. անանկով արժանի ըլլամ եղբի օրս քաղցր ձայնով քու բերնեդ լսելու: Ողորմեա՛ մեղքդ ճանչցար, քեզ պատժոյ արժանի սեպեցիր, իմ խըրկած խաչ

սալ համբերելով քաշեցիր, հաւատացիր՝ գործդ՝ իս գաւանեցար, եւ այսօր երանութեան ձայնը կուտամ քեզի. Աւօր ընդ իս իցես ի դրախտին։

կին դու, ահա որդի քո։
Յհ. ժ. 26։

Ինչ ցաւագին ձայն քեզի համար սուրբ Աստուածածնին, երբոր կուսածին Յիսուսը արիւնլուայ տեսնէր էհաւ, աս խօսքս լսեցիր, որ է իբր Յիսուսին հաքի բարև տալը՝ ըսելով։ Ես կը մեռնիմ կերթամ, իս՝ ալ չես տեսնար մարմնով. իմ տեղս քեզի որդի ահա Յոհաննէս աւետարանիչը ըլլայ։ Ա՛ ըսելով ինչ եղավ սիրտդ, Յիսուս Թողուլ, Յիսուսին տեղը իր աշկերտը որդի առնել։ Բայց ինչ ուրախալի ձայն ինծի մեղաւորիս համար. վասն զի Յոհաննէս աշակերտին անուանուելու օրինակովը՝ ամէնին քրիստոնէնալ քեզի որդի ըրաւ Յիսուս, որոնց մէջը եսալ կամ։

Մեր նախամայրն Եւա մեզի մահ բերաւ, ան մահը քու՝ Աստիւած միածին վրան առաւ. այսօր մեզի համար փայտէ կախված կըմեռնի, որ Եւային կերած ծառին մահը մեր վայէն վերցընէ. իսկ մեզի մայր կենաց՝ զքեզ դրաւ դուստր Եւայի, դուստր Հօրն լուսոյ յաւիտենականի, որ մենք մեղաւորքս քեզի դիմելով կեանք փրկութեան գտանք, յաւիտենից մահըննէ խալըսինք ձայնակելով զանմահ պտուղն որովայնի քոյ։ Դու ես այնանկէնէ ասկէց եառքը մայր մեր կենաց և փրկութեան, և ոչ նախամայրն Եւա, որ Յիսուսին մեռնելէն առաջ դուն մեռար. իրմէ բաժնըվեցար առ խօսքով. և մեզ առչափ ցաւով ու կսկիծով որդի վատորկեցար, որդի վշտացքոց, ինչպէս եղավ Բենիամին իրեն մօրը Հռաքելի, որդի անտանելի ցաւոց, որ Յիսուսին հետ մէկ տեղ խաչին քով խաչակից ըլլալով սրտիդ մէջը մեռնելով մեզ ծնար ի կեանն յաւիտենից։

Հիմա ընդհակառակ կըլլանք Յիսու-

սին այնչափ սիրոյն՝ որ այնչափ չար-
չարանաց մէջ իր քաշածը մէկ դի
ձգելով, մեզ մեղաւորքս հոգաց. ու
առանկ մայր փրկութեան մեզի դրաւ,
որ է յոյս մեր ամենեցուն: Ընդհա-
կառակը կըլլանք քեզի ոմն նախանձայր փըր-
կութեան մերոյ, ոմն մայր ձչմարիտ,
որ Յիսուսին հետ մեզ աեղ գործակից
ըլլալովմեր փրկագործութեանը հա-
մար՝ միասին քաշեցիր անոր հետ:
Անիկայ մարմնովը կրքաշէր, դուն սըր-
տիդ մէջը կրքաշէիր, եւ քանի իր մա-
հուան առեներ քովէն չիբաժնըվեցար,
սիրտդ դիմացուցիր, խաչին տակը կե-
ցար. անով Արդիւնաւորեցար մեզ որ-
դիի աեղ՝ բիւրաւոր որդիքներ ունե-
նալ հայր Աբրահամու պէս. արդիւ-
նաւորեցար մեզ մեղաւորացս ապաս-
տան ըլլալ:

Հիմա կաղաչենք մենք ամէնքս՝ որ
ոչ միայն քու ծառադ ենք, այլև որ-
դիք ընդհաց. խնամէ, պահէ, մայ-
րական հովանաւորութիւնդ մեր վրայ
ցցէ, որ ջըլայ թէ չար գազանը սա-
առնան մեզ յափշտակէ, ջըլայ թէ

պարտ եղեալ այսչափ կակիծը՝ ցաւը՝ որ Յիսուսին հետ մեկ տեղ քաշելեր: Տո՛ւր համարձակութիւն որ՝ քանի՛ փորձութիւն գայ մեր վրայ առ աշխարհիս՝ հիս մէջ, քեզ ունենանք մեզ ապաւէն՝ մեր սիրտը մեր միտքը բանալու: Մեն-քալ եկեղեցնայ որդիքս պարծինք առ քայութեան մէջ քու անունովդ՝ որ ա-ռաջ բեթղեհէմի մէջ հաստուցիր հայն անմահութեան պտուղ որովայնի քո, իսկ այսօր նոյն պտուղը Գողգոթա լե-ռան վրայ խորվելով դառնակակիծ չարչարանքով բաժնեցիր ի փրկու-թիւն աշխարհի մեզ մեղաւորացս • անանկով գործ փրկութեան մերոյ այսօր քուկին մայրութեամբդ խա-չին տակը սահմանեցաւ:

Ածոր համար կը հնենք, երանի՛ կու-տանք քեզ մենք ամենքս ազգք և ա-զինք ո՛վ մայր Աստուծոյ, և մայր փըր-կութեան մեզ մեղաւորացս, և կաղա-չենք որ՝ չենայիս մեր անարժանու-թեանը վրայ, այլ քու մայրութիւնդ ցցո՛ւ մեր վրայ, հիմա մեղքերէ պա-հելով սատանայի զօրութիւնը խոր-

տակելով. եաքը մեր մահուան առնել ընդհատով քովերնիս գանգվելով, որ չար սատանան հալածվի: Ըրէ ով մայր կենայ և վրկութեան, որ քեզնով ազգայութեան հասնելով, աս երանութիւնս երկինքնալ կարենանք տալ քեզի, և քենով մեծացուցանենք զանբաւ մարգասիրութիւնն Յիսուսի յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Աստուած իմ, Աստուած իմ, ընդէր թողեր զիս:
Մաթ. իէ. 46:

Տէր իմ Յիսուս Քրիստոս, երբոր աս քու ողորմուկ ձայնդ կառնեմ, սիրտս կը տրորայ, կը խորվի: Քու սաստիկ սէրդ ըրաւ որ՝ ես պիտոր քաշեի, իմ ձեռքերուս համար՝ դուն իմ մեղաւոր կերպարանքս առիր, իմ տեղս դուն քաշեցիր: Հայրն երկնաւոր վրէն տեսաւ որ իմ մեղաւոր կերպարանքս մըտերես, ինչ բարկութիւն որ ուներ իմ վրայ, քու վրադ թափեց, երես դարձուց: Ա բանս քեզի ամ

մէն տանջանքէն մեծ եկաւ. ալ չկրնալով բերնէ դանկաբերով մը աղաղակելիք. Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր ես: Պատճառը կըսէին որ՝ քենջու հայրն Աստուած քեզ ձգեց, վասն զի դուն չունէիր մէկ խոզ մը, չունէիր մէկ արատ մը: Ա՛խ, պատճառը իմ մեղքերս էին, աս քենջ մենծ են եղեր իմ մեղքերս, որ միայն իմ մեղքերուս պատիժը քաշելու ըզքեզ համար, քեզ ալ ձգեց Աստուած, թէպէտ էիր նոյն ինքն անմեղութիւն, և արդարութիւն արդոյ:

Ա՛խ, Տէր իմ, ես այսօր ճանչնալով իմ մեղքերուս ծանրութիւնը, կըսեմ, մեղայ դոչելէ. ան ատենվան ողորմելի ձայնդ՝ ապէկըտուր սիրտդ միտքդ բէր, դունալ քու եըրեդ մի դարձըներ ինծմէն, մի թողուր զիս Տէր իմ Յիսուս, Աստուած իմ: Վասն զի կըտեսնամ որ իմ մեղքերուս ծանրութեանը համար՝ և իմ անհնըրելի ապերախտութեանցս համար՝ թողեր ես քոլորովին. չես խօսիր

ինձի հետ ընորհքով և ներընչմամբ, ինչպէսորը քուկին սիրելնեբուդ հետ կըխօսես. չես բանար իմ միտքս, չես լուսաւորեր հաւատքս, չես տաքցը ներ իմ սիրտազքեդ սիրելու, աշխըր քես հետընալու:

Աասնկէորը ցամաքնալով իմ սիրտ սալ՝ հիմա քու խօսքովդ քեզի կաղա ղակէ. Աստուած իմ, Աստուած իմ, ընդէր Թողեր զիս, ընդէր անարգես զիս, ընդէր դարձուցանես՝ զերեսս քո յինէն վասն մեղաց իմոց: Ո՛նչ կըլ ըլայ աս խեղճ սահմանուածը՝ երբոր գուն արարիչդ երես դարձընես, երբոր գուն փրկիչդ իս չնճանչնալ ըցընես:

Ո՛վ Տէր իմ, չեմ կրնար եսալ աս բանիս դիմանալ, կաղաղակեմ, դուն Յիսուս ողորմեա ինձ. ան ժամուն համար որ աասնկ Թողված եղար երկնաւոր Հօրէն իմ սիրուս համար, դուն հիմա մի Թողուր իս, այլ գԹողԹեան աչքովնայէ, պահէ, պահպանէ մեղքերէ, ու հոգւոր մարմնաւոր փորձանքներէ, ինչվան որ քու սուրբ

էրեսդ տեսցընելու արժանի ընես արքայութեան մէջ : Ամէն :

Ծարաւի եմ :
Յով . ԺԲ . 28 :

Քրիջ Հին Տէր իմ, ան քառասուն օր վան պաքը որ ինձի համար բռնեցիր, հիմա ծարաւութիւնով կըքաշես : Մենծ սեղվեցաւ Դաւթի մարգարէին ծարաւելը՝ ու Բեթղէհէմին ջուրը չխմելը . հիմա դուն Բեթղէհէմցիդ ջուրդ կենդանութեան՝ որ ամէն ջուրը սառցնէցիր, չկըրցար կաթիլ մը ջուր դանալ ծարաւդ բժշկելու համար ո՛վ Տէր զօրութեանց :

Փառք երկայնմտութեանդ Տէրիմ, որ իմ փրկութեանս համար այսչափ հազարապատիկ քաշեցիր . արարիչդ Աղիանոս ծովու՝ ինչպէս եղավ որ՝ դուն կարօտ ըլլաս ջուրի, ծարաւիս և ջուր չիգտնաս : Բայց քու ծարաւիդ իմ փրկութեանս համար էր, և իմ հոգիս խալսցընելու : Տեսնալով որ՝ դրախտին մէջը ծառին քովը կըգտնը-

վիմ, աշխարհ եկար՝ ծառին վայ ե-
լար, իս կըփնաըռէիը խաչին ծառին
վայ: Բայց ես քուկին սիրած խա-
չիդ ծառին քով չեմ գտնըվիր, այլ
սրգելեալ մեղայ ծառերու քով կը-
գտնըվիմ:

Երբոր իս չիգտար խաչին վայ,
ողբըմռիկ ձայնով կանչեցիր. ա՛ի, Ա-
դամ ուր ես, ծարաւի եմ քու փըր-
կութեանդ. ինչպէս որ սամարացի
կընոջէն ջուր ուզեցիր, անանկալինձ-
մէն ջուր արտասուաց ապաշխարու-
թեան ուզեցիր, որ ես գնեմ շարժիմ,
գամ կամքդ կատարելու. հիմա է ըսիր
ժամանակ ապաշխարութեան. քու
ջուրդ արտասուաց ապաշխարութեան
տուր ինձի. որ իմ արեանս հետ
խառնեմ, չօրն երկնաւորի ընծայեմ,
որ մեղքերուդ քաւութիւն թողու-
թիւն գտնաս: Բայց ես նմանեցայ
այն անողորմ դահիճներուս, որ ջուր
արտասուաց տալուն տեղը՝ իմ սիրտս
քար գարձուցի, լեղի ջուր տըվի ա-
պերախտութեան, քացախ ծարը մա-
հուշափ մեղայ խմցուցի. իմ տեղը

քարերը լացին, երկինք գետին ողբացին, իսկ ես անշարժ կեցայ, մանաւանդ թէ նորհնոր մեղքերը գործեցի։

Այլ ո՛ղորմութեան Աստուած. ինչպէս որ նոյն իսկ հանօղները եաքը ապաշխարութիւն դարձուցիր. սանկալ իմ սիրտս այսօր ապաշխարութիւն շարժէ, որ ըրած մեղքերուս վրայ լալով քու ծարաւութեանդ չափ հասցընեմ. անով փրկութեան հասնելով քուկին ծարաւդ բժշկեմ, կամքդ կատարեմ՝ յաւիտենական երանութեան արժանի ըլլալով։

Ամենայն ինչ կատարեալ է։
Յհ. ժթ. 30։

Ամէն բան կատարեալ է. ինչ որ Աստուած ապստրբերը ուղերձքէ. նէ Յիսուս միածին, ամէն բան լըմընցուցիր. ինչ սորվեցընել պէտք էր մարդկան՝ սորվեցուցիր, ինչ օրինակ տալ պէտք էր՝ գործով ցուցիր, ինչ չարչարանք ու խաչ պէտք էր քաշել

մարդկային փրկութեանը համար՝ քա-
չեցիր, ամէն Աստուծոյ հրամանքը
կատարեցիր, անոր համար հիմա հա-
մարձակութեամբ աղաղակեցիր առ
Հայր երկնաւոր. Ահեռայն ինչ կոպա-
ւէ՞ : Ամէն Աստուծոյ հրամանքը
լինցած է :

Ահա Յիսուս, եսալ աս կըփափա-
գիմ, և կըխընդրեմ քենէ որ տաս
ինձի աս իրեք շնորհքը : Ուրիշներուն
սորվեցնեմ քու կամքդ կատարելու.
ուրիշներուն բարի վարքով աղեկ օրի-
նակ տամ, և ոչ չար օրինակ. և ինչ
խաչ որ խրկես ինձի աստուածային
նախախնամութիւնը՝ սիրով քաշեմ,
քեզի նման ըլլամ : Անանկով եսալ
կարենամ մահուանս ատենը ըսկըս-
ամենայն ինչ կատարեալ է. ամէն
Աստուծոյ կամքը կատարեցի. հիմա-
ալ բարի մահուամբ կատարեմ իմ
կեանքս : Ինչպէս որ Պօղոս առաքեալդ
սուրբը հոգին համարձակութեամբ կը-
սէր առ Աստուած. Չբարուրք պա-
տերազին պատերազմեցայ, զընթաց-
սին կատարեցի, զհաւատսն պահեցի,

այսուհետև կայ և մնայ ինձ արդարու-
թեան պսակն։

Հայր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ։
Ղ-ւկ. ԻՓ. 46։

Հայր Աստուած, քու ձեռքդ կը-
յանձնեմ իմ մարմնաւոր և հոգևոր
հոգս, որ եսքի օրսաբ հոգիս քու
ձեռքդ աւանդեմ։ Ամանկ սորվեցանք
քու միածնէդ, և ասանկ տեսանք։

Հիմա գնում Հայր ողորմութեան,
որ լսեցիր աս ողորմագին ձայնը քու
միածին Որդւոյդ, որ իրեն հոգին քեզի
տուիր, այն ժամը Յիսուսին՝ այն խո-
նարհութիւնը՝ և չարչարանքը յիշելով
ողորմէ, իսաբ արժանի ըրէ որ Յիսու-
սին վարքին հետևելով, հնազանդու-
թեամբ ու ջերմեռանդութեամբ
մեռնելով կարենամ ըսել եսքի օրս.
Հայր Աստուած, որ զիս ստեղծե-
ցիր, պզտիկուցմէ ինչվան հիմա մար-
մնաւոր և հոգևոր բարեաք լցուցիր,
հիմաաբ քու կամքովդ իմ օրերս լմնի-
ցուցի, քու ձեռքդ և ոչ օտարի կա-

ւանդեմ զան հոգին, որ դուն առիր ծեզիր. ա՛ռ, և քու երեսդ ցցընելու արժանի արա. Հայր, ի ձեռս ք՝ ա՛ ւանդեմ զհոգի իմ. ինչպես որ Յիսուսին հոգին առիր, եսալ անդամ եմ անոր մարմնոյն, իմ հոգիսալ մի բաժներ անոր քովէն, այլ դուն առ, պահէ յաւիտեան, որ ե քովինդ:



W.d H. Bonbamps. Te Vanlov

TOUSSAINT
ALLERHEILIGEN

ԱՂՕԹՔ Ի ՍԱՂՄՈՍԷՆ

Ի ՊԷՍՊԷՍ ԴԻՊՈՒԱԾՍ

Սաղմոսը սուրբ հոգիը կըլսմանցը նեն գեղածախի կամ եզածնի մը խա նութ . ինչպես որ հոն ամէն ցաւ ը րու մարմնաւոր գեղը կրգտնաս , ա սանկալ ինչ հոգւոր կամ մարմնաւոր ցաւ ուն ենաս , անոր բարոյական գեղը սաղմոսին մէջը կրգտնաս , որ միտք կրբռնայ , հոգիդ կրմխիթարէ , սիրտդ կրքաջալերէ : Եւ որովհետև մէկ բա նաստեղծութիւն մընէ հոգւոյն սրբոյ խօսքերով զուրցուած , իր խօսքերուն մէջը մէկ գաղտնի զօրութիւն մը ուն խորհուրդ , որ մարդուն նեղսի դին մէկ յատուկ ապաւորութիւն մը կընէ , ա՛ւ որ հաւատքով ինչպես որ պէտք է՝ զուրցէ : Անոր համար սուրբ հայց

աղօթքը սաղմոսն էր. և ինչպէս հիմա եկեղեցական ժամերգութիւնը մեծ մասը սաղմոսէն է:

Հոսկէ մեկ քանի դիպուածներու աղօթքներ կրգտնաս սաղմոսէն, մեկ նեղուի, խորհուրդները բացատրելու, հոգեւոր վայելքներ. որուն ներ գործութիւնը կրգտնաս թէ որ հաստատով ղուրցես:

Աղօ՛թ ՚ի սաղմոսէ ՚ի ձայնաւոյն հինգերորդ:

Ողորմեա՛ ինձ տէր, զի հիւանդեմ ես, բժշկեա՛ զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ: ՚ի:

Ողորմի՛ ինձի տէր իմ, ողորմի՛, վասն զի հիւանդեմ, բժշկի՛ իս տէր իմ, վասն զի ամենեն ոսկորներս կը ցաւին:

Ընձեն իմ յոյժ խռովեցաւ, և դու տէր մինչև յե՞րբ: ՚ի:

Խղճը իմ անձս խիստ խռովուած թեան մէջ է հիւանդութենէս, դուսալ տէր իմ ինչպէս երբ չես լսեր իմ աղօթքիս, չես ընդունիր իմ խնդիրքս

իս բժշկելով։

Դարձ տէր, և փրկեա զանձն իմ, կեցո՛ զիս տէր ըստ ողորմութեան քումմ։ ՚ի։

Տէր Աստուած, մեյմը լինծի դարձիր նայէ, իս փրկէ, իս ըրընացու՛ քուկին ողորմութեամբդ։

Չի ոչ ոք է որ ՚ի մահու յիչէ զքեզ։ կամ ՚ի դժոխս խոստովան առնի առ քեզ։ ՚ի։

Ես ողջ ըլլալով քեզի կըծառայեմ, բերնով սրտով քու անունդ կըփառաւորեմ, բայց մեյմը որ մեռնիմ, ալ չեմ կրնար քեզ փառաւորել և ոչ յիչել. մեյմը որ դերեզման երթամ, չինար բերան, չինար սիրտ որ քեզ պաշտէ, քեզ օրհնէ։

Վաստակեցայ ես ՚ի հեծութեան իմոմմ, լուացի զամենայն գիչեր զնա՛ հիձս իմ, և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի։ ՚ի։

Քանի՛ որ աս ցաւիս մէջն եմ, հեծալէն հառաչելէն յոգնեցայ, իմ մահիձս արցունք թափելէն լալէն լուացի, որ լինծի ողորմիս։

Ողորմեա՛ ինձ տէր, զի նեղեալ եմ
ես, խռովեցաւ ի սրտմտութենէ աչն
իմ, անձն իմ և փոր իմ: Ը:

Դառնալ տէր իմ ողորմէ, վասն զի
խիստ նեղած եմ, չորս դիս խռովու-
թեան մէջ, աչքսալ, փորսալ, բոլոր
իմ անձսալ:

Պահապետդան ի ցաւոց կեանք իմ
և ամբ իմ յոգւոց ելանելոյ: Ը:

Ցաւին խստութենէն իմ կեանքս
պահպետցաւ, հառաչելէն իմ տարի-
նէրս հատան:

Աղքատացաւ ի տկարութենէ զո-
րութիւն իմ, և ոսկերք իմ խռովե-
ցան: Ը:

Ուժս տկարացաւ վատուժնալէն,
ոսկորնէրս անհանգիստ եղան:

Տէր մի սրտմտութեամբ քով յան-
դիմանէր զիս, և մի բարկութեամբ
քով խրատէր զիս: Ը:

Տէր Աստուած իմ մեղքէրուս հա-
մար սրդողելով մի յանդիմանէր,
բարկանալով մի խրատէր, հապա հօր
պէս խրատէ:

Ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ

յերեսաց բարկութեան քոյ : լէ :

Ահա կըտեսանես որ՝ քովինն տառնկ բարկանալէդ հիւծնուցեր պառկեր եմ խին մարմնոյս չկայ մէկ բժշկութիւն մը :

Ոչ է խաղաղութիւն ոսկերաց իմոց , յերեսաց մեղաց իմոց : լէ :

Իմ մեղքերուս համար ինչուան իմ ոսկորներուսալ հանգստութիւն չունայ :

Տառապեցայ և խոնարհ եղէ մինչև յոյժ , զօրհանապազ սրտառմ գնայի , զի անձն իմ լի եղև ջարջարանօք , և ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ : լէ :

Շատ ջարջարեցայ , շատ տառապեցայ , տառապէլէս հիմա խիստ խոնարհ եղայ , իմացայ որ քեզի դէմ մեղանչելս՝ քու պատուիրանքներդ չպահելս՝ իմ հպարտութենէս կուգայ եղեր , անոր համար ամէն օր սիրտս սրտառմ է , վասն զի կըտեսնամ որ բոլոր անձս լեցուեցաւ ջարջարանքով , մէկ բժշկութիւն մը չկայ իմ մարմնոյս :

Ջարջարեցայ և խոնարհ եղէ մինչև

յոյժ, մանչէի առ հեծուԹեան սրտի խոյ։ լէ։

Անանկալ չարչարվեցայ, անան֊կալ խոնարհ եղայ որ՝ սրտիս հեծա֊լէն ձայն կըհանեմ, կըմռնչամ։

Ես 'ի տանջանս պատրաստ եմ, և ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ։ Մի Թողուր զիս տէր Աստուա֊ած իմ, և մի 'ի բացեայ առնիր յի֊նէն. հայեաց յօգնել ինձ տէր փրկու֊Թեան իմոյ։ լէ։

Ա՛խ, տէր իմ, Թէպէտև պատրաստ եմ տանջանք քաշելու քովիկին կամքդ կատարելու համար, և ցաւերս ամ֊մէն ժամ իմ դիմացս են, սակայն դու՛ տէր Աստուած, մի Թողուր իս ասանկ, մի ալ ինծմէն հեռընար, նայէ որ ինծի օգնես, իս փրկես։

Ի բաց արա՛ յինէն զտանջանս իմ, զի 'ի զօրուԹենէ ձեռին քո ես պա֊կասեցայ։ լը։

Ա՛ս տանջանքս հեռըցո՛ ինծմէն. վասն զի քովիկին ձեռքիդ ուժը պակ֊սեցաւ ինծմէն։

ԿշտամբուԹեամբ վասն մեղայ խրա֊

տեցեր զմարդ , մաշեցեր որպէս սար֊
դի ոտային զանձն նորա , սակայն ըն֊
դունայն է ամենայն մարդ : ը֊ը :

Ու եղբերուս համար սաստեղծ յան֊
դիմանելով իս խրատեցիր աս հիւան֊
դութիւնը ինձի խրկելով , որ հօրիւմ֊
ձեկի մը պէս իս բոլորովին մաշեցուց ,
բայց դուն գիտես որ՝ ամէն մարդ
մէկ ուննայնութիւն մընէ , չկտակ կընէ
կընէ :

Դատ արա ինձ տէր , զի ես յամբը֊
ծութեան իմում դնացի , 'ի տէր յու֊
սացայ՝ զի մի եղէց հիւանդ : ի֊է :

Դուն իրաւունք ըրէ , դատաստան
կարէ տէր իմ , վասն զի ես հիմա չի֊
տակ սրտով քեզի եմ յուսացեր քե֊
զի եմ ապաւիներ , որ չի հիւընտանամ :

Փորձեա զիս տէր և քննեա զիս ,
փորձեա զերիկամունս իմ և զսիրտ
իմ : ի֊է :

Թէ որ դուն կուզես իմ համբերու֊
թիւնս իմ հնազանդութիւնս փորձե֊
լու՝ փորձէ , չարչարէ , եղիցին կամք
քո . Թէ որ կուզես իմ մեղքերուս
համար պատժել՝ պատժէ աս սիրտս ,

աս մարմինս:

Ես ասացի տէր ողորմեա ինձ. բժըշկեա զանձն իմ, ես մեղայ քեզ: Ես:

Բայց եասալ աս կըսեմ, Տէր, ողորմէ ինձ, բժշկէ իս. մեղայ, քաւեա, ներեա:

Տէր օգնական է նմա՝ի մահիճս ցաւոց իւրոց, և զամենայն անկողինս նորա դարձուցանէ՝ի հիւանդութենէ նորա: Ես:

Թէ որ մէկը ցաւէն պառկի, մահ ձի մէջ ընայ, դուն ես անոր օգնականը որ կըսընցընես, և իրեն մահճէն հիւընտութիւնը կըփարատես:

Համբերելով համբերի տեառն, և նայեցաւ առ իս, և լուաւ աղօթից իմոց: Եհան զիս՝ի գբոյ տառապանաց, ի կաւոյ և՝ի տղմոյ: Լե:

Շատ համբերելէս ետև՝ վերջապէս նայեցաւ Աստուած իմ վրայ, լսեց իմ աղօթքս աղաչանքս, մահճէս իս վեր հանեց, որ ինծի մէկ գուբ մընէր տառապանքի, մէկ գուբ մընէր չամուռի պէս կաւի պէս կպած:

Տէր Աստուած իմ կարդացի առ

քեզ՝ և բժշկեցեր զնա, տէր Հաներ՝ի գժոխոց զանձն իմ, փրկեցեր զնա յայնցանէ՝ որ ի՛նանեն՝ի գուբ։ ի՛Թ։

Դարձայ ասէ՝ Տէր Աստուած քեզի աղաղակողներուն սիրտդ չդիմանար, երբոր ես քեզի՝ դիմեցի, դուն ալ իս բժշկեցիր, գերեզմանէն իս խալցուցիր, փրկեցիր իս անոնց մէջէն՝ որ մեռնելով գերեզմանին գուբը կ՚իյնան։

Ընդ երեկոյս հանգիստն լալիք, առաւօտու երկրի ուրախութի՛ւն։ ի՛Թ։

Ա՛ս երիկուն լալերը կըդադրին, առաւօտն կուրախանանք։

Ա՛ռ քեզ տէր կարդացի, և առ Աստուած իմ աղաչեցի, զինչ օգուտ է քեզ յարենէ իմմէ, Թէ իջանեմ ես յապականութի՛ւն։ ի՛Թ։

Ցաւիս առեղը աս կըսէի Աստուծոյ, և սասկ կաղաչէի։ Տէր Աստուած Թէ որ հիմա մեղքերուս համար իս պատժես, արիւնս քամես մեռցընես, տէր ես, կընաս ընել, բայց ես ապականելէս կորսըվելէս ետև՝ ի՛նչ օգուտ կըլլայ քեզի։

Մի՛Թէ հող խոտովան առնի՞ զա-

քեզ, կամ պատմեսցէ զՃշմարտու-
թիւն քո։ ի֊ի ։

Մեռածիս պես հող սիտոր կարիմ,
միմիչ մեկ հող մը կընայ քեզ պաշ-
տել, կըընայ պատմել քովկին ճշմար-
տութիւնդ, մեծութիւնդ ։

Լուաւ ինձ տէր և ողորմեցաւ, և
տէր եղև ինձ օգնական ։ Դարձոյց
զսուգ իմ յուրախութիւն, զերծ յի-
նէն զքուրձ, և ինձ զգեցոյց զուրա-
խութիւն ։ ի֊ի ։

Ա֊ա խօսքերըս լսելով Աստուած,
ողորմեցաւ ինծի ու օգնեց, ինչ որ-
մեւելիւն որ ունէի՝ ուրախութիւն
գարձուց, սուգի լաթերս վերցուց,
ուրախութեան լաթեր հագցուց ։

Լուաւ տէր ձայնի լալոյ իմոյ, լու-
աւ տէր աղօթից իմոց, և տէր զկըն-
դրուածս իմ ընկալաւ։ ի֊ի։

Ամենի լսեց Աստուած իմ ձայնս,
իմ լացս, ու խնդիրքս կատարեց։

Աղօթե՛ք առանօթ, ՚ի նեղիլն կամ ՚ի ըն-
նամէտ մարմոյ, և կամ հոգւոյ, որ է՛ն
ապրանաց, աղետից, և մարմին :

Աստուած քեզ տէր համբարձի զանձն իմ, Աստուած իմ ՚ի քեզ յուսացայ, մի ամաչեցից, և մի ծիծաղեսցին զինեւ թշնամիք իմ : Ամէն :

Տէր Աստուած քեզնիդիմեմ, քեզզի կըրուսամ, չըլլայ որ ամօթով մնամ, իմ թշնամիներս չխնդան իմ վրաս :

Լուր Աստուած աղօթից իմոց յա-ղաչել ինձ առ քեզ յերկիւղէ Թըշ-նամւոյն փրկեա զանձն իմ : Ամէն :

Տէր Աստուած լոյս իմ աղօթքիս որ ալիտոր ընեմ . Թշնամիին վախը պատեր է իս, փրկէ ազատէ իս անոր ձեռքէն :

Աստուած յանուան քումմէ կեցո՛ զիս, և ՚ի զօրութեան քումմէ իրաւ արա ինձ : Օտարք յարեան ՚ի վերայ իմ, և հզօրք խնդրեցին զանձն իմ, և ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց : Ամէն :

Տէր Աստուած քու անունիդ հա-
մար իս ապրեցուր զքուկին զօրու-
թեամբդ իրաւունք ըրէ ինծի, վասն
զի օտարներ՝ զօրաւոր թշնամիներ իմ
վրայ ելան, իս կուգեն կորնչցնել
քեզ Աստուծոյ տեղ՝ բանի տեղ չեն
սեպեր:

Աստուած յօդնել ինձ նայեցաւ, և
տէր յընկերեբ ինձ փուռթա: Ամաչե-
ցեն և յամօթ լինին որ խնդրէին զանձն
իմ, դարձցին յետս և ամաչեցեն,
ոյք խորհէին ինձ չար: կԷ:

Տէր Աստուած նայէ որ ինծի օգ-
նես, ինծի շուտով ընկերանաս, որ
ամչնան իմ թշնամիներս. ամօթով
եւ դառնան անունք որ՝ ինծի մէկ
ձեռս մը կուզէին հասցընել:

Ձարթիր և հայեցաւ տէր յիրաւու-
նս իմ, Աստուած իմ և տէր իմ՝ ի
դատաստանս իմ. և իրաւ արա ինձ
ըստ արդարութեան քումմ տէր Աս-
տուած իմ: Մի ուրախ եղիցին յիս
թշնամիք իմ, ասեն սրտիս
իւրեանց, Թէ վայ վայ անձանց մերոց
պն ընկլուզաք զնա: կԷ:

Արթընցիր տէր իմ, նայէ, իրա-
ւունք ըրէ, իմ դատաստանս կատէ
քովիկն արդարութեամբդ՝ որ չըլլայ
թէ թշնամին ուրախանայ, իր սրտին
մէջ ոխասրտելով ղուրցէ՝ թէ կորսըն-
ցուցինք մենք աս հոգին:

Զօրացան ինս թշնամիք իմ և ա-
տելիք իմ՝ի նանիր. ինչ ղոր ոչ յափըշ-
տակեալ էր, տուժէին նոցա: կը:

Իմ թշնամիներս իմ ատելիներս իմ
վասյ ուժ առին. և ան բանն որ չէին
ըրած, էին ղրկած, ինծմէն կուզէին
կառնէին:

Բազում եղեն քան զհեր գլխոյ
իմոյ, ոչք ատէին զիս ի տարապար-
տուց: կը:

Ա ատելիներուն համրանքը՝ որ
պարտ ատէը զիս կատէին, գլխուս
մազերէն աւելի շատցան:

Զինէն խորհէին ոչք նատէին առ
դրուռնս, զիս այսն առնէին ոչք ըմպէ-
ին գինի: կը:

Ամենևնալ որ դանէրնին նատէր
էին, իմ վասյ կըխօսէին, իմ վասյ կը-
մտածէին, գինի խմելու տեղնալ իս

ծաղը կընէին :

Եվաք մեք նախասինք դրացեաց մերոց, ծաղը և այլն կատականաց այնոցիկ՝ որ շուրջ կէին զմեզ : Հը :

Ընանկ եղաւ որ մեր դրացիներուն նախասինք մը եղանք, որ մեր քովինը նէրուն ծաղը ու ամէն եղանք :

Մինչև յերբ, Աստուած, նախատէ Թշնամին, բարկացուցանէ Հակառակորդն զանուն սուրբ քո : Հը :

Ինչվան երբ ասանկ քամահրէ ալիտոր Թշնամին տէր իմ, իս քամահրելովքեզալ կրբարկացընէ :

Մինչև ցերբ բարձրանայ Թշնամին ի վերայ իմ, նայեա և լուր ինձ տէր Աստուած իմ : Ժը :

Ինչվան երբ պիտոր բարձրընայ դուռնայ Թշնամին իմ վրայ, նայէ, լսէ ինձի տէր Աստուած իմ :

Արի տէր, ժամանեա նոցա, և խափանեա զնոսա, փրկեա զանձն իմ յանպատշաճ, ի սրոյ և ի ձեռաց Թշնամւոյն : Ժը :

Ելիր տէր Աստուած, հասիր անոնց վրայ ու խափանէ, ամբարիշտանելէն

իմ Թշնամիներուս ձեռքէն փրկէ իս։
Մինչև յաչեորել և ի ծերանալ՝
Աստուած իմ մի Թողուր զիս ։ Հ ։
Ինչման որ ես ծերանամ, մի Թո-
ղուր իս ձեռքէդ տէր Աստուած իմ ։
Մի ընկենուր զիս տէր ի ժամա-
նակս ծերութեան, ի պակասել զո-
րութեան իմոյ մի Թողուր զիս ։ Ա-
սացին Թշնամիք իմ ինձ, և որ պա-
շարեցին զանձն իմ, խորհեցան ի միա-
սին և ասացին ։ Աստուած եԹող
զնա, հալածեացուք և հասցուք նմա,
զի ոչ ոք է որ փրկէ զնա ։ Աստուած
իմ մի հեռի առնիր յինէն, և Աս-
տուած յօգնել ինձ նայեաց ։ Հ ։
Երբորոշ ծերանամ, երբոր իմ
ուժս կրպակսի, անտեսնալ մի ձգեր,
մի Թողուր զիս տէր իմ ։ Վասն զի իմ
Թշնամիներս անանկ ասեն իրա-
պասեն ըսելով ։ Աստուած ձեռքէ
Թողուց աս հոգին. հիմա է առնը,
հասնինք. հալածենք, վասն զի չի-
կայ մեկը որ փրկէ ։ Ա՛խ, տէր Աս-
տուած, դուն աս ըսելով մի հեռանար
ինձմէն, հապա ինձի օգնութիւն հաս-

նեղու նայէ ։

Ընդէը տէր կացեր ի հեռաստա-
նէ, անտես արարեր ի դէպ նեղու-
Թեան ժամանակի։ Թ ։

Ինչու համար հեռւլանց կեցեր
ես իմ մեղքերուս համար, լմնան իմ
նեղուԹեանս աւետը չես նայիր իմ
երեսս ։

Արի տէր, և մի զջրացի մարդ. գա-
տեցին հեԹանոսք առաջի քո ։ Թ ։

Եկիր տէր Աստուած, որ մարդ չի-
զջրանայ իմ վրայ, հեԹանոսներուն
դատաստանը դուն տես ։

Ամաչեցցեն և խռովեցցին յոյժ ա-
մենայն Թշնամիք իմ, դարձցին յետս
և ամաչեցցեն յոյժ վաղվաղակի և
խռովեցցին ։ Ը ։

Ընտկով ամէն Թշնամիներս ամէ-
նան, շուտով եա դատնան իմ հո-
գիս փորձելէն ։

Տէր լոյս իմ և կեանք իմ ես յում-
մէ՞ երկեայց, տէր ապաւէն կենաց իմ
մոց ես յումմէ՞ դողայցայց ։ Ի մերձե-
նալ ինձ չարաց ուտել զմարմին իմ,
նեղիչք իմ և Թշնամիք իմ նոքա տկա-

բացան և անկան : Թէ պատրաստեցի՛ վերայ իմ պատերազմ, ոչ երկիցէ սիրտ իմ . Թէ յարիցէ՛ ի վերայ իմ ձակատամարտ, սակայն և այսուիկ՛ ի քեզ տէր յուսացայ : Ասէ Թշնամեաց իմոց մի մատներ զիս՛ ի ձեռս նեղչաց իմոց : Եղ :

Տէր Լուսաւոր , դուն ես իմ լոյս ու կեանքս, ալ ես ուսկից պիտոր վախնամ, դուն ես իմ ապաւէնս, ես ուսկից պիտոր դողամ : Ինչ Թշնամի որ ինծի մօտիկնայ ինձս մը հասցընելու համար, իրենք կ՚ինան կ՚ընկաւվին: Թէ որ իմ վրայ պատերազմ հ՚ելլան ծէծկըվին իմ Թշնամիներս , սատնայ, մարվին, ու աշխարհ , յոյս քու վրադ դնելէն ետև՝ սիրտս ամենևին չի վախնար : Անոր համար չըլլայ որ Թշնամիներս ուրախանան , մի մատներ իս իմ՝ նեղիչներուս ձեռքը :

Տէր է իմ օգնական , և ես ոչ երկեայց , զի՞ արասցէ ինձ մարդ : Տէր է իմ օգնական , և ես տեսից՛ ի Թշնամիս իմ : Բարի է յուսալ՛ ի տէր, քան յուսալ՛ ի մարդիկ . բարի է յուսալ՛ ի

տէր, քան յուսալ յիշխանս: ՃԺԷ:

Իմ օգնականս Աստուած է, անոր համար չեմ վախնար ինչ պիտոր ընէ ինծի մարդը. մանաւանդ թէ իմ թշնամիներուս պատիժ կրհասցընէ: Անոր համար շատ աղեկ է Աստուծոյ վրայ դնել յոյսը, քան թէ մարդու կամ իշխաններու վրայ:

Ամենայն ազինք շրջեցան զինեւ, և անուամբ տեառն յաղթեցի նոցա: Զօրուեցաւ իմ և օգնուեցաւ իմ տէր, և եղև ինձ ի փրկութիւն: Ձայն տեառն արար զօրութիւն, ձայն տեառն բարձր արար զիս, և ձայն տեառն արար զօրութիւն: ՃԺԷ:

Ամէն կերպ փորձուեցաւ բերին ինծի թշնամիները, Աստուծոյ անունը տալով անոնց վրայ ելայ. վասն զի իմ զօրութիւնս ու օգնութիւնս Աստուած է. անիկայ ես վրայ հանեց, զօրացուց:

Զի ահա թշնամիք քո տէր, զի ահա թշնամիք քո կորիցեն, ցրուեսցին ամենեքեան ոչք գործեն զանօրէնութիւն: Եաեա ամէն իմ ի թշնա-

ժիս իմ. ոչք յարուցեալ էն ի վերայ իմ չարութեամբ, ի նոսա լուիցէ ունկն իմ: ՚ղ:

Վասն զի իմ հոգւոյս Թշնամինէրը տէր իմ, քուկին Թշնամինէրդ էն, որ անօրէնութիւն կընէն, ու ինծի գոր ծել կուտան. ցրուէ տէր իմ աս ամ մէն Թշնամինէրը, որ իմ վրայ ելեր էն չարութեամբ:

Խոտովանեղէց քեզ տէր, զի լաւ ինձ և եղեր ինձ ի փրկութիւն: ՃԺԷ:

Հիմա կըխոտովանիմ, հնորհակալ կըլլամ տէր իմ որ ինծի լաւեցիր, ու իս փրկեցիր:

Աղօթ՚ ի սաղմոս, ի խնդրելն ինչ՚ ի ՓԷՏՈՒՆ:

Ժողով՚ ի տեառնէ, և նա տացէ քեզ զինդրուածս սրտի քո. յայտ նեա առաջի տեառն զՀանապարհս քո, և յուսա ի նա: ԼՇ:

Ուղիղ Աստուածմէ, որ անալ քուսրտիդ խընդիրքը տայ. Աստուծոյ

առջին հանէ, բայց քու Ճամփադ, և անոր յուսայ :

Նա արասցէ և հանցէ որպէս զլոյս զարդարութիւնս քո, և զիրաւունս քո որպէս զօր հասարակ : ՀՀ :

Աստուած քու արդարութիւնդ դուրս կը հանէ լուսոյ մը պէս, և քու կիրաւունքդ յայտնի կընէ՝ օհալ սրկվան առեւնի պէս :

Լռեցէ քեզ տէր յաւուր անձկութեան, օգնական եղիցի քեզ անուն Աստուծոյ Յակոբայ : ԺԲ :

Ընանկ ներգութեան օրդ՝ որ մէկ բան մը կուզես, Աստուծոյ դիմէ, քեզի կըլսէ, քեզի օգնական պիտոր ըլլայ Աստուծոյ անունը :

Առաքեսցէ քեզ տէր օգնութիւն ի սրբութենէ իւրմէ, և ի սիոնէ ընկալցի զքեզ : ԺԲ :

Աստուած քեզի իր սրբութենէն օգնէ պիտոր, ու սիոնէն որ է արքայութիւնը՝ քեզ ընդունի պիտոր :

Յիշեսցէ տէր զամենայն պատարագ քո, և զոհաստս քո ընդունելի արասցէ : ԺԲ :

Որչափ պատարագ ու ղուրպան ըրիր, ամէնն ալ չի՛չէ Աստուած, ու քու ուխտդ ընդունելի ընէ։

Տացէ քեզ տէր ըստ սրտի քումի, և զամենայն խորհուրդս քո նա կատարեսցէ։ ԺԲ։

Զուարճին սրտիդ կեօրէ տայ քեզի Աստուած, ու քուկին ամէն խորհուրդներդ՝ մտքիդ եղածները անկայ կատարէ։

Ցնծասցուք մեք ի փրկութեան քումի, յանուն Աստուծոյ մերոյ մեք մեծ եղիցուք։ ԺԲ։

Աստուած մեր խնդիրքը տանիկ կատարելով, մենքալ ցնծանք ուրախանանք, Աստուծոյ անունովը մենքալ մեծնանք։

Լցուսցէ տէր զամենայն խնդրուածս քո, այժմ ծանեաք զի կեցոյց տէր զօծեալ իւր։ ԺԲ։

Զու ամէն խնդիրքդ Աստուած լեսցնէ. հիմա անով խոսցանք որ Աստուած իր օծեալը Քրիստոս կեցուց, անով ամէն խնդիրքնիս կատարեց։

Հնազանդ լիր տեառն, և ծառայ

եա՛ նմա, և մի՛ նախանձիր ընդ այնոսիկ՝ որոց առաքեալքն ձանապարհք իւրեանց, ընդ մարդոյ որ գործէն զանօրէնութիւն։ ՀՀ։

Դուռնալ հնազանդ եղիր Աստուծոյ, ու իրեն ծառայէ, մի՛ նայիր, օրինակ մառնեը ան մարդիկներէն՝ որոնց ձամփանին ավըրված է, ան մարդէն որ անօրէնութիւն կընէ։

Զի չարք վաղվաղակի սատակեցին, բայց ոչք համբերեն սեառն, նոքա ժառանգեացեն զերկիր։ ՀՀ։

Վասն զի չարերը շուտով պիտոր սատկին, բայց անոնք որ կըհամբերեն Աստուծոյ, բոլոր աշխարհ ժառանգեն պիտոր։

Աղօթ՛ ի սպասել վասն ապաւինելոյ յԱստուած։

Աստուած մեր ապաւէն և զօրութիւն, օգնական՛ ի վերայ նեղութեանց՝ որք գտին զմեզ յոյժ։ Վասն այսորիկ ոչ երկեցուք մեք՛ ի խռովիլ երկրի։ խե։

Մեր ապաւէնը և զօրութիւնը Աստուած է, որչափ նեղութիւնէը որ մեր վրայ գան, ան է մեր օգնականը: Ամօր համար աս աշխարհիս մէջ որչափ խռովութիւն ըլլայ հոգւոյ ու մարմնոյ, չենսովինք, չերկիւղինք:

Ողորմութիւն իմ և ապաւէն իմ, օգնական իմ և փրկիչ իմ, ապաւէն իմ, և ես յուսամ ի նա: Ճիշ:

Իմ ողորմութիւնս՝ իմ ապաւէնս՝ օգնականս՝ փրկիչս Աստուած է. իմ յոյս բոլոր Աստուծոյ վրայ դրեր եմ:

Որ բնակեալն է յօգնութիւն բարձրելոյն, ընդ հովանեաւ Աստուծոյ յերկինս հանգիցէ: ՀՇ:

Գիտեմ որ՝ ովոր Աստուծոյ օգնութեանը ապաւինելով կեցեր է, Աստուծոյ հովանաւորութեան տակը ան մարդը կըհանգչի:

Ջբարձրեալն արարեր քեզ ապաւէն, ոչ հասցին առ քեզ չարք, և տանջանք մի մերձեսցին ի յարկս քո:

Երբոր Աստուած քեզի ապաւէն ես ըրեր, ապահով կեցիր՝ որ քեզի և քու տանդ չար մը պիտի չըլլար,

ոչ հոգւոյ և ոչ մարմնոյ :

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո պահել զքեզ յամենայն ճանապարհս քո :

Առուեալ իր հրեշտակներուն պատուիրեր է քեզի համար որ քու ամէն ճամբուդ մէջը քեզ պահեն :

Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ, ի հովանի թևոց նորա յուսասցիս : Որպէս զէն շուրջ եղիցի զքեւ ճշմարտութիւն նորա :

Վասն որ Առուեալ անանկ մարդը՝ որ իր թևերուն հովանաւորութեանը կը յուսայ, անանկը իրը թէ իր վայ շալկած կրպահէ. և իրեն ճշմարտութիւնը զէնքի (սիլահի) պէս ջրոս դէղ կրպահէ :

Ինձ մեքձենալ առ Առուեալ բարի է, և դնել առ տէր զյոյս իմ : Ամէն :

Դուռնալ կրսես ան առենը որ՝ ինձի խիստ աղէկ բան է մօտիկնալ Առուեծոյ, ու իմ յոյս Առուեծոյ վայ դնել :

Որ հովուեսդ իսրայէլի նայեցաց, որ առաջնորդես որպէս խաշին Յովսե-

փուռ : Զարթո՛ զըօրութիւնս քո , և եկ ՚ի կեցուցանել զմեզ : Աստուած զօրութեանց դարձո՛ զմեզ երևեցո՛ զե֊ րեսս քո ՚ի մեզ և կեցցուք : հՁ :

Առանկ յոյս գնելով քեզի կաղա֊ ղակեմ տէր իմ, դուն որ իսրայէլին ազգը կըհովուես կառաչնորդես , նայէ ինծի, քու կին զօրութիւնդ մե֊ ւկո՛ իս ապրեցընելու : Տէր Աստուած դարձու մեզ մըտրութեան ձամփէն, քուկին երեսդ ցըցո՛ ու մենքալ ապ րինք :

Եղև տէր ապաւէն իմ. Աստուած օգնական յուսոյ իմոյ : ղԷ :

Ա՛ս ըսելով իմ ապաւէնս , իմ օգ֊ նականս ասկեցեաքը Աստուած եղաւ :

Յառաջագոյն տեսանէի զտէր ա֊ ռաջի իմ յամենայն ժամ, զի է ընդ֊ աջմէ իմմէ , զի մի սասանեցայց : ժԷ :

Ես առաջուցմէալ կըտեսնայի որ Աստուած ամէն տեղ իմ առջիս էր , իմ աջ գիս կեցեր էր որ չըլլայ թէ ընկիմ :

Ո՛րպէս զի մեծ են գործքդ տէր, և յոյժ խոր են խորհուրդք քո : Այր

անզգամ զայս ոչ ծանիցէ, և անմիտն զայս ոչ առնու ի միտ : զի :

Ի՜նչպէս մեծ են քու գործքերդ տէր Աստուած . ի՜նչպէս խորունկ են քու խորհուրդներդ քու մտածմունքը ներդ , որ մէկ անգգամ մարդ մը չկրնար իմանալ իր խելքը չհասնիր :

Բայց միայն Աստուծոյ հնազանդ լեր անձն իմ , զի ի նմանէ է ինձ փրկութիւն : Նա է Աստուած իմ և փրկիչ իմ , ապաւէն իմ զի մի սասանեցայց : Ի Աստուծոյ է զօրութիւն իմ և փառք իմ , Աստուած օգնութեան իմոյ , յոյս իմ է առ Աստուած : կին :

Միայն թէ դուն անձն իմ , Աստուծոյ հնազանդ եղիր , վասն զի անկէց է իմ փրկութիւնս : Անկայ է իմ Աստուածս , իմ փրկիչս , ապաւէնս , որ բան մը չընկամ : Իմ զօրութիւնսալ փառքսալ Աստուծմէ է , յոյսսալ Աստուծոյ վրայ է :

Ի տուէ ես ոչ երկեայց՝ զի ի տէր յուսացայ . Աստուծովդ վէրջին ջանս իմ , յԱստուած յուսացայ և ոչ երկեայց , զի՞ արասցէ ինձ մարդ : ծէ :

Յորեկնալ չեմ վախնար, վասն զի Աստուծոյ վըայ է յոյս. Աստուած կըգովեմ, Աստուծոյ վըայ կըյուսամ, չեմ վախնար ինչ պիտոր ընէ մարդ:

Սիրեցեյց զքեզ տէր զօրութիւն իմ, տէր հաստատիչ իմ, ապաւէն իմ և փրկիչ իմ: Աստուած օգնական իմ, և ես յուսամ ի նա, ապաւէն իմ, եղջիւր փրկութեան իմոյ ընդունելի իմ է: ԺՁ:

Ակնէց եղաք քեզ կըսիրեմ տէր իմ, վասն զի իմ զօրութիւնս ես, ապաւէնս ես ու փրկիչ: Դու ես տէր Աստուած՝ իմ օգնականս և իմ ապաւէնս, որ ինձի խիստ հաճոյ է, իմ փրկութեանս ուժն է:

Օգնական իմ լեր տէր, և մի անարգեր զես, և մի թողուր զես Աստուած փրկիչ իմ: Հայր իմ և մայր իմ թողին զես, և տէր իմ ընկալաւ զես: ԻՁ:

Ինձի օգնութիւն ըրէ Աստուած, մի քամահրեր ես իմ մեղքերուս համար, մի թողուր ես իմ փրկիչս: Ես

ան աստիճանը հասայ որ՝ ամէնէն մեր-
դիկ Թողուցին իս, ինչվան հայրասալ
մայրասալ Թողուց, բայց Աստուած զիս
ընդունեց։

Պահեա զիս որպէս բիբ ական, ընդ
հովանեաւ Թևոց քոց ծածկեացես
զիս յերեսաց ամբարշտաց որք տա-
ռապեցուցին զիս։ Ժէ։

Հիմնալ կաղաչեմ տէր իմ, պա-
հես իս ինչպէս կըպահվի աչքին ա-
պիկը, Թևերուդ հովանաւորու-
Թեանը տակը պահէ իս ջոր մարդիկ
նէրուն ձեռքէն, որ ինծի նեղուԹիւն
տըվին։

Տէր Աստուած զօրուԹեանց, ո՛
նման է քեզ, հզօր ես դու տէր, և
ճշմարտուԹիւն քո շուրջ է զքեզ։
Քո են երկինք և քո է երկիր, զաշ-
խարհս լըիս իւրով դու հաստատե-
ցեր։ Պարծանք զօրուԹեանց մերոց
դու ես տէր, և ի կամս քո բարձր ե-
ղիցի եղջիւր մեր։

Դուն ես տէր զօրուԹեանց, ով կըբ-
մանի քեզի, քուկինդ է երկինք ու
երկիր, բոլոր աշխարհս դուն ստեղ-

ծեցիր, մեր պարծանքը դուն ես, քու
կին կամքովդ բարձրացո՛ մեր եղ
ջիւրը:

Օրհնեալ ե՛ս եր, զի լուաւ ձայնի
աղօթից իմոց, տէր օգնական իմ և
պաշտպան իմ: Ինձ յուսացաւ սիրտ
իմ. օգտեցաւ և զուարճացաւ մարմին
իմ, և ես կամօք իմովք խոստովանեցայց
նմա: Տէր զօրութիւն ժողովրդեան իւ
րոյ, ապաւէն փրկութեան օծելոյ իւ
րոյ: Փրկեա՛ զժողովուրդ քո, և օրհ
նեա՛ զժառանգութիւն քո. հո
վուեա՛ և բարձրացո՛ զնոսա մինչև յա
ւիտեան: ի՛ն:

Օրհնեալ ըլլայ Աստուած, որ իմ
աղօթքս լսեց, իմ օգնականս ու պաշտ
պանս եղաւ, իմ սիրտս անոր վրայ
յուսացաւ, յուսալովը օգուտը տե
սաւ, մարմինս ալ ուրախացաւ, ես ալ
խոստովանելով ընդհակառակ կրկնեմ:
Տէր Աստուած՝ որ ես զօրութիւն
ու ապաւէն ժողովրդեան, փրկէ
քու ժողովուրդդ, օրհնէ՛ քու ժա
ռանգութիւնդ, հովուէ՛ ու բարձրը
ցո՛ մինչեւ յաւիտեան:

Աղօթք ի սազմոսէ ի ժամանակի նեղու-
թեան :

Ի նեղութեան իմում ես առ տէր կարդացի , և առ Աստուած իմ աղաղակեցի : ԺԷ :

Երբոր ես նեղութեան մէջ ընկայ , սիրտս ուրիշն մը չիբացի , հապա միայն Աստուծոյ բացի :

Կեցո՛ զիս Աստուած , զի հասին ջուրք յանձն իմ. ընկղմայ ես ի խորս անդնդոց , ուր ոչ գոյ հնձ հանգիստ : կԲ :

Քեզի կաղաղակեմ տէր Աստուած , փրկէ՛ իս. վասն զի ինչպէս ջուրը մէկի մը վրայ վազէ, անանկ նեղութիւնները իմ վրայ վազելով եկան հասան . եթէ Թէ մէկ խորունկ ծովու մը մէջ ընկած ըլլայի , անանկ չեմ կրնար ձար մը հանգստութիւն մը գտնալ :

Նեղութիւնք սրտի իմոյ բազում եղեն յոյժ , և ի վշտաց իմոց հան զիս : իԲ :

Իմ սրտիս նեղութիւնը խիստ շատ

ցան, աս նեղութենէ հանէ իս կա-
ղաչեմ։

Ընդէր մերժեցեր Աստուած իս-
պառ, բարկացար սրտմտութիւն քո
'ի վերայ խաչին արօսի քո։ Յիշեա
ժողովուրդ քո զոր ստացար 'ի սկզբա-
նէ, փրկեցեր զվիճակ ժառանգու-
թեան քո։ Հէ։

Ինչո՞ւ աստանկ բոլորովին ձգեցիր իս
Աստուած, քուկին բարկութիւնդ
վրաս է եղեր իմ մեղքերուս համար.
բայց յիշէ որ եսալ քուկին թառուլայ-
իդ ոչխարնէրէն եմ. յիշէ որ քուկին
ժողովրդեդ քուկին ժառանգու-
թենէդ եմ, որնոր շատ աշխատան-
քով առաջուցմէ 'ի վեր վաստրկեցար
ու փրկեցիր։

Ընդէր դարձուցանես զձեռն քո,
և զաջ քո 'ի միջոյ ծոցոյ քումմէ իս-
պառ։ Հէ։

Աստանկ ըլլալով հիմա ինչո՞ւ համար
քուկին ձեռդդ ինծմէն բոլորովին կը-
դարձընես։

Խօսեցայ 'ի գիշերի ընդ սրտի ի-
մում, հոգայի և տառապեր յիս հոգի

իմ: Մխիթ յաւիտենից մերժեսցէ զնա տէր, և ո՛չ ևս յաւելցու ի հա- ճել և ևս: Կամ իսպառ արգելցէ զը- ղջմտութիւն իւր յինէն: Կամ մե- ռասցէ զԹալ Աստուած իմ և ևս. կամ արգելցէ զգթութիւն իւր բար- կութեամբ իւրով: Հէ:

Ա՛ հոգը իս անչափ առաւ որ՝ գի- շերը սրտիս մէջը ես ինձի կրնամը- տայի կրտառապէի, արդեօք Աստու- ած իս բոլորովին մերժէց, երեսէ ձգէց, մէյմընալ ամենևին երեսս չի- նայի չողոքմի պիտոր, ջըլայ որ կըսէի անանկ բարկացած ըլլայ որ ալ բնաւ պիտոր մուռնայ իս, իր գթութիւնը կարէ վլայէս:

Յաւուր նեղութեան իմոյ զԱստու- ած խնդրեցի ձեռօք իմովք, ի գիշե- րի առաջի նորա ոչ խաբեցայ: Ո՛չ կա- մեր միսիթարել զանձն իմ, յիշեցի զԱստուած և ուրախ եղէ. հոգայի և նուաղեր յիս հոգի իմ: Հզ:

Ասանկ նեղութեան գէշ օրսալ՝ ես նորէն ձեռվընէրս վեր վերցընելով Աստուծոյ կաղաչէի, շատ նեղութիւն

քաշէցէք, հասկըցայ աշխըրհիս ոչըն-
չութիւնը, զըուեցայ աշխըրհիս վատ-
քէն, մեծութենէն, մարդիկներէն,
վասն զի սուտ են. ես անոնցմէ մէկ
մխիթարութիւն մը չիգտայ, յիշեցի
ան առեղը Աստուած, հասկըցայ որ
ճշմարիտ բարեկամ ինծի Աստուած
է միայն, Աստուած յիշելովամբ չի-
խաբվեցայ, վասն զի մինակ յիշելը
Աստուած իմ սրտիս մէջը մէկ ուրա-
խութիւն մը կըբերէր, իսկ երբոր հոգ
մտածուք կընէի, իմ հոգիս մարելու
պէս կըլլար:

Ո՛վ է Աստուած մեծ որպէս զԱս-
տուած մեր. դու ես Աստուած որ
առնես զքաջութիւնս: Ցուցեր ժողո-
վրդեան քում զըօրութիւն քո, փըր-
կեցեր բազկաւ քով զժողովուրդս քո:

Վասն զի կըմտածէի, ինչկայ մեծ
ինչպէս է մեր Աստուածը, դուն ես
ըսի ան Աստուածը որ հրաշքներ կը-
գործես, դուն ես՝ որ քովինն ուժգ
ցըցուցիր քու ժողովրդեանդ վրայ, ու
իրենց նեղութեան մէջ հասար, փըր-
կեցիր:

Ողորմեա՛ ինձ տէր , զի առ քեզ աղաղակեցի, զօրհանապազ ուրախա- լսո՛ զանձն ծառայի քո , զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ: Զի դու տէր քաղցր և ուղիղ ես ,բազումողորմ առ ամենեսեան, որք կարդան առ քեզ: Յաւուր նեղութեան իմոյ կարդացի առ քեզ, և լուար ինձ: Ա՛յլ դու տէր Աստուած իմ, գթած ես և ողորմած, երկայնամիտ, բազումողորմ և ճշմա- րիտ,նայեա՛ առ իս և ողորմեա՛ ինձ:ձե:

Ողորմե՛ ինծի , վասն զի օտարի չի- դիմեցի , այլ քեզ միայն, ուրախացո՛ իս միշտ քու ծառադ, վասն զի քեզ վերուցի սիրտս՝ որ քաղցր ես ու շի- տակ, ամենեսուն վրայ կըգթեա՛ որոնք որ քեզ կըդիմեն, քեզ կըկանչեն , եսալ երբոր իմ նեղութեանս օրը քեզ կանչեցի, լսեցիր ինձ : Ա՛սանկ ողոր- մած ըլլալովդ՝ հիմսալ իմ վրայ նայէ՛ ու ողորմե՛:

Յաւուր նեղութեան իմոյ խնդար- հեցի առ իս զանձն քո ,յորում աւ- ուր կարդամ առ քեզ , վազվազակի լսո՛ ինձ : ձե :

Ա՛ խմ նեղութեանս օրը լաւ ինձի
ան օրը որ քեզի կալալակեմ, չուտով
մոխ դիր ինձի:

Տա՛ր մեզ օգնութիւն ի նեղու-
թեան, զի ընդունայն է փրկութիւն
մարդոյ: Աստուածով արասցուք զօրու-
թիւն, և նա արհամարհեսցէ զչնա-
սիկ որ նեղէն զմեզ: ՀԺ:

Օգնէ մեզի մեր նեղութեանը մէջ,
վասն զի պարապ է մարդու օգնու-
թիւնն ու փրկութիւնը, հապա միայն
մեր Աստուածովը մենք պիտոր զօրու-
թիւն ընենք, ինքը մեր նեղչնէրը պի-
տոր քամահրէ:

Խնդրեցի ի տէառնէ և լուաւ ինձ,
և յամենայն նեղութենէ իմմէ փըր-
կեաց զիս: ԼԵ:

Ասանկ խնդրեցի, Աստուածածալ լսեց
ինձի, ու ամենենեղութենէ փրկեց իս:

Հայեցաւ տէր ի նեղութիւնս նո-
ցա, ի լսել ձայնի աղօթից նոցա: ՅԻ
Հետց զուխս իւր, և զղջացաւ ըստ բա-
զում ողորմութեան իւրում. Եւ զնո-
սա ի գթութիւնս առաջի ամենայն
գերչաց նոցա: ՃԵ:

Աստուած լսելով իրենց աղօթքնե-
րուն, նայեցաւ իրենց քաշած նեղու-
թիւններուն վրայ, յիշեց իրեն ուխ-
տը իրեն խօսք տրուածները, մեղքըն-
ցաւ իրեն անհուն ողորմութեամբը,
և յիշելովը անանկ ըրաւ որ, որոնք
որ գերի ըրեր էին, նեղութիւն կու-
տային, անոնք գութ չարժեցան վրա-
նին:

Ի նեղութեան իմում ես առ տէր
կարգացի, և լուաւ ինձ տէր, փրը-
կեաց զանձն իմ ի չըրթանց նենգա-
ւորաց, և ի լեզուէ չարէ: ՃԺԶ:

Ընթրհակալ կըլլամ որ՝ իմ նեղու-
թեանս ատենը Աստուծոյ դիմեցի,
անալ լսեց, փրկեց զիս չար լեզուևե-
րէն, նենգաւորներէն:

Աղօթ՝ ի սաղմոս, ի նեղութեան աղ-
օթողութեան մարդոյ և հոգւոյ:

Ես ալքատ և անանկ եմ Աստու-
ած, օգնեա ինձ, օգնական և փրկիչ
իմ ես դու տէր իմ, մի յամենար:
կԶ:

Ես մեկ մարդ մընեմ հոգւով և մարմնով աղքատ, սակը Աստուած օգնէ ինձի, մուշտակար, վասն զի դուն ես ինձի օգնական ու փրկիչ:

Կայեա առ իս և ողորմեա ինձ. զի միամօր և աղքատ եմ ես: Ամէն:

Կայէ ինձի ու ողորմէ, վասն զի ես մինակուկ և աղքատ մարդ մի եմ:

Ամենեքեան քեզ ապաւեն, և դուստաս կերակուր նոցա ի ժամու: Ցաս դու նոցա և կերակրեն, բանաս զձեռն քո, կերակրես զամենեսեան կամօք քովք: Ամէն:

Ո՛րչափ որ աշխարհիս մէջ մարդ ու կենդանի կայ, ամմէնքը քեզի կըսպասեն. դուն ալ ամմէնուն կերակուրը իրենց ատենին կըհասցընես կուտաս:

Աղքատ և ցաւած եմ ես. փրկու Թիւն քո ընկալցի զիս: Ամէն:

Հիմա ինձի չէս խոսր իմ կերակուրս հոգւոյ և մարմնոյ, որ մեկ աղքատ ու ցաւագար մընեմ հոգւով ու մարմնով, ու կըսպասեմ քեզի ատրիմ, որ քուկին փրկութիւնդ ինձի հասնի:

Տէր Աստուած զօրութեանց, մինչև յե՞րբ բարկանաս յաղօթս ծառայից քոց: Յամբեցեր մեզ հաց արտասուաց, և արբուցեր մեզ արտասուս չափով: Աստուած զօրութեանց դարձ, հայեաց յերկինից և տես, այց արա այգւոյս այսմիկ, և դարման տար սմա զոր անկեար աջ քո: Ելի:

Ա՛խ, տէր Աստուած, գիտեմ որ մեղաւոր եմ, բայց ինչվան երբ պիտոր բարկանաս իմ մեղքերուս համար, աղօթքս չընես պիտոր. քու տրված հացդ՝ ինծի մէկ արցունքի հաց մը եղավ, մեղքերուս ծանրութենէն՝ նեղութիւնները վրաս շատնալէն՝ լալով կուտեմ, լալով կըխմեմ: Տէր Աստուած զօրութեանց, մեյմը դարձիր, նայէ վերէն երկնքէն, տես հոգա, վասն զի իմ հոգիս՝ իմ տուրքս՝ մէկ էգիպտէնէ, որ դուն անկեցիր, ես բան մը չունիմ, անանկէնէ դուն հոգա ասիկայ որ քովէն ձեռքդ անկեց.

Մի՛ յիշեր զմեզս մեր զառաջինս, վաղվաղ եկեսցէ առ մեզ ողորմու-

Թիւն քո, զի աղքատացաք յոյժ։ Հէ։

Դիտեմ որ իմ մեղքերս դէռ կը-
յիշես, անկեց առանկ խս ձգերես. կա-
ղաչեմ տէր իմ ալ մի յիշեր իմ առջի
ըրած մեղքերս, շուտով հատցուր ինձի
մէկ ողորմութիւն մը հոգւոյս և մար-
մնոյս, վասն զի աղքատութիւնը խիստ
ախրեց վրաս ։

Մի դարձցի անանկն առանց ետեւ,
այլ աղքատն և անանկ օրհնեսցեն զա-
նուն սուրբ քո ։ Հէ։

Ես մէկ անանկ աղքատ մընեմ, ա-
ռաջ ինչ շնորհքներ ունէի՝ բոլորը
կորանցուցի, հիմա սա խեղճ անանկ
աղքատս ամօթով մի դարձներ, այլ
անանկ ըրէ որ՝ աս աղքատնալ ու
անանկնալ քովինն անուանդ օրհնէ։

Մի մնաներ գազանաց զանձն՝ որ
խոստովան առնի առ քեզ. և զան-
ձինս անանկաց քոց մի մոռանար ի-
պառ ։ Հէ։

Ընդունի գազաններուն ձեռքը մի
մնաներ իս տէր իմ որ քեզ կըսպա-
սեմ, իմ կկրքերուս ձեռքը մի թո-
ղուր իս տէր իմ, քեզն կըդիմեմ, մե-

զի սէս անանկիւերը մի մոռնար ինչ-
ման եղբը :

Յամբարատանել ամբարշտի այրի
աղքատն . արգելլին ՚ի խորհուրդս
իւրեանց՝ զոր և խորհեցան : Աչք նո-
րա (ամբարշտին) ՚ի անանկս հային :
Դարանի յափշտակել զաղքատն : Զի
առաց (ամբարիշտն) ՚ի սրտի իւրում
Թէ մոռացաւ Աստուած (զաղքատն),
դարձոյց զերեսս իւր, զի մի տեսցէ
հապառ : Արի տէր Աստուած իմ ,
բարձր եղիցի ձեռն քո . և մի մոռա-
նար զանանկս : Ցեսանես դու զնա
՚ի ցաւս, և ՚ի սրտմտութիւնս հայիս .
՚ի քեզ Թողեալ է աղքատն, և որբոյն
դու ես օգնական : Թ :

Երբոր ամբարիշտ մարդը ամբար-
տաւանիլ դադրցնալ կըսկըսի , ան ա-
տենը աղքատը կերբի . ըրէ տէր իմ , որ
իրենց խորհուրդը ինչ որ մտածեցին՝
խափանվի . վասն զի ամբարշտին աչքը
անանկներուն վրայ կընայի . ծածուկ
Ջամբանէր կըբանեցընէ որ իրեն յա-
փշտակէ՝ իրեն բանեցընէ աղքատը ,
որովհետև դուն խաղտրովին ձգեցիր:

Ամբարիշտնալ՝ սատանանալ՝ անանիկ կըսէ սրտին մէջը որ՝ Աստուած մոռացեր է աս աղքատը, իր երեսը անանիկ դարձուցեր է իր մեղքերուն համար որ բնաւ չուզեր տեսնալ: Ախ, արի՛ է՛ լիր տէր Աստուած իմ, բարձրըցո՛ քու ձեռքդ, մի մոռնար իս անանկս, կըտեսնաս ահա իս ցաւերուս մէջ, սրտմտութեան մէջ, մէկը չիկայ օգնական, մինակ քեզի է թողված աս աղքատս. որը մարդուն դուն ես օգնական:

Ջարթիր, ընդէր ննջես տէր. արի՛, և մի մերժեր վերջապատ: Ջմէ դարձուցանես զերեսս քո՝ ի մէնջ, մոռանաս զաղքատութիւն և զնեղութիւնս մեր: Ամէն:

Արթընցիր, ինչո՛ւ կըքնանաս, է՛լիր, մի բոլորովին մերժեր վերջապատ: Ինչո՛ւ կըդարձընես մէնք քուկին երեսդ, կըմոռնաս ինչ աղքատութիւն՝ ինչ նեղութիւն որ կըքաշենք:

Ո՛չ իսպառ մոռանայ տէր զաղքատն, համբերութիւն անանկաց մի կորչիցէ իսպառ: Ամէն:

Աստուած ինչվան եռքը չիմոռնար աղքատը. տնանկներուն համբերու-
Թիւնը ինչվան եռքը չկորսրվիր:

Վասն տառապանաց աղքատին և հեծութեան տնանկին՝ այժմ յա-
րեայց ասէ տէր. եղից զփրկու-
Թիւն իմ, և համարձակեցայց ի նո-
սա: Ճ:

Կըլսեմ ահա Աստուծոյ ձայնը որ կըսէ, որովհետև աղքատը շատ տա-
ռապանք քաշեց, շատ հեծութիւն հառաչանք ըրաւ, հիմա ես կելլամ կըփրկեմ, համարձակութիւնս կըտը-
ցնեմ:

Խոստովան եղիցին տեառն ողոր-
մութեանց նորա, սքանչելեաց նորա որդիք մարդկան: Ձի յագեցոյց զանձն
նըս քաղցեալս և զանձինս կարօտեալս
լի արար բարութեամբ: Ոյք նստէին
ի խաւարի և ի ստուերս մահու, կա-
պեալ էին յաղքատութեան որպէս
յերկաթս: Աղաղակեցին առ տէր ի
նեղութեան իւրեանց. ի վտա-
ցս նո-
ցա ապրեցոյց զնոսա: Օրհնեաց զնո-
սա և բազմացան յոյժ. և անասունք

նոցա ոչ նուաղեցան: Օգնեաց տէառն
կին յաղթաւորեցան, առաջնորդեաց
որպէս խաչին աղգի նոցա : Ճշ:

Մարդիկալ Թող խոստովանեալով,
շնորհակալ ըլլան Աստուծոյ ըրած
ողորմութիւններուն ու հրաշքներուն
վրայ. վասն զի անօթինները կշտացուց,
կարօտ մարդիկները բարեաք լեցուց :
Անոնք որ աղքատութեան մէջ իբր թէ
երկաթը զարնըլած կապված կային,
և իբր թէ խաւարի մէջ նստած մա-
հուն դուռը հասեր էին, որովհետև
Աստուծոյ աղաղակեցին իրենց նե-
ղութեան առեն, Աստուածալ ա-
նոնք խալըացուց, մանաւանդ թէ օրհ-
նեց, որով իրենքալ և իրենց անա-
սունները՝ որ իրենց ապրանքին էին
չատցան: Ցնանկին՝ իր աղքատութեան
մէջը օգնութիւն ըրաւ, ու իբր ոչնա-
չի մը առաջնորդ եղավ. Ճամփայ ըլ-
ցուց:

Կերակրեաց զնոսա ՚ի պարարտու-
թենէ ցորենոյ, և ՚ի վիմէ մեղր յա-
գեցոյց ՚ի նոսա : Ճ:

Ցորենին պարարտութեամբը՝ ա-

ղէկ հացով անոնք կերակրեց, ու մեղ-
րով կշտացուց, անանկ մեղրով որ՝
մէկ վիմէ մը, քարէմը բխած էր. (և
վէմն էր ինքն Քրիստոս) :

Խնդրեցին, և եկն լորամարգի, և
հացիւ երկնից լցոյց զնոսա : Ձ՟ը :

Մխ ուղեցին, պղտըձին խրկեց
անոնց, ու երկնային հացով լեցուց :

Ցիշատակ արար սքանչելեաց իւրոց
ողորմած. ողորմած գթած է տէր. կե-
րակուր տայ երկիւղածացիւրոց: Ճ՟ժ :

Իր հրաշքներուն յիշատակ ըրաւ.
ատանկ ողորմած գթած է Աստուած.
իր երկիւղածներուն կերակուր կու-
տայ :

Ջ՟անկուԹիւն անանկաց լուաւ
տէր, ՚ի պատրաստուԹիւն սրտից նո-
ցա հայեցաւ ունկն քո : Դատ առնել
որբոյն և անանկին՝ զի մի ևս յաւե-
լուցու մարդ ի մեծաբանել իւրում
՚ի վերայ երեսաց երկրի : Ե՟ :

Ցնանկներուն փափաքը ցանկու-
Թիւնը լսեց Աստուած. անոնց սրտին
պատրաստուԹիւնը նայեցաւ, որբոյն
ու անանկին դատաստանը տեսաւ, որ

ա՛լ մարդիկ մեծ մեծ չխօսին սա աշ-
խարհիս վրայ :

Տրանջեցին զԱստուածոյ և ասացին
միմեանց կարծող իցեն Աստուած պատրաս-
տել սեղան յանապատի : Հրաման եւս
ամպոց՝ի վերուստ, և զդրունս երկ-
նից եբաց, և տեղացո՝ի նոսա մանա-
նայ՝ի կերակուր : Հէ :

Ա՛ստ զինչ հոգացին Աստուածմէ ու
ըսին, աՀա դեռ կարօղ է Աստուած ա-
նապատի մէջ՝ ուր որ հաց չկրնայինք
հոն սեղան պատրաստել: Աստուած-
ալ ասանկ լսօղներուն աչքերնին
խօթելու համար, երկինքին դուռ-
ները բացաւ, վերէն ամպերէն մանա-
նայ ինչեցուց իրենց կերակուր :

Տեսան ուղիղ, և ուրախ եղան,
և ամենայն անօրէն իսկոյն զբերանիւբ :
Ո՛վ էն խնամտուն, որ պահեսցէ զայս,
և՝ի միտ առցէ զողորմութիւնս
տեառն : Ձէ :

Հիմա Թող տեսնան չնտակ սրտով
եղօղները, և ուրախ ըլլան . իսկ անօ-
րէնները բերընեն գոցեն . ա՛վ որ ի-
մաստուն խելացի է, Աստուծոյ ողոր-

մուԹիւնը Թող իմանայ:

Ա՛յլ դու տէր ալա ընդ իս ըստ ա-նուան քումմ, զի քաղցր է ողորմու-Թիւն քո, և փրկեա զիս, զի աղքատ և անանկ եմ ես: ՃԸ:

Հիմա դու տէր Աստուած, քումկին անունիդ կեօրէ ըրէ. վասն զի քաղցր է քումկին ողորմուԹիւնդ. իս փրկէ, վասն զի աղքատ ու անանկ եմ:

Ծանեայ զի առնես տէր գաւառա-տան աղքատի, և իրաւունս անանկի: ՃԼԹ:

Խոցայ որ՝ վերջապէս աղքատին գաւառտանը կրկարես, և անանկին ի-րաւունքը կընես:

Սուբ հանին մեղաւորք, և լարեցին զակէզունս իւրեանց, հարկանել զաղ-քան և զանանկն, սպանանել զայն որ խոնարհն է սրտիւ: Սուբը նոցա մտցեն ի սիրտս նոցա, և ակէզունք նոցա փշրեսցին: Լաւ է սակաւիկ ինչ արդարոյ քան զբազում մեծաւԹիւն մեղաւորաց, և բազուկք ամբարշտաց խորտակեսցին: Հաստատէ տէր զար-դարս: Մի ամաչէսցեն ընդ ա-ժա-

մանակս չարութեան, այլ յաւուրս
սովոյ յագեցոյն ։ ՀՀ ։

Վասն զի մեղաւորներըդ սուբ հա-
նեցին, իրենց եայը բացին որ՝ աղքատն
ուտանելիքդ զարնեն, ու ով որ խոնարհ
է սպաննեն, բայց քուկին արդար դա-
տաստանդ ընել կուտայ որ՝ ան մեղա-
ւորներուն սուրերը իրենց սիրտերը-
նին կմտնան, ու եայերնին կրկոտ-
րին, իսկ արդարներըդ կրհատատավին։
Երբոր մէկ չարիք մը մէկ փորձանք մը
կուգայ, արդարներըդ չեն ամչնար,
այլ խրճիթներին օրերը կրկրճատան ։

Վասնուկ էի ես և ծերացայ, և ոչ
տեսի զարդարն արհամարհեալ, և ոչ
զաւակ նորա թէ մուրանայ հաց։ Ջօր-
հանապազ ողորմի և տայ փոխ. զաւակ
նորա օրհնեալ եղիցի յաւիտեան։ ՀՀ։

Ես տղայ էի՝ հիմա ծերացայ, դեռ
չտեսայ որ արդար մարդը արհամարհ-
ված, իր զաւակը հաց մուրանայ, այլ
ինքը ամէն օր ողորմութիւն ու փոխ
կուտայ. անանկին զաւակը յաւի-
տեան օրհնեալ պիտոր ըլլայ ։

Մեծամեծք աղքատացան և քաղ-

յեան , բայց այք խնդրեն զսէր , մի պակասեսցէ ի նոցանէ ամենայն բարութիւն : ՀԵ :

Ցեսայոր հարուստներըդ աղքատացան անօթիութիւն քաշեցին , բայց ով որ Աստուծոյ կրդիմէ , ամէն բարիք առնոնցմէ չիպակսի պիտոյ :

Մի երկնչիր յորժամ մեծանայ մարդ , և յորժամ բազում լինին փառք տան նորա : Զի ոչ թէ ի մեռանել իւրում առցէ ընդ իւր զամենայն , և ոչ թէ իջցեն փառք տան նորա ընդ նմա : ԽԵ :

Աստ համար մի վախնար երբոր մարդս կըմեծնայ , երբոր իր տանը փառքը փարթամութիւնը կըշատնայ , վասն զի իր մեռնելու օրը չիկրնար իր հետը տանել իր ամէն բանը . իր փարթամութիւնները չեն կրնար երթեն հետ գերեզմանը իջնալ :

Երկեցէ ի սեառնէ ամենայն զսանձն խարայելն . զի ոչ արհամարհեաց , և ոչ անարգեաց սէր զաղօթս աղքատիս , և ոչ դարձոյց զերեսս իւր յինէն , այլ ի կարդալ իմում առնա՝ լուսաւ

ինձ: ի՞ն:

Դուք Իսրայէլի ամէնէն զօրաւորները, (եկեղեցւոյ որդիքնե՛ր,) վախցիք Աստուծմէ, տեսնելով որ աղքատիս աղօթքը չկրամահրեց, իր երեսը ինձմէն չդարձուց, այլ երբոր իրեն դիմեցի կանչեցի, լսեց:

Չի փրկեաց զաղքատն՝ ի հզօրէ, զաղքատն և զանանկն՝ որոյ ոչ է իւր օգնական: Անխայտեցաւ նա յաղքատն և՛ ի անանկն, և զանձինս անանկացն կեցոյցէ: հա՛ն:

Աղքատը զօրաւորին ձեռքէն փրկեց Աստուած, անանկ աղքատը ու անանկը՝ որուն մէկ օգնական մը չկար, անոնց վրայ խղճայ պիտոր ու ապրեցընէ:

Յարուցանէ զաղքատս յերկրէ, և բարձր առնէ զտառապեալս յաղբէ։ ՃԺԳ:

Գետինը ընկած ըլլայ աղքատը, Աստուած կրյարուցանէ. տմարուի փըչիսրի մէջ նստած ըլլայ, վեր կը վերցընէ:

Ցեսցեն աղքատք և ուրախ եղիցին,

խնդրեցէք զԱստուած , և կեցցէն անձինք ձեր : Զի լուաւ տէր տնան-կաց , և զկապեալս իւր ոչ արհամար-հեաց : կը :

Ա բանէրս Թոզ տեսնան աղքատ-նէրը և ուրախ ըլլան , դուքաշ անան-կէնէ աղաչեցէք Աստուծոյ որ ապ-րիք . վասն զի Աստուած լսեց տնանկ-նէրուն աղօթքը , և իրէն կապված է-ղողնէրը չնքամահրեց :

Ընկեա՛ի տէր զհոգս քո . և նա կէ-րակրէ զքեզ , և ոչ տայ յաւիտեան սասանութիւն արդարոյ : ծ :

Աստուծոյ վրայ ձգէ քովդին հոգդ , անիկայ քեզ կրկերակրէ , ու յաւի-տեան Թոզ չտար որ արդարը սա-սանի :

Այս աղքատ կարդաց առ տէր . և տէր լուաւ սմա , յամենայն նեղու-Թենէ սորա փրկեաց զսա : լէ :

Աղքատ մը Աստուծոյ դիմաց ա-ղաղակեց , Աստուածալ իրէն լսեց , իր ամէն նեղութենէ փրկեց :

Պատրաստ արարեր քաղցրու-Թեամբ քով աղքատի Աստուած : կէ :

Տէր Աստուած քուկին քաղցրու-
թեամբդ ու անուշութեամբդ կերա-
կուր պատրաստեցիր աղքատի :

Երկիր եղ զպտուղ իւր, և օրհնեաց
զմեզ Աստուած Աստուած մեր :
Աստուած մեր օրհնեացէ զմեզ, և 'ի
նմանէ երկիւղեն ամենայն ծագք երկ-
րի : կղ :

Անանկով երկիրը իր պտուղը տը-
ւավ և մեր Աստուածը մեզ օրհնեց :
Մեր Աստուածը թող մեզ օրհնէ, և
մինքալ՝ ամէնն աշխարհալ վախնանք
Աստուծմէ :

Աղօթ 'ի սաղմոս յորժամ հոգին է 'ի
յուսահատութեան : Սաղմ. ճ :

Տէր զի բազում եղեն նեղիչք իմ,
և բազումք յարեան 'ի վերայ իմ :

Տէր Աստուած շատ դիացին նե-
ղուիլն ունիմ . շատ սատանաներ
վորձուելիւներ իմ վրաս ելան վա-
զելով . հիմնալ եղեր են իս կըսուսա-
հատցնեն ըսելով :

Բազումք ասէին վանձնէ իմմէ՝ թէ

չէք փրկութիւն սորա առ Աստուած իւր :

Ըստ բանէդ միտքս կուգայ որ՝ իս կըսուսահատցընեն , մէյմը կըսիշեմ իմ մեղքերուս ծանրութիւնը , մէյ մ՚ինալ կըսիշեմ որ մէկ բարիք մը ըրած չունիմ , մէկալ դիացէնալ կըսիշեմ քու արդարութիւնդ , մանր մունաղուօղ դատաստանդ . ասոնք բանէդս երբոր կըսիշեմ , կըսուսահատիմ . սատանանէդ նալ ինծի կըսեն որ՝ քեզի փրկութիւն չկայ , պարապ կաշխատիս , չես կըրնար փրկըվիլ :

Ձի լսաւ չարչարանօք անձն իմ և կեանք իմ ՚ի դժոխս մերձեցան , և համարեցայ ես ընդ այնոսիկ՝ որք իջանեն ՚ի գուբ :

Ա՛ս մտմտուքներով իմ բոլոր կեանքըս լեցուեցաւ չարչարանքներով , երբ Թէ դժոխքին գերեվանին մտիկ ցայ , և անանկ եմ եղեր որ՝ երբ Թէ գերեվանին գուբին մէջ նստած մեռեալ մը դարձեր եմ , քանի որ կըմտածեմ Թէ դժոխքին արժանի եմ , և ոչ քու սեսոյդ , մէկ հանգստու-

թիւն մը չունիմ։

Եդեն զիս ի դժնեքնութիւն ի խաւարի և ի ստուերս մահու։

Ա մտմտուքներդ օրէօր իս տապնապելով, իբր թէ մէկ մուխ խոտունկ փոսի մը մէջ իս խօթեր են, մեռածի մը պէս եղեր եմ։

Մտանեցայ, և ոչ ելանէի, աչք իմ ակարացան յաղքատութենէ։

Ա մտմտուքներուս մատնըվեր եմ, չեմ կրնար ելլել խալըսիլ, մուխ խաւարը յուսահատութեան աչքս փաթթեր է, իմ հաւատքիս ուշաւսուս աչքնալ տկարացեր աղքատցեր են, զըկըված ըլլալով քու լուսոյդ ընորհաց, ու կրսեն։

Մինթէ մեռելոց առնիցես զքաջելիս քո, կամ բժիշկք յարուցանիցեն,և խոստովան առնիցեն առ քեզ։

Ա իմ մեռած հոգիս արդեօք Աստուած հրաշք պիտոր ընէ, կամ բժիշկները արդեօք պիտոր ողջընցընեն, որ Աստուծոյ ծառայէ, զԱստուած պաշտէ։

Մինթէ ճանաչիցին ի խաւարի զքան

չէ՛ք քո, կամ արդարութիւն քո յերկիր մոռացեալ։

Ա՛րդեօք սասանիլ մէ՛ր խաւար հոգեվի մէջ քու հրաշքդ ճանչցուվն պիտոր, կամ քու՛կին արդարութիւնդ մոռցուած հոգիս մէջ տեսնուվ՛ պիտոր։ Սասանի՛կ կրսեն ինծի իմ խորհուրդներս. եսալ չիդիմանալով կաղաղակեմ։

Ընդի՛ր տէր մերժես զանձն իմ կամ դարձուցանես զերեսս քո յինէն։

Ինչո՛ւ համար սասանի՛կ ձգեր ես տէր իմ, ինչո՛ւ սասանի՛կ երեսդ դարձուցեր ես ինծմէն, ու չես լսեր։

Ես առ քե՛զ տէր աղաղակեցի, առաւօտու աղօթիք իմ ժամանեսցեն առ քե՛զ։

Ա՛խ, տէր իմ, ես քեզի կաղաղակեմ, սա առաւտան աղօթքս քու կանճդ հասնի։

Աբի տէր, և փրկեա զիս Սատանայէ իմ։

Եւ՛ր տէր իմ, եւ՛ր, ու փրկէ իս Սատանայ իմ սա նեղութիւններէ։

Ա՛յլ դու տէր օգնական իմ ես, փառք իմ, և բարձրացուցիչ գլխոյ իմոյ :

Դուն ես ինձի օգնողը, ուրիշ մարդ չունիմ, դուն ես իմ փառքս, կրնաս իմ ընկած շլմաթած գլուխս վեր վերցընել, քաջալերել :

Տեառնդ է փրկութիւն ՚ի վերայ ժողովրդեան քո, օրհնութիւն քո :

Քուկին դործդ է տէր իմ փրկել քու ժողովուրդդ . եսալ քու ժողովրդեդ մէկն եմ. իսալ փրկէ, որ իմ հոգիսալ քեզ օրհնէ լսելով :

Օրհնեա անձն իմ զտէր, և մի մոռանար զամենայն տուրս նորա :

Օրհնէ զվ հոգի ան Աստուածը, մի մոռնար անոր բարիքները, որպէս առաջուցմէ ՚ի վեր քեզի ըրաւ :

Ո քաւէ զմեղս քո, բժշկէ զամենայն հիւանդութիւնս քո : Ո փրկէ յապականութենէ զկեանս քո, պսակէ քեզ ողորմութեամբ և գթութեամբ : Ո ընու ՚ի բարութենէ զգանկութիւն քո, նորոգեսցի որպէս արծուոյ մանկութիւն քո :

Օրհնեան Աստուածը՝ որ քու մեղքերուդ քաւութիւն թողութիւն կուտայ. ինչ հիւանդութիւն որ ունիս սրտիդ մեջբիդ մէջը՝ ամէնն ալ կըբնացընէ, քուկին կեանքդ կրխայլըսցընէ ավրըվելէն ապականվելէն, կողորմի քեզ ու կրպահէ. քուկին ցանկութիւնդ որ ունիս Աստուծոյ բարեացը ընորհացը վրայ, ամէնն բարեաք կրկատարէ կըլեցընէ. մկրտութեան ընորհքն որ կորսընցուցիր, նորանց քեզ կրդարձընէ ինչպէս որ ունէիր մանկութեան առենդ. անանկով արծիւի պէս կրնորոգվի քուկին մանկութիւնդ: Ան առենը դունալ կրգառնաս կրսես:

Ոչ ըսա մեղայ մերոց արար մեզ տէր, և ոչ ըսա անօրէնութեան մերոյ համոյց մեզ: Այլ որպէս բարձր են երկինք յերկրէ՝ այնպէս զօրացոյց տէր զողորմութիւն իւր ի վերայ երկիւղածաց իւրոց:

Աստուած մեր մեղքին կեօրէ չըբաս, մեր անօրէնութեանը կեօրէ չի հատուց, հապա որչափ որ բարձր է

երկինք գետնէ, անչափ շատացուց իր ողորմութիւնը անոնց վրայ՝ որ իրմէ կըվախնան։

Աղօթ յորժամ հոգին կայ ի հոյժ-
ռնեան։

Հովիւ քաջ, հովիւ յաւիտենական, որ իս մոլորեալ ոչխարդ գտնալու համար լեռնէ լեռ պըտըտեցար երկան ձամփորդութիւն ընելով, երբ կինքէն երկիցս իմար մարդ ըլլալով, մէկ ողորմակ ձան մը ձգելով կանչեցիր, որ ես լսելով ան ձայնիդ եւևէն գամ։ Եկայք ըսիր առ իս ամենայն աշխատեալք եւբեռնաւորք, և ես հանգուցից զձեզ։ Իսկ ես որ անտառնէրու մէջ մոլորեալ ոչխարի մը պէս պըտըտելով մտիկ էի գայլին բերանը ընելու, լսեցի աս ողորմութեան ձայնդ, ճանչցայ տիրոջս ձայնը, քեզի եկայ մկրտութեան և խոստովանութեան խորհուրդնէրով։ Բայց հիմա աշխարհ, մարմին, և սատանայ, աս իւրեքը մէկ եղած նորէն կուզեն իս քե-

նէ բաժնել, եւսալ անոնց հետեւելով նորէն կուգեմ ես իմ գայլին բերանը ձգել:

Դուն հիմա ով հովիւ քաջ, ցրցուր քու զօրութիւնդ, հանէ քու անուշ ձայնդ շնորհաց, կանչէ իմ շնորհքով որ չմոլորիմ, չեմ արժանի քու շնորհադ, բայց դուն արեան քո եմ, քու կին սուրբ արիւնդ և անչափ աշխատանքդ պարապ չերթայ, չկորսուին: Ո՛վ տէր գթութեանց, հասիր ինծի օգնութիւն, մի ձգեր իս երեսէդ. ո՞ւր է քու անուշ ձայնդ՝ որ լսէր. Եթէ ոք ծարաւի լինէ, եկեսցէ առ իս և արբցէ: Ո՞ւր է քու աւաջնորդութիւնդ որ լսէր. Ե՛ս եմ ճանապարհ, և ճշմարտութիւն, և կեանք: Ո՞ւր է քու յորդորանքդ որ լսէր. Ոչխարք իմ ձայնի իմում լսեն, և ես ճանաչեմ զնոսա, և զկնի իմ գան, և ես տամ նոցա զկեանն յաւիտենական, և մի կորիցեն յաւիտեան. և մի ոք յափշտակեսցէ զնոսա ՚ի ձեռաց իմոց: Ախ, ուր են աս ձայնեդդ, աստնք զուրցէ որ գայլերը վախչեն,

սիրտս չարժի, աչքս բացվի, իմ ծա-
րաւս բժշկվի, գէշ պլտոր ջուրերը
չխմեմ, այլ քէնէ կենդանի աղբե-
րէդ խմեմ, որ ասիէց հաքը ոչ երբէք
ծարաւիմ, մէկի մը ձայն մոխկ չդնեմ,
այլ միայն քէզի տէր իմ Յիսուս:

Սաղմոս:

Դուն լուսաւոր առնես զձրագ իմ.
տէր Աստուած իմ, լայս արա ինձ ի
խաւարի:

Քև փրկեցայց ի փորձութենէ.
Աստուծով իմով անցից ընդ պա-
րիսպս:

Ո՞ան ղի ո՛վ է Աստուած բաց ի
տեառնէ, կամ ո՛վ է Աստուած բաց
յԱստուծոյ մերմէ:

Ուսուցեր զձեռս իմ ի պատե-
րազմ, և արարեր զբազուկ իմ որպէս
զաղեղն հաստ. և եառեր ինձ զպաշտ-
պանութիւն: Ժէ:

Բազում անգամ մարտեան ընդ
իս ի մանկութենէ իմմէ. և ինձ ոչ
յաղթեցին: Ձիը:

Ի՛նչ-եր զմեզ յորդայթ, եդիր նեղութիւն ի թիկունս մեր. և անցուցեր զմարդիկ ի վերայ գլխոց մերոց:

Փորձեցեր զմեզ Աստուած և քննեցեր, որպէս և քննի արծաթ:

Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր և հաներ զմեզ ի հանգիստ: ԿԵ:

Աղօթ+ յորժամ հոգին կայ ի վտանգի մեղաց:

Դուն լսելը տէր իմ. խնդրեցէք և առնուցուք: Զոր ինչ խնդրեցէք ի հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ: Առնք քու խօսք սովածնէրդ են, քու խօսքերդ քեզի յիշեցընել կուտանք, դուն որ չես մոռնար, և խօսքեդ չես դառնար. ինչ սրտով զուրցեցիր անառեղը յիշէ, ան սրտով իմ աղօթքս ընդունէ. ինծի հիմա օգնութիւն հասիր, ես որ բոլորովին անարժան եմ, ուրիշ բանով չեմ կրնար աղաչել քեզ սակայն, բայց եթէ քու կին խօսքերով՝ և քու կին սուրբ արիւնով:

Առնք յիշելովդ տէր Յիսուս, մի թո-
ղուր որ ես կորսըվիմ . վասն զի Թէ
որ ես կորսըվիմ, քու արիւնով փըր-
կեալ հոգիդ պիտոր կորսըվի :

Ախ , տէր իմ , քու դառնակսկիծ
չարչարանքներդ սիրտս կըշարժէ, ար-
դար դատաստանիդ ձայնը իս կըդո-
ղացընէ , յաւիտենական պատիժը իս
կրսարսափեցընէ . բայց այսչափ ահն
ու դողը հերիք չէն կրնար ըլլալ իս
մեղքերէս դուրս հանելու , վրաս իշ-
խեր են չէմ կրնար խալըսիլ միշտ մեղ-
քի մէջ կեցնամ , մինակ քուկին հրաշ-
քըդ պիտոր ըլլայ որ իս խալըսցընէ ,
իմ մեռած հոգիս վեր վերցընէ , ինչ-
պէս որ վերուցիր դիւահար տղան :

Ամէնքնալ յուսահատեր էին , ա-
ռաքեալներնալ բան մը չկրցան ընել,
տղին հայրնալ անչափ հաւատք չու-
ներ , բայց մինակ առջիդ գալովը՝ քէ-
նէ խընդրելովը պարապ չհանեցիր ,
չըթշկըվելու հիւանդութիւնը բժշկը-
կեցիր : Հիմա ընծիալ հրամէ , իս առ-
ջիդ կանչէ ըսելով Աֆէ+ ՝ն՝ ա՝ ի՝ :
Մարկ. Թ . 18 : Ան ատենը կըտես

նաս իմ հոգիս որ՝ ան դիւահարին պէս գետինը կընկի, մեղքերու մէջ միշտ կը թաւալըլըվի, մեղքերով կրկրփրայ, քանի՛ հէդ որ՝ քու աշկերտներուդ քահանաներուն գնաց խոստովանելու, զինքը ցըցուց, աս մեղքերուս սատանան չկրցան իրմէն հանելու: Թէ որ իմ վարքս հարցընես, կրնաս որ ի՛մանկութենէ պզտիկուցատնէ եմ եղեր. իմ մեղքիս սատանան պզտիկուցմէ ներսի դիէս կատեր է իմ չար սովորութեամբ: Բաղդամ անգամ՝ է հոր արիանէ պէտ ա՛ ի քու, պէ՛ կորսուչէ: Երբեմն մէկ մեղք մը, երբեմն մէկալ մեղքը կբռնգէ. մէկ մէկու ներհական մեղքերը ընեղ կուտայ. ատնէկ հոգիս իրեն խաղալիկ է ըրեր կըչարչարէ, բայց իր միտքը իս կորսընցընել է յաւիտենական հուրը:

Թէ որ ինծմէն հաւատք կուզես ըսելով, Աստուած ինչ հնարաւոր է այնմ որ հաւատայ, ես հաւատք չունիմ. վասն զի սատանային պատերազմը, մծծիկ է սատանային պատերազմը, մծծիկ է վասնզը մարմնիս, իս միշտ մեղքի կըքաշէ, անոր համար

երկքայուԹեան մէջ եմ, տարակու-
սելով կըսեմ. Երե՞ կարօղ էնէ էս, օգ-
նէ՛ մեզ փեր, գերեզմանէն վերայ մեր։
Դուռ Ճարտար բժիշկ հոգւոյ և մար-
մնոյ, ուր որ ինծի լայս հաւատոյ, ինչ-
պէս որ մեկ խօսելովդ ան դիւահարին
հօրը հաւատքը լուսաւորեցիր, որ ա-
ղաղակէ՝ Հաւատամ, օգնէ՛ անհաւա-
տութեան իմոմ։

Ան առիՒնը ես հաւատքովս առջիդ
կուգամ, դուՒնալ զօրուԹեամբդ կը-
սատակես սատանային. Հայդը ե՛ւ խո՛ւ
Այո, ես գամ փեդ հրաման, ել՛ի դմանէ
ե՛ւ այլևս մի՛ դառնայիր՛ի դա։ Ամդեզք
պիտոր ըլլայ որ՝ իմ հոգիաս ես խօս-
քըս լսէ, քուկին հրամանատդ քովէս
հեռընայ փորձուԹիւնը, մէյմիալ չի-
դառնայ վիգայ, իս մեղքի վտանգի
մէջ չիձգէ։ Մի՛ Թողուր իս տեր իմ
Յիսուս, մի՛ Թողուր ասանկ. այլ քու-
կին ձեռքդ երկընցուր, ոտքի վրայ
կանգնել տուր, ինչպէս որ կանգնե-
ցիր ան դիւահարը. անով ամէնն տես-
նողները զարմանան որ՝ աս հոգին որ
մեռած մը կերևար, քուկին զօրու-

Թեամբդ կենդանացաւ, իր մեղքերը
Թողուց, ընդհայց մէջ մնաւ:

Աղօթ՝ ի սաղմոսէ, ՚ի խնդրել օգնու-
թիւն Աստուծոյ:

Համարձակ զաչս իմ ՚ի լերինս,
ուստի եկեսցէ ինձ օգնութիւն:

Երբոր ես նեղն ընկայ, պէտք է
զաւ ինձի մէկ օգնութիւն մը գտնալ,
իմ աչքերս լեռներու վրայ
վերուցի, անանկ իշխաններու՝ անանկ
մենծերու՝ որ մէյ մէկ լեռ կըլմանէին,
որոնցմէ կրնար ինձի մէկ օգնութիւն
մը հասնիլ:

Օգնութիւն ինձ՚ի տեսանէ եկես
ցէ, որ արար զերկինս և զերկիր:

Բայց իմացայ տեսայ որ՝ ան լեռ-
ներու պէս կեցած մարդիկները իշ-
խաններդը չէին կրնար ինձի մէկ օգ-
նութիւն մը ընել, հապա իմ օգնու-
թիւնս Աստուծմէ միայն պիտոր ըլ-
լայ, որ չէթէ մինակ ան լեռները ան
իշխաններդը, հապա բոլոր երկինք ու
երկիր սաեղծեց, այնչափ է իր կարո-

զուարթանալ:

Մի տար՛ի սատանուարթիւն զոհանալ քո, և մի՛ ննջեսցէ պահապան քո:

Միայն թէ դուն մի՛ սատանիր, մի՛ բարկանար հաւատքովդ, որպէս ամուր պինդ է որ բռնես, որ է քու հաւատքդ. թէ որ դուն սատանի հաւատքէդ ելլես սատանին չերեսաց, Աստուծոյ դէմ չիմեռանչես, իրաւ գիտցիր որ՝ Աստուածալ որ քու վրէդ պահապանդ է, չի քնանար, արթուն կը մնայ քեզ պահելու:

Որպէս ոչ ննջէ և ոչ՛ ի քունէ որթայ պահապանն Իսրայէլի:

Ինչպէս յայտնի կը տեսնուի որ՝ Իսրայէլացւոց ազգին պահապանը որ է Աստուած, ոչ երբէք քուն եղավ. իր գործքերը յայտնի կը քարոզեն որ՝ միշտ կը պահէր Աստուած հրեայներուն հոգևոր ու մարմնաւոր ինամներէն, թշնամիներէն:

Տէր պահեսցէ զքեզ, և տէր ընկալցի աջոյ ձեռամբն իւրով:

Աստիկալ քեզ Աստուած կը պահէ, ու իր աջ ձեռքովը կը բռնէ:

Աբեգաին ի տուէ քեզ մի մեղսցէ, և մի լուսին ի գիշերի ։

Ինչպէս իսրայէլացւոց ըսաւ որ՝ ցորեկը արեը չմեղադրուհամար՝ արեւուն առջեւն ամպ կըհանէը , ասանկ ալ անանկ բան մը կրնէ քեզի Աստուած որ՝ ո՛չ ցորեկվան Թշնամիները քեզ կրմեղադրեն , և ոչ գիշերվան , Թէ մարմնաւոր և Թէ հոգեւոր Թշնամիները , որ գիշեր ցորեկ կրպղտոտին քեզ մեղք խօԹեցուց ։

Տէր պահեսցէ զքեզ յամենայն չարէ, պահեսցէ տէր զանձն քո ։

Աստուած քեզ ամենայն չարիքներէ ձերբազատներէ պահպահօղ , քու հոգիդ պահպանէ ։

Տէր պահեսցէ զմուտ և զել քո յայսմ հետէ մինչև յաւիտեան ։ Ամէն ։

Աջակից ըսեմ որ՝ որովհետև Աստուծոյ ընկար, հաւատքով անոր գիմեցիր , մեղքէ զգուշացար , ասկէց ետքը Աստուածդալ քեզ ամէն բանի մէջ , եղբայրդ մանաւանդ առեւնալ՝ պահէ պահպանէ պիտոյ ինչվան յաւիտեան ։

Օգնութիւն է մեզ յանուանէ տեա-
ուն որ արար զերկինս և զերկիր: Ամէն:

Մեր օգնութիւնը Աստուծոյ ա-
նունովն է, որ Աստուծոյ՝ որ երկինք
գետին ստեղծեց:

Ես քեզ տէր համբարձի զաչս իմ,
որ բնակեալդ ես յերկինս: Որպէս
աչք ծառայի ՚ի ձեռն տեառն իւրոյ,
որպէս աչք աղախնոյ ՚ի ձեռն տիկ-
նոջ իւրոյ: Այնպէս են աչք մեր առ
քեզ տէր Աստուած մեր, մինչև ողոր-
մեսցիս ՚ի վերայ մեր: Ամէն:

Քեզի կըսկըսցնեմ աչկներս տէր
Աստուած, որ երկինքը կընստիս:
Ինչպէս որ ծառային աչքը իր տիրոջը
վրայ է, և աղախինին աչքը իր տի-
ՐՈՒՀին վրայ, անանկալ մեր աչքը քու
վրադ է տէր Աստուած, մինչև որ
մեզի ողորմիս:

Թէ երանեմ յերկինս՝ դու անդ
ես, և Թէ իջանեմ՚ի դժոխս՝ և անդը
մըտ ես: Թէ առիւ զթեւս իմ ընդ ա-
ռաւօտս, և բնակեցայց յեզերս ծո-
վու: Սակայն և անդ ձեռն քո առաջ
նորդեսցէ ինձ. և աջ քո ընկալցի զիս:

Ինչ մեծ ես տէր Աստուած, Թէ որ երկինքը ելլամ, դու հոն ես. Թէ որ դժոխքը դերեզմանը ինկնամ, հոնալ քեզ մօտիկ կրգտնամ. Թէ որ ինծի Թևէր առնեմ առաւօտուանց, ծովուն քէնարը նստիմ, հոնալ քու կիսի ձեռքդ ինծի առաջնորդ կըլլայ, և քու կիսի աջ ձեռքդ իս կըբռնէ:

Աղօթ յորժամ հոգին է՝ ի պրպտութիան:

Աչեր ընդէր պրպտամ ես անդն իմ, յամ ընդէր խոովես զիս: Ինչու համար կըտրտմիս ողորմելի հոգիս, մեղքերդ ծանր են, զլխուամ ալեկ ջուներս, քու կիսի խոստովանիլդ քեզ չիհանգարտեցընէր, չկրտես ալ որ ինչպէս խոստովանիս, որ մեկը զուրցես, զուրցելէն ետեւ չես հանգչիր: Յոսա սա Աստուած, խոստովանէ նմա: Մէյմը միտքդ վեր վերցու առ Աստուած. յոյսդ զօրացնելդ ործութիւն յուսոյ ըրէ: Աստուած մեր ողորմութեան Աստուած է. ան Աստուածն է որ ըսաւ, Թէ որ մեկ օրվան մէջ եօթանասուն

հել եօթը մարդա մեղանչէ, բայց նո-
ըէն սրտանց դառնայ, ան մարդը թո-
ղուԹիւն մեղաց կըգտանայ : Ան Աս-
տուածն է, որ Եսայեայ մարգարէին
բերնովը կըզուրցէ. Ինչպէս որ մայր
մը իր զաւակը կըսիրէ, ինչ պախաւ-
Թիւն ունի՝ կըգոցէ կըսրբէ, չուզեր
որ ուրիշները վրան զուրցեն, նախա-
տէն, եսալ մեռնին աւելի եմ կըսէ
Աստուած : Ան տէրն է, որ մեղաւոր
հոգիը սրբոտանց խոստովանելով իր
մեղքերը՝ երբոր եկաւ ոտքը ընկաւ,
լալով արցունքով լըվաց, անուշ է-
զովը որ իր աղօթքին օրհնակն էր՝ օ-
ծեց զՅիսուս, Յիսուսին սիրտը վրան
խորվեցաւ, ոչ մեղքը իր երեսին տալ
և ոչ ըսաւ որ՝ դուն ինծի ինչ արժա-
նի ես մոռիկնալու. սէր տեսաւ իրմէ,
ինքնալ սէր ցըցուց ըսելով. Թողեաւ
լիցին ամա մեղք իւր բազում : Շատ մեղ-
քեր ունի, բայց ամէնինալ Թողվի
ըսաւ : Դուռնալ անանկէնէ յուսաւ Աս-
տուծոյ, խոստովանի, պաշտէ, սէր
ցըցուց. ան առեւնը կըլսես մեղքերուդ
ԹողուԹիւն, հոգւոյդ փրկուԹիւն.

վան զի փրկիչ մեր նոյն Յիսուս է, փրկիչ երեսաց մերոց Աստուած է:

Սաղմոս:

Եթէ ասէի թէ ահա սասանեցան ոտք իմ, ողորմութիւն քո տէր օգնէր ինձ:

Ըստ բազում ցաւոց սրտի իմոյ՝ մխիթարութիւն քո ուրախ առնէր զանձն իմ: զէ:

Եկայք ցնծասցուք ի տէր, աղաղակեսցուք առ Աստուած փրկիչ մեր:

Աստուած մեծ է տէր, թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի: զէ:

Քաղցր է տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա, ազգէ ազգ է ճշմարտութիւն նորա: զէ:

Ո յուսայ ի տէր, որպէս լեառն սիովն, մի սասանեսցի յաւիտեան, որ բնակեալն է յԵրուսաղէմ: ձիէ:

Ի տէր յուսացայ, որպէս ասիցէք ցանձն իմ, փախիսցայ ի լերինս որպէս ձնձղուկ: ճ:

Ի՛չ և խափագ առ արփայութիւն երկնից ի սաղմոսէ :

Աստուած Աստուած իմ, ես առ քեզ առաւօտ առնեմ, ծարաւեաց առ քեզ հոգի իմ, քանիպատիկ ես և մարմին իմ : կբ :

Աստուած Աստուած իմ, ես առաւօտվանց քեզի կրդիմեմ. վասն զի իմ հոգիս քեզի ծարաւեր է, որչափ որ մարմինսալ :

Վա՛յ ինձ զի ընդ երկար եղև պանդխտութիւն իմ, զի բնակեցայ ես ի վրանս Կեդարու : ՃԺԵ :

Բայց ես ինձի վա՛յ կուտամ, որ շատ ուշացաւիմ զուրպէթութիւնս, շատ առեն է որ՝ ինձի օտար երկիր չատրրի տակ աս աշխըրհիս մէջ :

Առ գետս բաբելացւոց անդ նստեաք և լայաք, որպէս յիշեցաք մեք անդ զՍիոնն : ՃԼԷ :

Ա՛ս բաբելոնի գետին քով նստեցինք, որ է բաբելոն խառնակութեան աս աշխարհս, ու կուլանք, յիշելով

մենք սիոնը՝ որ է երկնային խաղա-
ղութիւնը :

Ուրախ եղէ ես ոչք ասելին ցիս , ի
տուն տեառն երթիցուք մեք: Հասեալ
կային ոտք մեր առ դրունս քո Երու-
սաղէմ : Հարցէք զողջունէ զերուսա-
ղէմի և զխնութենէ՝ ոչք սիրեք զնա:
Ձիա :

Անոնք որ ինծի կըսէին Թէ Աստու-
ծոյ տունը երթանք , խիստ կուրա-
խանայի : Ահա , երկնային Երուսա-
ղէմ, մեր ոտքը քեզի է հասեր, դուք
ամէնքնիդ որ կըսիրէք երկնային Ե-
րուսաղէմի ողջոյնը , հարցուցէք ,
փնտռեցէք անոր շէնքը, անոր երջան-
կութիւնը :

Ո՜րպէս սիրելի են յարկք քո տէր
զօրութեանց , ցանկայ և փափագէ
անձն իմ ի գաւիթս քո : Ձե :

Ինչպէս սիրելի է ինծի քովինն
տունդ տէր Աստուած, իմ անձս հո-
գիս խիստ կը փափագի որ գոնէ բա-
կին մէջը բնակիմ :

Երանի ամենեցուն՝ որ բնակեալ
են ի տան տեառն, յաւիտեանս յա-

վտեհից օրհնեսցեն զքեզ : ՃՁ :

Երկիւղ անուանց ամենեցուն , որ Աստուածոյ տանը մէջ բնակուած են , յաւիտեան յաւիտենից թող քեզ օրհնեն :

Երանելի է այր՝ որոյ օգնութիւն իւր ի քէն է , եւ եդ ի մոմն իւրում ի հովեհէս տրամութեան ի տեղւոջ յորում ուխտեաց : ՃՁ :

Երջանիկ է ան մարդը՝ որուն օգնութիւնը քէնէ է Աստուած . առ տրամութեան տերէն կուզէ ելլալ երթալ ան տեղն որ ցանկացաւ , ուխտ ըրաւ երթալու :

Ջօրհնութիւն առասցի որ զօրէնս դնէ , գնասցէ նա ի զօրութենէ ի զօրութիւն , և երեւեսցի Աստուած հրեշտակաց ի Սիոնի : ՃՁ :

Ո՛վ որ անանկ օրէնք և ուխտ կը դնէ իր սրտին մէջը, օրհնենք կը վաստակի Աստուծմէ , օրէ օր կը զօրանայ շնորհքներով ու Աստուած անոր երեւնայ պիտոր իրեն հրեշտակներով երկնային Սիոնին մէջ՝ որ է արքայութիւնը :

Տէր Աստուած զօրութեանց՝ լուր աղօթիկ իմոյ: Ո՛վ ան զի լաւ է ինձ մի օր ի գաւիթս քո քան զհազար: Ամէն:

Տէր Աստուած ամէնէն բանի կարօղ իմ աղօթքիսալ լսէ, իսալ ան տեղին արժանի ըրէ. վասն զի աղէկ է ինձի մէկ օր մը քու բակիդ մէջը նստիլ, քան թէ հազար օր աս աշխարհս:

Զմի ինդրեցի ի տեառնէ և զսոյն աղաչեմ, բնակել ինձ ի տան տեառն զամենայն աւուրս կենաց իմոց: Տեսանել ինձ զվայելչութիւն տեառն, և հրաման տալ ի տաճարի նորա: Ամէն:

Մէկ բան մը կը խնդրեմ Աստուծմէ, ու անի կաղաչեմ, որ քանի որ ապրիմ, ամէն օր Աստուծոյ տանը մէջ բնակիմ, Աստուծոյ գեղեցկութիւնը տեսնամ, և իր տաճարին մէջը հրամիեմ:

Տէր սիրեցի զվայելչութիւն տանդ, և զտեղի յարկի փառաց քոց: Ամէն:

Տէր Աստուած քովինն տանդ գեղեցկութիւնը սիրեցի, և քովինն փառքիդ տեղը՝ որ է ազգայութիւնը:

Զինչ կայ իմ բնաւ յերկինս, կամ
ի քէն զինչ եւս խնդրեցից յերկրի։ հբ։

Ի՛նչ ունիմ ես երկինքը, բայց միայն քեզ Աստուած. երկրիս վրայալ ինչ կրնամ քենէ խընդրել բայց եթէ քեզ Աստուած։

Նուաղեաց սիրտ իմ և մարմին իմ, Աստուած սրտի իմոյ, բաժին իմ Աստուած յաւիտեան։ հբ։

Իմ սիրտս մարմինս կըհալի կըմարի ով Աստուած. դո՛ւ ես իմ սրտիս Աստուածը, դո՛ւ ես իմ բաժինս Աստուած յաւիտեան։

Ես արդարութեամբ երեւեցայց երեսաց քոց, յագեցայց յերեւելիանաց քոց։ ժէ։

Երբոր ես արդարութեան երեսիդ երկնամ, քու երեսդ տեսնամ, անասելի ես կըրնամ կշտանալ քու կենդանի փառքդ տեսնալով։

Որպէս փափաքէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափաքէ անձն իմ առ քեզ Աստուած։ խա։

Ինչպէս որ կէյիկը կըփափաքի աղբիւրի ջուրերուն, անանկ ալ իմ հոգիս

քեզի կրխափաքի տէր Աստուած :

Ծարաւի է անձն իմ առ քեզ Աստուած , հզօր և կենդանի , երբ եկից երևեցայց երեսացդ Աստուծոյ : խա՜ :

Իմ հոգիս քեզի կրծարաւի Աստուած, դուն ես Աստուած կարօղ ու կենդանի , երբ պիտոր գամ , քու երեսիդ երևնամ :

Եղեն ինձ արտասուք իմ կերակուր ի տուէ և ի գիշերի, և այն զի ասէին ցիս զօրհանապազ , Թէ ուր է Աստուած քո : խա՜ :

Ա՛ս բանիս համար իմ արցունքներն ծի կերակուրի տեղ եղեր էին գիշեր ցորեկ . մանաւանդ երբոր ամէն օր ինծի կրսէին Թէ ո՞ւր է քուկին Աստուածդ, դուն անիկայ կորնցուցիր մեղքերովդ :

Զայս որպէս յիշեի , տառապեր յիս անձն իմ, քաջալերեի զի մոլց ընդ յարկաւ սքանչելեաց տանն Աստուծոյ : խա՜ :

Երբոր ասիկայ կրյիշեի , բոլոր անձս կրտառապեր տակնուվրայ կրլլար , բայց ես ինծի սիրտ կուտայի , որ մէյ

մը սա հրաշալի Աստուածոյտունը մըտ-
նամ։

Անձն իմ որպէս երկիր ծարաւի է
առ քեզ. վաղվաղակի լուր ինձ տէր,
զի նուաղեաց յինէն հոգի իմ։ Ձկիր։

Իմ անձս մէկ ցամաք գետնի մը
պէս ծարաւած է քեզի Աստուած.
շուտով լսէ կաղաչեմ, վասն զի իմ
հոգիս կըմարի, կըհալի կըմաշի։

ՅՈՒՅԱԿ

ԱՂՕԹԱԳՐՈՑ

Յարհաւորութեան աղօթից . 1
Աղօթք ի յառաւելն յանիւղոյ . 7
Աղօթք առաւօտեան . 8
Երեկոյեան աղօթք . 16
Աղօթք վասն իրափանչիւր աւուր
ըօնենիի . 23
Պարտաւորութեան խոստովանու-
թեան . 57
Աղօթք պղծման և առաջադրու-
թեան . 64
Պարտաւորութեան առ աւուրբ խոր-
հուրդ հաղորդութեան , և ընդ-
հանուր թեան . 76
Աղօթք պինդ հաղորդութեան . 86
Աղօթք պինդ հաղորդութեան առ
աւուրբ իւյան . 93

Խօսակցութիւն Քրիսպոսի ընդ հոգւոյ՝ վինի հաղորդութեան. 97
Աղօթ՝ ի ժամ պատարագի. 143
Մտածութիւն՝ ի խորհուրդ պատարագին. 146
Աղօթ՝ փերուանական փոնից, նա և մեծի պահոց.
Ի փոնի ծննդեան Քրիսպոսի. 185
Ի փոնի անուանադրութիւն Յիսուսի. 188
Ի փոնի յայտնութեան. 190
Ի փոնի հրպարութեան. 192
Ի փոնի պեսոն ընդ առաջին. 196
Կրթութիւն աղօթից՝ ի մեծ պահս. 199
Աղօթ՝ վասն առաջին շաբաթուս պահոց. 202
Աղօթ՝ վասն երկրորդ շաբաթուն. 212
Աղօթ՝ վասն երրորդ շաբաթուն. 222
Աղօթ՝ վասն չորրորդ շաբաթուն. 234
Աղօթ՝ վասն հինգերորդ շաբաթուն. 255
Աղօթ՝ վասն վեցերորդ շաբաթուն. 271
Աղօթ՝ վասն աւագ շաբաթուն. 289
Ի փոնի վարկին. 313
Յերկրորդ առաւր. 317
Յերրորդ առաւր. 318

Ի փոնի աւետման . 322
Ի փոնի համբարձման . 327
Ի փոնի հոգեգալստեան . 331
Ցերկրորդ աւուր . 333
Ցերրորդ աւուր . 335
Ի փոնի վարդավառին . 336
Ցերկրորդ աւուր . 338
Ի փոնի վերափոխման . 340
Ցերկրորդ աւուր . 343
Ի փոնի ծննդեան աւուրբ Ա-
ստուածածնի . 345
Ի փոնի խաչին . 348
Ցերկրորդ աւուր . 350
Ի փոնի ընծայման . 352
Ի փոնի անարատ յղութեան . 354
Ի փոնի ծննդեան Յովհաննու հա-
րապէպին . 357
Ցայլսմ փոնի նորին . 360
Ի փոնի սրբոյն Յովսէփայ Ա-
ստուածահօր . 362
Ի փոնի սրբոյն Գրիգորի լու-
սաւորչի . 366
Ցայլսմ փոնի նորին . 368
Ի փոնի սրբոյն Յակոբայ Մըշ-
նայ հայրապետի . 370

Ի փոխի սրբոյն Անդոնի անապատականի. 373
Ի փոխի սրբոց Հռիփսիմեանց և Գայիանեանց. 375
Աղօթք առ պաշտպան սուրբ սքանչելագործ. 378
Աղօթք առ պահապան հրեշտակ. 382
Աղօթք պարբերական մահուան. 385
Աղօթք Յիսուսի ի վերջին կռիւն իւրում, ի ժամու մահուան վասն ամենայն հրեշտանէից. 406
Աղօթք առ սուրբ Ասպուածածինն. 411
Աղօթք վասն ննջեցելոց. 415
Աղօթք առ Էօթն խնդութիւնս սուրբ Ասպուածածնին. 421
Աղօթք առ Էօթն վերս խոցոծոց նուսին Մարիամու. 431
Աղօթք առ Էօթն բանս զոր ասաց Քրիստոս ի խաչին. 451
Աղօթք ի սաղմոսէ ի պէսպէս դիպուածս. 469
Ի ժամանակի հիւանդութեան. 470
Ի նեղութի ի ընդամէնս մարտից և հոգւոց. 479

Ի խնդրելն ինչ՝ ի պետռնէ . 487
Վասն ապաւինելոյ յԱստուած . 490
Ի ժամանակի ներելութեան . 498
Ի ներելութեան աղաւաղութեան մարմնոյ և հոգւոյ . 504
Յորժամ հոգին է՝ յօժարահաւանութեան . 519
Յորժամ հոգին կայ՝ ի ճշդելութեան . 525
Յորժամ հոգին կայ՝ ի վճանգի մեղաց . 528
Ի խնդրել օգնութիւն յԱստուծոյ. 532
Յորժամ հոգին է՝ ի պրպտութեան . 536
Իւյ և ճաճագ առ արհւոյութիւն երկնից՝ ի սաղմոսէ. 539